

**ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝
«ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ**

«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ» ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄՍԱԳԻՐՆ ԸՆԴԳՐԿՎԱԾ Է ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՑԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ՀՀ ԿԳՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿՈՒՄ

***Հրատարակվում է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական
խորհրդի երաշխավորությամբ***

Լրատվական գործունեություն իրականացնող՝
ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ՊՈԱԿ, գրանցման վկայական
03Ա085891՝ տրված 15.09.2009թ.

Հասցե՝ Երևան 0004, Ծովակալ Իսակովի պողոտա 29,

Էլեկտրոնային կայք՝ www.edupolice.am,

Էլեկտրոնային փոստ՝ orenqipatvarjournal@mail.ru,

Հեռ. 010-77-15-24

Համարի թողարկման պատասխանատու՝ պատասխանատու քարտուղար
Տ.Խաչատրյան:

Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համամիտ չլինելով
հեղինակների տեսակետներին:

ОСНОВАТЕЛЬ И ИЗДАТЕЛЬ:
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
"ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС МВД РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ"
"ЗАЩИТНИК ЗАКОНА" научно-методический журнал
Издается по рекомендации Научного совета Образовательного
комплекса МВД Республики Армения

ЖУРНАЛ РЕКОМЕНДОВАН ВЫСШИМ КВАЛИФИКАЦИОННЫМ КОМИТЕТОМ И ВКЛЮЧЕН В ПЕРЕЧЕНЬ ВЕДУЩИХ РЕЦЕНЗИРУЕМЫХ НАУЧНЫХ ЖУРНАЛОВ И ИЗДАНИЙ, В КОТОРЫХ ДОЛЖНЫ БЫТЬ ОПУБЛИКОВАНЫ ОСНОВНЫЕ НАУЧНЫЕ РЕЗУЛЬТАТЫ ДИССЕРТАЦИЙ НА СОИСКАНИЕ УЧЕНЫХ СТЕПЕНЕЙ ДОКТОРА И КАНДИДАТА НАУК

Адрес: Ереван 0004, проспект Адмирала Исакова 29

Официальный сайт: www.edupolice.am

Электронная почта: orenqipatvarjournal@mail.ru

Тел: 010-77-15-24

Ответственный за выпуск номера: ответственный секретарь Тигран Хачатрян

FOUNDER AND PUBLISHER:
"MIA EDUCATIONAL COMPLEX OF RA RMENIA" STATE NON-PROFIT
ORGANIZATION
"BULWARK OF LAW" scientific-methodical journal
It is published with the warranty of the Scientific Council of the MIA
Educational Complex of RA

THE JOURNAL IS INCLUDED IN THE MAIN RESULTS AND FOR PUBLISHING THE THESIS IN RA'S
MINISTER OF EDUCATION AND SCIENCE HIGHER QUALIFICATION COMITTEE'S IN THE
ACCEPTED SCIENTIFIC PUBLICATIONS LIST

Address: Yerevan 0004, Covakal Isakov Avenue 23,

Official web-cite: www.edupolice.am

Email: orenqipatvarjournal@mail.ru

Tel.: +374 10-77-15-24

Journal Issue Manager, Responsible Secretary T.Khachatryan

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գլխավոր խմբագիր - ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Մանուկ Մուրադյան,**

Գլխավոր խմբագրի տեղակալ - ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Միսակ Մարկոսյան,**

Պատասխանատու քարտուղար - ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժնի պետ, ոստիկանության մայոր **Տիգրան Խաչատրյան**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԻ ԱՆՈՒՍՆԵՐ՝

ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Գազիկ Գրիգորյան,**

ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Արտակ Մնացականյան,**

ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Արտակ Հովհաննիսյան,**

ՀՀ ՆԳՆ իրավաբանական վարչության պետ, ի.գ.թ. **Ռուսլան Մարանդյան,**

ՀՀ Սահմանադրական դատարանի գիտական հարցերով խորհրդական, ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.դ., պրոֆեսոր **Աշոտ Խաչատրյան,**

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ի.գ.դ., պրոֆեսոր **Սերգեյ Առաքելյան,**

ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.թ. **Հովհաննես Քոչարյան,**

ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պայմանագրային դասախոս, ի.գ.թ., դոցենտ **Դավիթ Թումասյան,**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր, ի.գ.թ., դոցենտ **Ռաֆիկ Խանդանյան,**

ՀՀ վարչական դատարանի դատավոր, ի.գ.թ. **Կարեն Զարիկյան,**

ՀՀ ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր, ի.գ.թ. **Ջոն Հայրապետյան,**

ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ-մայոր, տ.գ.դ., պրոֆեսոր **Օլեգ Բուլգակով,**

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ-մայոր, ի.գ.թ., դոցենտ **Ալեքսանդր Պարադնիկով,**

ՌԴ ՆԳՆ Սանկտ Պետերբուրգի համալսարանի պետի գիտական աշխատանքների գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.դ., պրոֆեսոր **Մակսիմ Բավսուն:**

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետական կառավարման տեսության և մեթոդոլոգիայի ամբիոնի պետի տեղակալ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, դոցենտ **Անդրեյ Անիսին:**

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор - начальник Образовательного комплекса полиции МВД РА, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Манук Мурадян**

Заместитель главного редактора - первый заместитель начальника Образовательного комплекса полиции МВД РА, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Мисак Маркосян**

Ответственный секретарь - начальник отдела обеспечения качества образования и научных работ Образовательного комплекса полиции МВД РА, майор полиции **Тигран Хачатрян**

ЧЛЕНЫ РЕДАКЦИОННОГО СОВЕТА:

Начальник Академии Образовательного комплекса полиции МВД РА, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Гагик Григорян**

Начальник управления учебно-методического обеспечения и развития Образовательного комплекса полиции МВД РА, кандидат юридических наук, доцент, подполковник полиции **Артак Мнацаканян**

Заместитель начальника Академии Образовательного комплекса полиции МВД РА, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Артак Оганесян**

Начальник Юридического управления МВД РА, кандидат юридических наук **Руслан Марандян**

Советник Конституционного суда РА по научным вопросам, Заслуженный юрист РА, доктор юридических наук, профессор **Ашот Хачатрян**

Ректор Академии Юстиции, доктор юридических наук, профессор **Сергей Аракелян**

Заслуженный юрист РА, кандидат юридических наук **Ованнес Кочарян**

Преподаватель кафедры уголовного права и криминологии Академии Образовательного комплекса полиции МВД РА на договорной основе, кандидат юридических наук, доцент **Давид Тумасян**

Судья Апелляционного административного суда РА, кандидат юридических наук, доцент **Рафик Ханданян**

Судья административного суда РА, кандидат юридических наук **Карен Зарикян**

Судья Уголовного суда общей юрисдикции РА, кандидат юридических наук **Джон Айрапетян**

Первый заместитель начальника Краснодарского университета МВД РФ, генерал-майор полиции, доктор технических наук, профессор **Олег Булгаков**

Первый заместитель начальника Академии управления МВД РФ, генерал-майор полиции, кандидат юридических наук, доцент **Александр Парадников**

Заместитель начальника по научной работе Санкт-Петербургского университета МВД РФ, полковник полиции, доктор юридических наук, профессор **Максим Бавсун**

Заместитель начальника кафедры теории и методологии государственного управления Академии управления МВД РФ, доктор философ. наук, доцент **Андрей Анисин**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ազիզյան Զարինե

ԲԱՐԵԽԻՂՃ ԳՐԱՎԱԴՈՒՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ7

Ալեքսանդրյան Վիտալի

ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԼՈՒԻԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ.....23

Աղայան Արմինե

ԷՎԹԱՆԱԶԻԱՅԻ՝ ՈՐՊԵՍ ՏՈՒԺՈՂԻ ԽՆԴՐԱՆՔՈՎ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԷԹԻԿԱԿԱՆ

ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԻՑ.....38

Բաղդասարյան Լարիսա

ՀԱՅՅԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՎԵՃԵՐՈՎ.....49

Բաղդասարյան Հայկ

ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԿԱՊԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՎՆԱՄՆԵՐԸ ՀԱՏՈՒՅԵԼԻՄ72

Բաղդասարյան Հայկ

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՄՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ ԸՍՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ.....83

Գրիգորյան Գոհար

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ

ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....98

Իսրայելյան Գևորգ

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ108

Լազարյան Արփի

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ

ՎԱՐՎԵՅՈՂՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ118

Հակոբջանյան Արման

ՊԱՐՏԱԴԻՐ ՆԱԽԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՈՐՊԵՍ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳ.....131

Հարությունյան Հերբերտ

ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 147

Մարկոսյան Միսակ

«ԱՐԱՐՔ» ԵԶՐՈՒՅԹԻ ԵՐԿԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ 158

Մնացականյան Արտակ

ԿԻԲԵՌՆԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԻԿՏԻՄՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 171

Մուրադյան Մանուկ

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԱՇԱՀՄԱՆ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԱՐԳԵԼՔԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊՈԶԻՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՄԱՍԻՆ 182

Նազարյան Նաիրա

ՈՒՍՈՒՄՆԱԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՀԱՐՄԱՐՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 202

Վարդանյան Սյուզաննա

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԸ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ՍՈՒԲՅԵԿՏ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՔՍՍՅԻՆ
ՈԼՈՐՏՈՒՄ 211

Русакова Галина Александровна

ИННОВАЦИОННЫЕ ПОДХОДЫ К ЯЗЫКОВОЙ ПОДГОТОВКЕ БУДУЩИХ
ПОЛИЦЕЙСКИХ 223

Kazanchian Lilit, Zaqaryan Ashot

SOME FEATURES OF THE LEGAL REGIME IN THE CONTEXT OF
LIMITATIONS OF STATE POWER 227

Vardanyan Syuzanna

INSULTING AN OFFICIAL OF THE CUSTOMS BODY WHILE PERFORMING
OFFICIAL DUTIES 237

ԲԱՐԵԽԻՂՃ ԳՐԱՎԱՌՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ազիզյան Զարինե

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

Իրավաբանական վարչության պետ

Սույն հոդվածում քննարկվում են բարեխիղճ գրավառուի իրավունքների պաշտպանության խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: ՀՀ օրենսդրության մեջ բացակայում է գրավադրված գույքի իրական սեփականատիրոջ կողմից այն վերադարձնելու պահանջի դեպքում բարեխիղճ գրավառուին պաշտպանելու հատուկ կանոն, և այս հարցում դատական պրակտիկան հակասական է. մի դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանը պաշտպանում է գրավի պահպանումը, երբ վիճարկվում է գրավատուի սեփականության իրավունքը, մյուս դեպքում անվավեր է ճանաչվում գրավի պայմանագիրը:

Այս հարցում միասնական պրակտիկայի և որոշակիության բացակայությունը, անշուշտ, բացասաբար կանդրադառնա ֆինանսական շուկայի վրա, հատկապես՝ բանկերի և վարկային կազմակերպությունների համար: Ավելին, օրենսդրությունը նախատեսում է բարեխիղճ գնորդի իրավունքների պաշտպանություն, ինչը նշանակում է, որ բարեխղճության հիման վրա օրենքը պաշտպանում է սեփականության իրավունքը՝ ամենատեղ իրավունքը, անձին, որը սեփականություն է ձեռք բերում չարտոնված վաճառողից: Հետևաբար, օրենքն ավելի ուժեղից պետք է պաշտպանի ավելի թույլ իրավունքով ծանրաբեռնված բարեխիղճ իրավատիրոջը՝ գրավառուին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հոդվածում վերլուծվում են Հայաստանի դատարանների իրավական դիրքորոշումները, օտարերկրյա իրավական ակտերը և արվում եզրակացություններ, որոնք կարող են օգտակար լինել դատական պրակտիկայի և օրենսդրության հետագա զարգացման համար:

Բանալի բառեր՝ գրավ, հիփոթեք, բարեխղճություն, գործարքի անվավերություն, սեփականության իրավունք

Բարեխղճությունը (*bona fides*-ը)՝ որպես իրավական կատեգորիա, ընկած է յուրաքանչյուր քաղաքացիաիրավական հարաբերության հիմքում և բնորոշում է քաղաքացիական իրավունքի սուբյեկտների վարքագիծն իրենց իրավունքների իրացման և պարտականությունների կատարման նկատմամբ: Եթե առկա է օրենսդրորեն ամրագրված պարտականություն, ապա քաղաքացիական իրավունքի սուբյեկտը պարտավոր է դրանք կատարել բարեխղճորեն, հակառակ պարագայում մենք կբախվենք բարեխիղճ վարքագիծ չդրսևորելու իրավախախտմանը, որն էլ իր հերթին կառաջացնի համապատասխան անբարենպաստ հետևանքներ տվյալ իրավահարաբերության մյուս սուբյեկտների համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բարեխղճությունն ընդհանուր կատեգորիա է և ընկած է քաղաքացիական իրավունքի ցանկացած սկզբունքի հիմքում՝ օրենսդիրն այն որպես առանձին սկզբունք չի ամրագրել Քաղաքացիական օրենսգրքում՝ թողնելով այն կոնկրետ ծագած իրավահարաբերության դեպքում իրավակիրառողների մեկնաբանությանը: Սակայն չանտեսելով վիճելի իրավահարաբերությունների գոյության փաստը և ելնելով այն հանգամանքից, որ բարեխղճության սխալ մեկնաբանումն ու կիրառումը կարող է ոտնահարել քաղաքացիական իրավունքի բարեխիղճ սուբյեկտի իրավունքներն ու օրինական շահերը, կարծում ենք՝ օրենսդիրն այն որպես առանձին իրավադրույթ պետք է ամրագրի և նախատեսի համապատասխան իրավական կարգավորում այդ իրավահարաբերության ծագման դեպքում բարեխիղճ սուբյեկտի իրավունքները պաշտպանելու համար: Նման մոտեցում օրենսդիրը կիրառել է՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում պարտավորական հարաբերությունների մասնակից բարեխիղճ ձեռք բերողին պաշտպանելու համար համապատասխան իրավակարգավորում սահմանելով: Այսպես, ՀՀ քաղ.օր. 275-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. *«Եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից»:* Նման կերպ օրենսդիրը պաշտպանել է գույքը ձեռք բերելիս բարեխիղճ

վարքագիծ դրսևորած բարեխիղճ ձեռք բերողի իրավունքները, ինչն էլ հիմք ընդունելով՝ գիտնականները գույքը հատուցմամբ ձեռք բերողի բարեխղճությունը համարում են ոչ թե ուրիշի իրավունքները չխախտելու մասին անձի համոզվածություն, այլ գործարքի իրավական արատների մասին տեղեկացվածության բացակայություն¹:

Այս դիրքորոշմանը համաձայն լինելով՝ կարծում ենք, որ կողմի բարեխղճությունը դրսևորվում է նաև հետևյալ հանգամանքների առկայությամբ՝

- օրենսդրորեն սահմանված իրավունքների չչարաշահմամբ,
- գործարքի մյուս կողմի իրավունքների չոտնահարմամբ,
- օրենսդրությամբ տվյալ գործարքի կնքման համար անհրաժեշտ բոլոր գործողությունների և գործարքի մյուս կողմի հանդեպ պարտականությունների պատշաճ կատարմամբ,
- գործարքի կնքման համար դրսևորված անկեղծ կամահայտնությամբ:

Այս մեկնաբանմամբ կարող ենք փաստել, որ բարեխղճությունն ընկած է քաղաքացիաիրավական բոլոր գործարքների հիմքում, ինչից ելնելով էլ օրենսդիրը որպես առանձին իրավադրույթ այն չի նախատեսել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում՝ թողնելով այն կոնկրետ իրավահարաբերության ծագման դեպքում իրավակիրառների մեկնաբանմանը, բայցև միևնույն ժամանակ վիճելի իրավահարաբերություններից մեկի՝ վաճառողի և գնորդի միջև գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման դեպքում նախատեսել է առանձին իրավակարգավորում՝ ելնելով այն համոզմունքից, որ ձեռք բերողի բարեխղճությունն ինքնին ենթադրում է վաճառողի կողմից գույքն օտարելու իրավունք ունենալու մասին կասկածների բացակայությունը²:

Կարծում ենք, որ ոչ պակաս վիճելի իրավահարաբերություն է նաև գրավատու-գրավառու իրավահարաբերությունը, հատկապես եթե դիտար-

¹ См. у **Л.И. Петражицкий**, Право добросовестного владельца на доходы с точки зрения догмы и политики гражданского права. М.: 2002, էջ 195-204, **А.А. Рябов**, Истребование имущества у добросовестного приобретателя // Закон, 2004, № 2, էջ 394:

² См. у **И.В. Аксюк**, Добросовестность приобретения как основание возникновения права собственности на недвижимость // Журнал российского права № 3-2007, էջ 71:

կենք վերջին տասնամյակում գրավի ինստիտուտի լայնորեն կիրառումը քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտների կողմից: Ֆինանսավորման գործիքներն իրենց լայն տարածումն են ստացել քաղաքացիական շրջանառության մեջ՝ բնակչությանն ապահովելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներով, որին զուգահեռ լայնամասշտաբ կերպով կիրառվում է նաև գրավը՝ որպես տրամադրված ֆինանսավորման վերադարձի ապահովման երաշխիք: Պարտավորության ապահովման միջոցների մեջ այն ամենաշատ կիրառվող ապահովման միջոցն է՝ շնորհիվ իր իրային ապահովման միջոց լինելու հանգամանքի:

Նշված իրավահարաբերության լայնամասշտաբ կիրառումն ու տարածումն իր հերթին ծնում է իրավական խնդիրներ, որոնք գուցե օրենսդիրը չէր կարող կանխատեսել ու կանխել նախկինում, մինչև քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտները չբխվեին այդ խնդրին: Ցանկացած իրավահարաբերության զարգացում իր հերթին պահանջում է համապատասխան իրավակարգավորումների վերանայում և զարգացում, ինչն ակնառու է այժմ գրավատու-գրավառու իրավահարաբերություններում:

Մասնավորապես, խնդիրը գրավի պահպանման հարցն է՝ այն դեպքում, երբ պարզվում է, որ գրավատուն գույքի տնօրինչական իշխանությամբ օժտված չի եղել, իսկ գույքը վերադարձվել է իրական սեփականատիրոջը: Բարեխիղճ ձեռքբերողի օրինակով՝ նման իրավադրույթի ամրագրման անհրաժեշտությունն առկա է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գրավի իրավակարգավորումներում: Ծագած խնդրի լուծումը տեսնում ենք ***Բարեխիղճ գրավառուի՝ գրավի առարկայի նկատմամբ իրավունքների պահպանումը*** վերտառությամբ հոդվածի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ներմուծմամբ, որի մեջ կարտացոլվի բարեխիղճ ձեռքբերողի պաշտպանության մեխանիզմը: Այսինքն՝ գույքն իրական սեփականատիրոջ կողմից գրավատուից հետ պահանջելուց հետո գրավի իրավունքը պետք է պահպանվի, եթե գրավատուն բարեխիղճ է, սակայն չգիտեր և չէր կարող իմանալ այն մասին, որ գրավատուն գույքի իրական սեփականատերը չէ, և եթե գույքը իրական սեփականատիրոջից չի հափշտակվել կամ դուրս եկել իր տիրապետությունից՝ անկախ իր կամքից:

Վերը նշված փոփոխությունների կատարումն անհրաժեշտություն է արդեն դարձել վերջերս ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից ընդունված նա-

խաղեպային որոշումների ընդունման համատեքստում, որոնց կանդիդատնամ ավելի ուշ:

Արդեն հաճախ ենք հանդիպում իրավիճակների, երբ, լինելով բարեխիղճ գրավառու, ֆինանսական կազմակերպությունները բախվում են լուրջ խնդիրների՝ կանգնելով իրենց կողմից տրամադրված ֆինանսավորման հետքերման միակ ապահովման միջոցի կորստի վտանգի առջև: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում մտածել և պաշտպանել այդ իրավիճակում բարեխիղճ գրավառու հանդիսացող կողմին՝ իր իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ իրավակարգավորումներ սահմանելով:

Այսպիսով՝ Ֆինանսական կազմակերպությունը, որպես պարտավորության ապահովման միջոց, գրավ է վերցնում անշարժ գույք, որի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքը գրանցված է Անշարժ գույքի կադաստրի կոմիտեում, և ով Ֆինանսական կազմակերպությանն է ներկայացնում այդ փաստը հավաստող սեփականության իրավունքի վկայագիր, որը հիմք ընդունելով, միննույն ժամանակ, առկա տեղեկատվությունն ստուգելով, ինչպես նաև այլ սահմանափակումների կամ իրավունքներով ծանրաբեռնված լինելու հանգամանքը ևս մեկ անգամ ստուգելու նպատակով Ֆինանսական կազմակերպությունը ՀՀ անշարժ գույքի կադաստրից ստանում է տվյալ անշարժ գույքի միասնական տեղեկանք, որից հավաստիանալով, որ չկա որևէ սահմանափակում, և որ տվյալ անշարժ գույքը ծանրաբեռնված չէ որևէ այլ իրավունքներով, որպես գրավի առարկա, գրավադրում է այդ անշարժ գույքը, որը մեծ գումարով տրամադրված ֆինանսավորման ապահովման միջոց է: Որոշ ժամանակ անց, տրամադրված ֆինանսավորումը և դրա նկատմամբ հաշվարկվող տոկոսագումարները պատշաճ չեն մարվում, և ֆինանսական կազմակերպությունը հարկադրված անցնում է տրամադրված ֆինանսավորման դատական ճանապարհով բռնագանձմանը, մասնավորապես՝ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի բռնագանձմանը: Գրավի առարկայի բռնագանձման գործընթացն սկսելուն պես հայտնվում է անձ, որը դատարանում վիճարկում է կնքված գրավի պայմանագիրն այն հիմնավորմամբ, որ *տվյալ գրավի առարկայի իրական սեփականատերը հանդիսանում է վերջինս, ով չի հանդիսանում կնքված գրավի պայմանագրի կողմ:*

Կնքված գրավի պայմանագրերը մեծամասամբ վիճարկվում են գրավատուի սեփականության իրավունքի ծագման հիմք հանդիսացած գործարքի

վիճարկման որպես անմիջական հետևանք: Իսկ Գրավատուի սեփականության իրավունքի ծագման հիմք հանդիսացած գործարքը վիճարկվում կամ կարող է վիճարկվել գործարքի անվավեր ճանաչվելու կամ որպես առ ոչինչ գործարքի հետևանք անվավերության հետևանքներ կիրառելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ-315-րդ հոդվածներով սահմանված իրավակարգավորումներից յուրաքանչյուրը հիմք վերցնելով՝ կախված համապատասխան իրավիճակի առկայությունից:

Այսպիսով՝ ի՞նչ է ստացվում արդյունքում. դատարանը կարող է անվավեր ճանաչել այն գործարքը, որով գրավատուին անցել է սեփականության իրավունքը և սեփականության իրավունքի գրանցումը, իսկ գրավատու հանդիսացող ֆինանսական կազմակերպությունը հիմք է ընդունել սեփականության իրավունքի պետական գրանցումն այդ գույքը որպես գրավի առարկա վերցնելիս՝ չունենալով որևէ կասկած, միջոց ու հնարավորություն դրա ոչ իրավաչափությունը պարզելու համար: Այսինքն՝ կարող ենք փաստել, որ վերջինս հանդիսացել է բարեխիղճ կողմ այդ դեպքում՝ սպառելով իրեն ընձեռված բոլոր հնարավորություններն իր գործարքի վավերության մեջ հավաստիանալու համար: Գրավատուի սեփականության իրավունքի գրանցումը և դրա հիմքում ընկած գործարքն անվավեր ճանաչելու դեպքում ստացվում է, որ դրանք իրավաբանական հետևանքներ չեն առաջացրել կնքման պահից *ab initio*. Հետևաբար, գույքը գրավադնելու ժամանակ գրավատուն չի հանդիսացել սեփականատեր և *Nemo plus iuris transfere (ad alium) potest quam ipse habet* սկզբունքի համաձայն՝ չէր կարող այն գույքի նկատմամբ ավել իրավունք փոխանցել, քան ինքն ուներ, որի արդյունքում արատավոր է դառնում նաև գրավատուի և գրավատուի միջև կնքված գործարքը, որը հաջողությամբ իրական սեփականատիրոջ կողմից կարող է վիճարկվել որպես օրենքի պահանջներին (ՀՀ քաղ.օր. 228-րդ հոդված) չհամապատասխանող գործարք (ՀՀ քաղ.օր. 305-րդ հոդված): Մինչդեռ նման վիճարկման դեպքում հաշվի չի առնվում գրավատուի բարեխիղճությունը:

Արդյունքում, չունենալով բարեխիղճ գրավատուի իրավունքների պաշտպանման մասին համապատասխան իրավակարգավորում ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և դրան ի հակառակ՝ ունենալով վերը նշված իրավադրույթը՝ դատարանն իր կայացրած որոշումով պաշտպանում է իրական սեփականատիրոջ իրավունքները՝ անտեսելով և չպաշտպանելով բարեխիղճ գրավատուի իրավունքները, ով սեփականատիրոջ նման հավասարա-

պես հանդիսանում է քաղաքացիական շրջանառության սուբյեկտ, ում իրավունքները ևս պետք է պաշտպանվեն օրենսդրի և իրավակիրառողների կողմից: Նման դիրքորոշում է հայտնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը թիվ ԵԿԴ/1159/02/17 քաղաքացիական գործով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նույն քաղաքացիական գործով փորձել է պաշտպանել բարեխիղճ գրավառուի իրավունքները, սակայն իր արտահայտած պատճառաբանություններում և եզրահանգումներում ևս Վճռաբեկ դատարանը թույլ է տվել հետագայում այլ հիմքերով գրավի պայմանագրի վիճարկման և գրավի դադարմանն ուղղված գործողությունների իրականացման հնարավորություն իրավունքը չարաշահողների կողմից:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/1159/02/17 քաղաքացիական գործով 28.07.2020թ. կայացրած որոշմամբ նշել է հետևյալը.

«(...) գրավի իրավունքն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իրային իրավունքների շարքում: Ի տարբերություն այլ իրային իրավունքների՝ գրավն առաջանում և իրավական արժեքորում է ստանում այնքանով, որքանով այն անհրաժեշտ է օգտագործել հիմնական պարտավորության կատարումն ապահովելու համար: Այդ իսկ պատճառով գրավը՝ որպես այդպիսին, ունի երկակի բնույթ. այն բնութագրվում է որպես պարտավորաիրավական բնույթի իրային-իրավական ապահովման միջոց: Գրավի իրավունքին բնորոշ են իրային իրավունքներին ներհատուկ հետևյալ առանձնահատկությունները.

- «բացարձակ իրավունքը». գրավի իրավունքին համապատասխանում է բոլորի և յուրաքանչյուրի պարտականությունը՝ ձեռնպահ մնալու այդ իրավունքի իրականացումը խախտող կամ խոչընդոտող արարքներից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 241-րդ հոդված),

- «հետևելու իրավունքը». գրավի իրավունքի կրողը պահպանում է իր իրավունքն անգամ այն դեպքում, երբ գրավի առարկան անցնում է այլ անձի սեփականության ներքո (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին կետ):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, ընդհանուր կանոնի համաձայն, գույքի նկատմամբ սեփականության իրավունքի անցումն այլ անձի հիմք չէ այդ գույքի նկատմամբ սեփականատեր չհամարվող անձանց գույքային իրավունքների, այդ թվում նաև՝ գրավի իրավունքի դադարման հա-

մար: Այս կանոնից բացառությունները պետք է սահմանված լինեն բացառապես օրենքով:

Ընդ որում՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գրավի առարկայի նկատմամբ այլ անձի սեփականության իրավունքը պետք է առկա լինի հենց գրավադրման պահին, հակառակ պարագայում, երբ խոսքը գրավի պայմանագրի կնքումից հետո գրավի առարկայի սեփականատիրոջ փոփոխության մասին է, ապա նման իրավիճակներում կիրառման են ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ և 242-րդ հոդվածի 1-ին կետերը, այսինքն՝ գրավի իրավունքը պահպանում է իր ուժը»:

Այս պատճառաբանմամբ վճռաբեկ դատարանը եկել է այն եզրահանգման, որ քանի որ կնքված առուվաճառքի գործարքը կեղծ է ճանաչվել գրավի պայմանագրի կնքումից հետո, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 242-րդ հոդվածի համաձայն *Գրավ դրված գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը պահպանում է իր ուժը*, ապա այդ հիմնավորմամբ գրավի իրավունքը չի կարող դադարել:

Այս հիմնավորումը խնդրահարույց է՝ նվազագույնն այն հիմնավորմամբ, որ կնքված առուվաճառքի պայմանագրի կեղծ ճանաչվելու հիմքով նոր սեփականության իրավունք չի ծագում, և նոր սեփականատերն իր իրավունքը չի փոխանցում այլ անձի, պարզապես հաստատվում է փաստ, որ գրավի պայմանագրի կնքման ժամանակ տվյալ գույքի սեփականատեր է հանդիսացել իրականում այլ անձ, այսինքն՝ գրավի պայմանագրի կնքումից հետո շարունակվել է պահպանվել մինչև գրավի պայմանագրի կնքումը գոյություն ունեցող սեփականության իրավունքը, և տեղի չի ունեցել սեփականության իրավունքի փոխանցում, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *կեղծ գործարքը, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը, առ ոչինչ է*, հետևաբար, այդ սուբյեկտը սեփականության իրավունք փոխանցելու իրավունքով օժտված չէր:

Բացի դա, ՀՀ վճռաբեկ դատարանը նույն գործով արձանագրել է, որ *բերված հիմքերով գրավը դադարած ճանաչելու պահանջի իրավունքը պատկանում է բացառապես գրավադրված գույքի սեփականատիրոջը, իսկ*

այլ շահագրգիռ անձինք իրենց խախտված իրավունքները կարող են վերականգնել բացառապես օրենքով սահմանված կարգով գրավի գործարքը վիճարկելով:

Այսպիսով ի՞նչ է ստացվում. ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ

1. գրավը դադարած չհամարելու որոշմանը եկել է այն հիմնավորմամբ, որ գրավի դադարման պահանջը չի ներկայացրել գույքի սեփականատերը, այլ ներկայացրել է պարտապանը՝ վարկառուն, հետևաբար, սեփականատիրոջ կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում որոշումն այլ կլիներ,

2. շահագրգիռ անձինք կարող են վիճարկել գրավի պայմանագրի վավերությունը՝ իրենց խախտված իրավունքները վերականգնելու համար:

Մեկ այլ թիվ ԵԿԴ/5820/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանը 21 հունիսի 2022թ. կայացված որոշմամբ, անտեսելով բարեխիղճ գրավատուի իրավունքները և այն հանգամանքը, որ գրավատուն գործել է բարեխիղճ, մասնավորապես՝ նոտարական վավերացմամբ հաստատված վավեր լիազորագրի հիման վրա, որի բովանդակությունից ակնհայտ է եղել, որ նման գործարք կնքվելու լիազորություն ունեցել է լիազորված անձը՝ կնքել հիփոթեքի պայմանագիր, լիազորագրի անվավեր ճանաչվելու հիմքով անվավեր է ճանաչել հիփոթեքի պայմանագիրը՝ հաշվի չառնելով, որ հիփոթեքի պայմանագիրը կնքվել է օրենքի բոլոր պահանջների պահպանմամբ, և որ գրավատուն անբարեխիղճ վարքագիծ չի դրսևորել, հետևաբար, չպետք է կրի այլ անձանց կողմից դրսևորված անբարեխիղճ վարքագծի հետևանքները՝ համենայնդեպս, այն դեպքում, երբ չգիտեր և չէր էլ կարող իմանալ լիազորված անձի կողմից խաբեության առկայության մասին:

Ինչպես արդեն նշեցինք, գրավի իրավունքն ամենատարբեր հիմքերով կարող է վիճարկվել և անվավեր ճանաչվել, որի նախադեպն արդեն ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշմամբ առկա է:

Նման իրավիճակում բարեխիղճ գրավատուի իրավունքների պահպանման իրավադրույթի ամրագրումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքում դառնում է առաջնահերթ խնդիր ֆինանսական կազմակերպությունների համար:

Ներկայացնելով հանդիպող իրավիճակները և առկա նախադեպային որոշումները՝ գալիս ենք այն համոզմունքին, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում անհրաժեշտ են բարեփոխումներ, մասնավորապես՝ բարելիւղճ գրավառուի իրավունքները պաշտպանելու տեսանկյունից: Այսպիսով՝ առաջարկում ենք քննարկել առաջարկվող համապատասխան իրավակարգավորման սահմանումը միջազգային լավագույն փորձի համատեքստում:

Մեր՝ Ռոմանո-գերմանական իրավունքի ճյուղին հարող առաջատար երկրները վաղուց այդ կարգավորումները նախատեսել են իրենց քաղաքացիական օրենսգրքերում, մասնավորապես՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Ֆրանսիայի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն և այլք:

Դիտարկենք Գերմանիայի Դաշնային Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի օրինակը՝ որպես միջազգային լավագույն փորձի օրինակ, որտեղ Գերմանիայի Դաշնային Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում առանձին իրավադրույթներով կարգավորումներ է նախատեսված կոնկրետ գույքերի դեպքում բարելիւղճ ձեռք բերողի համար, որը հանդիսանում է բարելիւղճության հիմնապայմանը՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում, և որի վրա կառուցվել է նաև բարելիւղճության իրավակարգավորումները գրավի իրավահարաբերություններում:

Մասնավորապես, գրավի իրավակարգավորումներում օրենսդիրը կոնկրետ բարելիւղճ գրավառուի համար նախատեսել է համապատասխան իրավանորմ, որտեղ սահմանում է, որ *Եթե իրը չի պատկանում գրավատուին, ապա գրավի մեջ անհրաժեշտ փոփոխություններով կիրառվում են սեփականության իրավունքի ձեռքբերումը կարգավորող 932, 934 և 935 կետերի դրույթները*³:

Նախ հասկանանք, թե սեփականության իրավունքի ձեռքբերումը կարգավորող 932, 934 և 935 դրույթներն ի՞նչ են սահմանում, և փոխադարձելով գրավի վրա՝ հասկանանք գրավառուի կողմից գրավի իրավունքի ձեռքբերման պայմանները, եթե գրավադրվող գույքը չի պատկանում գրավատուին:

929-րդ հոդվածի համաձայն՝ իրականացված օտարման արդյունքում ձեռք բերողը դառնում է սեփականատեր, նույնիսկ եթե իրը չի պատկանում

³ St^u German Civil Code section 1207:

օտարողին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ձեռք բերողը բարեխիղճ չէ այն պահին, երբ այս դրույթներով նա ձեռք կբերի սեփականություն...⁴

Այսինքն՝ գրավադրման դեպքում, եթե նույնիսկ իրը չի պատկանում գրավատուին գրավառուն ձեռք է բերում գրավի իրավունք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գրավառուն բարեխիղճ չէ այն պահին, երբ ձեռք է բերում գրավի իրավունք:

932-ից 934-րդ հոդվածների համաձայն՝ սեփականության իրավունքի ձեռքբերումը տեղի չի ունենում, եթե իրը գողացված է սեփականատիրոջից, անհայտ կորած կամ այլ կերպ կորած է: Նույնը վերաբերում է, երբ սեփականատերը եղել է միայն անուղղակի տիրապետող, եթե տիրապետողը կորցրել է իրը⁵:

Գրավի դեպքում ևս գրավառուն գրավի իրավունք ձեռք չի բերում, եթե գրավի առարկան գողացված է սեփականատիրոջից կամ կորած է:

Այսպիսով՝ բարեխիղճ ձեռք բերողի իրավանորմերին հղում տալով և կոնկրետ գրավի իրավահարաբերության դեպքում այդ իրավահարաբերությանը վերաբերելի ձևով կիրառելու միջոցով օրենսդիրը բարեխիղճ գրավառուի իրավունքները պաշտպանում է օրենսդրորեն ամրագրված իրավա-կարգավորումներով:

Բացի դա, օրենսդիրը սահմանել է նաև, որ գրավի իրավունքի ծագման համար անհրաժեշտ է, որ սեփականատերն իրը հանձնի պարտատիրոջը, և երկուսն էլ համաձայնեն, որ պարտատերը գրավի իրավունք ունի: Եթե իրը գտնվում է պարտատիրոջ տիրապետության տակ, բավարար է գրավի ստեղծման մասին համաձայնությունը⁶:

Իսկ անշարժ գույքի դեպքում գրավառուն հիփոթեքի իրավունք է ձեռք բերում, երբ անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից հիփոթեքի վկայագի-րը տրամադրվում է իրեն:

Հիփոթեքի վկայագրի հանձնումը կարող է փոխարինվել պայմանագրով, որով Գրավառուն անշարժ գույքի ռեգիստրի կողմից վկայագիրն ստա-նալու իրավունք ունի:

⁴ S t ' u German Civil Code section 932:

⁵ S t ' u German Civil Code section 935:

⁶ S t ' u German Civil Code section 1205:

Եթե պարտատերն ունի հիփոթեքի վկայագիրը, ապա ենթադրվում է, որ հանձնումը տեղի է ունեցել⁷:

Այսպիսով՝ այս իրավակարգավորումները կոնկրետացնում են գրավառուի համար բարեխիղճ ճանաչվելու պայմանները և գրավի իրավունքի ծագումը չեն կապում միայն գրավառուի իրական սեփականատեր լինելու հանգամանքի հետ՝ որպես գրավի ծագման հիմք նախատեսելով իրի հանձնումը գրավառուին, իսկ անշարժ գույքի դեպքում հիփոթեքի վկայագրի հանձնումը կամ անշարժ գույքի ռեգիստրի կողմից վկայագիր ստանալու իրավունքի գրանցումը:

Եթե շարժական գույք հանդիսացող իրը գողացված չէ և տիրապետվում է անձի կողմից ու այն գրավադրվում է՝ միաժամանակ պահառության հանձնվելով գրավառուի մոտ, ապա այս իրավիճակում վերջինիս՝ որպես բարեխիղճ գրավառուի իրավունքները կարող են պաշտպանվել, իսկ անշարժ գույքի դեպքում անշարժ գույքի ռեգիստրում գրանցման փաստը բավարար է այդպիսի պաշտպանության համար:

Այսպիսով՝ գրավառուն կհամարվի բարեխիղճ, եթե գրավի հիմք հանդիսացող սեփականության իրավունքը գրանցված է գույքային իրավունքների ռեգիստրում, որը հասանելի է հանրությանը, իսկ չգրանցված այլ իրավունքները և սահմանափակումները չեն կարող հանգեցնել բարեխիղճորեն կնքված գրավի իրավունքի անվավերությանը⁸: Ուսումնասիրելով տարբեր երկրների փորձը և պրակտիկան՝ կարող ենք փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ առկա է պետականորեն գրանցված իրավունք կամ հայտարարություն այդ մասին, ապա մյուս բարեխիղճ կողմը չի կարող զրկվել իր իրավունքներից⁹:

Այս վերլուծությունները պրոյեկցիա անելով մեր իրականության վրա՝ կարող ենք արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում բարեխիղճ գրավառուի իրավադրույթը կարող է գործել անշարժ գույքի և տրանսպորտային միջոցի գրավի գործարքներում, քանի որ միայն այդ գործարքների դեպքում է, որ իրավաբանորեն գրանցվում և հրապարակվում է տվյալ գույքերի նկատմամբ սեփականության իրավունքը: Հետևաբար, այդ իրավական փաստերը հիմք ընդունելով՝ հետագայում բարեխիղճ գրավառուները կա-

⁷ Տե՛ս German Civil Code section 1117:

⁸ Տե՛ս The Law of Property / ed. by **Roberts Chambers**. Irwin Law Inc. 2021, p. 119.

⁹ Տե՛ս Droit Des Suretes / ed. by **Laurent AYNES et Pierre**. CROCC, 10 e edition. 2016, p.380

րող են ապացուցել իրենց բարեխիղճ վարքագիծը՝ այլ իրավունքների առկայության մասին տեղյակ չլինելու և նման հնարավորության բացակայության հիմնավորմամբ, և պաշտպանել իրենց իրավունքները:

Դեռևս 2014 թվականից բարեխիղճ գրավառուի իրավանորմերը նախատեսվել են նաև Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքում: Մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնությունում բարեխիղճ գրավառուի պաշտպանության համար սահմանվել են այն չափանիշները, որոնք կիրառվում են բարեխիղճ ձեռք բերողի նկատմամբ: ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝

«Եթե գույքը գրավադրվել է այն անձի կողմից, ով չի հանդիսացել գույքի սեփականատեր կամ պատշաճ լիազորություն չունեցող գույքը տնօրինելու համար, ինչի մասին գրավառուն չգիտեր կամ պարտավոր չէր իմանալ (բարեխիղճ գրավառու), ապա գույքի սեփականատերը կրում է գրավատուի իրավունքները և պարտականությունները, որոնք նախատեսված են սույն օրենսգրքով, այլ օրենքներով և գրավի պայմանագրով:

Սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված կանոնը չի գործում, եթե գրավադրված գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից»:

Նշվածից հետևում է, որ բարեխիղճ գրավառուին տրամադրվում է լիարժեք պաշտպանություն, քանի որ պահպանվում է ոչ միայն գրավի իրավունքը, այլև իրական սեփականատերը ծանրաբեռնվում է այն պարտականություններով, որոնք սահմանված են գրավի պայմանագրում, օրինակ՝ վավեր են համարվում գրավի արտադատական բռնագանձման մասին պայմանը, գրավի առարկան ապահովագրելու պայմանը և այլն: Մակայն մինչ այդ բարեխիղճ գրավառուի իրավունքները պաշտպանվում էին առանց հատուկ օրենսդրական կարգավորման՝ հիմք ընդունելով բարեխղճության սկզբունքը: Մասնավորապես, ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանը դեռևս 26.07.2010թ. թիվ 2763/11 որոշմամբ սահմանել է, որ բարեխիղճ գրավառուի իրավունքները պետք է պաշտպանվեն այն դեպքերում, երբ գրավատուի սեփականության իրավունքը և դրա հիմքում ընկած գործարքն անվավեր են ճանաչվել: Մեկ այլ՝ 06.12.2011թ. թիվ 9555/11 որոշմամբ ՌԴ Գերագույն արբիտրաժային դատարանը նշել է, որ բարեխիղճ գրավառուի իրա-

վունքները ենթակա չեն պահպանման, եթե գույքն իրական սեփականատիրոջ տիրապետումից դուրս է եկել՝ անկախ նրա կամքից:

Գրավառուն համարվում է բարեխիղճ, եթե չգիտեր կամ պարտավոր չէր իմանալ, որ գրավատուն գույքը տնօրինելու պատշաճ լիազորություն չունի (բարեխղճություն սուբյեկտիվ իմաստով): Մասնավորապես, գրավառուն կարող էր իմանալ այն մասին, որ գրավատուն չի հանդիսանում գույքի սեփականատեր, եթե վերջինս գույքը ձեռք է բերել ակնհայտ ցածր գնով, նախորդող գործարքները կատարվել են հաջորդիվ, նախորդ գործարքի կողմերը փոխկապակցված են: Ամեն դեպքում, «բարեխիղճ գրավառու» հանդիսանալու համար անհրաժեշտ է գրավատուի լիազորությունների ստուգմանն ուղղված այնպիսի վարքագծի չափանիշի դրսևորում, որը կդրսևորեր միջին ողջամիտ և շրջահայաց գրավառուն. Նշված չափանիշից շեղվելու դեպքում գրավառուն չի կարող համարվել բարեխիղճ¹⁰:

Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում ձևավորված իրավագիտակցության պայմաններում բարեխղճության նշված չափանիշը չափազանց կծանրաբեռնի քաղաքացիական շրջանառությունը, քանի որ շուկայում հաճախ են դեպքերը, երբ գույքն օտարվում է ֆիկտիվ գնով, ուստի այդ հանգամանքը չի կարող վկայել գրավատուի ոչ բավարար լիազորությունների մասին: Բացի դրանից, գրավատուի կողմից սեփականության իրավունքը ձեռք բերելու հիմքերի ուսումնասիրությունը պահանջում է չափազանց մեծ ռեսուրսներ յուրաքանչյուր դեպքում մանրակրկիտ *due diligence* իրականացնելու համար, ինչն իր հերթին ծանրաբեռնելու է ֆինանսավորման գործընթացը:

Հայաստանի Հանրապետությունում դատական պրակտիկան այդ ուղղությամբ նոր է ձևավորվում, և հույս ունենանք, որ Ֆինանսական կազմակերպությունների կողմից առանց լուրջ և շոշափելի վնասներ կրելու (*այն իր ամենաուղիղ անդրադարձն է ունենում նաև սպառողների ծախսերի վրա*), հասկանալով դրա կարևորությունն ու լրջությունը, համապատասխան իրավական բարեփոխումները կիրականացվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում բարեխիղճ գրավառուի ինստիտուտի ներդրման համար: Իսկ մինչ օրենսդրական փոփոխությունների կատարումը, կարծում ենք, որ դա-

¹⁰ Договорное и обязательственное право (общая часть): постатейный комментарий к статьям 307-453 Гражданского кодекса Российской Федерации / Отв. ред. А. Г. Карапетов. – М.: М-Логос, 2017. – С. 269.

տարաններն առավել ազատ պետք է կիրառեն բարեխղճության սկզբունքը՝ առնվազն օրենքի անալոգիայի և *a fortiori* մեկնաբանման եղանակով¹¹ բարեխիղճ գրավառուի իրավունքը պետք է պաշտպանվի վինդիկացիոն հայցի դեմ բարեխիղճ ձեռքբերողի համար նախատեսված մեխանիզմով: Այսինքն՝ գրավը պետք է պահպանվի, եթե գրավառուն բարեխիղճ է, և գույքը չի հափշտակվել սեփականատիրոջից կամ որևէ այլ եղանակով դուրս չի եկել վերջինիս տիրապետումից՝ իր կամքից անկախ:

ПРОБЛЕМЫ ЗАЩИТЫ ПРАВ ДОБРОСОВЕСТНОГО ЗАЛОГОДЕРЖАТЕЛЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Азизян Зарине Арамовна

*Руководитель юридического департамента
ОАО «АКБА БАНК»*

Аннотация: В настоящей статье рассматриваются проблемы защиты прав добросовестного залогодержателя в Республике Армения. В позитивном законодательстве Армении нет специальной нормы о защите добросовестного залогодержателя в случае истребования вещи действительным собственником вещи, а правоприменительная практика относительно данного вопроса противоречива: в одном случае Кассационный суд РА выступает за сохранение залога в случае признания недействительным титула залогодателя, в другом – договор залога признается недействительным. Отсутствие единообразной практики и определенности в указанном вопросе безусловно будет иметь негативное влияние на рынок финансирования со стороны банков и кредитных организаций. Кроме того, законодательство предусматривает институт защиты прав добросовестного приобретателя, то есть в силу добросовестности закон наделяет лица, купившего вещь от неуправомоченного лица, защитой права собственности – самого «сильного» вещного права.

¹¹ Նշված մեկնաբանման կանոնը ենթադրում է, որ եթե օրենքը թույլատրում է առավելը (առավել մեծ միջամտություն է սահմանվում, երբ ի վնաս նախկին սեփականտիրոջ գույքը թողնում է բարեխիղճ ձեռքբերողի մոտ), ապա թույլատրելի է նաև նվազագույքը (առավել նվազ միջամտություն է սահմանվում սեփականատիրոջ համար, երբ պահպանվում է բարեխիղճ գրավառուի իրավունքը):

Следовательно, право *a fortiori* должно защищать добросовестного обладателя наименее обременительного вещного права – залогодержателя. Учитывая изложенное, автор анализирует правовые позиции судов Армении, опыт иностранных правопорядков, сделанные выводы могут быть полезными для дальнейшего развития судебной практики и законодательства.

Ключевые слова: залог, ипотека, добросовестность, недействительность сделок, право собственности.

ISSUES OF BONA FIDE PLEDGEE RIGHT PROTECTION

Zarine Azizyan

Head of the Legal Department

OJSC "AKBA BANK"

Summary: This article addresses the issues related to the protection of the rights of a bona fide pledgee in the Republic of Armenia. The positive legislation of Armenia lacks a specific provision for safeguarding the rights of a bona fide pledgee in the event of the true owner of the pledged property demanding its return. The judicial practice on this matter is inconsistent: in one case, the Cassation Court of Armenia advocates for preserving the pledge when the validity of the pledgor's title is challenged, while in another case, the pledge agreement is deemed invalid. The absence of a uniform and clear practice in this regard is bound to have a negative impact on the financial market, especially concerning banks and credit organizations. Furthermore, the legislation provides for the protection of the rights of a bona fide purchaser, meaning that, based on good faith, the law shields the ownership (the strongest property right) of a person who acquires property from an unauthorized trader. Consequently, the law *a fortiori* should protect the bona fide holder of the less burdensome property right — the pledgee. Given the above, the author analyzes the legal positions of Armenian courts, the experiences of foreign legal systems, and the conclusions drawn could be valuable for the further development of judicial practice and legislation.

Key words: pledge, mortgage, good faith, invalidity of transactions, property rights.

Հոդվածը գրախոսվել է՝ 14.11.2023թ.:

Ներկայացվել է տպագրության՝ 14.11.2023թ.:

ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԼՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ալեքսանդրյան Վիտալի

Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամ

Իրավագիտության ամբիոն, Բակալավրիատ, 3-րդ կուրսի ուսանող

1. Ներածություն

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշ դատավարական գործողությունների իրականացման համար անհրաժեշտ է մեղադրայի համաձայնությունը, որոշ դեպքերում մեղադրյալը կարող է պահպանել լռություն: Այլ է իրավիճակը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքերում, երբ անձը պահպանում է լռություն, այսինքն պոզիտիվ կամք չի արտահայտում: Սույն հոդվածի շրջանակներում մեր կողմից քննարկվում է անձի լռության և իր դեմ մեղավորության հաստատմանը չաջակցելու հետ կապված որոշակի հարցեր ինչպես նաև վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական հետապնդումը դադարեցնելու առաջարկի վերաբերյալ անձի լռությունը պոզիտիվ կամահայտնության բացակայությունը այն համատեքստում, թե արդյո՞ք նշված իրավիճակներում մեղադրյալի լռությունը քրեական հետապնդումը դադարեցնելու համաձայնություն է թե՞ ուղղակի անգործություն:

Բանալի բառեր՝ լռություն, իր դեմ ապացույցներ հավաքելուն չաջակցել, քրեական հետապնդման դադարեցում, վաղեմության ժամկետ, կամքի արտահայտում, nolo contendere հայտարարություն

2. «Լռություն» եզրույթի իրավափիլիսոփայական բովանդակությունը

Եթե իրավունք ունենք մարդուն անվանել Homo sapiens, ապա նախ և առաջ այն պատճառով, որ նա խոսող էակ է (Homo loquens), քանի որ «ամենամարդկայինը որն առկա է մարդու մեջ դա խոսքն է»¹:

Այնուամենայնիվ մարդը չի կորցնում իր մարդկայնությունը, երբ նա լռում է՝ դադարում է խոսել, քանի որ լռությունը մարդկանց միջև ոչ վերբալ

¹ Ա. Ղամբարյան, «Լռությունը իրավունքում», էջ 11, Երևան «Տիգրան մեծ» հրատարակչություն, 2020թ.

հաղորդակցության եղանակ է, իսկ որոշ դեպքերում մեկի լռությունը մյուսի խոսելու հնարավորությունն է: Շ. Լ. Մոնտեսքիոն նշում է՝ «Երբեմն լռությունը ցանկացած խոսքից առավել արտահայտիչ է»:

Առանձին հեղինակներ լռությունը դիտում են որպես ոչ ինքնուրույն երևույթ, սակայն այն ներկայացնում են՝ որպես լեզվական վարքագիծ: Նրանք բնութագրում են լռությունն այսպես՝ «Խոսքից դուրս չկա լռություն, և այսուհետ՝ լռությունը խոսքի այլընտրանքն է»²:

Քաղաքացիական իրավունքի մասնագետ, իրավաբանական գիտությունների դոկտոր՝ Ժան Կարբոնիերը, լռությունը համեմատում է «մտքի ազատության հետ»³: Եվրոպական դատարանի նախկին դատավոր Լուի-Էդմոնդ Պետտիտին ընդլայնում է այս գաղափարը՝ նշելով հետևյալը՝ «Անհատականության առանցքը, նրա նմանակը լռությունն է և լռելու իրավունքը: Լռությունը մեզ թույլ է տալիս վերահսկել մեր շփումը այլ մարդկանց հետ և հանդիսանում է խոսույթի հիմնական գործիքներից մեկը ինչպես իր երկվորյակը՝ մտքի և խոսքի ազատությունը»: Ավելին, նա նույնիսկ լռությունը համարում է «մարդկային արժանապատվությունը հարգելու ձև»⁴:

Վերոշարադրյալի լույսի ներքո կարող ենք պնդել, որ լռությունը դիտարկվում է որպես կամքի արտահայտման պայմանական միջոց, քանզի հնարավոր են իրավիճակներ, երբ մարդը իր կամքն արտահայտի ինչպես վերբալ եղանակով, այնպես էլ լռության միջոցով: Ավելին, նման դեպքերում կարող ենք կատարել կամքի արտահայտման մասին պայմանական բնույթի եզրահանգում, որը որոշ դեպքերում առավել արտահայտիչ կարող է լինել:

Իրավահարաբերության սուբյեկտները, ևս, որոշ իրավիճակներում կարող են դրսևորել լռություն և սույն պարագայում անհրաժեշտություն է առաջանում որոշել, թե արդյոք անձն իր լռությամբ կամք է արտահայտում, թե ոչ: Օրինակ, Շ. Շահամիրյանը «Որոգայթ փառաց» աշխատության շրջանակներում անձի լռությանը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Եթե որևէ պարտաթղթի ժամանակն անցել է մինչև 10 տարի, և անցած տարիների ընթաց-

² **А.А.Конюхов**, феномен молчания в философии и религии. А.А.Конюхов, ст 1, <https://bit.ly/3LqyhX0>

³ Rentrée solennelle de la Cour du Travail de Mons 2 septembre 2014 Discours prononcé par Monsieur le Procureur général I. de la Serna LE DROIT AU SILENCE, page 2

⁴ Rentrée solennelle de la Cour du Travail de Mons 2 septembre 2014 Discours prononcé par Monsieur le Procureur général I. de la Serna LE DROIT AU SILENCE, page 2.

քում պարտապանը և պարտատերը իրար չեն հիշեցրել առնելիքն ու իրար տալիքը, մինչև 10 տարի այն մնացել է իբրև մեռած, ապա 10 տարին անցնելուց հետո այդ տալիքը չպիտի հիշվի, և պարտաթուղթն էլ պետք է համարվի արժեքը կորցրած, մեռած»:

Լռությունը տարբեր իրավիճակներում կարող է ունենալ տարբերվող իրավական բովանդակություն կամ նշանակություն: Օրինակ՝ անձը կարող է լռությամբ հրաժարվել իր սուբյեկտիվ իրավունքից կամ կարող են լինել դեպքեր, երբ լռության պահպանմանը իրացվի որևէ սահմանադրական իրավունք՝ օրինակ ՀՀ սահմանադրության 65-րդ հոդվածի համաձայն «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ»: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր: Այս պարագայում անձը լռությամբ իրացնում է իր սուբյեկտիվ իրավունքը:

ՀՀ իրավական համակարգում առանձին օրենսդրական կարգավորումներ անձի լռությանը տարբեր մեկնաբանություններ են հաղորդում: Օրինակ՝ Քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Օրենքով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում լռությունը համարվում է գործարք կնքելու կամքի արտահայտում»: Այս դեպքում օրենսդիրը որպես կամքի արտահայտման (թեկուզև պայմանավորվածության արդյունքում) միջոց է դիտում լռությունը: Քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներին կանոնադաշտանք հաջորդիվ:

3. Մեղադրյալի լռություն պահպանելու իրավունքը

3.1 Լռության իրավունքի հետ կապված վերաբերելի իրավական կարգավորումները և իրավական դիրքորոշումները

Մեղադրյալի լռություն պահպանելու իրավունքը նախատեսված է «Միջազգայի կանոններում», որը մշակվել է ԱՄՆ Գերագույն դատարանի 1966 թ. որոշմամբ՝ «Միջազգային ընդդեմ Արիզոնայի» գործով: Այս որոշմամբ սահմանվեց իրավունքների այն շրջանակը, որոնց մասին պետք է տեղեկացնել ձերբակալվածին: Պետք է նշել, որ հետագայում այս իրավունքներն իրենց ամրագրումը ստացան նաև այլ երկրների քրեական դատավարության օրենսգրքերում:

Մեղադրյալի լռությունն պահպանելու իրավունքը ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներից է: Այսպես, ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածը երաշխավորում է ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը, վերջինիս հաղորդելով հետևյալ բովանդակությունը՝ *«Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջատորեն ենթադրելի է, որ այն հետազայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ»*: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր: Ավելին, մեղադրյալի լռությունն պահպանելու իրավունքը նաև քրեադատավարական երաշխիք է: Համաձայն Քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ *«Մեղադրյալը սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի [...] 6) պահպանելու լռություն կամ տալ ցուցմունք, այդ թվում՝ պաշտպանի ներկայությամբ»*:

Մեղադրյալի համար խոստովանական ցուցմունք չտալը համարվում է պաշտպանության իրականացման միջոց: Լռելու կամ ցուցմունք չտալու իրավունքը ենթադրում է, որ դա չի կարող օգտագործվել մեղադրյալի դեմ: Իր դեմ ցուցմունք չտալու մեղադրյալի իրավունքը նրա ամենակարևոր իրավունքներից է:

Օրինակ՝ «Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի» գործով Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ քրեական գործերով արդարացի դատական քննության իրավունքը ներառում է «յուրաքանչյուր անձի, ում առաջադրվել է քրեական մեղադրանք, իրավունքը (...), պահպանել լռություն և չտալու իր մեղքը հաստատող ցուցմունքներ»⁵:

«Սաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով Եվրոպական դատարանը սահմանել է, որ «լռություն պահպանելու իրավունքը և դրա բաղկացուցիչ մասը՝ իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը, Կոնվեցիայի 6-րդ հոդվածում հստակ հիշատակված չեն, սակայն դրանք հանրաճանաչ միջազգային նորմեր են, որոնք ընկած են արդարացի դատական դատաքննության հասկացության հիմքում, որի մասին խոսվում է 6-րդ հոդվածում: Դրանց իմաստը իշխանությունների ոչ պատշաճ հարկադրանքից մե-

⁵ Տե՛ս «Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի» գանգատ թիվ 100828/84 գործով Եվրոպական դատարանի 25.02.93թ. վճիռը <https://hudoc.echr.coe.int/?i=001-57809>:

դադրյալին պաշտպանելն է, ինչն օգնում է խուսափել դատական սխալներից և հասնել 6-րդ հոդվածով նախատեսված նպատակներին»⁶:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանմամբ՝ «յուրաքանչյուր անձ, ում ներկայացվել է մեղադրանք, իրավունք ունի լռություն պահպանել և չաջակցել իր անձի մեղավորությունը հաստատելուն»⁷:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ եվրոպական դատարանը՝ «Ջոն Մուրրայն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով սահմանել է, որ «լռությունը բացարձակ իրավունք չէ և այն կարող է միայն սահմանափակվել այնպիսի դեպքերում, ինչպիսիք են, օրինակ՝ երբ ակնհայտորեն անհրաժեշտ է ստանալ որոշակի բացատրություններ»⁸:

Եվրոպական դատարանը սահմանում է նաև, որ՝ «անձի դատապարտումը չի կարող բացարձակապես հիմնված լինել նրա լռության, հարցերին պատասխանելուց հրաժարվելու, իր դեմ վկայություն տալուց հրաժարվելու վրա»:

«Մաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով Եվրոպական դատարանը սահմանել է, որ «իր դեմ վկայություն չտալու իրավունքը իր մեջ չի ներառում քրեական վարույթում հարկադրաբար ստացված այնպիսի տվյալները, ինչպիսիք են՝ արյան նմուշը, մեզի նմուշը և մարմնի արտաքին շերտից ստացված նմուշը՝ ԴՆԹ հետազոտության համար»⁹:

«Ջալլոհն ընդդեմ Գերմանիայի» գործով եվրոպական դատարանը արձանագրել է, որ «Եվրոպական կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածները, ըստ էության չեն արգելում մեղադրյալի կամքին հակառակ նրան ենթարկել բժշկական զննության, սակայն դա կատարելուց առաջ պետք է նախ և առաջ հաշվի առնվի հանցանքի ծանրության աստիճանը, հիմնավորվի այն հանգամանքը, որ քրեական վարույթն իրականացնող մարմինը չի ունեցել հնա-

⁶ Տե՛ս «Մաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության» գանգատ թիվ 19187/91 գործով Եվրոպական դատարանի 17.12.96թ. վճիռը <https://hudoc.echr.coe.int/?i=001-58009>, «Բիկովն ընդդեմ Ռուսաստանի» գանգատ թիվ 4378/02 գործով Եվրոպական դատարանի 10.03.096. վճիռը <https://hudoc.echr.coe.int/?i=001-91704>

⁷ Տե՛ս «Օ՛ Հալլորան և Ֆրանսիսն ընդդեմ Միացյալ Թագավորության» գանգատներ թիվ 15809/02 և 25624/02 գործով Եվրոպական դատարանի 29.06.07թ. վճիռը <https://bit.ly/3Of7COi>

⁸ Տե՛ս Օ Հալլորանը և Ֆրանսիսն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ՝ **15809/02** գործով Եվրոպական դատարանի 29.06.2007 վճիռը <https://bit.ly/3StWzmj>

⁹ Տե՛ս «Մաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության» գանգատ թիվ 19187/91 գործով Եվրոպական դատարանի 17.12.96թ. վճիռը <https://hudoc.echr.coe.int/?i=001-58009>

րավորություն այդ գործողության կատարումը շրջանցել այլ ապացուցողական գործողության կատարմամբ»¹⁰:

3.2 Անձի՝ իր մեղավորության հաստատմանը չաջակցելը

Այս համատեքստում հարկ է անդրադառնալ Քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի կարգավորումներին, համաձայն որի՝ *«Մեղադրյալը պարտավոր է վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել բժշկական զննման, մատնադրոշմման, անձնական խուզարկության, քննման և փորձաքննության, լուսանկարվել կամ փորձաքննության համար հանձնել սույն օրենսգրքով նախատեսված նմուշներ»*:

Մեղադրյալին այսպիսի պարտականությամբ ծանրաբեռնելը մեր գնահատմամբ խախտում է նրա՝ իր դեմ ցուցմունք չտալու հանրաճանաչ կանոնը: Օրենքի ուժով, հարկադրաբար ենթարկվելով բժշկական զննման, քննման և փորձաքննության, լուսանկարվելով կամ փորձաքննության համար հանձնելով նմուշներ մեղադրյալն ըստ էության ստիպված է լինում աջակցել քրեական վարույթին, օգնել իր դեմ տեղեկություններ հավաքելուն, իր նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն և մեղադրանք ներկայացնելուն: Այլ կերպ ասած՝ աջակցում է իր անձի մեղավորության հաստատմանը:

Այս տրամաբանությամբ, օրենսգիրքն անձին վերածում է դատախազի՝ ինքն իր դեմ, չնայած որ եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների ուսումնասիրությունից հետևում է, որ որոշակի գործողությունների կատարման համար, այն է՝ արյան, մեզի, մաշկի նմուշների ստացում ԴՆԹ հետազոտության նպատակով, թույլատրելի է:

Այս համատեքստում, ուսումնասիրելով եվրոպական դատարանի իրավական պրակտիկան հարկ ենք համարում նշել, որ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված պարտականությունը պետք չէ ընկալել բացարձակ ձևով, այսինքն այդպիսի պարտականությամբ կարելի է օժտել անձին միայն այն դեպքում, երբ՝ 1) ուսումնասիրվել են հանցանքի ծանրության աստիճանը, 2) վարույթն իրականացնող մարմնի կողմից օբյեկտիվորեն հերքվել են այլ ապացուցողական

¹⁰ Տե՛ս «Ջալլոհին ըննդեմ Գերմանիայի» գանգատ թիվ 54810/00 գործով Եվրոպական դատարանի 11.07.2006թ. վճիռը <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-76307>

գործողությունների կատարմամբ ապացույց ստանալու հնարավորությունները:

Հեղինակի կարծիքով, այդպիսի մոտեցումն արդարացված է այնքանով, որքանով այս դեպքում զուգակցվում են ինչպես իր անձի մեղավորության հաստատմանը չաջակցելու, այնպես էլ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքները և ըստ էության, այս պարագայում առկա է իրավունքի նկատմամբ միջամտության առավել բարձր մակարդակ:

4. Անձի լուրջությունը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական հետապնդումը դադարեցնելիս

4.1 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգավորումը

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածը սահմանում է՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները: Համաձայն սույն հոդվածի բովանդակության՝ «Քրեական հետապնդում չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե՝ [...] 4. Սույն հոդվածի 1-ին մասի 11-14-րդ կետերով նախատեսված հանգամանքների առկայությունը քրեական հետապնդումը բացառող չէ, եթե անձն առաքելում է դրա դեմ այն հիմքով, որ չի կատարել իրեն մեղսագրվող արարքը: Այս դեպքում քրեական վարույթը շարունակվում է ընդհանուր կարգով, սակայն մեղադրական վերդիկտ կայացնելու դեպքում այդ անձի նկատմամբ պատիժ չի նշանակվում»:

4.2 ՌԴ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգավորումը

Համանման իրավական կարգավորումներ է պարունակում Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունը: Մանսավորապես՝

Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգիրք Հոդված 27. Քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերն են՝

2. Սույն օրենսգրքի 24-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ և 6-րդ կետերով, 25-րդ, 25.1-րդ, 28-րդ և 28.1-րդ հոդվածներով, ինչպես նաև սույն հոդվածի առաջին մասի 3-րդ և 6-րդ կետերով նախատեսված հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելը չի թույլատրվում, եթե կասկածյալը կամ մե-

դադրյալը առարկում է դրա դեմ: Այդ պարագայում քրեական գործը շարունակվում է ընդհանուր կարգով:

4.3 Բելառուսի քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգավորումը

Բելառուսի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, մասնավորապես՝ Բելառուսի քրեական դատավարության օրենսգրքի Հոդված 29-ի համաձայն Քրեական վարույթը բացառող հանգամանքներն են՝

- 1. Քրեական գործ չի կարող հարուցվել, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերի, իսկ հարուցված գործով վարույթը ենթակա է կարճման (...)
- 3. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով քրեական գործի վարույթը կարճելը թույլատրվում է միայն կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությամբ..

4.4 Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները թիվ ԼԴ/0278/07/2 գործով վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝

- օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները,

- քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով⁷,

- վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար մեղադրյալի համաձայնության առկայությունը բխում է անմեղության կանխավարկածի սկզբունքից և անձի արդար դատաքննության, մասնավորապես օրենքով սահմանված կարգով իր մեղավորության հարցը համապատասխան դատական ատյաններում վիճարկելու իրավունքից: Հետևաբար, այն դեպքում, երբ անձը համաձայն չէ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի

վարույթը կարճելու հետ, նրան պետք է հնարավորություն ընձեռվի դատական քննության միջոցով հասնել իր անմեղության ապացուցման⁸:

Թիվ ԵԱԴԴ/0028/01/17 գործով վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարության 35-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ դրանում թվարկված են օրենքով սահմանված այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական հետապնդման հնարավորությունը, այնպես էլ քրեական գործի վարույթը: Նշված հանգամանքներից յուրաքանչյուրի բացահայտման դեպքում քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման:

15.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Արամ Սարգսյանի* գործով որոշման մեջ և արձանագրել, որ «(...) [Թ]եև [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված] հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են իմպերատիվ բնույթ և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա գործի վարույթը ենթակա է կարճման»¹³:

Այսինքն ըստ էության՝ առկա է 2 որոշում, որտեղ մի դեպքում խոսվում է պոզիտիվ համաձայնություն արտահայտելու մասին, մեկ այլ դեպքում քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածով սահմանված որևէ պայմանի բացակայության մասին, ինչն ըստ հեղինակի առավել ողջամիտ է՝ քանզի եթե թվարկված պայմաններից առաջինը՝ առարկությունը բացակայում է, ապա խոսել համաձայնության կամ թվարկված այլ պայմանների մասին իմաստագուրկ է:

4.5 Պրակտիկ դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ օրենսդրական տարբեր կարգավորումներ օգտագործում են տարբեր ձևակերպումներ. օրինակ՝ «առարկություն չներկայացնել», «համաձայնություն տալ»: Անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել այն հարցը, թե որքանով են այս հասկացությունների բովանդակությունները համնկնում և որքանով տարբերվում՝ հասկանալու համար, թե արդյոք երկու իրավիճակներում էլ մեղադրյալի ակնկալվող

վարքագիծը նույնն է և ունի արտահայտման նույն ձևը: Ուսումնասիրելով քրեական հետապնդման դադարեցման տեսական տրամաբանությունը, որը հիմնված է օրենսդրական ձևակերպումների վրա, այն է՝ «առարկել», «Համաձայնվել» հասկացությունների տեքստուալ և բովանդակաին վերլուծության հիման վրա՝ կարելի է ասել, որ այս համատեքստում երկու ձևակերպումներն էլ ունեն նույն նշանակությունն այնքանով, որքանով հետապնդման դադարեցումը բխում է անձի շահերից և չի ոտնահարում նրա անմեղության կանխավարկածը:

Կարող է հարց առաջանալ, թե ինչու՞մն է դրսևորվում կապը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական հետապնդումը դադարեցնելու և անմեղության կանխավարկածի միջև: Փորձենք հարցն այս դիտանկյունից քննարկել Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի որոշումներից մեկի լույսի ներքո: Այսպես, ՌԴ ՍԴ-ն իր...թ. թիվ... որոշմամբ արտահայել է հետևյալ դիրքորոշումը՝ *«քրեական գործի դադարեցումը ոչ վերականգնողական հիմքով հնարավոր է միայն, երբ անձը ներկայացնում է իր համաձայնությունը»*¹¹: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ դատարանն ուղղակիորեն նշում է՝ «ոչ վերականգնողական հիմքերով» եզրույթը: Այնուամենայնիվ բաց է մնում այն հարցը, թե ինչ պետք է արվի այն դեպքում երբ անձը չի առարկում, այլ լռում է: Մեր գնահատմամբ այս հարցի պատասխանը կարելի է գտնել ՌԴ ՍԴ-ի նույն որոշման մեջ արտացոլված հետևյալ դիրքորոշման ներքո՝ *«քրեական հետապնդումը դադարեցնելը չի փոխարինում դատարանի դատավճռին և իրենից չի ներկայացնում այնպիսի մի ակտ, որով հաստատվում է անձի մեղավորությունը»*:

Վերլուծելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական հետապնդման դադարեցման վերաբերյալ և նպատակ ունենալով ուսումնասիրել իրավակիրառ պրակտիկան այն դեպքերում, երբ վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական հետապնդման դադարեցման առաջարկի կապակցությամբ մեղադրյալը պոզիտիվ կամք չի արտա-

¹¹ Постановление Конституционного Суда РФ от 19.05.2022 N 20-П "По делу о проверке конституционности пункта 3 части первой статьи 24 и части второй статьи 27 Уголовно-процессуального кодекса РФ в связи с жалобой гражданина А.В. Новкунского", <https://bit.ly/3LmQ6WP>

հայտում, լուում է անհրաժեշտություն է առաջանում վեր հանել, թե գործնականում ինչպես է անձը առարկում, որ չի կատարել իրեն մեղսագրվող արարքը (ինչ ժամկետում և ինչ ընթացակարգով):

Մեր կողմից գրավոր հարցում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազին, որին ի պատասխան ստացվել է հետևյալ պատասխանը՝ *«վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական հետապնդման դադարեցման ընթացակարգը սահմանված է քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով, իսկ այդ ընթացակարգի կապակցությամբ մեղադրյալի պոզիտիվ կամք չարտահայտելու վերաբերյալ ամփոփված տվյալներ առկա չեն: [...] անձի՝ իրեն մեղսագրված արարքը չկատարելու վերաբերյալ առարկության ժամկետների և ընթացակարգի վերաբերյալ օրենսդրական կոնկրետ կարգավորումներ առկա չեն, սակայն այդ առարկությունը ենթակա է գնահատման վարույթն իրականացնող մարմնի կողմից կոնկրետ քրեական վարույթով անհրաժեշտ փաստական տվյալների հիման վրա»¹²:*

Փաստացի, ՀՀ Գլխավոր դատախազությունը իր իսկ պատասխանով հաստատում է, որ կոնկրետ քրեական վարույթով վարույթն իրականացնող մարմինն է որոշողը, թե արդյո՞ք անձը առարկում է թե ոչ: Վարույթն իրականացնող մարմինը, սակայն, պետք է հիմնվի ինչպես անձի անմեղության կանխավարկածի, այնպես էլ անձնային այնպիսի հանգամանքների վրա, ինչպիսիք են՝ անձի հոգեկան և ֆիզիկական առողջությունը, այսինքն՝ անձը կարո՞ղ է արդյոք հասկանալ թե ինչ արարքի մեջ է մեղադրվում և արդյո՞ք ծանոթ է իրեն առաջադրված մեղադրանքներին թե ոչ: Այս և այլ հարցերին պատշաճ պատասխաններ ստանալուց հետո վարույթն իրականացնող մարմինը, հիմնվելով իր ներքին համոզման վրա, կատարում է կամքի արտահայտման մասին պայմանական բնույթի եզրահանգում և որոշում է, թե անձը լուությամբ ինչ կամք է արտահայտում:

5. Ոչ վերականգնողական հիմքով քրեական հետապնդման դադարեցման և դրա հիմքում դրված ապացույցների վիճարկման հետ կապված խնդիրները քաղաքացիական դատավարության ընթացքում

Ձևավորված պրակտիկայի պայմաններում քրեական հետապնդումը

¹² Գրության համար՝ 20.5/20.5/16015-2023 ամսաթիվը՝ 29.08.2023, պատասխանող՝ ՀՀ գլխավոր դատախազություն:

դադարեցվում է ոչ վերականգնողական հիմքով և այդպիսով, հետագայում ներկայացվելիք քաղաքացիական հայցի շրջանակներում դատարանները մեղադրանքի հիմքում դրված ապացույցները համարում են արժանահավատ, շատ դեպքերում դրանք կրկին անգամ չեն հետազոտվում՝ ինչը չի բխում Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության սկզբունքից, ուստի առկա է խնդիր պրակտիկ աշխատանքի կանոնակարգման տեսանկյունից:

5.1 Ամերիկյան իրավունքում հայտնի «Nolo contendere» հայտարարությունը

Ամերիկյան իրավունքն այս կապակցությամբ առավել գործունե կարգավորումներ ունի, որոնք մեղադրյալին թույլ են տալիս հետագայում վիճարկել մեղադրական դատավճռի հիմքում դրված ապացույցները քաղաքացիական դատավարության շրջանակներում, որը կարելի է մեկնաբանել ինչպես իրավունքի ճյուղերի ավտոնոմիայի, այնպես էլ մեղքի ընդունման և մեղադրանքն ընդունելու հետ կապված ավանդական հասկացողությունների տարանջատման տեսանկյունից: «Ապացույցների մասին դաշնային կանոններ»-ի 410-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական կամ քրեական գործերով թույլատրելի չեն այն ապացույցները, որի պարագայում մեղադրյալը հանդես է եկել *Nolo contendere* հայտարարությամբ: (daw.cornell.edu. Rule 410.pleas, plea discussions, and related statements)¹³:

Ամերիկյան իրավունքում լայնորեն կիրառվող *Nolo contendere* հայտարարությունը թարգմանաբար ունի «չեմ վիճում, չեմ վիճարկում» բովանդակությունը: Վերը նշված օրինակի համանմանությամբ մեղադրյալը, հանդես գալով *Nolo contendere* հայտարարությամբ, փաստացի չի ընդունում իր մեղքը, չի վիճարկում իրեն հասցեագրված մեղադրանքը, որպեսզի հետագայում հնարավորություն ունենա քրեական դատավարության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալները վիճարկել քաղաքացիական դատավարության կարգով՝ իր դեմ բերվելիք բողոքի կապակցությամբ: Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ այստեղ խոսքը գնում է արդեն իսկ ուժի մեջ մտած դատավճռում առկա ապացույցների վիճարկման մասին, այլ ոչ թե ուղղակի քրեական հետապնդման դադարեցման մասին:

¹³ «Federal Rules of Evidence» https://www.law.cornell.edu/rules/fre/rule_410:

Այս առնչությամբ առկա են բազմաթիվ դատական գործեր ամերիկյան դատական պրակտիկայում, ինչպես օրինակ՝ *Lichon v. American Ins Co*¹⁴ գործը: Ըստ այդ գործի, Հայցվորը՝ D.Lichon-ը հանդիսանում էր «Denny's Party Store»-ի սեփականատերը: Պատասխանող կողմը հանդիսանում էր այն ընկերությունը, որն ապահովագրել էր Dennis-ի բիզնես-ը: 1984թ-ին շենքը, որում տեղակայված էր Lichon-ի խանութը մասամբ այրվեց, իսկ 1985թ-ին ամբողջությամբ այրվեց: Հետագայում Lichon-ին ներկայացվեց մեղադրանք այն մասին, որ նա էր կազմակերպել այդ հրդեհը: Մեղադրյալը հանդես եկավ *Nolo contendere* հայտարարությամբ և դատապարտվեց 1 տարվա ազատազրկման:

Հետագայում Lichon -ը հայց ներկայացրեց քաղաքացիական դատարան ընդդեմ ապահովագրական կազմակերպության որպեսզի ստանա փոխհատուցում: Հայցը մերժվեց և այն բողոքարկվեց Միչիգանի գերագույն դատարան: Միչիգանի գերագույն դատարանը նշեց, որ այն պարագայում, երբ հայցը հարուցված լիներ ապահովագրական կազմակերպության կողմից, ապա այդ պարագայում Lichon -ը կկարողանար վիճարկել այդ բողոքը, սակայն *nolo contendere* հայտարարությամբ հանդես եկած անձը չի կարող ինքը լինել քաղաքացիական հայց նախաձեռնողը¹⁵: Ուսումնասիրելով «Ապացույցների մասին դաշնային կանոններ»-ը, ինչպես նաև Միչիգանի գերագույն դատարանի դատավճիռը՝ հանգում ենք այն մտքին, որ ԱՄՆ-ում անձին տրվում է իրավաբանորեն ապահովված հնարավորություն՝ իր իսկ ընտրությամբ հանդես գալ *nolo contendere* հայտարարությամբ՝ ելնելով իր իրավական և փաստացի դրությունից:

6. Եզրափակիչ մաս

Մեր ուսումնասիրության առարկան կազմող հանգամանքների վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ առկա են որոշ օրենսդրական և գործնական խոչընդոտներ, որոնք պահանջում են համակարգային լուծումներ՝ կապած մեղադրյալի իրավունքների պաշտպանության համատեքստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական դատավարությունում վա-

¹⁴ LICHON v. AMERICAN UNIVERSAL INSURANCE COMPANY, Docket No. 84935, (Calendar No. 3). Supreme Court of Michigan.

¹⁵ Lichon v. American Universal Ins. Co 435 Mich. 408 (1990), <https://bit.ly/3Zj4qFm>

րույթի մյուս մասնակիցների համեմատությամբ ամենաանբարենպաստ պայմաններում գտնվում է մեղադրյալը, ում անհրաժեշտ են գործուն և իրական միջոցներ իր իրավունքների որակյալ պաշտպանության համար:

Այսպիսով, ուսումնասիրելով տարբեր երկրների օրենսդրությունն ու դատական պրակտիկան և հիմք ընդունելով անձի անմեղության կանխավարկածը սույն հոդվածի շրջանակներում քննարկված հարցերի արդյունքների ամփոփմամբ առաջարկվում է՝

- 1) Քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 58-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 110-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված պարտականություններով ծանրաբեռնել միայն այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմինը հիմնավորել է, որ 1. այլ ապացուցողական գործողություններով հնարավոր չէ ստանալ վարույթի համար նշանակություն ունեցող ապացույցներ, 2. պատշաճ ուսումնասիրվել է հանցագործության ծանրության աստիճանը, 3. հանրային և մասնավոր շահերի հարաբերակցման տեսանկյունից գերակայում է հանրային շահը:
- 2) Այն դեպքում, երբ իրավասու մարմինն ունի ներքին համոզմունք, որ անձը ամբողջությամբ ծանոթ է իրեն առաջադրված մեղադրանքին, գտնվում է առողջ վիճակում և չի վիճարկում (լռում է) վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական հետապնդման դադարեցման կապակցությամբ, անհրաժեշտ է դադարեցնել քրեական հետապնդումը

ПРАВО ОБВИНЯЕМОГО НА МОЛЧАНИЕ

Александрян Виталий

«Французский университет в Армении» фонд

Юридический факультет, 3-ий курс

Для осуществления некоторых процессуальных действий, предусмотренных Уголовно-процессуальным кодексом РА, необходимо согласие обвиняемого, в некоторых случаях обвиняемый может хранить молчание. Ситуация иная в случаях, когда уголовное преследование прекращается в связи

с истечением срока давности, когда лицо хранит молчание, то есть не выражает позитивную волю. В рамках данной статьи обсуждаются отдельные вопросы, связанные с молчанием лица и право не свидетельствовать против самого себя, а также относительно предложения о прекращении уголовного преследования в связи с истечением срока давности в контексте молчание обвиняемого. Нас интересует вопрос о том, является ли молчание обвиняемого в указанной ситуации согласием на прекращение уголовного преследования или это просто бездействие?

Ключевые слова: *молчание, право не свидетельствовать против самого себя, прекращение уголовного преследования, срок давности, выражение воли, декларация nolo contendere.*

DEFENDANT'S RIGHT TO SILENCE

Vitali Aleksandryan

“French university in Armenia” Foundation

Faculty of law, 3-rd year

The consent of the defendant is required for the implementation of some procedural actions stipulated in the RA Code of Criminal Procedure, in some cases the defendant may remain silent. The situation is different in case of the discontinuation of prosecution due to the expiration of the statute of limitations, when the person remains silent, that is, does not express a positive will. Within the framework of this article, we discuss certain issues related to the person's silence and the right not to incriminate oneself, as well as the person's silence regarding the proposal to discontinuation of prosecution due to the expiration of the statute of limitations - the absence of positive expression of will in the context of whether the silence of the defendant in mentioned situations is an agreement to discontinuation of prosecution or just inaction.

Key words: *silence, the right not to incriminate oneself, discontinuation of prosecution, statute of limitations, expression of will, declaration nolo contendere*

Հոդվածը գրախոսվել է՝ 07.02.2024թ.:

Ներկայացվել է տպագրության՝ 07.02.2024թ.:

ԷՎԹԱՆԱԶԻԱՅԻ՝ ՈՐՊԵՍ ՏՈՒԺՈՂԻ ԽՆԴՐԱՆՔՈՎ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԷԹԻԿԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԻՑ

Աղասյան Արմինե

*ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ասիստենտ,
ոստիկանության կապիտան*

Համառոտագիր: Հոդվածում ուսումնասիրվում են էվթանազիայի՝ որպես տուժողի խնդրանքով սպանության տեսակի հիմնախնդիրները, որոնց շրջանակներում փորձ է արվում նորովի մոտեցում ցուցաբերել էվթանազիայի տեսակների կիրառելիության թույլատրելիության իրավունքի արդիականության վերաբերյալ: Ըստ այդմ՝ առաջարկվում է սահմանել կամավոր ակտիվ էվթանազիայի իրականացում՝ ապահովելով իրավական մի շարք երաշխիքներ, միննույն ժամանակ, կյանքի կոչելով անձի արժանապատիվ մահանալու իրավունքը, և ՀՀ քրեական օրենսգրքում ապահովել դրա ոչ կամավոր տեսակի քրեականացումը՝ տարբերակելով այն սպանությունից և նախատեսելով այն որպես մեղմացուցիչ հանգամանքներում սպանություն:

Բանալի բառեր՝ էվթանազիա, պացիենտի իրավունքներ, ֆիզիկական կամ հոգեկան ուժեղ ցավեր, արժանապատիվ մահ, իրավական և բժշկական երաշխիքներ:

ԷՎԹԱՆԱԶԻԱՅԻ մասին խոսելիս հաճախ ենք բախվում երևույթի բարոյաէթիկական կողմին և հանգում մի շարք հակասությունների, մասնավորապես, հարց է առաջանում. որպես տուժողի խնդրանքով իրեն կյանքից զրկելու դրսևորման տեսակ՝ էվթանազիան հումանիզմի արտահայտում է, թե՞ կյանքի դեմ ուղղված հանցագործություն՝ սպանություն: Մարդիկ, որոնք երբեք նման ընտրության առաջ չեն կանգնել, չեն կարող լիովին գնահատել այն որպես մարդասիրական կամ հանցավոր արարք:

Նախ նշենք, որ «էվթանազիա» եզրույթը, որը ձևակերպվել է որպես

թեթև մահ, առաջին անգամ առաջարկել է անգլիացի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնն իր «Նոր օրգանոն» հայտնի աշխատությունում: Ըստ նրա՝ բժշկի պարտքն է ոչ միայն վերականգնել հիվանդի առողջությունը, այլև ապահովել անբուժելի հիվանդի հանգիստ, առանց տառապանքների մահը¹:

Առաջին ակտիվ էվթանազիան, սակայն, իրականացվել է 1990թ. Ապրիլի 16-ին ամերիկահայ բժիշկ Ջեք Գևորգյանի կողմից իր ստեղծած «Տանատորոն» /հունարեն Thanatos-մահ/ սարքի օգնությամբ, որն աշխատեցնում էր հիվանդ անձը:

Էվթանազիայի հիմնախնդիրը սերտորեն կապված է մարդու կյանքի իրավունքի, միևնույն ժամանակ, մարդուն տառապանքից ազատելու և մարդու մահվան իրավունքի պաշտպանության հետ, այդ պատճառով նշված հիմնախնդրի քննարկման հիմքում ընկած են տարբեր հասարակություններում ձևավորված կրոնական, մշակութային, արժեքայնության դրսևորումների պահանջները, որից բխում են համապատասխան իրավաբանական մոտեցումներ:

Արդի աշխարհում էվթանազիայի հետ կապված իրարամերժ մոտեցումներն արտահայտում են տարբեր դոգմաներ ու ասպեկտներ, որոնք հիմնված են կրոնի, բարոյական ու էթիկական չափանիշների վրա, թեև, ցանկացած կրոնական ուսմունքում կյանքն ամենաբարձր պարգևն ու օրհնությունն է:

Ծննդոց գրքում նշվում է, որ Աստված է ստեղծել ու կյանք տվել բոլոր կենդանի արարածներին²: Այս իմաստով մարդն իրավունք չունի մերժել Աստծո պարգևը կամ դրան վերաբերվել ըստ իր հայեցողության: Դա է պատճառը, որ Հայ առաքելական եկեղեցին մեղք է համարում ինքնասպանությունը, այլ անձի սպանությունը, հետևաբար նաև՝ էվթանազիան, ինչպիսի հանգամանքներն էլ ընկած են ՀՀ օրենսդրական ձևակերպումների հիմքում: Բայց և այնպես, առկա են հիմնախնդիրներ, որոնք արդիական էին, կան և կլինեն. նույն փաստարկներով Հայ առաքելական եկեղեցին մեղք չի համարում հանուն հայրենքի փրկության մարտնչող զինվորների մարտադաշտ մեկնելու, գերի չընկնելու նպատակով իրեն կամ ընկերոջը կյանքից զրկելու կամ ծանր վիրավորում ստանալու դեպքում ընկերոջը կամ մերձա-

¹ Տե՛ս Բեօհոն Փ., Соч. в 2 т., т. 2, I, 1978, էջ 269:

² Տե՛ս Ծննդոց գիրք, Մաս 1, (1.1-27)/ Ծննդոց գիրքը Հին Կտակարանի առաջին գիրքն է և գրվել է **Սովսեստ մարգարեի** կողմից/:

վորին տառապալից ծանր տանջանքներից ազատելու հանգամանքը, դա էլ փաստում է այն մասին, որ Եկեղեցին վերոգրյալ դեպքերում կատարում է թաղման ծիսական բոլոր արարողությունները, այսինքն՝ հանուն հայրենիքի պաշտպանության համար կատարված այդ քայլը երբեք չի կարող համարվել ինքնասպանություն:

Իրապես, մարդն ունի կյանքի իրավունք, բայց ոչ տառապելու պարտականություն:

Բժշկության մեջ էվթանազիան ունի իր տարատեսակները՝ պասիվ և ակտիվ: Պասիվ էվթանազիայի ժամանակ բժիշկը կամ արարքը կատարող անձը դրսևորում է պասիվություն իր արարքներում. դադարեցնում է հիվանդի կյանքը երկարացնող դեղամիջոցների տրամադրումը կամ չի միացնում արհեստական շնչառության սարքավորումները: Ակտիվ էվթանազիայի դեպքում կյանքից զրկելու համար միջամտություն է տեղի ունենում, հակառակ տրամաբանությամբ՝ տրվում են կյանքն ընդհատող դեղամիջոցներ:

Համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում արգելվում է էվթանազիան՝ հիվանդի խնդրանքով նրա մահվան արագացումը որևէ գործողությամբ և միջոցներով:

Օրենքի վերոգրյալ հոդվածի բնորոշումից հասկանում ենք, որ առկա չէ նշում պասիվ էվթանազիայի արգելքի մասին, ավելին, նույն օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է դրա կիրառելիության փաստը, մասնավորապես՝ պացիենտի իրավունքները, որում ուղղակիորեն ամրագրված է, որ վերջինս իրավունք ունի հրաժարվելու բժշկական օգնություն և սպասարկում ստանալուց, ընդ որում՝ նույն օրենքի 25-րդ հոդվածում նախատեսված է նաև ձևաթղթի տարբերակը, որն ապահովում է բժշկական միջամտությունից գրավոր հրաժարումը:

Այսինքն՝ գործնականում պասիվ էվթանազիան կարող է հանդիպել Հայաստանի Հանրապետությունում, երբ պացիենտի ցանկությամբ դադարեցվում է կյանքի երկարացմանն ուղղված բժշկական օգնությունը, ինչը փաստացի արագացնում է բնական մահի մոտեցումը:

Ինչ վերաբերում է ակտիվ էվթանազիային, ապա, որպես տուժողի խնդրանքով սպանության տարատեսակ, այն ՀՀ նոր քրեական օրենսգրքի 161-րդ հոդվածով նախատեսվել է որպես մեղմացուցիչ հանգամանքով սպանություն, մասնավորապես՝ տասնութ տարին լրացած անձի սպանութ-

յունը նրա գիտակցված և կամովին արտահայտված խնդրանքով՝ նրան ֆիզիկական ուժեղ ցավից կամ տառապանքից ազատելու նպատակով:

Նախ՝ պետք է նշել, որ վերոգրյալ հոդվածում նշված տարիքային առանձնահատկության առնչությամբ, կարծում ենք, առկա է որոշակի հակասություն: Մասնավորապես, քրեական պատասխանատվության նվազագույն տարիքը սահմանելու ժամանակ հաշվի են առնվում մի շարք գործոններ, օրինակ՝ տվյալ երկրում անչափահասների հանցավորության վիճակը, դրա միտումները, հանցագործությունների առանձին տեսակները երեխաների կողմից առավել հաճախ կատարելը, անչափահասների հանցավորության կանխարգելման՝ տվյալ երկրում առկա սոցիալական, կազմակերպական, տնտեսական հնարավորությունները, բնակչության իրավագիտակցության մակարդակը, իրավապահ մարմինների և դատական համակարգի հնարավորությունները, հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտը և այլն³:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում տասնվեց տարին լրացել է նախքան հանցանք կատարելը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն անձինք, որոնց տասնչորս տարին լրացել է մինչև հանցանքը կատարելը, ենթակա են քրեական պատասխանատվության որոշ հանցատեսակների համար, այդ թվում՝ սպանության, ներառյալ՝ տուժողի խնդրանքով:

Հարց է առաջանում. Եթե, ըստ օրենսդրի, 14 տարին լրացած անձը կարող է ընկալել մեկ ուրիշին ապօրինաբար կյանքից զրկելու հանգամանքը, նախատեսել քրեական պատասխանատվության բարոյական և հոգեբանական բաղադրիչները, այսինքն՝ ընկալման և գիտակցման իր անհատական կարողություններով պայմանավորված՝ կարող է պատասխան տալ իր հակահասարակական և հակաիրավական վարքագծի համար, ապա ինչու՞ է ՀՀ քրեական օրենսգրքի 161-րդ հոդվածի շրջանակներում կյանքից զրկելու գիտակցման և ընկալման մոտեցումը վերաբերելի միայն 18 տարին լրացած անձին: Չէ՞ որ, եթե 14 տարին լրացած անձը գիտակցում է մեկ ուրիշին կյանքից զրկելու փաստի սոցիալական էությունը, ապա հավանական տրա-

³ Տե՛ս՝ Уголовное право. Общая часть. Томск, 2016, էջեր 107–109; Д.А. Зыков, А.В. Шеслер, С.С. Шеслер. Уголовно-правовые вопросы возраста уголовной ответственности// "Вестник Владимирского юридического института". 2017, №4(45), էջեր 63–67:

մաքանությամբ միևնույն տարիքի անձը նույն գիտակցական ընկալումն ունի իրեն կյանքից զրկելու հանգամանքի վերաբերյալ: Իսկ օրենքի տրամաբանությամբ բացառվում է մեղմացուցիչ հանգամանքով սպանության որակումն այն դեպքում, երբ ֆիզիկական ուժեղ ցավից կամ տառապանքից ազատելու նպատակով գիտակցված և կամովին արտահայտված խնդրանք ձևակերպվի, օրինակ, տասնվեց կամ տասնյոթ տարեկան անձի կողմից, ինչպիսի հանգամանքը կարող է տարակարծությունների հիմք դառնալ:

Բացի դա, կարծում ենք, անհրաժեշտություն կա անդրադառնալ ՀՀ քրեական օրենսգրքի 161-րդ հոդվածում նշված «խնդրանք» եզրույթին, որն իր մեջ որոշակի հիմնախնդիրներ է պարունակում: Նախ՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում սահմանված բժշկական միջամտությունից հրաժարվելու ձևաթուղթը փաստացի վերաբերելի է միայն պասիվ էվթանազիային: Մինչդեռ տուժողի խնդրանքով սպանությունը նախատեսող հոդվածում, որպես ակտիվ էվթանազիայի իրականացման հիմք, «խնդրանք» եզրույթի բնորոշման մասին ոչինչ նախատեսված չէ: Հետևաբար, հարց է առաջանում դրա իրականացման իրավական հիմքերի առկայության վերաբերյալ. մասնավորապես՝

➤ Ինչպե՞ս է ձևակերպվում խնդրանքը՝ գրավո՞ր, թե՞ բանավոր. ծանր հիվանդություն ունեցող անձը, ով ուզում է ազատվել անմարդկային ու դաժան ցավերից, գուցե հոդաբաշխորեն չկարողանա ներկայացնել խնդրանք կամ ընդհանրապես զրկված լինի խոսելու ունակությունից:

➤ խնդրանքն ինչպիսի՞ հիմք ունի՝ իրավակա՞ն, թե՞ ոչ իրավական. դրա բացակայությունը միանշանակ կարող է չարաշահումների առիթ դառնալ և պարունակել հանցածին տարրեր, առավել ևս, որ հանցանքի սուբյեկտն ընդհանուր է:

➤ Առկա՞ է արդյոք բժշկական կոնսիլիումի համապատասխան եզրակացություն առ այն, որ անբուժելի հիվանդության ժամանակ ցավազրկող դեղամիջոցներն ուղղակի չեն բարդացնում հիվանդի վիճակը կամ չեն առաջացնում այլ ախտաբանական վիճակներ.

➤ Մինչ խնդրանքը հաստատված համարելը տարվե՞լ են արդյոք հոգեբանական աշխատանքներ. չե՞՞ որ անձը կարող է ունենալ խոր դեպրեսիա կամ ինքնասպանություն կատարելու ցանկություն, պարզապես մեղքից զերծ մնալու եղանակն ակտիվ էվթանազայի դիմելն է:

➤ Ինչպե՞ս է իրականանում անձի կամովին ու գիտակցված խնդրանքի

արտահայտման վերաբերյալ օրենսդրի ձևակերպման ապահովումը. մահն արագացնելու մասին հիվանդի որոշումը որքանո՞վ է սեփական կամքի, ազատ ընտրության արտահայտություն:

➤ Արդյո՞ք առկա չէ մեզ մոտ կրիպտոնազիա⁴, որի ժամանակ հիվանդի կյանքի ավարտի պահը որոշվում է ոչ թե հենց հիվանդի կողմից, այլ հենց բժիշկն է որոշում կամ հիվանդի ընտանիքի անդամները, կամ օրինական ներկայացուցիչներն են նախաձեռնում, իսկ բժիշկը կիրառում է. քողարկված ու հանցածին տարր պարունակող այս երևույթը բացառված չէ մեր իրականության մեջ, երբ ամիսներ կամ տարիներ շարունակ կոմայի մեջ գտնվող կամ կանխատեսելի տևական հիվանդություն ունեցող անձի հետագա անհույս վիճակը և նրա կամ նրա հարազատների ֆինանսական միջոցների բացակայությունը նման քայլի կամ որոշման է հանգեցնում, ընդ որում՝ պետական ռեսուրսներով ևս անվերջ ու անդադար չի կարող ապահովվել բժշկական այն միջոցառումների իրականացումը, որոնք թերևս տառապանք պատճառող ցավերից վերջնական ազատման որևէ երաշիք չեն տալիս հիվանդին:

➤ Արդյո՞ք ֆիզիկական ուժեղ ցավ կամ տառապանք ունեցող անձին կյանքից զրկելու խնդրանքը կարող է ձևակերպվել վերջինիս հարազատի կողմից, ինչպես նախատեսված է բուժօգնությունից հրաժարվելու համար նախատեսված ձևաթղթում, և, համապատասխանաբար, առկա՞ է արդյոք իրավական երաշխիք մերձավորի կողմից չարաշահումների և հանցավոր արարքների իրականացման արգելքի վերաբերյալ:

Անշուշտ, ակտիվ էվթանազիան՝ որպես տուժողի խնդրանքով սպանության տեսակ, քրեորեն պատժելի արարք համարելու հիմքում ընկած է մի շարք բացասական հետևանքների առաջացման կանխումը, մասնավորապես՝

- Խուսափել բժշկության մեջ մասնագիտական սխալից, քանզի քննարկվող գործողությունը սովորաբար իրականացվում է բժշկական օգնություն իրականացնող անձանց կողմից, և միշտ առկա է այն մոտեցումը, որ, օրինակ, անբուժելի հիվանդության ախտորոշումը կարող է սխալ լինել, կամ ֆիզիկական, կամ հոգեկան տառապանքներ պատճառող հիվանդության ելքն անսպասելիորեն փոխվել,

⁴ Առաջացել է հունարեն kryptos-թաքուն, գաղտնի, tantos- մահ բառերից:

- Խուսափել չարաշահումներից, որոնք կարող են հանցածին տարրեր պարունակել, ընդ որում՝ ինչպես բժշկական օգնություն իրականացնող անձանց, այնպես էլ մերձավոր ազգականների կամ այլ անձանց կողմից,

- կարող է խթանել բժշկական ոլորտում մատուցվող ծառայությունների պահանջարկի աճին, օրինակ՝ ապահովել մասնավոր բժշկական հաստատությունների մոտ վճարունակ հաճախորդների մշտական առկայությունը,

- մարդուն կյանքից զրկելը (թեկուզ իր կամքով) շատ ծանր հոգեբանական բեռ է և կարող է առաջ բերել հոգեբանական հետևանքներ այն կատարող անձի համար,

- անձը կարող է ցավային շոկի ազդեցության տակ գտնվել դեպրեսիվ վիճակում, որով պայմանավորված էլ դիմի նման քայլի, սակայն, հետագայում կարող է զղջալ և հրաժարվել իր արտահայտած խնդրանքից, բայց արդեն անհրաժեշտ միջոցները ձեռնարկված լինեն և այլն:

Բայց և այնպես, կարծում ենք, որ տուժողի խնդրանքով սպանությունը, թեև իրավական ամրագրմամբ համարվում է մեղմացնող հանգամանքներով սպանություն, և անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության, այնուամենայնիվ, բացակայում են վերոգրյալ բացասական հետևանքների բացառման երաշխիքները, քանզի չարաշահումներից և հանցավոր վարքագծից զատ, երբ անձն արհեստականորեն միջամտում է մեկ այլ անձի կյանքի տևողության երկարացմանը և ոչ թե ապահովում նրա կյանքի որակը, այլ հակառակը, փաստացի պատճառում է երկարատև տառապանք, միմյանց հետ հակասության մեջ են մտնում կրոնական, բարոյական և իրավական մոտեցումները:

Միջին դարերում բազմաթիվ զինվորներ ճակատամարտի ժամանակ մնում էին մարտի դաշտում՝ ծանր վիրավորված, մահամերձ ու տանջամահ վիճակում: Նրանք դատապարտված էին անխուսափելի մահվան՝ հոգեվարքի տանջալի ապրումներով: Այսպիսի իրավիճակներում մահը դիտվում էր որպես փրկություն, փրկություն՝ երբեմն երկար և սաստիկ ցավից ու տանջանքից: Այս զինվորների համար գործում էին հատուկ պատրաստված մարդիկ՝ խաչակերտ դաշույններով, ովքեր իրականացնում էին մահացող անձի վերջին «ցանկությունը»: Այդ դաշույնը հայտնի էր «միզերկորդիա»

անունով, որը թարգմանաբար նշանակում էր գթասրտություն⁵: Այսինքն՝ զինվորների տառապանքները ոչ միայն արհեստականորեն չէին երկարացնում, այլ նաև ազատում էին դրանից՝ ապահովելով խաղաղ ու առանց տանջանքների մահը:

Միջնադարում տեղի ունեցած երևույթներից անմասն չէ նաև մեր իրականությունը, քանզի գոյատևման փաստը կյանքի որակի բարելավման երաշխիք չէ. ըստ «Լամբերը և մյուսներն ընդդեմ Ֆրանսիայի» ՄԻԵԴ որոշման՝ բժշկի կողմից անձի կյանքը պահպանելուն ուղղված գործողությունները չպետք է շարունակվեն ոչ ողջամիտ համառության արդյունքում: Այդ գործողությունները, որոնք այլևս թվում են անօգուտ, անհամաչափ կամ տվյալ հիվանդի կյանքն արհեստականորեն երկարաձգելուց բացի այլ արդյունք չեն տալիս, կարող են ընդհատվել կամ չձեռնարկվել: Այս դեպքում բժիշկը պաշտպանում է մահացող անձի արժանապատվությունը և ապահովում նրա կյանքի որակը՝ նախատեսելով 1110-10 հոդվածով սահմանված խնամքը⁶:

Այս իմաստով հարց է առաջանում. արդյո՞ք անձին մահանալ թույլ տալը, օրինակ՝ չներարկելով համապատասխան դեղամիջոցը՝ որպես էվթանազիայի պասիվ տեսակ, և արհեստականորեն կյանքը չերկարացնելը կոնկրետ գործողություն իրականացնելով, օրինակ՝ ներարկելով մահվան արագացման համար դեղամիջոց՝ որպես ակտիվ տեսակ, կարող ենք դիտել որպես սպանություն, արդյո՞ք բժշկի պարտականությունն անհրաժեշտ օգնության ցուցաբերման ենթատեքստում բխեցնում է պարտականություն՝ երկարացնել հիվանդի կյանքի տևողությունը, որը չի բերում բնականոն կենսագործունեության ապահովմանը, գուցե և հակառակը, կրկնապատկվում են նրա անմարդկային ցավերը:

Կարծում ենք, որ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և ներպետական համակարգում բացակայում է մի կարևոր իրավունք՝ արժանի կերպով, առանց տանջանքների մահանալը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք՝

- ընդունել կամավոր ակտիվ էվթանազիայի թույլատրելիության մասին որոշում, որն իր ամրագրումը կստանա նախ՝ «Բնակչության բժշկական

⁵ Տե՛ս Ս.Ն. Դավթյան, Բիոէթիկա, Երևան, 2009, էջ 111 :

⁶ Տե՛ս Լամբերը և մյուսներն ընդդեմ ֆրանսիայի (Գանգատ թիվ 46043/14) էջ24

օգնության և սպասարկման մասին» օրենքում, կամ սույն օրենքի 14-րդ հոդվածը վերաձևակերպել՝ նախատեսելով ոչ միայն բժշկական միջամտությունից հրաժարվելու, այլ նաև՝ կամավոր ակտիվ էվթանազիայի իրականացման իրավունք: Հիշյալ իրավունքի թույլատրելիության շրջանակներում նախատեսել պետության կողմից սահմանադրաիրավական և բժշկական վերահսկողություն դրա իրականացման յուրաքանչյուր դեպքով, մասնավորապես.

✓ ապահովել դատահոգեբուժական կամ, ըստ անհրաժեշտության, այլ փորձաքննությունների եզրակացություններն առ այն, որ անձը հոգեպես առողջ և գիտակից վիճակում է կայացրել այդ որոշումը, և չկան սթրեսի, դեպրեսիայի դրսևորումներ,

✓ ակտիվ էվթանազիայի իրականացման կամարտահայտությունը պայմանավորված է անձի ունեցած ֆիզիկական և հոգեկան ուժեղ ցավերով,

✓ դրա իրականացման ժամանակ ապահովել ընթերականների ներկայություն,

✓ ապահովել տեսաձայնագրող սարքերի առկայություն՝ հիվանդի թույլտվությամբ:

✓ ապահովել բժշկական տեղեկանք առ այն, որ անձն ունի անբուժելի ֆիզիկական և հոգեկան տառապանք պատճառող ցավեր,

✓ ապահովել իրավապահ մարմինների ներկայություն և այլ իրավական հիմքեր:

• Համապատասխանաբար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 161-րդ հոդվածը վերաձևակերպել՝ Հոգեկան կամ ֆիզիկական ուժեղ տառապանքներից ազատելու նպատակով այդպիսի տառապանքներ ունեցող 18 տարեկանը լրացած անձին կյանքից զրկել՝ վերջինիս կամավոր համաձայնության բացակայության պայմաններում:

Իհարկե, վերոգրյալը ևս պետք է ունենա իրավական և բժշկական հիմքեր, որպեսզի հանցագործության սուբյեկտը ենթարկվի քրեական պատասխանատվության մեղմացնող հանգամանքներով սպանության, ոչ թե՝ սպանության հասարակ տեսակի համար:

Մասնավորապես՝

• Կյանքից զրկել հնարավոր է միայն ֆիզիկական կամ հոգեկան ուժեղ տառապանքներ ունեցող անձին,

• անձի տառապանքների առաջացման հիմքում չպետք է ընկած լինի

կյանքից զրկող անձի արարքը, որը բխեցնում է ակտիվ էվթանազիայի իրականացման անհրաժեշտությունը,

- հոդվածի շրջանակներում անձին կյանքից զրկելու հանցակազմի սուբյեկտիվ կողմի ֆակտուալտիվ հատկանիշ հանդիսացող նպատակը պետք է դառնա պարտադիր՝ ազատել անձին ֆիզիկական և հոգեկան տառապանքներից և այլն:

Անշուշտ, այս հիմնախնդիրը բխեցնում է անվերջ պայքար, ի վերջո, տուժողի խնդրանքով սպանությունը, մասնավորապես՝ ակտիվ էվթանազիան, անձի մահանալու իրավունքն է, թե՞ այն կատարողի կողմից մահանալու օգնություն:

Կարծում ենք՝ ներկայացվող առաջարկները թույլ կտան, ապահովելով իրավական մի շարք երաշխիքներ, կյանքի կոչել անձի արժանապատիվ մահանալու իրավունքը, և ՀՀ քրեական օրենսգրքում ապահովելով դրա ոչ կամավոր տեսակի քրեականացումը՝ տարբերակել այն սպանությունից և նախատեսել որպես մեղմացուցիչ հանգամանքներում սպանություն:

ПРОБЛЕМЫ ЭВТАНАЗИИ КАК ВИДА УБИЙСТВА ПО ПРОСЬБЕ ПОТЕРПЕВШЕГО С ЮРИДИЧЕСКОЙ И ЭТИЧЕСКОЙ ТОЧЕК ЗРЕНИЯ

Агасян Армине

Ассистент кафедры уголовного права и криминологии

Академии Образовательного комплекса полиции МВД РА,

капитан полиции

Аннотация. В статье рассматриваются проблемы эвтаназии как вида убийства по просьбе потерпевшего, в рамках статьи предпринимается попытка по-новому подойти к актуальности права на допустимость применения видов эвтаназии. В соответствии с этим предлагается установить добровольную активную эвтаназию, обеспечив ряд правовых гарантий, в то же время, реализовав право человека на достойную смерть, предусмотреть в Уголовном кодексе РА криминализацию ее недобровольного вида, отличая ее от убийства и рассматривая в качестве убийства при смягчающих обстоятельствах.

Ключевые слова: эвтаназия, права пациента, сильная физическая или психическая боль, достойная смерть, юридические и медицинские гарантии.

FUNDAMENTAL ISSUES OF EUTHANASIA AS A TYPE OF MURDER BY THE REQUEST OF THE VICTIM FROM A LEGAL AND ETHICAL POINT OF VIEW

Armine Aghasyan

Teaching assistant of the chair of Criminal Law and Criminology in the Academy of the MIA Police Educational Complex of the Republic of Armenia

Summary: In the article are being studied fundamental issues of euthanasia as a type of murder by the request of the victim in the framework of which an attempt is made to take a new approach on the relevance of the right to authorize the use of types of euthanasia. Accordingly, it is proposed to define implementation of active euthanasia by voluntary, providing a number of legal guarantees, therewith realizing the human right to die with dignity, and also to provide criminal responsibility for its /euthanasia/ non-voluntary and involuntary type in the Criminal Code of RA, distinguishing it from ordinary murder and define it as a murder committed under privilege circumstances.

Key words: euthanasia, the rights of patient, physical or mental intolerable pain, to die with dignity, legal and medical guarantees.

Հոդվածը գրախոսվել է՝ 12.12.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 12.12.2023թ.:

ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՎԵՃԵՐՈՎ

Բաղդասարյան Լարիսա

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, ասպիրանտ

Համառոտագիր: Հայցի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ նշված հետազոտությունը թույլ է տալիս արձանագրել, որ կորպորատիվ վեճերով գործերի քննությամբ անհրաժեշտ է ամրագրել հատուկ հայցի ապահովման միջոց՝ նկատի ունենալով, որ իրավակիրառ պրակտիկայում դժվարություններ են առաջանում հատկապես այն դեպքերում, երբ կորպորատիվ վեճերով հայցվող պահանջի բնույթը լինում է ոչ գույքային, սակայն անհրաժեշտություն է առաջանում հայցի ապահովման նպատակով արգելանք դնել գույքի վրա, այսինքն՝ առաջանում է ոչ գույքային բնույթի պահանջով գույքային բնույթի հայցի ապահովման միջոց կիրառելու անհրաժեշտություն, որը դատարանի կողմից կարող է մեկնաբանվել որպես հայցի առարկայից չբխող, ինչի հիմքով իրապես դատական ակտի կատարման ապահովում կարող է տեղի չունենալ:

Բանալի բառեր: Կորպորատիվ իրավահարաբերություններ, կորպորատիվ վեճեր, հայցի ապահովման միջոց, իրավաբանական անձի ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի¹ (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 25-րդ գլուխը կորպորատիվ վեճերով հայցի ապահովման միջոցների, հակընդդեմ ապահովում պահանջելու կամ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու առանձնահատուկ կարգավորումներ չունի սահմանած, ինչով պայմանավորված՝ նշված գործերի նկատմամբ կիրառվում են Օրենսգրքի 129-րդ հոդվածով սահմանված հայցի ապահովման միջոցների և հայցի ապահովման միջոց կիրառելու, Օրենսգրքի 134-րդ հոդվածով սահմանված՝ հայցի ապահովման միջոցը վերացնելու և Օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված՝ հակընդդեմ ապահովում պահանջելու ընդհանուր նախադրյալները:

¹ Ընդունվել է 09.02.2018թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.05/16(1374):

Ներպետական դատական պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ թեև ՀՀ օրենսդրությամբ կորպորատիվ վեճերով հայցի ապահովման միջոցների հատուկ կարգավորումներ սահմանված չեն, Օրենսգրքի 129-րդ հոդվածով սահմանված հայցի ապահովման միջոցներով նման միջնորդություն ներկայացնող անձը կարող է հասնել արդյունավետ դատական պաշտպանության, երբ անհրաժեշտ է կասեցնել իրավաբանական անձի ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշման կատարումը, սակայն անձի իրավունքի պաշտպանության առումով այն կարող է (դատարանների հայեցողական լիազորությամբ պայմանավորված) հանգեցնել դժվարությունների, քանի որ հնարավոր է դատարանը միջնորդություն ներկայացնող անձի՝ ենթադրյալ գործարք կնքելն արգելելու կամ այլ գործարք կնքելուց ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու մասին հայցի ապահովման միջոցը դիտարկի ներկայացված հայցի առարկայից չբխող՝ հայցի ապահովման միջոց չձեռնարկելու արդյունքում միջնորդություն ներկայացնող անձի դատական պաշտպանությունը փաստացի սպառելով այն իմաստով, որ, օրինակ, իրավաբանական անձի վիճարկվող ժողովի կամ խորհրդի որոշման ի կատար ածման արդյունքում հնարավոր ենթադրյալ բարենպաստ դատական ակտն այլևս չկատարվի, օրինակ՝ անշարժ գույքի վաճառքի արդյունքում առաջանան բարեխիղճ ձեռքբերողներ, որոնցից հնարավոր չլինի այլևս հետ պահանջել անշարժ գույքը, կամ առհասարակ ժողովի կամ խորհրդի որոշման կատարմամբ պայմանավորված հայցն ըստ էության սպառվի: Այլ կերպ ասած՝ կորպորատիվ վեճերով դատարանների կողմից կիրառվելիք հայցի ապահովման միջոցները կարող են մեկնաբանվել տարաբնույթ կերպով, ինչի հիմքով միջնորդություն ներկայացնող անձին և իրավաբանական անձին կարող է էական վնաս պատճառվել: Այնինչ, եթե օրենսդրությամբ իմպերատիվորեն սահմանված լինի ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշման վիճարկման դեպքում *դրա կատարման արգելման/կասեցման մասին առանց միջնորդության ներկայացման հայցադիմումը վարույթ ընդունվելու փաստի ուժով*, ապա հայցվորին էական վնաս չի պատճառվի: Մինչդեռ կարող է նման դատավարական կարգավորումը հակառակ էֆեկտն առաջացնել այն իմաստով, որ իրավաբանական անձի անբարեխիղճ մասնակիցները, իմանալով ի սկզբանե իրենց դատավարական իրավունքի չարաշահման մասին, նպատակ հետապնդելով խոչընդոտել իրավաբանական անձի բնականոն ընթացքին, ներկայացնեն անհիմն

հայցեր՝ արհեստականորեն կասեցնելով իրավաբանական անձի ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշումների կատարումը: Կարծում ենք, որ նման կարգավորման իմպերատիվ կերպով չամրագրումը բխում է երկու կողմերի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից, և այն հավասարակշռում է երկու վիճող կողմերին: Սակայն ներպետական նման կարգավորումը հանգեցնում է նրան, որ դատարանը կարող է հայցվող հայցի ապահովման միջոցը չդիտարկել ներկայացված հայցի առարկայից բխող, ինչով հանգեցնի իրապես խախտված իրավատիրոջ իրավունքի պաշտպանության փակուղու: Հետևապես՝ իրավաբանական անձի ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշումների վիճարկմանն առնչվող գործերի քննությամբ *հայցի ապահովման ինստիտուտի իրավական որոշակիության ապահովման նպատակով* առավել նպատակահարմար է սահմանել առանձնահատուկ կարգավորում՝ հայցի ապահովման այլ միջոցի կիրառման տեսքով կորպորատիվ վեճերով քննվող գործերի քննությամբ, որպեսզի հայցի առարկայից ակնհայտորեն բխող հայցի ապահովման միջոցների կիրառման կապակցությամբ դատարանները հայեցողական անսահմանափակ լիազորություն չունենան՝ դատական պաշտպանություն հայցող անձի արդար դատաքննության, ինչպես նաև արդյունավետ դատական պաշտպանության իրավունքները չխաթարելով:

Նշված հանգամանքով պայմանավորված՝ ուսումնասիրվել են կորպորատիվ վեճերով ՀՀ-ում քննվող 83 քաղաքացիական գործերով կիրառված հայցի ապահովման միջոցների, հայցի ապահովման միջոցների վերացման, հակընդդեմ ապահովում տրամադրելու, նախնական ապահովում տրամադրելու վերաբերյալ դատարանների կողմից կայացված դատական ակտեր՝ ի հիմնավորումն այն փաստարկի, որ դատարանները հայցի ապահովման միջոց կիրառելիս անգամ նույնանման փաստական հանգամանքներով քննվող գործերով կարող են մի դեպքում կիրառել հայցի ապահովման միջոց, մյուս դեպքում՝ ոչ: Մասնավորապես՝ թիվ ԱՎԴ4/0316/02/20 քաղաքացիական գործով շահույթի բաշխման մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու և որպես ածանցյալ պահանջ՝ շահույթի բաշխում իրականացնելու պահանջներով՝ դատարանը կիրառել է հայցի ապահովման միջոց՝ պա-

տասխանող կազմակերպության գույքի վրա արգելանք դնելով²: Թիվ ԵԿԴ/1872/02/17 քաղաքացիական գործով իրավաբանական անձի ընդհանուր ժողովի որոշման վիճարկման վերաբերյալ պահանջով՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մերժվել է³: Սակայն նմանատիպ պահանջով այլ՝ թիվ ԵԴ/1710/02/18 քաղաքացիական գործով Ազատ Վարդանյանն ընդդեմ Մայնինգ Քոնսալթինգ՝ ՍՊ ընկերության՝ ընդհանուր ժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջով դատարանը կիրառել է հայցի ապահովման միջոց՝ արգելելով պատասխանողին օտարելու կամ երրորդ անձանց տիրապետմանը հանձնելու Մայնինգ Քոնսալթինգ՝ ՍՊ ընկերությանը պատկանող շարժական և անշարժ ողջ գույքը⁴: Դատարանների կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու հայեցողական և ոչ միատեսակ եզրահանգումներ կատարելու հանգամանքի հիմնավորման վառ ապացույց է այն, որ նույն՝ թիվ ԵԴ/1047/02/18 քաղաքացիական գործով հայցվորի՝ Ազատ Վարդանյանի կողմից նույն անձանց դեմ միաժամանակ ներկայացվել է նույն առարկայի և հիմքերի վերաբերյալ հայցապահանջ, ինչ թիվ ԵԴ/1710/02/18 քաղաքացիական գործով՝ հայցելով նույնանման հայցի ապահովման միջոցի կիրառում, որը, սակայն, դատարանի կողմից մերժվել է⁵: Թիվ ՍԴ2/0301/02/20 քաղաքացիական գործով՝ ընդհանուր ժողովի որոշումն անվավեր ճանաչելու, նշված որոշման հիման վրա կնքման ենթակա պայմանագրերի կնքումն արգելելու պահանջի մասին՝ «Զանգեզուր Մայնինգ» ՍՊ ընկերության կողմից հայցվող հայցի ապահովման միջոցի կիրառումը՝ արգելել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին հայցադիմումով վիճարկված՝ 06.11.2020թ. կայացված բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշման հիման վրա գրավադրել կամ ցանկացած

²Տե՛ս թիվ ԱՎԴ4/0316/02/20 քաղաքացիական գործով ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 14.08.2020 թվականի հայցի ապահովման միջոցը կիրառելու մասին որոշումը՝ http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=27303072741054852 (16.12.2022):

³Տե՛ս թիվ ԵԿԴ/1872/02/17 քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10.05.2017 թվականի որոշումը՝ http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14355223812354695 (16.12.2022):

⁴Տե՛ս թիվ ԵԴ/1710/02/18 քաղաքացիական գործով 23.02.2018 թվականի որոշումը՝ http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203841679 (16.12.2022):

⁵Տե՛ս թիվ ԵԴ/1047/02/18 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 19.02.2018 թվականի որոշումը՝ http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203839425 (16.12.2022):

այլ կերպով տնօրինել բաժնետոմսերը, արգելել ՀՀ կենտրոնական դեպոզիտարիային կամ բաժնետոմսերի նկատմամբ ապահովված իրավունքի գրանցում իրականացնող որևէ այլ մարմնի (կառույցի) կատարել բաժնետոմսերի նկատմամբ գրավի իրավունքի գրանցում, դատարանի կողմից մերժվել է⁶:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի⁷ (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատական ակտերի կատարումը դատական պաշտպանության արդյունավետ միջոցներից է, որի կարևորությունը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) պրակտիկայից՝ առանց որի դատական ամբողջ գործունեությունը կարող է հավասարվել ոչնչի⁸: Եվրոպական դատարանը, քննելով Խաչատրյաններն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործը, 01.03.2010 թվականի վճռում նշել է. «Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը պաշտպանում է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ կապված հայց հարուցելու յուրաքանչյուրի իրավունքը: Այդպիսով, այն ներառում է «դատարան դիմելու իրավունք»-ը, որի ասպեկտներից մեկը դատարանի մատչելիության իրավունքն է, այսինքն՝ դատարանում քաղաքացիական գործերով վարույթ հարուցելու իրավունքը: Մինչդեռ այդ իրավունքը կլինե՛ր անհրաժեշտ, եթե Պայմանավորվող Պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական, պարտադիր դատական որոշումները մնան չկատարված՝ ի վնաս մի կողմի: Անընդունելի կլինե՛ր, եթե 6-րդ հոդ-

⁶Տե՛ս թիվ ՄԴ2/0301/02/20 քաղաքացիական գործով ՀՀ Սյունիքի մարզի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանի 19.01.2021 թվականի որոշումը՝ http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=35465847065601204 (16.12.2022):

⁷Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան, ընդունվել է 04.11.1950թ., ուժի մեջ է մտել 03.09.1953թ., ՀՀ-ի համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 26.04.2002թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2002.06.05/17(192)Հոդ.367:

⁸Տե՛ս Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը:

վածի 1-ին կետը մանրամասն նկարագրեր կողմերին տրված դատավարական երաշխիքները (արդարացի, հրապարակային դատավարություն և գործերի քննության անընդհատության սկզբունք)՝ առանց դատական որոշումների կատարման երաշխիքների: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի մեկնաբանումը միայն դատարանի մատչելիության և դատավարությունների անցկացման իրավունքի շրջանակներում, հավանաբար, կառաջացներ մի իրավիճակ, որն անհամատեղելի կլիներ իրավունքի գերակայության սկզբունքի հետ, որը Պայմանավորվող Պետությունները Կոնվենցիան վավերացնելիս պարտավորվել են հարգել: Ցանկացած դատարանի կողմից ընդունված դատական որոշման կատարումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով պետք է դիտվի որպես «դատավարության» բաղկացուցիչ մաս»⁹:

ՀՀ վճռաբեկ դատարանը ևս անդրադարձել է հայցի ապահովմանն առնչվող դատավարական իրավահարաբերություններին և թիվ ԵԿԴ/1807/02/13 քաղաքացիական գործով 27.11.2015 թվականի որոշմամբ արձանագրել է, որ անձի արդար դատաքննության իրավունքը կվերածվի տեսական, երևակայական, անիրական իրավունքի, եթե Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը թույլ տա, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը մնան անկատար: Ցանկացած իրավական պետություն պարտավոր է երաշխավորել ոչ թե տեսական, երևակայական կամ անիրական իրավունքներ և ազատություններ, այլ գործնականում հնարավոր և արդյունավետ իրավունքներ և ազատություններ: Այսինքն՝ իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքները ենթադրում են դատավարության և դատական ակտի կատարման փուլերի անքակտելիություն, հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ հայցի ապահովման դատավարական ինստիտուտի և դատական ակտերի հարկադիր կատարմանը վերաբերող ցանկացած իրավական նորմ պետք է մեկնաբանվի և կիրառվի ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված՝ անձի վերը նշված հիմնական իրավունքների լույսի ներքո: (..) Ըստ Վճռաբեկ դատարանի՝ հայցի ապահովման միջոցների կիրառումը, այդ թվում՝ պատասխանողի գույքի կամ դրամական միջոցների վրա արգելանք դնելն այն դատավարական միջոցներն են, որոնք երաշխավորում են դատա-

⁹Տե՛ս Խաչատրյաններն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 01.03.2010 թվականի վճիռը:

կան ակտերի կատարումը, հետևաբար, պատասխանողների գույքի կամ դրամական միջոցների վրա արգելանք դնելը համապատասխանում է իրավական պետությունում իրավունքի գերակայությունն ապահովելու ընդհանուր շահին: Այլ կերպ ասած՝ որպես իրավական պետություն, նպատակ ունենալով ապահովելու իրավունքի գերակայությունը, հայցի ապահովման միջոցը միտված է պաշտպանել հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ պատասխանողը կարող է գործել անբարեխիղճ, կամ երբ այդպիսի միջոցները չկիրառելն անհնարին կարող է դարձնել դատական ակտի կատարումը, արդյունքում՝ այն միտված է ապահովելու անձի «դատարան դիմելու իրավունքը»¹⁰:

Ի հավելումն վերոնշյալի՝ անհրաժեշտ է նշել, որ Օրենսգրքով ներդրվել է նաև նոր դատավարական ինստիտուտ՝ հայցի նախնական ապահովման միջոցների մասին, որոնք հայցի ապահովման միջոցների հետ միաժամանակ օպերատիվ և էֆեկտիվ այն դատավարական միջամտություններն են, որոնք կանխում են կամ կարող են կանխել ապագայում հայցվորին հասցվելիք վնասը: Այսինքն՝ դրանք դատարանի կողմից իրականացվող այն գործողություններն են, որոնց առկայությամբ և ժամանակին կիրառմամբ կարող է հայցվորի իրավունքի խախտումը վերացվել: Բացի այդ, հայցի նախնական ապահովման ինստիտուտը Եվրոպական դատարանի կողմից ևս համարվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համատեքստում կիրառելի: Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիությունը նախնական ապահովման վարույթի կամ ժամանակավոր միջոցների ժամանակ (ներառյալ դատական արգելանքների) կախված է նրանից, թե արդյո՞ք պահպանվել են որոշակի պայմաններ: Առաջին հերթին՝ թե՛ նախնական ապահովման միջոցը, թե՛ հետագայում պաշտպանության ենթակա իրավունքն ու ներկայացված հայցը պետք է Կոնվենցիայի իմաստով լինեն «քաղաքացիաիրավական»: Երկրորդ՝ պետք է հաշվի առնել ժամանակավոր ապահովման բնույթը, առարկան և նպատակը, ինչպես նաև այն իրավունքը, որի վրա կարող է ազդեցություն ունենալ կիրառված միջոցը: Բոլոր այն դեպքերում, երբ նախնական ապահովման միջոցի կիրառումը կարող է ունենալ էֆեկտիվ ազդեցություն ան-

¹⁰Տե՛ս ՀՀ վճարելի դատարանի թիվ ԵԿԴ/1807/02/13 քաղաքացիական գործով 27.11.2015 թվականի որոշումը (www.arlis.am) (16.12.2022):

ձանց «քաղաքացիական» իրավունքների կամ պարտականությունների վրա, որոնց մասին է խոսքը՝ անկախ նրա ժամանակավոր բնույթի լինելու հանգամանքից, Կոնվենցիայի 6-րդ հոդվածը կիրառելի է (տես Micallef v. Malta գործով 15.10.2009 թվականի գործը, գանգատ թիվ 17056/06): Հատկանշական է ընդգծել, որ գործնականում կորպորատիվ վեճերով հայցի նախնական ապահովման ինստիտուտը ևս դատավարական արդյունավետ գործիքակազմ է: Օրինակ՝ Թիվ ՄԴ3/0020/02/22 քաղաքացիական գործով հայցի նախնական ապահովում կիրառելու դիմումի պահանջով դատարանը, որպես հայցի նախնական ապահովման միջոց, արգելել է «Էվոկաբանկ» ՓԲ ընկերությանը «Ճանապարհային դեպարտամենտ ՊՈԱԿ-ի և Զանգեզուր-շին» ԲԲԸ-ի, «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ի միջև 01/20/2020 թվականին կնքված Մ6-Եղեգնուտ-Դեբետ կմ0+000-կմ7+183 ճանապարհահատվածի վերականգնման աշխատանքների իրականացման թիվ CW-NCB-LRNIP-AF2-2020/10 պայմանագրի հիման վրա տրված Բնապահպանական և սոցիալական, ինչպես նաև կատարման երաշխիքների հետևանքի պահանջների կատարումը, այդ թվում չսահմանափակվելով՝ երաշխիքների համար վճարված գումարները «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամին փոխանցելը:

Վերոգրյալի համատեքստում ակնհայտ է, որ հայցի ապահովման ինստիտուտի կիրառումը որևէ կերպ չի խոչընդոտում մրցակցային դատավարության սկզբունքի իրագործմանը և որևէ կերպ չի խախտում սահմանադրորեն երաշխավորված անձանց արդար դատաքննության իրավունքը, որպեսզի օպերատիվ կերպով հայցվորի, ինչպես նաև նման միջոց ձեռնարկելու միջնորդություն ներկայացնող անձի իրավունքի ենթադրյալ խախտումը ժամանակին վերացվի, և հետագայում վերականգնվի վերջիններիս՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը: Այլ հարց է, որ ներկայացված հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը պետք է լինի հիմնավորված և, դեռևս գործի քննությունը չսկսած, ներկայացված հիմնավորումների և ապացույցների համատեքստում դատարանի մոտ առաջացնի իրավական վարկած՝ ենթադրյալ վնասի առաջացման և ենթադրյալ բարենպաստ դատական ակտի կատարումն ապահովելու կապակցությամբ: Ընդ որում՝ կասկածից վեր է, որ կիրառված հայցի ապահովման միջոցը չպետք է հանգեցնի իրավաբանական անձի գործունեության դադարեցման, գործունեության իրականացման փաստացի անհնարինության կամ նրա գործու-

նեության համար ստեղծի էական խոչընդոտներ, կամ հանգեցնի իրավաբանական անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման:

Հայցի ապահովման ինստիտուտը հայտնի է դեռևս հռոմեական իրավունքից և ունի շատ վաղ պատմություն: Ուսումնասիրողները հռոմեական դատավարության պաշտպանական միջոցառումների շրջանակներում, ի թիվս այլոց, առանձնացնում են «missio in possessionem» գույքի վրա արգելանք դնելը կամ հայցվորի կողմից այդ գույքը տիրապետելը, երբ պատասխանողը երաշխավորություն չէր ներկայացնում¹¹:

Հայրենական դատավարագիտության մեջ առկա է կարծիք, որ դատական պրակտիկայում և դատավարագիտության մեջ հայցի ապահովում նախաձեռնող սուբյեկտների շրջանակը որոշելն անհրաժեշտ է պայմանավորել հայցի ապահովման նպատակների ճշգրիտ սահմանմամբ: Հայցի ապահովումն առաջին հերթին մասնավոր շահի պաշտպանության դատավարական ինստիտուտ է, սակայն այն չի կարելի դիտարկել զուտ հայցվորի շահերի պաշտպանության տեսանկյունից, բացառապես համարել հայցվորի նյութաիրավական պահանջների հետագա կատարումն ապահովող կամ հնարավոր վնասները կանխող դատավարական կառուցակարգ: Դատավարագետ Վ.Վ.Հովհաննիսյանի կարծիքով՝ հայցի ապահովման նպատակը դատական ակտով հաստատված նյութական հարաբերությունների վերջնական իրացումն է, դատական ակտի ողջամիտ կատարման համար անհրաժեշտ և բավարար պայմանների երաշխավորումը, ինչով կարող են շահագրգռված լինել և՛ դատարանը, և՛ գործին մասնակցող անձինք¹²:

Աննենկովի կարծիքով՝ հայցի ապահովման ներքո պետք է հասկանալ օրենքով սահմանված տարբեր տեսակի պաշտպանական միջոցների կիրառում շահագրգիռ անձի կողմից, մեծամասամբ հայցվորի կողմից ներկայացվող, սակայն երբեմն նաև պատասխանողի կողմից, ով հանդիսանում է տվյալ գործով հակընդդեմ հայցվոր՝ պատասխանողի գույքի վերաբերյալ

¹¹Տե՛ս *Илюшин Р. Р. Обеспечительные меры в цивилистическом процессе как фактор, влияющий на ограничение прав и законных интересов участников судопроизводства. 2018, էջեր 494-495:*

¹²Տե՛ս *Հովհաննիսյան Վ.Վ., Հայցի ապահովման քաղաքացիադատավարական կառուցակարգի սուբյեկտային շրջանակը որոշելու հիմնախնդիրները ՀՀ-ում, «Բանբեր Երևանի Համալսարանի. Իրավագիտություն», N 1, 2022, էջեր 58-59:*

միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ՝ նպատակ ունենալով նախապես հայցվորին երաշխավորել ստանալու պատասխանողից իր պահանջների բավարարում¹³: Ինչպես նշում է Տրեուշնիկովը՝ մինչև 2002 թվականը «հայցի ապահովման միջոցներ» հասկացությունը հատուկ տարածում չի գտել գիտական միջավայրում, իսկ «հայցի ապահովում» կամ «հայցի ապահովման միջոցներ» տերմինն ինքնին դիտարկվում էր հայցի հիմնարար ինստիտուտի շրջանակներում¹⁴:

Բաշիլովի կարծիքով՝ կորպորատիվ վեճերով հայցի ապահովման ինստիտուտը, որը երաշխավորում է կորպորատիվ վեճի վերաբերյալ կայացվելիք դատական ակտի կատարումը և արբիտրաժային գործի մասնակիցներին զգալի վնաս պատճառելու հնարավորության կանխարգելումը, ամենաարդյունավետ ընթացակարգային մեխանիզմներից մեկն է, որը կոչված է ապահովել խախտված իրավունքների հրատապ պաշտպանությունը¹⁵: Հայցի ապահովման ինստիտուտի նպատակներին չհասնելը պայմանավորված է մի շարք պատճառներով, որոնց թվում են նորմատիվների անբավարար մշակումը՝ հայցի ապահովման միջոցների ոչ միատեսակ կիրառման բացակայությունը, ինչպես նաև ՌԴ օրենսդրությամբ հայցի ապահովման ինստիտուտի ներդրման փուլում անբարեխիղճ դատավարության մասնակիցների դատավարական իրավունքների չարաշահման հետևանքները¹⁶: ՌԴ Գերագույն դատարանի կողմից արձանագրվել է, որ հայցի ապահովման միջոցների կիրառումը նպաստում է կայացվելիք դատական ակտի կատարմանը և անձանց գույքային շահերի պաշտպանությանն արբիտրաժային գործընթացում¹⁷:

Կորպորատիվ վեճերով հայցի ապահովման միջոցների կիրառման անհրաժեշտության հիմնավորման հարցը կարևոր տեղ է գրավում իրավա-

¹³Տե՛ս **Анненков К.Н.** Опыт комментария к уставу гражданского судопроизводства. Санкт-Петербург. 1887, էջ 128:

¹⁴Տե՛ս **Треушников А.М.** Становление института обеспечительных мер в арбитражном процессе // Заметки о современном гражданском и арбитражном процессуальном праве / под ред. **М.К. Треушникова**. М. 2004, էջ 258:

¹⁵Տե՛ս **Башилов Б. И.** Обеспечительные меры по корпоративным спорам в арбитражном процессе Российской Федерации. Дисс. к. ю. н. Москва, 2019, էջ 5:

¹⁶Տե՛ս **Башилов Б. И.** Обеспечительные меры по корпоративным спорам в арбитражном процессе Российской Федерации. Дисс. к. ю. н. Москва, 2019, էջ 8:

¹⁷Տե՛ս **ՌԴ Գերագույն դատարանի N А40-143265/2013 գործով 05.10.2016 թվականի որոշումը՝** <https://base.garant.ru/71505570/> (16.12.2022):

բանական պրակտիկայում: Ռուս դատավարական իրավունքի դոկտրինում գերակշռում է այն կարծիքը՝ ըստ որի արբիտրաժային դատարան հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդություն ներկայացնող անձը պետք է ապացուցի հայցի ապահովման միջոցների կիրառման հիմքերի առկայությունը (Ն. Վ. Պավլովա, Մ. Դ. Օլեգով, Վ. Վ. Յարկով, Մ. Վ. Ֆետյուխին, Յ.Ա. Լվով)¹⁸:

Տեսական գրականության մեջ առկա է նաև կարծիք առ այն, որ չնայած հայցի ապահովման միջոցների ընդունման պայմանները սահմանելիս օրենսդիրը չի սահմանել դատարանի պարտականությունը գնահատելու ներկայացված հայցի առերևույթ (prima facie) հիմնավորվածությունը, մինչդեռ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև նշված հանգամանքի վրա՝ բացառելու ակնհայտ անհիմն ներկայացված հայցապահանջների շրջանակներում միջնորդությունների բավարարումը¹⁹:

Կորպորատիվ վեճերով հայցի ապահովման միջոցների կիրառման կապակցությամբ հատուկ կարգավորումներ են նախատեսված ՌԴ արբիտրաժային դատավարությամբ²⁰: Մասնավորապես՝ ՌԴ արբիտրաժային դատավարության օրենսգրքի 225.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կորպորատիվ վեճերով հայցի ապահովման միջոցներն ընդունում է արբիտրաժային դատարանը՝ սույն օրենսգրքի 90-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում: Ընդ որում՝ միջանկյալ միջոցների ձեռնարկումը չպետք է հանգեցնի սույն օրենսգրքի 225.1-ին հոդվածում նշված իրավաբանական անձի կողմից գործունեություն իրականացնելու փաստացի անհնարինության կամ նրա կողմից գործունեություն իրականացնելու էական դժվարությունների, ինչպես նաև այդ իրավաբանական անձի կողմից Ռուսաստանի Դաշնության օրենսդրության խախտման:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կորպորատիվ վեճերով հայցի ապահովման միջոցներն են՝

¹⁸Տե՛ս **Башилов Б. И.** Обеспечительные меры по корпоративным спорам в арбитражном процессе Российской Федерации. Дисс. к. ю. н. Москва, 2019, էջ 69:

¹⁹Տե՛ս **Գրիգորյան Գ.Վ.**, Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդության առանձնահատկությունները քաղաքացիական դատավարությունում, «Պետություն և Իրավունք», N 3 (91) 2021, էջ 129:

²⁰Տե՛ս ՌԴ արբիտրաժային դատավարության օրենսգրքը՝

http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_37800/b2edc052a7e65cb404b0f0cfec36126bb82e221c/ (16.12.2022):

➤ տնտեսական ընկերությունների և ընկերությունների կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնետոմսերի, բաժնեմասերի, կոոպերատիվների անդամների փայերի վրա արգելանք դնելը,

➤ պատասխանողին և այլ անձանց տնտեսական ընկերությունների և ընկերությունների կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնետոմսերի, բաժնեմասերի, կոոպերատիվների անդամների փայերի վերաբերյալ գործարքներ և այլ գործողություններ կատարելն արգելելը,

➤ իրավաբանական անձի մարմիններին վեճի առարկային առնչվող կամ անմիջականորեն նրա հետ կապված հարցերով որոշումներ ընդունելը կամ այլ գործողություններ կատարելն արգելելը,

➤ իրավաբանական անձին, նրա մարմիններին կամ մասնակիցներին, ինչպես նաև այլ անձանց իրավաբանական անձի մարմինների ընդունած որոշումները կատարելն արգելելը,

➤ արժեթղթերի սեփականատերերի գրանցամատյանի տիրապետողի և (կամ) պահառուի կողմից արժեթղթերի և այլ արժեթղթերի նկատմամբ իրավունքների հաշվառման կամ փոխանցման, ինչպես նաև արժեթղթերի տեղաբաշխման և (կամ) շրջանառության հետ կապված այլ գործողություններ կատարելն արգելելը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արբիտրաժային դատարանի կողմից կարող են կիրառվել նաև հայցի ապահովման այլ միջոցներ ևս, այդ թվում՝ մի քանի հայցի ապահովման միջոց միաժամանակ:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հակընդդեմ ապահովում տրամադրելու չափը որոշվում է սույն Օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, եթե հայցվորի պահանջը ոչ գույքային բնույթ է կրում, ապա հակընդդեմ ապահովման չափը որոշվում է արբիտրաժային դատարանի կողմից՝ ելնելով պատասխանողի հնարավոր վնասների չափից, որոնք պատճառվել են հայցի ապահովման միջոցներով, սակայն ֆիզիկական անձանց համար այն չի կարող լինել ոչ պակաս, քան հիստոն հազար ռուբլուց, իրավաբանական անձանց համար՝ հարյուր հազար ռուբլուց:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին դիմումը քննելիս արբիտրաժային դատարանի մոտ անհրաժեշտություն է առաջացել լսել գործին մասնակցող

անձանց բացատրությունները, և հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դիմում ներկայացրած անձը չի տրամադրել սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հակընդդեմ ապահովումը, դատավորը հայցի ապահովման մասին դիմումի քննությունը կարող է իրականացնել դատական նիստով, որը պետք է անցկացվի նշված դիմումն արբիտրաժային դատարան մուտք լինելու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ արբիտրաժային դատարանը հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դիմումն արբիտրաժային դատարան մուտք լինելու օրվանից ոչ ուշ, քան հաջորդ օրը որոշում է կայացնում դիմումն արբիտրաժային դատարանի վարույթ ընդունելու մասին, որում նշվում է դատական նիստի ժամանակը և վայրը: Նման որոշումը ոչ ուշ, քան որոշումը կայացվելու հաջորդ օրն ուղարկվում է գործին մասնակցող անձանց՝ սույն օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դիմումը վարույթ ընդունելու մասին որոշման մեջ արբիտրաժային դատարանը կարող է նաև նշել հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դիմում ներկայացրած անձի պարտավորությունը, գործին մասնակցող անձանց և սույն օրենսգրքի 225.1 հոդվածում նշված իրավաբանական անձին տեղեկացնել հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դիմումի քննության ժամանակի և վայրի մասին:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված ծանուցման պարտականությունը չկատարելու դեպքում հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դիմում ներկայացրած անձի վրա արբիտրաժային դատարանը կարող է նշանակել դատական տուգանք՝ սույն օրենսգրքի 11-րդ գլխով սահմանված կարգով և չափերով: Այն դեպքում, երբ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դիմումով դիմել է իրավաբանական անձը, դատական տուգանքը դրվում է միանձնյա գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կամ այդ իրավաբանական անձի կոլեգիալ գործադիր մարմինը գլխավորող անձի վրա:

Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ արբիտրաժային դատարանն իրավունք ունի հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դիմումը քննել սույն հոդվածի 7-րդ մասում նշված անձանց բացակայությամբ, եթե դատական նիստը տեղեկություններ ունի հայցի ապահովման միջոց կիրառելու

դիմումի քննարկման ժամանակի և վայրի մասին նրանց ծանուցման վերաբերյալ, կամ եթե հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդող անձը ներկայացրել է ապացույցներ, որ իր կողմից ձեռնարկվել են այդ ծանուցման վերաբերյալ իրենից կախված բոլոր անհրաժեշտ միջոցները:

Ռուսաստանի Դաշնության Գերագույն արբիտրաժային դատարանը բազմիցս անդրադարձել է կորպորատիվ վեճերով հայցի ապահովման միջոցների կիրառմանը արբիտրաժային դատավարությունում: Ռուսաստանի Դաշնության Գերագույն արբիտրաժային դատարանի 09 դեկտեմբերի 2002թ. պլենումի 19-ի թիվ 11 որոշմամբ «Արբիտրաժային դատավարության օրենսգրքի գործողության մեջ մտնելու հետ կապված որոշ հարցերի վերաբերյալ» նշված է, որ հայցի ապահովման միջոցները պարտատիրոջը և այլ անձանց որոշակի գործողություններ կատարելն արգելելու վերաբերյալ, երբ այդ գործողությունները կապված չեն ուղղակիորեն վեճի առարկայի հետ, չպետք է կիրառվեն²¹:

Ռուսաստանի Դաշնության Գերագույն արբիտրաժային դատարանի պլենումի 09 հուլիսի 2003թ. թիվ 11 որոշմամբ «Արբիտրաժային դատարանների կողմից բաժնետերերի ընդհանուր ժողովի անցկացումն արգելելու կապակցությամբ ներկայացվող հայցի ապահովման միջոցների կիրառման պրակտիկայի մասին» նշվել է, որ արբիտրաժային դատարանը չի կարող բաժնետիրական ընկերության կառավարման մարմինների որոշումների վիճարկման, բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի վերաբերյալ գործարքներն անվավեր ճանաչելու, նշված գործարքներով անվավերության հետևանքներ կիրառելու, բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի թողարկումն անվավեր ճանաչելու պահանջներով, ինչպես նաև այլ վեճերով, արգելել բաժնետիրական ընկերությանը, նրա մարմիններին կամ բաժնետերերին անցկացնել բաժնետերերի տարեկան կամ արտահերթ ընդհանուր ժողով²²:

Այս առումով հատկանշական է ընդգծել նաև, որ Գերմանիայի «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 241-րդ և դրան հաջորդող հոդվածներով սահմանված է մինորիտար բաժնետերերի իրավունքի պաշտ-

²¹Տե՛ս ՌԴ Գերագույն արբիտրաժային դատարանի 09.12.2002թ. որոշումը՝ [http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_40630/\(16.12.2022\)](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_40630/(16.12.2022)):

²²Տե՛ս ՌԴ Գերագույն արբիտրաժային դատարանի 09.07.2003թ. որոշումը՝ [http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_43577/\(16.12.2022\)](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_43577/(16.12.2022)):

պանության էֆեկտիվ միջոց այն իմաստով, որ բաժնետերերը կարող են բողոքարկել ընդհանուր ժողովի որոշումները, իսկ բողոքարկմամբ պայմանավորված ընդհանուր ժողովի որոշումը չի կարող ի կատար ածվել, քանի դեռ հայցը գտնվում է դատարանում²³։ Այսինքն՝ Գերմանիայի նյութական իրավունքով արդեն իսկ սահմանվել է ընդհանուր ժողովի որոշման բողոքարկմամբ պայմանավորված դրա կատարման արգելքի վերաբերյալ կարգավորում։ Սակայն Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը կորպորատիվ վեճերով հայցի ապահովման միջոցների կիրառման առանձնահատկություններ չունի սահմանած, և գործում են հայցի ապահովման կիրառման ընդհանուր կանոնները։ Մասնավորապես՝ Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 916-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարումն ապահովելու նպատակով արգելանքը կիրառվում է դրամական պահանջով շարժական կամ անշարժ գույքի վրա կամ այն պահանջով, որը կարող է անցնել դրամական պահանջի։ Համաձայն Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 917-րդ հոդվածի՝ գույքային արգելանքը կիրառվում է շարժական կամ անշարժ գույքի վրա կամ դրամական պահանջով, եթե առանց դրա դատարանի որոշման կատարումը կխոչընդոտվի կամ էապես կոժվարանա²⁴։

Գերմանիայի դատավարական իրավունքում հայցի ապահովման միջոցներից են նաև դատական կարգադրությունները։ Օրենքը տարբերակում է երկու տեսակի կարգադրություն, մասնավորապես՝ Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 935-րդ հոդվածն ապահովում է ցանկացած տեսակի պահանջ՝ բացառությամբ դրամական պահանջների, ինչպես նաև նույն օրենսգրքի 940-րդ հոդվածով նախատեսված դատական կարգադրությունները։ Ըստ Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վեճի առարկայի վերաբերյալ ժամանակավոր միջոցառումները թույլատրվում են, եթե գոյություն ունեցող իրադրության փոփոխությունը կհանգեցնի վտանգի կամ էական բարդություն կստեղծի որևէ անձի իրավունքի իրականացման համար։ Ժամանակավոր միջոցառումները,

²³St' u Գերմանիայի «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը՝ http://www.gesetze-im-internet.de/englisch_aktg/englisch_aktg.html#p1242 (16.12.2022)։

²⁴St' u Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքը՝ https://www.gesetze-im-internet.de/englisch_zpo/englisch_zpo.html (16.12.2022)։

ուղղված վիճելի իրավահարաբերության ժամանակավոր պահպանությանը, կազմում են դատական արգելքների երկրորդ խումբը²⁵:

Ժամանակավոր միջոցառումները, ըստ Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 935-րդ հոդվածի, հիմնական միջոցներն են, որոնք կարող են կասեցնել ընկերության վիճահարույց որոշման կատարումը: Իրավակիրառ պրակտիկայում ժամանակավոր միջոցառումների նմանօրինակ դեպքեր են խոշոր ակտիվների վաճառքի արգելքը և առևտրային ռեգիստր տեղեկություններ ուղարկելու արգելքը կանոնադրության փոփոխման մասին որոշման անվավերությունից հետո: Գերմանիայի առևտրային օրենսգրքի 16-րդ բաժնին համապատասխան՝ դատական արգելքը կարող է վերաբերել անմիջականորեն առևտրային ռեեստրում գրառումների գրանցման արգելմանը²⁶:

Ինչպես գերմանական դատավարական իրավունքում, Շվեյցարիայի դատավարական իրավունքում հայցի ապահովման միջոցները ներկայացվում են ևս արգելանքի կիրառման և դատական կարգադրությունների տեսքով: Շվեյցարիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը միջանկյալ միջոցներ է ձեռնարկում, եթե հայցվոր կողմը ներկայացնում է բավարար ապացույցներ առ այն, որ ընդունվելիք որոշման կատարումը կարող է դժվարանալ կամ անհնար դառնալ, ինչպես նաև՝ եթե մինչև որոշում կայացնելը, ըստ էության, հնարավոր է վնաս պատճառվի իրեն²⁷:

Անգլիայի արբիտրաժային ակտի 44-րդ բաժնի համաձայն՝ եթե արբիտրաժային վարույթի մասնակիցների կողմից այլ բան սահմանված չէ, դատարանը կարող է արբիտրաժային դատավարությամբ կայացնել հետևյալ հարցերի վերաբերյալ որոշումներ: Նշված հարցերն են՝ a) վկաների ցուցմունքներն ստանալը, b) ապացույցների պահպանումը, c) կարգադրություններ տալը, որոնք վերաբերում են այն գույքին, որը հանդիսանում է դատավարության առարկա կամ որի վերաբերյալ որևէ հարց է առաջանում դատա-

²⁵Տե՛ս **Башилов Б. И.** *Обеспечительные меры по корпоративным спорам в арбитражном процессе Российской Федерации. Дисс. к. ю. н. Москва, 2019, էջ 110:*

²⁶Տե՛ս **Башилов Б. И.** *Обеспечительные меры по корпоративным спорам в арбитражном процессе Российской Федерации. Дисс. к. ю. н. Москва, 2019, էջ 114:*

²⁷Տե՛ս *Շվեյցարիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը՝ <https://www.fedlex.admin.ch/eli/cc/2010/262/de> (16.12.2022):*

վարության ընթացքում՝ (i) գույքն ստուգելու, լուսանկարելու, պահպանելու, պահելու կամ առգրավելու համար, կամ (ii) նմուշներ վերցնելու կամ գույքի վերաբերյալ ցանկացած դիտարկում կամ փորձ կատարելու հրաման և այդ նպատակով ցանկացած անձի թույլտվություն՝ մուտք գործելու ցանկացած տարածք, որը գտնվում է արբիտրաժային վարույթի մասնակցի տիրապետության տակ կամ վերահսկվում է իր կողմից (d) դատավարության առարկա հանդիսացող ցանկացած ապրանքի վաճառք, e) ժամանակավոր դատական արգելքի կամ կառավարչի նշանակում: Նույն բաժնի համաձայն՝ եթե գործն անհետաձգելի է, դատարանը կարող է արբիտրաժային վարույթի մասնակցի կամ արբիտրաժային վարույթի ենթադրյալ մասնակցի միջնորդությամբ կայացնել այնպիսի որոշումներ, որոնք նա անհրաժեշտ է համարում ապացույցների կամ ակտիվների պահպանման նպատակով: Եթե գործը հրատապ չէ, դատարանը որոշում է կայացնում միայն արբիտրաժային վարույթի կողմերից մեկի միջնորդության հիման վրա (մյուս կողմերին և արբիտրաժային դատարանին ծանուցելուց հետո), որը ներկայացվում է արբիտրաժային դատարանի թույլտվությամբ կամ այլ կողմերի գրավոր համաձայնությամբ: Ամեն դեպքում դատարանը կիրառում է այն միայն այն դեպքում կամ այնքանով, որքանով արբիտրաժային դատարանը և ցանկացած արբիտրաժային կամ այլ հաստատություն կամ անձ, որը կողմերի կողմից լիազորված է այս առումով, չունի լիազորություն կամ ներկայումս ի վիճակի չէ արդյունավետ գործել²⁸:

ԱՄՆ քաղաքացիական դատավարության դաշնային կանոնների 65-րդ կանոնի համաձայն՝ դատարանը կարող է նախնական դատական արգելք կիրառել միայն հակառակորդ կողմին ծանուցելուց հետո: Դատարանը կարող է ժամանակավոր ապահովման միջոց կիրառել առանց հակառակորդ կողմի կամ նրա փաստաբանի գրավոր կամ բանավոր ծանուցման միայն այն դեպքում, եթե (A) որոշակի փաստերով կհիմնավորվի, որ դիմումատուն կստանա անմիջական և անդադնալի վնաս, կորուստ՝ նախքան հակառակորդ կողմը կկարողանա առարկություն ներկայացնել, և (B) դիմումատուի փաստաբանը գրավոր հաստատում է, որ ծանուցումն ուղարկելու ցանկացած միջոց ձեռնարկվել է, և այն պատճառները, թե ինչու այն չպետք է պա-

²⁸Տե՛ս *Անգլիայի արբիտրաժային ակտը*՝
<https://www.legislation.gov.uk/ukpga/1996/23/section/44> (16.12.2022):

հանջվի: Դատարանի յուրաքանչյուր առանց ծանուցման կայացված որոշման մեջ պետք է նշվի դրա կայացման ամսաթիվը և ժամը, նկարագրվի վնասը և նշվի, թե ինչու է վնասն անդառնալի, ինչու է որոշումը տրվել առանց ծանուցման, և անհապաղ ներկայացվի քարտուղարի գրասենյակ, մուտքագրվի արձանագրության մեջ: Որոշման գործողության ժամկետը լրանում է ուժի մեջ մտնելուց հետո դատարանի կողմից սահմանված ժամկետում՝ ոչ ավելի, քան 14 օր, բացառությամբ՝ եթե դատարանը հիմնավոր պատճառով չի երկարաձգել այն նույն ժամկետով, կամ հակառակ կողմը չի համաձայնել ավելի երկար ժամկետի երկարաձգման: Դատարանը կարող է կայացնել նախնական կարգադրություն կամ ժամանակավոր ապահովման միջոց միայն այն դեպքում, եթե դիմումատուն կտրամադրի ապահովում այն գումարի չափով, որը դատարանը համարում է պատշաճ՝ ծախսերը վճարելու և ցանկացած կողմի կրած վնասը հարթելու համար²⁹:

Եթովպիայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի համաձայն՝ հայցվորը գործը հարուցելուց հետո ցանկացած ժամանակ և կամ մինչ այդ, կամ դրանից հետո, անկախ այն հանգամանքից՝ պահանջվում է գումարի փոխհատուցում, թե՛ ոչ, դատարանին կարող է դիմում ներկայացնել ժամանակավոր դատական արգելք կիրառելու վերաբերյալ, որը նախատեսված է պատասխանողին հետ պահելու պայմանագրի խախտում կատարելուց կամ այնպիսի գործողության կատարումից, որի վերաբերյալ բողոք է ներկայացվել, եթե պայմանագրի կամ այլ գործողության խախտումները վնասում են հայցվորին³⁰:

Այս առումով անհրաժեշտ է ընդգծել, որ հայցի ապահովման միջոցները թե՛ ներպետական, թե՛ օտարերկրյա երկրների օրենսդրությամբ բաժանվում են երկու խմբի՝ գույքային և ոչ գույքային բնույթի հայցի ապահովման միջոցների: Կորպորատիվ վեճերով գույքային բնույթի հայցի ապահովման միջոցներն են, օրինակ, գույքի նկատմամբ արգելանքի կիրառումը, իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի, բաժնեմասերի, կոոպերատիվների անդամների փայերի վրա արգելանք դնելը, ոչ գույքային

²⁹Տե՛ս ԱՄՆ քաղաքացիական դատավարության դաշնային կանոնները՝ <https://uscode.house.gov/view.xhtml?path=/prelim@title28/title28a/node88&edition=prelim> (16.12.2022):

³⁰Տե՛ս Եթովպիայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքը՝ [http://hrlibrary.umn.edu/research/Civil%20Procedure%20Code%20\(English\).pdf](http://hrlibrary.umn.edu/research/Civil%20Procedure%20Code%20(English).pdf) (16.12.2022):

բնույթի հայցի ապահովման միջոցներն են՝ պատասխանողին և այլ անձանց իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի, բաժնեմասերի, կոոպերատիվների անդամների փայերի վերաբերյալ գործարքներ և այլ գործողություններ կատարելն արգելելը, իրավաբանական անձի մարմիններին վեճի առարկային առնչվող կամ անմիջականորեն նրա հետ կապված հարցերով որոշումներ ընդունելը կամ այլ գործողություններ կատարելն արգելելը, իրավաբանական անձին, նրա մարմիններին կամ մասնակիցներին, ինչպես նաև այլ անձանց իրավաբանական անձի մարմինների ընդունած որոշումները կատարելն արգելելը, պետական ռեզիստրին կամ պահառուին արժեթղթերի նկատմամբ իրավունքների հաշվառման կամ փոխանցման, ինչպես նաև արժեթղթերի տեղաբաշխման և (կամ) շրջանառությանն առնչվող այլ գործողություններ կատարելն արգելելը:

Ղատական պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ կորպորատիվ վեճերով հայցվող հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունների գերակշիռ մասը վերաբերում է իրավաբանական անձի ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշումների վիճարկման պահանջներին, իսկ վերը բերված քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերից բխում է, որ իրավակիրառ պրակտիկայում հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ դատարանների կողմից տրված դիրքորոշումներն **անգամ նույնանման փաստական հանգամանքներով քննվող գործերով** էապես տարբերվում են այն իմաստով, որ մի դեպքում՝ դատարանը կարող է փաստել, որ հայցի առարկայից չի բխում հայցվող հայցի ապահովման միջոցի կիրառումը, իսկ մյուս դեպքում՝ կիրառել հայցի ապահովման միջոց, եթե անգամ հայցի ապահովման միջոցով *հայցի առարկայի սահմաններից* դուրս հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդություն է ներկայացվել: Նշված հանգամանքները վկայում են այն մասին, որ իրավաբանական անձի ընդհանուր ժողովի որոշումների կամ խորհրդի որոշումների վիճարկման կապակցությամբ, որպեսզի դատարանները չունենան անսահմանափակ հայեցողական լիազորություն, անհրաժեշտ է կորպորատիվ վեճերով քննվող իրավաբանական անձի ընդհանուր ժողովի որոշումների կամ խորհրդի որոշումների վիճարկման վարույթներով սահմանել առանձահատուկ հայցի ապահովման միջոց ևս, այն է՝ *վիճարկվող ընդհանուր ժողովի որոշման կամ վիճարկվող խորհրդի որոշման կատարման կասեցման կապակցությամբ*, քանի որ հնարավոր է գործի

քննության ընթացքում վիճարկվող որոշման վերաբերյալ կիրառվի հայցի ապահովման միջոց, սակայն վիճարկվող որոշման կայացումից հետո կնքվի գործարք՝ դրանով իսկ առաջացնելով դատական պաշտպանություն հայցող անձի ենթադրյալ բարենպաստ դատական ակտի կատարման անհնարինություն: Հատկանշական է ընդգծել, որ իրավակիրառ պրակտիկայում դժվարություններ են առաջանում նաև հատկապես այն դեպքերում, երբ կորպորատիվ վեճերով հայցվող պահանջի բնույթը լինում է ոչ գույքային, սակայն անհրաժեշտություն է առաջանում հայցի ապահովման նպատակով արգելանք դնել գույքի վրա, այլ կերպ ասած՝ առաջանում է ոչ գույքային բնույթի պահանջով գույքային բնույթի հայցի ապահովման միջոց կիրառելու անհրաժեշտություն, որը բնավ ևս կարող է մեկնաբանվել որպես հայցի առարկայից չբխող, ինչի հիմքով իրապես դատական ակտի կատարման ապահովում կարող է տեղի չունենալ: Ասվածը վերաբերում է, օրինակ, նույն վերը բերված իրավաբանական անձի խորհրդի որոշման կամ ընդհանուր ժողովի որոշման, շահույթի բաշխման մասին որոշում կայացնելուն պարտավորեցնելու պահանջներին և այլն, որոնք տեսականորեն հանդիսանում են ոչ գույքային/ոչ դրամական բնույթի պահանջներ, սակայն նշված պահանջների, այդ թվում դրանցով հայցվող ածանցյալ պահանջների բավարարման արդյունքում առաջանա որոշակի գույք որևէ գործին մասնակցող անձից պահանջելու իրավական նախադրյալ, որի արդյունքում ստացվում է, որ ոչ գույքային բնույթի հայցի ապահովման միջոցներով այլևս անհրաժեշտություն է սահմանել դատավարական կարգավորում՝ նշված իրավական խնդրի լուծման կապակցությամբ:

Ընդ որում՝ ուշադրության արժանի շահ է նաև այն, որ կորպորատիվ վեճերով հայցվող հայցի ապահովման միջոցով պաշտպանվում են ոչ միայն հայցվորի իրավունքները և օրինական շահերը և կանխվում վերջինիս պատճառվելիք ենթադրյալ վնասի առաջացումը, այլ նաև՝ իրավաբանական անձի՝ հաշվի առնելով «անուղղակի հայցերով» գործի քննության առանձնահատկությունները, որոնց անդրադարձ է կատարվել «Կորպորատիվ վեճերի քննությունը՝ որպես հատուկ հայցային վարույթի տեսակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով» գլխական հոդվածով: Այսինքն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու հիմք պետք է լինի ոչ միայն ներկայումս սահմանված *միջնորդություն ներկայացնող անձին պատճառվելիք ենթադրյալ վնասի կանխումը*, այլ նաև՝ *միջնորդություն չներկայացնող իրավաբանական*

անձին, քանի որ կորպորատիվ վեճերով իրավաբանական անձի մասնակիցը դատական պաշտպանություն է իրականացնում նաև իրավաբանական անձի շահերից ելնելով, և դրա վառ ապացույցն է Օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, որը սահմանում է, որ այն դեպքերում, երբ իրավաբանական անձի մասնակիցը (անդամը) դիմել է դատարան իրավաբանական անձին պատճառված վնասը հատուցելու, իրավաբանական անձի կնքած գործարքն անվավեր ճանաչելու և (կամ) գործարքի անվավերության հետևանքները կիրառելու պահանջով, նա օգտվում է հայցվորի իրավունքներից, կրում է նրա պարտականությունները, ինչպես նաև կարող է պահանջել գործով կայացված վճռի հարկադիր կատարում՝ հոգուտ իրավաբանական անձի: **Հետևապես՝ եթե կորպորատիվ վեճերով իրավաբանական անձի մասնակիցը կարող է պահանջել դատական ակտի կատարում հոգուտ իրավաբանական անձի, օրենսդիրը վերջինիս պետք է ապահովի դատական ակտի կատարման ապահովման նպատակով հոգուտ իրավաբանական անձի հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելու կապակցությամբ ևս, մինչդեռ ներկայումս գործող օրենսդրությամբ հայցի ապահովման միջոց կիրառելու իրավական նախադրյալ է, ի թիվս այլնի, բացառապես միջնորդություն ներկայացնող անձին էական վնաս հասցնելու կանխավարկածը՝ բաց մնալով իրավաբանական անձին ենթադրյալ պատճառվելիք վնասի կանխման հարցը:**

Այսպիսով՝ կորպորատիվ վեճերով հայցի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ նշված հետազոտությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները:

1. Օրենսգրքի 25-րդ գլխով անհրաժեշտ է ամրագրել կորպորատիվ վեճերով գործերի քնությամբ ևս մեկ հայցի ապահովման միջոց:

2. Անհրաժեշտ է Օրենսգրքի 25-րդ գլխով սահմանել, որ դատարանը կարող է կիրառել հայցի ապահովման միջոց՝ կասեցնելով հայցապահանջով վիճարկվող իրավաբանական անձի ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշման կատարումը, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը կամ էական վնաս հասցնել ոչ միայն միջնորդություն ներկայացնող անձին, այլ նաև Օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավաբանական անձին:

Անհրաժեշտ է Օրենսգրքի 25-րդ գլխով սահմանել իրավակարգավորում առ այն, որ կորպորատիվ վեճերով քննվող ոչ դրամական բնույթի պահանջ-

ներով կարող է կիրառվել գույքային բնույթի հայցի ապահովման միջոց, եթե հայցի էությունից և առարկայից բխում է, որ պահանջի բավարարման արդյունքում առաջանալու է գործին մասնակցող անձի կողմից որոշակի գույք որևէ գործին մասնակցող անձի փոխանցելու պարտականություն:

ПРОБЛЕМЫ, СВЯЗАННЫЕ С ОБЕСПЕЧЕНИЕМ ИСКА КОРПОРАТИВНЫМИ СПОРАМИ

Багдасарян Лариса Леоновна

Аспирант кафедры гражданского процесса ЕГУ

Аннотация: Указанное исследование применения мер обеспечения иска позволяет констатировать, что при рассмотрении дел по корпоративным спорам необходимо закрепить специальные меры обеспечения иска, принимая во внимание, что в правоприменительной практике возникают трудности, особенно в тех случаях, когда характер искового требования по корпоративным спорам бывает неимущественным, однако возникает необходимость наложить арест на имущество с целью обеспечения иска, то есть возникает необходимость применения мер обеспечения иска имущественного характера по требованию неимущественного характера, что может быть истолковано судом как не вытекающее из предмета иска, на основании чего обеспечения исполнения судебного акта может и не произойти.

Ключевые слова: корпоративные правоотношения, корпоративные споры, обеспечение иска, решение общего собрания или совета юридического лица.

PROBLEMS RELATED TO SECURING A CLAIM CORPORATE DISPUTES

Larisa Baghdasaryan

PHD Student of the YSU Chair of Civil Procedure

Summary: This study of the application of measures to secure a claim allows us to state that when considering cases of corporate disputes, it is necessary to consolidate special measures to secure a claim, taking into account that difficulties arise in law enforcement practice, especially in cases where the nature of the claim in corporate disputes is non-material, however, it becomes necessary to seize property in order to secure a claim, that is, there is a need to apply measures to secure a claim of a property nature at the request of a non-property nature, which may be interpreted by the court as not arising from the subject of the claim, on the basis of which the enforcement of the judicial act may not occur.

Key words: Corporate legal relations, corporate disputes, securing a claim, decision of the general meeting or council of a legal entity.

Հոդվածը գրախոսվել է՝ 30.01.2024թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 30.01.2024թ.:

ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԿԱՊԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՎՆԱՄՆԵՐԸ ՀԱՏՈՒՑԵԼԻՄ

Բաղդասարյան Հայկ

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի

քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Վնասների հատուցման համար անհրաժեշտ պայման է ոչ իրավաչափ վարքագծի և վնասների միջև պատճառական (պատճառահետևանքային) կապի առկայությունը: Այն, որ պարտավորության չկատարման և առաջացած վնասների միջև պետք է առկա լինի պատճառական կապ, ընդունված է ոչ միայն մի շարք ազգային իրավական համակարգերում¹, այլ նաև միջազգային ունիֆիկացիոն աղբյուրներում²:

Պատճառահետևանքային կապի բնորոշման և դրա առկայության գնահատման հարցը, լինելով վնասների հատուցման նախապայման, սերտորեն առնչվում է վնասների ծավալի որոշման խնդրին, քանի որ պատճառահետևանքային կապերի գնահատման այս կամ այն տարբերակը կարող է հանգեցնել պատճառական կապի շղթայի կրճատման, արդյունքում՝ հատուցելի վնասների չափի նվազման կամ ընդհանրապես վնասների հատուցման բացառման: Ուստի ինչ-որ պահից պատճառահետևանքային կապի խնդիրը կարող է վերափոխվել վնասների չափի գնահատման խնդրի³: Այսինքն՝

¹ Տե՛ս **Schwenzer I., Hachem P., Kee C.**, Global Sales and Contract Law, Oxford University Press Inc., New York, 2012թ. էջեր 1301-1302:

² Տե՛ս Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին ՄԱԿ կոնվենցիայի 74 հոդվածը, ՀՀԱԳՆՊՏ 2011.01.14/12(20), ընդունվել է 11 ապրիլի 1980թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 01 հունվարի 2010թ., Եվրոպական պայմանագրային իրավունքի սկզբունքների 9:501 հոդվածը, հասանելի է՝ https://www.trans-lex.org/400200/_pecl/#head_145: Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքների (Ունիդրուայի սկզբունքներ) 7.4.2 հոդվածը, հասանելի է՝ <https://www.unidroit.org/wp-content/uploads/2021/06/Unidroit-Principles-2016-English-i.pdf>, Եվրոպական Մասնավոր Իրավունքի Սկզբունքների, Հասկացությունների և Մոդելային Կանոնների (DCFR) 7:304 հոդվածը, հասանելի է՝ https://www.ccbe.eu/fileadmin/speciality_distribution/public/documents/EUROPEAN_PRIVATE_LAW/EN_EPL_20100107_Principles_definitions_and_model_rules_of_European_private_law_-_Draft_Common_Frame_of_Reference_DCFR_.pdf:

³ Տե՛ս **Брагинский М. И., Витрянский В.В.** Договорное право Общие положения, 3-е издание, Москва, Статут, 2011թ., էջ 718:

պատճառական կապի գնահատումը չի սահմանափակվում զուտ դրա առկայությունը կամ բացակայությունը փաստելով, այն ունի նաև գնահատման որակական կողմ, որից շատ դեպքերում կախված է հատուցելի վնասների չափը:

Պատճառական կապի գնահատման մեկնարկային կետը պարտավորության խախտման և վնասների միջև տրամաբանական կապն է, ինչը սովորաբար բնորոշվում է նաև որպես բնական կամ փաստական պատճառահետևանքային կապ: Նշվածի գնահատման ստանդարտը «պայման, առանց որի հնարավոր չէ» (*conditio sine qua non*) սկզբունքն է, ինչը ընդհանուր իրավունքի համակարգում արտահայտվում է «բացակայության չափանիշի» կամ «եթե չլիներ», «եթե, ապա» (*but for*)⁴ բանաձևի միջոցով «եթե չլիներ գործողությունը կամ անգործությունը, ապա վնասները չէին առաջանա»:

Բնական պատճառահետևանքային կապը որպես գնահատման չափանիշ դիտարկելու դեպքում պարտավորության խախտման արդյունքում ծագած ցանկացած ուղղակի կամ անուղղակի վնաս՝ ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա է հատուցման: Սակայն ակնհայտ է, որ բնական պատճառական կապի հայեցակարգը կարող է հանգեցնել ծայրահեղությունների: Օրինակ՝ պատվիրված հագուստը դերձակի կողմից հաճախորդին ուշ առաքելու արդյունքում հաճախորդը հետաձգում է նախապես ամրագրված ճամփորդությունը և մեկնում մեկ այլ գնացքով, որը ենթարկվում է վթարի, իսկ հաճախորդն ստանում է մարմնական վնասվածքներ⁵: Ստացվում է, որ բնական պատճառական կապի տեսության համաձայն՝ դերձակը պետք է պատասխանատվություն կրի հաճախորդին պատճառված վնասների համար, քանի որ եթե պարտավորությունները կատարվեին ժամանակին, ապա հաճախորդը չէր հետաձգի ճամփորդությունը և չէր մեկնի վթարված գնացքով:

Բացի այդ, պարտավորության խախտման արդյունքում չեն բացառվում մեկից ավելի վնասները, հետևաբար նաև՝ պատճառական կապի մեկից ավելի շղթաների գոյությունը: Նշվածի ցայտուն օրինակ է գրականության մեջ քննարկվող իրավիճակը, երբ ֆերմերը գիտակցաբար առողջ կենդանիների գնով վաճառում է վարակիչ հիվանդությամբ վարակված ընտանի կեն-

⁴ Տե՛ս **Schwenzer I., Hachem P., Kee C.** նշված աշխատությունը, էջ 1032, **Kramer A.**, *The Law of Contract Damages*, Third edition, Hart publishing, 2022թ., էջեր 12-13.

⁵ Տե՛ս **G. H. Treitel**, *Remedies for Breach of Contract*, Oxford Clarendon Press, 1988թ., էջ 137:

դանիներին: Արդյունքում՝ հիվանդությամբ վարակվում և սատկում են նաև գնորդի մյուս կենդանիները, որի պատճառով գնորդը զրկվում է հողը մշակելու հնարավորությունից և եկամտից, ինչի հետևանքով էլ չի կարողանում վճարել վարկերը, դրանց վրա հաշվեգրվում են տոկոսներ, բռնագանձում է տարածվում վերջինիս տան վրա, իսկ ինքը ստիպված է լինում գտնել նոր՝ վճարովի բնակարան⁶: Նկարագրված իրավիճակում արդյո՞ք վաճառողը պարտավոր է հատուցել գնորդին պատճառված բոլոր վնասները՝ ընդհուպ բնակարանի վարձակալության գինը: Եթե պարտավորության խախտման և վնասների միջև պատճառական կապը որոշվի *conditio sine qua non* թեստի միջոցով, ապա՝ այո՝, քանի որ նշված բոլոր հետևանքները չէին առաջանա, եթե չլիներ առողջ (պատշաճ որակի) կենդանիներ վաճառելու պարտավորության խախտումը: Մակայն ակնհայտ է նաև, որ վաճառողն առողջ կենդանիներ հանձնելու պարտավորություն ստանձնելիս դժվար թե պատկերացներ պարտավորության խախտման արդյունքում վրա հասած հաջորդական վնասների ողջ շարունակությունը:

Նման պայմաններում անհրաժեշտ է գտնել ինչ-որ միջոց կամ մեխանիզմ այն անձի պատասխանատվությունը սահմանափակելու և պատճառահետևանքային շղթայի այն հետևանքները բացառելու համար, որոնց համար ողջամիտ չէր լինի կամ անարդար կլինեին նախատեսել վնասների հատուցման պարտավորություն⁷:

Որպես ընդհանուր կանոն՝ պատճառական կապը բացակայում կամ սահմանափակվում է այն դեպքերում, երբ պայմանագրի խախտման և վնասների միջև տեղի է ունենում մեկ այլ՝ ընդհատող իրադարձություն: Որպես այդպիսին՝ կարելի է նշել, տուժողի վարքագիծը, երրորդ կողմի գործողությունները, ինչպես նաև այնպիսի իրադարձությունները, որոնց համար ո՛չ պայմանագիրը խախտող, ո՛չ տուժող կողմը չունեն վերահսկողություն և պատասխանատու չեն:

Խորհրդային իրավունքը հատուցման ենթակա չէր համարում այն վնասները, որոնք իրավախախտման հետ կապված էին պատահական

⁶ Տե՛ս **G. H. Treitel**, նշված աշխատությունը էջ 140, **B. Nicholas** *The French Law of Contract*, 2nd ed., 1992թ.:

⁷ Տե՛ս **G. H. Treitel**, նշված աշխատությունը էջեր 136-142, **Schwenzer I., Hachem P., Kee C.** նշված աշխատությունը էջեր 1302-1304:

պատճառական կապով⁸: Վ. Պ. Գրիբանովի պնդմամբ՝ պատճառականությունն արտացոլում է երևույթների անհրաժեշտ կապը, արդյունքում այն համընկնում է օրինաչափության հետ⁹:

Մեկ այլ մոտեցման համաձայն՝ պատճառական կապը բաժանվում է ուղղակի (անմիջական) և անուղղակի տեսակների, և այն վնասները, որոնք կապված են անուղղակի կապով, ենթակա չեն հատուցման: Հետաքրքրական է նաև այն, որ ուղղակի և անմիջական կապով կապված են համարվում այն վնասները, որոնք կոնկրետ դեպքի շրջանակներում են: Այսինքն՝ հաջորդաբար զարգացող դեպքերի շղթայում գոյություն չունեն քաղաքացիական պատասխանատվության համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ, իսկ երբ առկա է այնպիսի հանգամանք, որոնց օրենքը նշանակություն է տալիս պատասխանատվության հարցը լուծելիս՝ երրորդ անձանց գործողություն, անհաղթահարելի ուժ և այլն, առկա է անուղղակի պատճառական կապ¹⁰:

Սակայն հարց է առաջանում, թե ո՞ր փուլից սկսած կամ պատճառված ո՞ր վնասները կարելի է համարել պատահական կամ անուղղակի, ո՞րն է պարտապանի ոչ իրավաչափ վարքագծի և վնասների միջև պատճառական կապի ողջամիտ սահմանը և արդյունքում նաև՝ պարտավորության խախտման դեպքում հատուցելի վնասների ծավալը: Ինչու՞ պատճառահետևանքային կապերի շղթան պետք է ընդհատվի կոնկրետ որևէ փուլում:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք)¹¹, ըստ էության, չի պարունակում այնպիսի կարգավորումներ, որոնց բովանդակությունից տեսանելի կերպով բխում է վնասները հատուցելիս ոչ իրավաչափ վարքագծի և վնասների միջև պատճառական կապի անհրաժեշտությունը: Այն, որ պայմանագրային վնասների հատուցման համար պարտադիր պայման է պատճառական կապը, բխում է Օրենսգրքի 1058 հոդվածի դիս-

⁸ Տե՛ս **Т. В. Церетели**, Причинная связь в уголовном праве, М., Госюриздат, 1963թ. էջ 130:

⁹ Տե՛ս **А. М. Беляков, С. Н. Братусь, Е. Н. Гендзехадзе, В. П. Грибанов**, и др., Гражданское право. Учебник. Т. 1, М., юрид. лит., 1969թ. էջ 528:

¹⁰ Տե՛ս **Гражданское право под ред А.П. Сергеева, Ю.Г. Толстого**, Часть 1, М., 1996թ., էջ 493:

¹¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, ՀՀՊՏ 1998.08.10/17(50): Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 05 մայիսի 1998թ., ուժի մեջ է մտել 01 հունվարի 1999թ.:

պոզիցիայից, տեսական գրականությունից¹² և ՀՀ դատական պրակտիկայից: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանն Օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածների մեկնաբանության արդյունքում¹³ արձանագրել է, որ *նչ օրինաչափ վարքագծի և վնասի միջև պատճառահետևանքային կապը ենթադրում է, որ վնասը պետք է լինի ոչ օրինաչափ վարքագծի ուղղակի, անմիջական հետևանք: Այն դեպքում, երբ վնասն անհրաժեշտաբար թելադրված չէ ոչ օրինաչափ գործողությամբ (անգործությամբ), կամ գործողության (անգործության) և վնասի միջև կապն անուղղակի է, վնասի հատուցման համար անհրաժեշտ պատճառահետևանքային կապի պայմանն առկա չէ*¹⁴:

Իհարկե, պատճառական կապի վերաբերյալ օրենսդրական կարգավորումների բացակայության պայմաններում տեղին չէր լինի ակնկալել առավել մանրամասն մեկնաբանություններ: Այդուհանդերձ, պետք է արձանագրել նաև, որ տրված մեկնաբանությունից միանշանակ պարզ չեն պատճառական կապի գնահատման ուղենիշային ելակետերը, այն էլ՝ պայմանագրային վնասների հատուցման դեպքում: Մասնավորապես՝ որոշակի չէ, թե որն է համարվում *ուղղակի* հետևանքը. արդյո՞ք դա միայն ոչ իրավաչափ գործողության և առաջին շղթայով կապված վնասներն են, թե՞ կա գնահատման այլ չափանիշ: Միննույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը նշում է վնասների՝ ոչ իրավաչափ վարքագծով *անհրաժեշտաբար* թելադրված լինելու մասին՝ բաց թողնելով պատճառական կապի շղթայում անհրաժեշտ և պատահական գործոնների տարբերակման չափանիշների հարցը:

Պատճառական կապի գնահատման վերոգրյալ *ուղղակիության* և *անհրաժեշտության* չափանիշները թեև կարևոր են ոչ իրավաչափ վարքագծի և

¹² Տե՛ս **Բեքմեջյան Գ.**, Պատճառական կապը դեղիկտային պարտավորություններում, ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017թ. էջ 232:

¹³ Հարկ է ընդգծել, որ վկայակոչված վերլուծության նորմատիվային հիմքը, ամեն դեպքում, դեղիկտային պարտավորություններին վերաբերելի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածն է: Պայմանագրային և դեղիկտային պատասխանատվության տարբերակման անհրաժեշտության մասին ավելի մանրամասն տե՛ս **Բաղդասարյան Հ.**, Պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության հարաբերակցության հիմնահարցը քաղաքացիական իրավունքում, Պետություն և իրավունք, Թիվ 2 (96), 2023թ., էջեր 164-171:

¹⁴ Տե՛ս, թիվ ԵԿԴ/2600/02/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը:

վնասների միջև ողջամիտ բովանդակային կապ ապահովելու տեսանկյունից, առնվազն ի համեմատություն *conditio sine qua non* բանաձևի, սակայն դրանց գործնական կիրառությունը նույն աստիճանի արդյունավետ չի թվում ոչ այնքան ակնհայտ իրավիճակներում: Նշվածների բովանդակությունն ամբողջապես չի արտահայտում իրավական պատճառական կապի էությունը, և միայն դրանց գնահատման սահմաններում հնարավոր չէ ապահովել պատճառական կապի նպատակային նշանակության պատշաճ գործողությունը:

Վերոնշյալ օրինակում պատճառական կապն *ուղղակիության* կամ *անհրաժեշտության* չափանիշներով որոշելու դեպքում միգուցե լուծվում է դերձակի անհարկի պատասխանատվության բացառման հարցը, քանի որ գնացքի վթարի պատճառը կարող է լինել մեքենավարի անփությունը կամ այլ կողմնակի ազդեցություն, որը որևէ բովանդակային կապ չունի և չէր կարող ունենալ դերձակի ստանձնած պայմանագրային պարտավորությունների հետ: Սակայն նկարագրված մյուս օրինակում վնասներն «ուղղակի» կամ «անուղղակի» համարելու կամ «անհրաժեշտ» և «պատահական» որակելու համար իրավիճակն այդքան էլ միանշանակ չէ:

Նշված չափանիշները բացառում են պարտավորության խախտումից չափազանց օտարված և այլ հանգամանքների ուժով ընդհատված պատճառական կապով կապված վնասները: Սակայն սահմանափակումները վերաբերում են հարցի միայն զուտ փաստական կողմին և չեն տալիս իրավական պատճառական կապի առաջադրած հարցերի պատասխանները: Իհարկե, կարելի է պնդել, որ դրանք իրենց բնույթով գնահատողական են, և իրավակիրառն ամեն դեպքում զրկված չէ՝ ելնելով կոնկրետ իրավահարաբերության փաստակազմից, ողջամիտ պատճառական կապ որոշելու հնարավորությունից: Առհասարակ պատճառական կապի որոշման հարցում դժվար է խուսափել գնահատողական հասկացություններից, հետևաբար նաև՝ իրավակիրառի որոշակի հայեցողությունից: Ավելին, իրավական գրականությունը որպես պատճառական կապի որոշման ինքնուրույն չափանիշ դիտարկում է նաև «համարժեք պատճառահետևանքային կապի» տեսությունը¹⁵, երբ պատճառական կապի գնահատումը կատարվում է ողջամտությամբ:

¹⁵ Տե՛ս O.Lando, M.L. Holle, T. Hastad et al., *Restatement of Nordic Contract Law*, Djoeff Publishing, 2016թ., պարագրաֆներ 8-18:

յան հիման վրա, իսկ իրավախախտ պարտապանը պատասխանատվություն չի կրում այն ամենի համար, ինչը, ըստ ընդհանուր փորձի, չի կարող համարվել որպես չկատարման սովորական կամ բնական հետևանք: Սակայն հարցը հենց այնպիսի չափանիշ ընտրելու մեջ է, որի դեպքում իրավակիրառի գնահատողական շրջանակները կսահմանափակվեն ոչ միայն փաստական կապով չկապված հետևանքները հաշվի առնելու պարտականությամբ, այլև թույլ կտան հաշվառել պարտավորական հարաբերությունների իրավական կողմը, իսկ պայմանագրային վնասների հատուցման դեպքում՝ նաև պայմանագրային հարաբերությունների առանձնահատկությունները:

Պատճառական կապը գնահատելիս անհրաժեշտ է այնպիսի չափանիշ, որի կիրառման արդյունքում, մի կողմից, կբացառվի պարտավորության խախտման ողջամիտ հետևանք չհանդիսացող վնասների հատուցումը, մյուս կողմից՝ անհարկի չի սահմանափակվի պարտապանի պատասխանատվությունն այն վնասները հատուցելու համար, որոնք արդարացիորեն արդյունք են պարտավորության խախտման՝ թեկուզև դրանք իրենց բնույթով անուղղակի կամ ոչ անմիջական են:

Պատճառական կապի, ուստի նաև պարտապանի պատասխանատվությունը սահմանափակելու առավելագույն միջազգային ճանաչում ստացած միջոցը կանխատեսելիության հայեցակարգն է՝ համաձայն որի հատուցելի են միայն այն վնասները, որոնք հնարավոր էր կանխատեսել: Կանխատեսելիության տեսությունը¹⁶ հնարավորություն է տալիս վնասների հա-

¹⁶ Կանխատեսելիության տեսությունը լայն ճանաչում և կիրառություն ունի ինչպես ռոմանոգերմանական, այնպես էլ ընդհանուր իրավունքի համակարգի երկրներում: Կանոնն ամրագրված է նաև մասնավոր-իրավական մի շարք ունիֆիկացիոն աղբյուրներում: Տե՛ս Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, հոդված 1231-3, հասանելի է՝ https://www.trans-lex.org/601101/_french-civil-code-2016/, Իսպանիայի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, հոդված 1107, հասանելի է՝ [https://www.mjusticia.gob.es/es/AreaTematica/DocumentacionPublicaciones/Documents/Spanish_Civil_Code_\(Codigo_Civil_Espanol\).PDF](https://www.mjusticia.gob.es/es/AreaTematica/DocumentacionPublicaciones/Documents/Spanish_Civil_Code_(Codigo_Civil_Espanol).PDF), Հունգարիայի հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, հոդված 6:143 (2), հասանելի է՝ <https://njt.hu/jogszabaly/en/2013-5-00-00>, Ճապոնիայի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, հոդված 416 (2), հասանելի է՝ <https://www.japaneselawtranslation.go.jp/en/laws/view/3494/en>, Հարավային Կորեայի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (քաղաքացիական ակտ), հոդված 393 (2), հասանելի է՝ https://elaw.klri.re.kr/eng_service/lawView.do?hseq=29453&lang=ENG, Հեղլեյն ընդդեմ

տուցելիությունը որոշելիս հաշվի առնել պարտապանի գործողությունների հիմքում ընկած ինչպես փաստական, այնպես էլ իրավական կողմը:

Հարկ է նշել, որ կանխատեսելիությունը՝ որպես պատճառական կապի գնահատման չափանիշ, կիրառվում է ոչ միայն պայմանագրային, այլ նաև դելիկտային վնասների հատուցման դեպքում¹⁷: Սակայն, ի տարբերություն դելիկտային վնասների, որտեղ կանխատեսելիության հնարավորությունը որոշվում է ողջամտորեն գործող երրորդ անձի դիրքերից, պայմանագրային վնասների դեպքում կանխատեսելիության գնահատման ստանդարտը կողմերի միջև կնքված պայմանագիրն է, դրանով ստանձնած պարտավորությունների շրջանակը:

Պատճառական կապի գնահատումը կանխատեսելիության բանաձևով հնարավորություն կտա հատուցելի համարել միայն այն վնասները, որոնք բովանդակային տեսանկյունից առավելագույնս մոտարկելի են պարտավորության խախտմանը՝ բացառելով ոչ միայն փաստական կապով չկապված վնասների հատուցման հնարավորությունը, այլ նաև պայմանագրային հարաբերությունների յուրահատկությունները հաշվի առնելը՝ որպես կանխատեսելիության ելակետ դիտարկելով նախքան պարտավորության խախտումը կողմերի միջև ձևավորված պայմանագրային հարաբերությունը, դրա կարգավորման շրջանակը, իրավունքների և պարտականությունների համալիրը, հետևաբար նաև՝ կողմերի փոխադարձ ակնկալիքները: Պայմա-

Բեքսենդեյի (*Hadley v Baxendale*) գործով որոշումը, հասանելի է՝ <https://law.justia.com/cases/foreign/united-kingdom/9-ex-ch-341-1854.html>, Եվրոպական պայմանագրային իրավունքի սկզբունքների 9:503 հոդվածը, հասանելի է՝ https://www.trans-lex.org/400200/_/pecl/#head_145, Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին ՄԱԿ կոնվենցիայի 74 հոդվածը, Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքների (Ունիդրուայի սկզբունքներ) 7.4.4 հոդվածը, հասանելի է՝ <https://www.unidroit.org/wp-content/uploads/2021/06/Unidroit-Principles-2016-English-i.pdf>, Եվրոպական Մասնավոր Իրավունքի Սկզբունքների, Հասկացությունների և Մոդելային Կանոնների (DCFR)

3:703 հոդվածը, հասանելի է՝ https://www.ccbe.eu/fileadmin/speciality_distribution/public/documents/EUROPEAN_PRIVATE_LAW/EN_EPL_20100107_Principles_definitions_and_model_rules_of_European_private_law_-_Draft_Common_Frame_of_Reference_DCFR.pdf:

¹⁷ Տե՛ս Եվրոպական դելիկտային իրավունք սկզբունքների (Principles of European Tort Law) 3:201 հոդվածը. վնասը այն դրամական գումարն է, որը ենթակա է փոխհատուցման տուժողին՝ վերականգնելու համար վերջինիս նախկին վիճակը, որում կլինե՞ր եթե իրավախախտումը չկատարվե՞ր: Հասանելի է՝ <http://www.egtl.org/PETLEnglish.html>:

նագրային պարտավորության խախտման և վնասների միջև պատճառական կապը և պայմանագրային պատասխանատվության կանոններով հատուցելի վնասները ենթակա են որոշման՝ հիմք ընդունելով պայմանագրի տեսակը, կնքման նպատակը, առարկան, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ձևավորված պայմանագրային հարաբերությունների շրջանակներում ուշադրության արժանի հանգամանքները: Արդյունքում, հնարավոր է ինչպես բացառել իրավախախտման հետ պատճառական կապով չկապված վնասների հատուցման հնարավորությունը, այնպես էլ առնվազն ուրվագծել պայմանագրային պատասխանատվության կանոններով հատուցման ենթակա վնասների շրջանակը:

Վերոգրյալի ամփոփ եզրահանգման արդյունքում կարող ենք փաստել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի պարունակում պայմանագրային պարտավորության խախտման և դրա արդյունքում առաջացած վնասների միջև պատճառական կապի գնահատման վերաբերյալ կարգավորումներ, իսկ դատական պրակտիկայում տրված մեկնաբանությունները և կիրառվող չափանիշները բավարար չեն պայմանագրային պարտավորության խախտման և դրա հետևանքով առաջացած վնասների միջև փաստական և իրավական կապերի ողջամտությունը գնահատելու համար:

Ուստի, կարծում ենք, որ պայմանագրային պատասխանատվության ռեժիմով հատուցման ենթակա են պայմանագրային պարտավորության խախտման արդյունքում առաջացած այն վնասները, որոնք պարտապանը պայմանագրի կնքման պահին պետք է կամ ողջամտորեն կարող էր կանխատեսել որպես իր պայմանագրային պարտավորության խախտման հետևանք:

Նշվածի հիման վրա՝ առավել հասցեական օրենսդրական կարգավորումների նախատեսումը կնպաստի ինչպես իրավական որոշակիության մակարդակի բարձրացմանը, այնպես էլ առավել կանխատեսելի դատական պրակտիկայի ձևավորմանը:

Բանալի բառեր - Պայմանագրային պատասխանատվություն, պայմանագրային վնասներ, պատճառական կապ, կանխատեսելիություն, պարտավորության խախտում, պայմանագրային պարտավորություն:

ПРИЧИННО-СЛЕДСТВЕННАЯ СВЯЗЬ ПРИ ВОЗМЕЩЕНИИ ДОГОВОРНЫХ УБЫТКОВ

Багдасарян Айк

Аспирант кафедры гражданского права ЕГУ

Статья посвящена критериям оценки причинно-следственной связи между нарушением договорного обязательства и возникшими в его результате убытками; анализируются существующие подходы к оценке причинно-следственной связи; рассматриваются недостатки действующего законодательства, судебные комментарии по поводу причинно-следственной связи и эффективность их применения при возмещении договорных убытков.

Делается вывод о том, что Гражданский кодекс Республики Армения не содержит положений об оценке причинно-следственной связи между нарушением договорного обязательства и возникшими в результате этого убытками, а комментарии, представленные в судебной практике, и применяемые критерии недостаточны для оценки разумности фактических и правовых связей между нарушением договорного обязательства и убытками.

В результате было предложено принять за основу теорию предсказуемости для оценки причинно-следственной связи между нарушением договорных обязательств и убытками, предусмотреть в законодательстве РА адресные законодательные регулирования.

Ключевые слова: договорная ответственность, договорные убытки, причинно-следственная связь, предсказуемость, нарушение обязательств, договорное обязательство.

CAUSATION LINK OF CONTRACTUAL DAMAGES

Hayk Baghdasaryan

Ph.D. student at YSU Chair of Civil Law

The criteria for determining the causation between the breach of a contract and the ensuing damages are the main focus of this article. This article reviews the existing approaches to assessing the causal link, examines the shortcomings

of current legislation, judicial comments and the effectiveness of their application in the compensation of contractual damages.

It is concluded that there are no provisions in the Republic of Armenia's Civil Code regarding the evaluation of the causation between the breach of a contractual obligation and the resulting damages, and that the criteria used and the comments made in judicial practice are insufficient to determine whether the factual and legal connections between the breach of a contractual obligation and the resulting damages are reasonable.

Consequently, the theory of foreseeability was suggested as a foundation for determining the causation between breach of contract and damages, and to provide targeted regulations in the legislation of Armenia.

Key words: Contractual liability, contractual losses, causation, foreseeability, breach of obligations, contractual obligation.

Հոդվածը գրախոսվել է՝ 29.01.2024թ.:

Ներկայացվել է տպագրության՝ 29.01.2024թ.:

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՄՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳՆ ԸՍՏ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ

Բաղդասարյան Հայկ

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի

քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Քաղաքացիական պատասխանատվության և, ընդհանրապես, քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակների համակարգում վնասների հատուցումն «առաջինն է հավասարների մեջ»: Եվ պատահական չէ, որ սուբյեկտիվ իրավունքների խախտման դեպքում, իրավունքների պաշտպանության այլ եղանակներին զուգահեռ, վնասների հատուցումը կիրառվում է որպես ունիվերսալ միջոց¹:

Հարկ է նշել նաև, որ վնասների հատուցման պատշաճ օրենսդրական կառուցակարգերի առկայությունը կարևոր է ոչ միայն որակյալ իրավական օրենք ունենալու տեսանկյունից, այլ նաև ուղղակի անհրաժեշտություն է սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքների գործողությունն ապահովելու համար, քանի որ վնասների հատուցման պահանջի իրավունքը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի² (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) առաջին արձանագրության առաջին հոդվածի իմաստով

¹ Եվրոպական պայմանագրային իրավունքի սկզբունքների (այսուհետ նաև՝ ԵՊԻՍ) 8:102-րդ հոդվածի համաձայն՝ կողմը չի զրկվում վնասի հատուցման իր իրավունքից՝ իրականացնելով իրավական պաշտպանության ցանկացած այլ եղանակի իր իրավունքը: Տե՛ս Եվրոպական պայմանագրային իրավունքի սկզբունքների 8:102-րդ հոդվածը, հասանելի է՝ https://www.trans-lex.org/400200/_/pecl/#head_134: Համանման դրույթ պարունակում է նաև Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածը, հասանելի է՝ https://www.trans-lex.org/601101/_/french-civil-code-2016/:

² Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա, ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ.367, ընդունվել է 04 նոյեմբերի 1950թ.:

առանձին դեպքերում կարող է համարվել «գույք»³: Ուստի, վնասների հատուցման իրավական կառուցակարգերի սահմանումն ու երաշխավորումը կարևոր նշանակություն ունի նաև սահմանադրական և կոնվենցիոն իրավունքների, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության⁴ 10-րդ, 60-րդ և Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված սեփականության իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու համար:

Հարկ է նշել նաև, որ համընդհանուր կերպով ընդունված է վնասների լրիվ ծավալով հատուցման կանխավարկածը, քանի դեռ վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ կողմերի համաձայնությամբ: Այս տեսանկյունից «լրիվ ծավալում» ներառված վնասների և դրանց բովանդակության բացահայտումը և վնասների լրիվ ծավալի պարզաբանումը գործնականում անհրաժեշտ է վնասների հատուցման կանոնների կիրառությունն ապահովելու համար, մասնավորապես՝ թե ի՞նչն է ներառված վնասների լրիվ ծավալի բովանդակության մեջ, ի՞նչը կարող է հանդիսանալ պայմանագրային վնասների հատուցման պահանջի առարկա, արդյո՞ք բոլոր տեսակի վնասները ենթակա են հատուցման, թե՞ ոչ, արդյո՞ք որոշ իրավիճակներում մի քանի տեսակի վնասների հատուցման հնարավորությունը կարող հանգեցնել վնասների կրկնակի բավարարման, գնահատման ինչպիսի՞ չափանիշներ պետք է հիմք ընդունել պայմանագրային վնասների չափը որոշելիս, ինչպիսի՞ սահմանափակումներ կամ դիսպոզիտիվ կանոններ են գործում, և արդյո՞ք պայմանագրային վնասների որոշման և հատուցման կանոններն ունեն օրենսդրի ուշադրությանն արժանի առանձնահատկություններ: Սույն հոդվածի քննարկման առարկան պայմանագրային գույքային վնասների չափի որոշման առանձնահատկություններն ու օրենսդրական չափանիշներն են:

Նախ և առաջ տեղին է արձանագրել, որ պայմանագրային և դելիկտային պատասխանատվության տարբերակված ռեժիմ նախատեսելու և վնաս-

³ Տե՛ս Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով 02.05.2002 թվականին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը, կետ 40, Պրեստոս Կոմպանիա Նավիերա Ս. Ա. և մյուսներն ընդդեմ Բելգիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը, կետ 31, թիվ ԵԱԲԴ/1522/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը:

⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրությունը (2015թ. փոփոխություններով), ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118, ընդունվել է 06 դեկտեմբերի 2015թ., ուժի մեջ է մտել 22 դեկտեմբերի 2015թ.:

ների պայմանագրային սկզբնաղբյուրը տարբերակելու անհրաժեշտությունը դրսևորվում է նաև վնասների չափը որոշելու չափանիշները սահմանելիս⁵: Եթե դելիկտային վնասների լրիվ ծավալի գնահատման ստանդարտը տուժողի մինչև իրավախախտումը եղած վիճակն է, ապա պայմանագրային վնասների գնահատման ստանդարտը պայմանագրով տուժող կողմի վիճակն է, որում վերջինս կհայտնվեր պայմանագրի պատշաճ կատարման դեպքում⁶: Այլ խոսքով՝ եթե դելիկտային գույքային վնասների գնահատման ընդհանուր բանաձևը ենթադրում է հիպոթետիկ համեմատություն այն վիճակի հետ, որում գտնվում է պարտատերը, և այն վիճակի, որում կլիներ, եթե իրավախախտում տեղի չունենար, ապա պայմանագրային գույքային վնասների դեպքում համեմատության ելակետերն ստանձնված պարտավորության խախտման և այդ պարտավորության կատարման արդյունքում տուժող կողմի ակնկալիքներն են, որոնց տարբերությունն էլ կազմում է հատուցման ենթակա վնասների չափը⁷: Ընդ որում՝ նման տարբերությունը մեթոդաբանական հատուցելի պայմանագրային վնասների չափը որոշելու

⁵ Պայմանագրային և դելիկտային պատասխանատվության տարբերակման անհրաժեշտության մասին ավելի մանրամասն տե՛ս **Հ. Ս. Բադդասարյան**, Պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության հարաբերակցության հիմնահարցը քաղաքացիական իրավունքում, Պետություն և իրավունք, Թիվ 2 (96), 2023թ., էջեր 164-171:

⁶ Եվրոպական դելիկտային իրավունք սկզբունքների 10:101 հոդվածի համաձայն՝ վնասը այն դրամական գումարն է, որը ենթակա է փոխհատուցման տուժողին՝ վերականգնելու համար վերջինիս նախկին վիճակը, որում վերջինս կլիներ եթե իրավախախտումը չկատարվեր: Տե՛ս Եվրոպական դելիկտային իրավունք սկզբունքները (Principles of European Tort Law), հասանելի է՝ <http://www egtl.org/PETLEnglish.html>, F. D. Busnelli, G. Comandé, H. Cousy, D. B. Dobbs, B. W. Dufwa, M. G. Faure et al., Principles of European Tort Law, Text and Commentary, Springer-Verlag/Wien, 2005թ., էջեր 150-151: Այն դեպքում, երբ Եվրոպական պայմանագրային իրավունքի սկզբունքների 9:502 հոդվածի համաձայն՝ վնասի հատուցման ընդհանուր միջոց է համարվում այն գումարը, որը տուժող կողմին հնարավորինս կդնի այն վիճակում, որում նա կլիներ, եթե պայմանագիրը պատշաճ կերպով կատարվեր: Տե՛ս Եվրոպական պայմանագրային իրավունք սկզբունքները (Principles of European Contract Law), հասանելի է՝ https://www.translex.org/400200/_pecl/#head_146:

⁷ Համանման մոտեցում առկա է նաև ընդհանուր իրավունքի համակարգում: *Robinson v Harman* գործով դատարանն արձանագրել է, որ եթե կողմը պայմանագրի խախտման պատճառով կրել է վնաս, ապա վերջինս վնասների հետ կապված պետք է դրվի նույն վիճակում, որում կլիներ պայմանագրի կատարման դեպքում: Տե՛ս *case Robinson v Harman, Court of Exchequer Chamber*, հասանելի է՝ https://www.translex.org/382500/_/robinson-v-harman%C2%A0-1-exch-850-/:

համար ուղենիշներ սահմանելիս պայմանագրային հարաբերությունների առանձնահատկությունները հաշվի առնելու հիմք է:

ՀՀ իրավական համակարգում վնասների հատուցման հարաբերություններն ընդհանուր մակարդակում կանոնակարգված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք)⁸ 17-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ *անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով*: Ընդ որում՝ հոդվածը համընդհանուր է քաղաքացիաիրավական պատասխանատվության ողջ համակարգի համար՝ անկախ նրանից գույքային վնասները ծագել են պայմանագրային, թե՛ արտապայմանագրային հիմքերից:

Միևնույն ժամանակ, Օրենսգրքի՝ «Պարտավորության խախտմամբ առաջացած վնասները հատուցելը» վերաառությամբ 409-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պարտավորությունը խախտած պարտապանը պարտավոր է հատուցել պարտատիրոջը պատճառած վնասները*: Նույն հոդվածի 2-րդ մասը պարտավորության խախտմամբ առաջացած վնասների որոշումն ուղղակի պայմանավորում է 17-րդ հոդվածով նախատեսված վնասների բովանդակությամբ:

Օրենսգրքի 409-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է պարտավորության խախտմամբ պատճառված իրական վնասների չափը հաշվարկելիս ուղղորդիչ նշանակություն ունեցող կանոններ: Մասնավորապես՝ Օրենսգրքի 409-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *վնասները որոշելիս նկատի են առնվում պարտապանի կողմից պարտատիրոջ պահանջը կամովին բավարարելու օրն այն վայրում գոյություն ունեցող գները, որտեղ պարտավորությունը պետք է կատարվեր, իսկ, եթե պահանջը կամովին չի բավարարվել, ապա՝ դատարանի վճռի կայացման օրը գոյություն ունեցող գները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով*:

Վերոգրյալի վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ Օրենսդիրը պարտավորության խախտմամբ պատճառված իրական վնասները որոշելու համար, քանի դեռ օրենքով, այլ իրավական ակտերով կամ

⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, ՀՀՊՏ 1998.08.10/17(50): Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 05 մայիսի 1998թ., ուժի մեջ է մտել 01 հունվարի 1999թ.:

պայմանագրով այլ բան նախատեսված չէ, սահմանում է երկու՝ նախորդի անհնարինության դեպքում հաջորդաբար կիրառման ենթակա երկու կանոն.

1. պարտապանի կողմից պարտատիրոջ պահանջը կամովին բավարարելու օրն այն վայրում գոյություն ունեցող գները, որտեղ պարտավորությունը պետք է կատարվեր,

2. եթե պահանջը կամովին չի բավարարվել, ապա՝ դատարանի վճռի կայացման օրը գոյություն ունեցող գները:

Մեր համոզմամբ, սակայն, նշվածները ոչ միայն խնդրահարույց են զուտ կիրառելիության տեսանկյունից, քանի որ չեն բավարարում իրավական որոշակիության պահանջներին, այլև չեն արտահայտում պայմանագրային հարաբերությունների էությունը: Այսպես. վկայակոչված հոդվածի 3-րդ մասը վնասների չափի որոշման չափանիշ է դիտարկում պարտավորության կատարման վայրում *պարտատիրոջ պահանջը կամովին բավարարելու օրը գոյություն ունեցող գները*, սակայն նորմի բովանդակությունից անհասկանալի է, թե պարտատիրոջ ո՞ր պահանջի մասին է խոսքը՝ բուն պարտավորության՝ պայմանագրի առարկայի կատարման, թե՞ վնասների հատուցման: Բացի այդ, պարզ չէ, թե ինչ գների մասին է խոսքը. «*գոյություն ունեցող գներ*» ասելով նկատի է առնվում շուկայակա՞ն, լիկվիդացիո՞ն, թե՞, օրինակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 440-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն որոշվող գները:

Միևնույն ժամանակ, անհասկանալի է, թե ինչու՞ է գնորոշման օրն Օրենսդիրը պայմանավորել պարտապանի կողմից պահանջը կամովին՝ նույնն է թե իր ընտրությամբ բավարարելու օրով, ինչը պարտապանի համար անբարեխիղճ հնարավորություն է վնասների որոշման պատեհ պահ ընտրելու, արդյունքում նաև վնասների չափի վրա ազդելու համար: Նշվածը հատկապես տեսանելի է արժույթային արժեքների կապակցությամբ կնքվող պայմանագրերի դեպքում, երբ յուրաքանչյուր օր էական նշանակություն կարող է ունենալ որոշիչ գների վրա: Գների բացասական տատանման ռիսկը չպետք է կրի բարեխիղճ պարտատերը, այն էլ պարտավորությունը խախտած պարտապանի հայեցողության պատճառով:

Ավելորդ չէ նշել նաև, որ պայմանագրային վնասների չափի որոշման երկրորդ չափանիշը (*դատարանի վճռի կայացման օրը գոյություն ունեցող գները հաշվի առնելը*), նույնպես կիրառելիության տեսանկյունից չի համա-

պատասխանում իրավական որոշակիության պահանջներին: Եվ գուցե իրավիճակն այս աստիճան հակասական չլիներ, եթե նորմը հատկապես չշեշտադրեր սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության դատական ձևը:

Այսպես, գործնականում հայցվորը, սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության հայցով դիմելով դատարան, դատավարական օրենսդրությամբ պարտականություն է կրում հայցադիմումում նշելու հայցի առարկան՝ նյութաիրավական պահանջը, այդ թվում նաև՝ հատուցման ենթակա վնասի չափը և հաշվարկը⁹: Ստացվում է, որ պարտավորության խախտման հիմքով վնասների հատուցման պահանջով դատարան դիմելիս հայցվորը ոչ միայն պետք է իմանա ներկայացված հայցադիմումի հիման վրա հարուցվելիք քաղաքացիական գործով վճռի կայացման օրը, այլ նաև այդ օրը «գոյություն ունեցող գները»:

Դատարանն իր հերթին չի կարող գործի քննության ընթացքում, չանդրադառնալով վնասների բովանդակությանն ու չափին, խորհրդակցական սենյակում վճռի կայացման օրվա դրությամբ հաշվարկել նման գները և դրանք դնել վճռի հիմքում՝ անտեսելով մրցակցության, տնօրինչականության և իրավահավասարության քաղաքացիադատավարական ելակետային սկզբունքները:

Արդյունքում, վնասների որոշման վերագրյալ կանոնները, ըստ էության, ոչ միայն չեն համապատասխանում պայմանագրային հարաբերությունների դինամիկային, հաշվի չեն առնում պայմանագրային հարաբերություններում հիմնարար կողմերի կամքի ինքնավարության և պայմանագրի ազատության սկզբունքները, այլև ինքնին խնդրահարույց են կիրառելիության տեսանկյունից, հաշվի չեն առնում պայմանագրով կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանված գնային քաղաքականությունը: Եվ նույնիսկ վկայակոչված գները «շուկայական» դիտարկելու դեպքում շուկայական գների հիման վրա հաշվարկված վնասների չափը կարող է զգալի տարբերվել պայմանագրով կողմերի որոշած գնային ակնկալիքների հաշվառմամբ գնահատման ենթակա վնասների չափից: Կարծում ենք, որ պայմանագրային իրական վնասների որոշման համար նշված չափանիշները չեն արտահայտում պայմանագրով կողմերի համաձայնությամբ սահմանված առաջ-

⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374): Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 09 փետրվարի 2018թ., ուժի մեջ է մտել 09 ապրիլի 2018թ.:

նահերթ դիտարկման ենթակա պայամանները, կողմերի ողջամիտ ակնկալիքները, որոնք պետք է լինեն պայմանագրային վնասների որոշման առաջնահերթ ուղղորդիչ:

Իրավիճակն առավել հետաքրքրական է բաց թողնված օգուտի չափի որոշման իրավական հիմքերի պարագայում: Օրենսգրքի 409-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է պարտավորության խախտման արդյունքում հատուցման ենթակա բաց թողնված օգուտի որոշման հատուկ կանոն, համաձայն որի՝ *բաց թողնված օգուտը որոշելիս հաշվի են առնվում այն ստանալու համար պարտատիրոջ ձեռնարկած միջոցները և այդ նպատակով կատարված նախապատրաստությունները*:

Այս առնչությամբ հարկ է արձանագրել, որ իրավակիրառ պրակտիկայում բաց թողնված օգուտի վերաբերյալ նորմերին տրված մեկնաբանությունները շատ դեպքերում խաթարում են բաց թողնված օգուտ պահանջելու իրավունքի էությունը և չեն համապատասխանում ինստիտուտի հետապնդած նպատակներին: Մասնավորապես՝ վերոնշյալ նորմի բովանդակությունը պարզաբանելիս հարց է առաջանում՝ տվյալ պարագայում Օրենսդիրը, օգտագործելով միայն «որոշել» եզրույթը (*բաց թողնված օգուտը որոշելիս*), նկատի ունի բաց թողնված օգուտի չափի որոշումը, թե՞ բաց թողնված օգուտի հատուցելիությունն առհասարակ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով բաց թողնված օգուտի հատուցմանը և հիմք ընդունելով Օրենսգրքի 409-րդ հոդվածի 4-րդ մասը, արձանագրել է, որ բաց թողնված օգուտի *որոշման* ժամանակ իրական մտադրությունը պետք է գուգորդվի իրական հնարավորության հետ, ինչը, ըստ Վճռաբեկ դատարանի, բխում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 409-րդ հոդվածի 4-րդ կետից:

Ըստ վճռաբեկ դատարանի՝ բաց թողնված օգուտի առկայությունը, այսինքն՝ անձի իրավունքի չխախտման պարագայում եկամուտի ստացման իրական հնարավորությունը որոշելը յուրաքանչյուր գործով ինքնուրույն գնահատման ենթակա հարց է, որի ընթացքում պետք է հաշվի առնվեն տվյալ գործի առանձնահատկությունները: Մասնավորապես, բաց թողնված օգուտի առկայությունը որոշելու համար նախ և առաջ պետք է հաշվի առնվի մինչև իրավունքի խախտումը քաղաքացիական շրջանառությունում համապատասխան գույքի ունեցած կարգավիճակը կամ սեփականատիրոջ իրական մտադրության և հնարավորության միաժամանակյա առկայություն:

նը այդ գույքի տնօրինման եղանակների առնչությամբ: Այդպիսին կարող են լինել նաև ընկերության և երրորդ անձանց միջև ծառայությունների մատուցման վերաբերյալ կնքված պայմանագրերը, նրանց միջև կնքված նախնական պայմանագրերը, մտադրությունների վերաբերյալ արձանագրությունները, գրագրությունը պայմանագիր կնքելու վերաբերյալ և այլ պայմանավորվածություններ¹⁰:

Արդյունքում՝ պայմանագրային պարտավորությունները խախտելու հետևանքով բաց թողնված օգուտի փոխհատուցման համար հայցվորը պետք է ներկայացնի ապացույցներ, որոնք կհիմնավորեն ի թիվս այնի.

- օգուտ ստանալու իրական մտադրությունը և հնարավորությունը.
- պարտավորությունների խախտման, օգուտ ստանալու իրական մտադրության և հնարավորության և վնասի չափի միջև պատճառահետևանքային կապը¹¹:

Պայմանագրային հարաբերություններում վնասի հատուցման հարցը քննարկելիս պետք է հաշվի առնել, որ բաց թողնված օգուտի հատուցման արդյունքում պարտատիրոջ մոտ չպետք է առաջանա հարստացում, այսինքն՝ վնասների փոխհատուցման գումարի մեջ չեն կարող ընդգրկվել այնպիսի վնասներ, որոնք կողմն իրականում չի կրել¹²:

¹⁰ Տե՛ս թիվ ԵՔԴ/0086/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.06.2009 թվականի որոշումը, թիվ ԵՔԴ/0036/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը:

¹¹ Տե՛ս թիվ ԵՇԴ/0177/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.10.12թ. որոշումը:

¹² Վճռաբեկ դատարանը արձանագրել է նաև, որ չնայած վնասի հաշվարկման վերաբերյալ վերոնշյալ կողմնորոշիչ վերլուծություններին, այնուամենայնիվ, վնասի հատուցման կոնկրետ չափը առանձին դեպքերում կարող է բավականաչափ հստակ չլինել կամ ողջամտության աստիճանի հավաստիությամբ չորոշվել: Վճռաբեկ դատարանը գտել է, որ նմանատիպ դեպքերում անձն ընդհանրապես չի կարող գրկվել բաց թողնված օգուտի հատուցման իրավունքից, քանի որ նման դիրքորոշումը կհակասի գործարարության էությանը, սահմանադրական և կոնվենցիոն դրույթներին: Նմանատիպ իրավիճակներում դատարանները հատուցվող օգուտի չափը որոշում են իրենց հայեցողությամբ: Նման կարգավորում գործում է նաև միջազգային պրակտիկայում: Մասնավորապես, «Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքների» 7.4.3 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե վնասի չափը չի կարող հաստատվել ողջամտության աստիճանի արժանահավատությամբ, դրա չափը որոշվում է դատարանի հայեցողությամբ: Վճռաբեկ դատարանը գտել է որ վերոնշյալ կանոնը կարող է կիրառվել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված բաց թողնված օգուտի չափի որոշման նկատմամբ, ընդ որում, դատական հայեցողությունը պետք է իրականացվի միայն վերոնշյալ իրավական

Արժանին մատուցելով Վճռաբեկ դատարանի կողմից բաց թողնված օգուտի հատուցման կանոնների ընդհանուր մեկնաբանություններին, ինչպես նաև վնասների չափի որոշման անհնարինության դեպքում միջազգային ունիֆիկացիոն աղբյուրների վկայակոչմամբ Դատարանի կողմից հատուցման ենթակա վնասների չափը որոշելու հնարավորություն նախատեսելու հանգամանքին, այդուհանդերձ, կարծում ենք, որ Վճռաբեկ դատարանի կողմից պայմանագրային բաց թողնված օգուտի հատուցման համար տուժողի իրական մտադրության առկայության բարձր ստանդարտի սահմանումը չի բխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 409-րդ հոդվածի 4-րդ կետի և բաց թողնված օգուտի՝ որպես գույքային վնասների տեսակի էությունից:

Օրենսգրքի 409-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ բաց թողնված օգուտը որոշելիս այն ստանալու համար պարտատիրոջ ձեռնարկած միջոցները և այդ նպատակով կատարված նախապատրաստությունները հաշվի առնելու պահանջը, մեր համոզմամբ, վերաբերում է ոչ թե բաց թողնված օգուտի հատուցելիությանը (հատուցելիության պայմաններին), այլ դրա չափի որոշմանը:

Հարկ ենք համարում նշել նաև, որ պայմանագրային վնասների հատուցման հարաբերություններում պայմանագրի, հետևաբար նաև՝ պարտատիրոջ՝ հավելյալ արժեք ստեղծելու հավակնությունների և մտադրության փաստի առկայության պայմաններում պարտատիրոջ իրական մտադրությունը հավելյալ ապացուցելու անհրաժեշտությունը բաց թողնված օգուտի հատուցման նախապայման դիտարկելը հանգեցնում է բաց թողնված օգուտի հատուցելիության անհարկի սահմանափակման:

Պայմանագրային պարտավորության խախտման արդյունքում բաց թողնված օգուտի հատուցման ժամանակ պետք է գործի պարտատիրոջ իրական մտադրության և հնարավորության կանխավարկածը, եթե հակառակը չի ապացուցվում: Նման կանխավարկածի պայմաններում պարտատիրոջ ձեռնարկած միջոցները և այդ նպատակով կատարված նախապատրաստությունները որպես բաց թողնված օգուտի հատուցման նախապայ-

դիրքորոշումների հիման վրա բաց թողնված օգուտի չափը որոշելու անհնարինության դեպքում՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի սկզբունքները, բարեխղճության, խելամուտության և արդարացիության պահանջները: Տե՛ս թիվ **ԵԱԴԴ/1284/02/09 քաղաքացիական գործով** ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի որոշումը:

ման համարվել չեն կարող: Իսկ բաց թողնված օգուտի հատուցելիության համար անհրաժեշտ հնարավորության իրական լինելու պահանջը բավարար է վնասների գերաժախս և անհիմն հարստացման իրավիճակները բացառելու համար: Այսինքն՝ հատուցման ենթակա է ոչ թե ցանկացած տեսական հնարավորություն, այլ միայն իրական հնարավորությունը, իսկ հնարավորության իրական լինելը գնահատման ենթակա է այն վնասների չափն ապացուցելիս, որոնք պնդում է տուժողը:

Սակայն միայն այն հանգամանքը, որ վերջինս նախքան պարտավորության խախտումը չի ձեռնարկել կոնկրետ միջոցներ կամ հատուկ չի նախապատրաստվել գույքի շրջանառությանը, չպետք է զրկի վերջինիս ողջամտորեն միջին շուկայական իրական հնարավորության հաշվառմամբ բաց թողնված օգուտի հատուցման հնարավորությունից: Այլ կերպ ասած՝ պայմանագրային վնասների հատուցման հարաբերություններում անհիմն հարստացման ռիսկը պետք է զսպել ոչ թե առհասարակ հատուցելի լինել կամ չլինելու, այլ դրա չափի ապացուցման փուլում՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ եթե կողմը կնքել է պայմանագիր, ապա ավելացված արժեք ստեղծելու մտադրությունն արդեն իսկ ենթադրվում է, իսկ հնարավորությունն ազատ շուկայական տնտեսական հարաբերություններում ենթադրվում է միշտ, քանի դեռ հակառակն ապացուցված չէ:

Հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանի կողմից բաց թողնված օգուտը հատուցելիս իրական մտադրության գնահատման առավել ցածր ստանդարտ է սահմանվել ձեռնարկատիրության բնագավարում հատուցվող բաց թողնված օգուտների համար¹³՝ մտադրության առկայությունը հիմնավորման համար բավարար համարելով, օրինակ՝ ընկերության կանոնադրությունը: Սակայն պետք է հաշվի առնել, որ, ամեն դեպքում, ձեռնարկատիրական հավակնությունները գերազանցապես իրացվում և բավարարվում են պայմանագիր կնքելու միջոցով: Բացի այդ, միայն այն, որ պայմանագիրը չի կնքվել ձեռնարկատիրական նպատակներով, դեռևս չի նշանակում, որ կողմը պայմանագրի պատշաճ կատարումից չի կարող ունենալ տնտեսական ակնկալիքներ: Ուստի անկախ նրանից՝ պայմանագիրը կնքվում է ձեռնարկատիրական նպատակներով, թե՛ ոչ, բաց թողնված օգուտը հատուցելիս

¹³ Տես՝ թիվ 3-691(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը:

իրական մտադրության կանխավարկածի հիմքը պայմանագրով պարտատիրոջ նախաձեռնողականությունն է ստեղծելու հավելյալ արժեք: Շահավետություն չի կարող լինել միայն ձեռնարկատիրական գործունեության մենաշնորհը: Հատուցելի պայմանագրի առկայությունն ամեն դեպքում խոսում է փոխադարձ ակնկալվող շահի մասին:

Անշուշտ, ստեղծված իրավիճակի առաջնային պատճառն Օրենսգրքի երկխմաստ ձևակերպումն է, այդուհանդերձ, հարկ է նշել նաև, որ Վճռաբեկ դատարանի կողմից պարտատիրոջ ձեռնարկած միջոցները և այդ նպատակով կատարված նախապատրաստությունները «հաշվի առնելու» մեղմ ձևակերպմանը հաղորդվել է իրավաստեղծ նշանակություն: Նախապատրաստություններն ու ձեռնարկած միջոցները պետք է հաշվի առնվեն վնասների չափը որոշելիս և ոչ թե հանդիսանան պայմանագրային վնասի հատուցման նախապայման՝ առանց որոնց անձը կարող է զրկվել վնասների հատուցման, հետևաբար նաև՝ սեփականության իրավունքից: Նման բարձր ստանդարտի կիրառումն անտեղի անհնար է դարձնում բաց թողնված օգուտի հատուցումն այն դեպքերում, երբ նման օգուտ ստանալու հնարավորությունը քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում հիմնված է ողջամտության աստիճանի հավանականության վրա: Օրինակ՝ բնակարանը կառուցապատողի կողմից գնորդին պայմանագրով սահմանված ժամկետից ուշ տրամադրելու դեպքում գնորդը չի կարող զրկվել բաց թողնված օգուտ պահանջելու իր իրավունքից միայն այն պատճառով, որ հավանական վարձակալների հետ չի կնքել վարձակալության նախնական պայմանագիր կամ բանակցությունները վարել է բանավոր: Գործնականում անպատրաստ և կետանցով կառուցվող անշարժ գույքի պոտենցիալ վարձակալ գտնելն առհասարակ իրատեսական էլ չէ: Քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում գույքը վարձակալության հանձնելու պայմանագրի կնքումը և շուկայական գնով այն վարձակալության հանձնելու արդյունքում օգուտներ ստանալու ակնկալիքը հիմնված է շուկայական հարաբերություններում ողջամտության աստիճանի հավանականության վրա: Ուստի գնորդն առնվազն պետք է ունենա շուկայական գների հիման վրա հաշվարկված բաց թողնված օգուտի հատուցման լեգիտիմ իրավունք: Իսկ այն դեպքում, երբ գնորդը վարձակալի հետ կնքել է վարձակալության նախնական պայմանագիր շուկայականից բարձր գնով, ապա բաց թողնված

օգուտի չափը որոշելիս ենթակա են հաշվառման նաև գնորդի ձեռնարկած միջոցներն ու կատարված նախապատրաստությունները:

Այսպիսով, պայմանագրային հարաբերություններում միայն տնտեսական շրջանառության բնականոն պայմաններում օգուտ ստանալու ողջամիտ հավանականությունը բավարար է բաց թողնված օգուտների տեսքով վնասների հատուցում պահանջելու համար, իսկ պարտավորող նախապատրաստություններն ու ձեռնարկած միջոցները ենթակա են հաշվառման ոչ թե վնասների հատուցման պահանջ ներկայացնելու կամ չներկայացնելու պայմանները գնահատելիս, այլ վնասների չափը որոշելիս:

Միննույն ժամանակ, կարծում ենք, որ պայմանագրային հարաբերություններում վնասները որոշելիս ձեռնարկված միջոցներն ու կատարված նախապատրաստությունները հաշվի առնելու կարիք կա ոչ միայն բաց թողնված օգուտի, այլ նաև իրական վնասների չափը որոշելիս: Պայմանագրային իրական վնասները կարող են արտահայտվել ինչպես պայմանագրի խախտման արդյունքում պայմանագրով ակնկալվածը չստանալով, այնպես էլ հանդիպական պարտավորության պատշաճ կատարման համար լրացուցիչ միջոցներ ծախսելով, ուստի պայմանագրային իրական վնասները որոշելիս հաշվառման է ենթակա ոչ միայն պայմանագրի գինը կամ այլ վերաբերելի պայմանները, այլ նաև կողմի ձեռնարկած միջոցներն ու կատարված նախապատրաստությունները:

Այսպիսով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ **պարտավորության խախտմամբ առաջացած վնասների չափի որոշման և հատուցման հարաբերությունների կարգավորմանն ուղղված դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ պարտավորության խախտման արդյունքում հատուցելի իրական վնասների չափի որոշման օրենսդրական չափանիշները գործնականում կիրառելիության տեսանկյունից խնդրահարույց են և բովանդակային տեսանկյունից չեն համապատասխանում կողմերի կամքի ինքնավարության, պայմանագրի ազատության սկզբունքներին, պայմանագրային հարաբերությունների բնույթին և նշանակությանը, հաշվի չեն առնում պայմանագրով կողմերի տնտեսական ակնկալիքները, իսկ պայմանագրային բաց թողնված օգուտի չափի որոշման կանոններն իրավակիրառ պրակտիկայում մեկնաբանվում են որպես բաց թողնված օգուտի հատուցման պայմաններ:**

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ պայմանագրային պարտավորության խախտման արդյունքում պատճառված վնասների որոշման

համար որպես առաջնահերթ օրենսդրական չափանիշ պետք է հիմք ընդունել պայմանագրի գինը և այլ վերաբերելի պայմանները, ինչպես նաև պարտադրոջ ձեռնարկած միջոցներն ու կատարված նախապատրաստությունները: Դրա անհնարինության դեպքում վնասների չափը ենթակա է որոշման՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վայրում այն օրը գոյություն ունեցող շուկայական գները, երբ պետք է կատարվեր հիմնական խախտված պարտավորությունը: Դրա անհնարինության դեպքում վնասների չափը ենթակա է դատարանի կողմից որոշման: Նշված կանոնները ենթակա են կիրառման, եթե օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով այլ բան, այդ թվում՝ վնասների այլ չափ, նախատեսված չէ:

Բանալի բառեր - Պայմանագրային պատասխանատվություն, պայմանագրային վնասներ, իրական վնաս, բաց թողնված օգուտ, գին, պայմանագիր, վնասների չափ:

ПОРЯДОК ОПРЕДЕЛЕНИЯ ДОГОВОРНЫХ ИМУЩЕСТВЕННЫХ УБЫТКОВ В СООТВЕТСТВИИ С ГРАЖДАНСКИМ КОДЕКСОМ РА

Багдасарян Айк

Аспирант кафедры гражданского права ЕГУ

Статья посвящена порядку определения размера договорных имущественных убытков в соответствии с Гражданским кодексом РА. В статье обсуждаются критерии, лежащие в основе определения убытков, возникших в результате нарушения договорных обязательств, существующие препятствия для их практического применения, соответствие характеру и значению договорных отношений.

В статье анализируются действующие правила определения как реальных договорных убытков, так и размера упущенной выгоды, комментарии судебной практики РА к правилам определения размера упущенной выгоды. Затрагиваются существенные недостатки действующего законодательства, влияние регулирований и их толкования на определение размера убытков и его возмещения. Делается вывод о том, что действующие нормы

определения размера убытков, причиненного нарушением обязательства, не соответствуют сути договорных отношений, принципам автономии воли и свободы договора.

В результате предложено ввести такие нормы определения размера договорных убытков, которые в наибольшей степени соответствовали бы договорным обязательствам сторон, а, следовательно, и договорным ожиданиям, послужили бы справедливой основой для определения размера договорных убытков.

Ключевые слова: договорная ответственность, договорные убытки, реальный ущерб, упущенная выгода, цена, договор, сумма убытков.

DETERMINATION OF CONTRACTUAL PECUNIARY DAMAGES UNDER THE CIVIL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

Hayk Baghdasaryan

Ph.D. student at YSU Chair of Civil Law

The determination of the amount of contractual pecuniary damages in line with the Republic of Armenia's Civil Code is the focus of this article. The criteria for calculating damages resulting from breach of contract under Armenian legislation are covered in this article, along with the challenges that currently stand in the way of their actual implementation and adherence to the nature and character of contractual relationships.

The article examines the existing guidelines for calculating real contractual damages as well as the amount of lost profits and comments on the judicial practice of Armenia on the rules for determining the amount of lost profits. The article discusses the major flaws in the existing legislation as well as how rules and how they are interpreted affect compensation and amount of compensation. The present standards for calculating the amount of damage by a breach of an obligation are found to be incompatible with the essence of contractual relations, the principles of autonomy of will and freedom of contract.

As a result, it was suggested to implement such standards for calculating the amount of losses that would most closely match the parties' contractual obligations and, therefore, contractual expectations, would serve as a fair foundation for calculating the amount of contractual damages.

Key words: Contractual liability, contractual losses, real damage, lost profits, price, contract, amount of damages.

Հոդվածը գրախոսվել է՝ 29.01.2024թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 29.01.2024թ.:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գրիգորյան Գոհար

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության
ամբիոնի ասպիրանտ, Երևան քաղաքի
առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քաղաքացիական դատարանի դատավոր*

Անձին սնանկ ճանաչելու նպատակը քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումն է՝ այդ շրջանառության անվճարունակ մասնակիցներին ֆինանսապես առողջացնելու կամ նրանց քաղաքացիական շրջանառությունից դուրս մղելու նպատակով, որպեսզի վերջիններիս անվճարունակության հետևանքով չոտնահարվեն նաև քաղաքացիական շրջանառության մնացած մասնակիցների շահերը¹։ Միննույն ժամանակ, սնանկության վարույթը, ի տարբերություն այլ վարույթների, չի սահմանափակվում միայն պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթով և ներառում է այն բոլոր հարցերի լուծմանն ուղղված վարույթները, որոնք կարող են ծագել պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի քննության ընթացքում կամ առնչվում են պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի բավարարման իրավական հետևանքներին²։ Ուստի անկասկած է, որ անվճարունակության վարույթի բոլոր հարցերի արդյունավետ կարգավորումը, դրանց վերաբերյալ պատշաճ օրենսդրական դաշտի առկայությունը, մի կողմից, տնտեսության հուսալի զարգացման կարևորագույն գործոններից են, մյուս կողմից՝ վարույթի մասնակիցների իրավունքների արդյունավետ պաշտպանության երաշխիք։

Պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ նշված նպատակներին հասնելու տեսանկյունից թե՛ ունիվերսալ և թե՛ տերիտորիալ տեսու-

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵՄԴ/0049/04/15 սնանկության գործով 07.04.2017 թվականի որոշումը։

² Տե՛ս Ավագյան Գ., Դադունց Տ., Հովհաննիսյան Հ., Մարկոսյան Տ., Մահակյան Տ., Օմար Փ., «Սնանկության վարույթը Հայաստանի Հանրապետությունում», Գիտագործնական ձեռնարկ, ընդհանուր խմբագրությամբ՝ ի.գ.թ., դոցենտ Տ.Ա. Մարկոսյանի, Երևան, Արդարադատության ակադեմիա, էջ 30։

յունները մաքուր ձևով այսօր չեն կարող կյանքի կոչվել: Ակնհայտ է, որ մի կողմից անհրաժեշտ է հիմնական վարույթ, որը կունենա արտատարածքային ազդեցություն, մյուս կողմից՝ երկրորդային վարույթներ, որոնք կունենան սահմանափակ գործողություն միայն այն պետության սահմաններում, որի տարածքում հարուցվել են: Կարևոր է ընդգծել, որ թեև նման դեպքերում երկրորդային վարույթը հարուցվում է այլ պետության իրավագործության ներքո, սակայն այն հիմնական վարույթից մեկուսացված չէ, ընդհակառակը՝ գործելով հիմնական վարույթ հարուցած դատարանի հսկողության ներքո՝ ուղղված է աջակցելու վերջինիս պարտապանի ակտիվների արդյունավետ կառավարման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դրանք պարտատերերի միջև ողջամիտ բաշխելու հարցում:

Անկախ նրանից՝ խոսքը վերաբերում է հիմնական, թե երկրորդային վարույթներին՝ նախ և առաջ անհրաժեշտ է բացահայտել, թե ինչ չափանիշներով է որոշվում օտարերկրյա տարրով ծանրաբեռնված որևէ գործ կոնկրետ պետության դատարանի կողմից քննելու հնարավորության հարցը: Նշվածը գրականության մեջ հայտնի է որպես **«միջազգային ընդդատություն»**:

Հայրենական գրականության մեջ միջազգային քաղաքացիական դատավարության ինստիտուտի շրջանակում պրոֆեսոր Ա.Հայկյանցը նշել է, որ միջազգային ընդդատություն ասելով հասկանում ենք այն, թե օտարերկրյա տարրով քաղաքացիաիրավական հարաբերությունը որ պետության դատարանի իրավասությանն է ենթակա³: Պրոֆեսոր Լ. Անուֆրիևան միջազգային ընդդատության ներքո բնորոշում է տարբեր պետությունների ազգային դատարանների իրավասությունների տարանջատումն այսպես կոչված «միջազգային հատկանիշներ» ունեցող քաղաքացիական գործերով⁴: *Մենք համակարծիք ենք այն հեղինակների հետ, ովքեր միջազգային ընդդատությունը, մասնավորապես անդրսահմանային սնանկության գործերով միջազգային ընդդատությունը, բնութագրում են որպես որոշակի պետությունների դատարանների իրավասություն՝ հարուցելու սնանկության վա-*

³ Տե՛ս **Հայկյանց Ա.**, «Միջազգային մասնավոր իրավունք», ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 517:

⁴ Տե՛ս **Мохова Е.**, «Доктрина основного производства при трансграничной несостоятельности юридических лиц», ГОУ ВПО Российская академия правосудия, Москва, 2009, էջ 128:

րույթ օտարերկրյա տարրով ծանրաբեռնված իրավահարաբերությունների դեպքում:

Մեր համոզմամբ՝ անդրասահմանային սնանկության դեպքերում հատկապես միջազգային ընդդատության կանոնների սահմանումն ունի առանցքային նշանակություն այն խնդրի հաշվառմամբ, որ յուրաքանչյուր պարտատեր հակված կլինի իր դիմումը ներկայացնել այն պետության դատարան, որտեղ իր պահանջները կբավարարվեն առավել վաղ հերթում (պայմանավորված տարբեր պետություններում պարտատերերի պահանջների գրանցման տարբեր օրենսդրական լուծումներով) կամ առավել շատ չափով: Նույն վարքագիծը կարող է դրսևորել նաև պարտապանն այն դեպքերում, երբ տարբեր պետություններ նախատեսում են իրավական տարբեր հետևանքներ սնանկ ճանաչվելուց հետո: Այս երևույթը հայտնի է որպես **ֆորում շոփինգ (forum shopping)**, երբ պարտատերը կամ պարտապանն ընտրում են իրենց համար առավել բարենպաստ օրենսդրական դաշտ ունեցող պետություն՝ որպես իրենց դիմումի քննության իրավասություն ունեցող դատարան՝ սնանկության վարույթ հարուցելու և շահեկան պայմաններով սնանկ ճանաչվելու ակնկալիքով:

Ուստի մեր կարծիքով՝ միջազգային ընդդատության կանոնների քննարկումն ունի առանցքային և կարևորագույն նշանակություն անդրազգային սնանկության ինստիտուտի ինչպես հետագա զարգացման, այնպես էլ հնարավոր չարաշահումները կանխելու տեսանկյունից:

Իրավաբանական անձինք: Անդրադառնալով հիմնական վարույթ հարուցելու իրավասության որոշման հարցին՝ պետք է նշել, որ տարբեր պետություններում և զարգացման տարբեր փուլերում ընդդատության սահմանազատման չափանիշները տարբեր են եղել՝ սկսած ընկերության հիմնադրման կամ կենտրոնական գրասենյակի գտնվելու վայրից՝ ընդհուպ պարտապանի ակտիվների գտնվելու վայրը: Սակայն զարգացման ներկայիս փուլում դատարանների կողմից ընդդատության որոշման ամենահայտնի չափանիշը պարտապանի հիմնական շահերի կենտրոնը որոշելն է, որը հայտնի է որպես COMI-standard:

Գործնականում կանխավարկածն այն է, որ պարտապան-իրավաբանական անձանց դեպքում հիմնական շահերի կենտրոնը գտնվում է ընկերության գրանցման (հիմնադրման) վայրում, քանի դեռ հակառակը ապա-

ցուցված չէ⁵: Սակայն դատարանը կարող է պարտապանի հիմնական շահերի կենտրոնը ճանաչել այլ պետության տարածքում՝ հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) պարտապանի շահերի տնօրինման վայրը գտնվում է այլ պետությունում, քան այն, որտեղ հիմնադրվել է.

2) այդ հանգամանքն ակնհայտ է պարտատերերի համար («ակնհայտության չափանիշ»):

Քննարկվող չափանիշների ընդհանուր վերլուծությունը վկայում է, որ դրանց ձևավորման հիմքում ևս ընկած են ընդդատության ինստիտուտի էական սկզբունքները, այն է՝ պարտապանի իրական սերտ կապի բացահայտումն առանձին պետության և վերջինիս իրավակարգի հետ: Ուսումնասիրությունները վկայում են, որ քննարկվող ստանդարտի կիրառումը սնանկության հիմնական վարույթ հարուցելու հարցում ունի մի շարք առավելություններ: Նախ՝ այն փոխզիջումային լուծում է այն պետությունների համար, որոնք ավանդաբար նախապատվությունը տալիս էին հիմնադրման կամ գտնվելու վայրի տեսություններին: Երկրորդ՝ ապահովվում է նախնական կանխատեսելիություն պարտատերերի համար՝ հնարավորություն տալով վերջիններիս հաշվի առնել պոտենցիալ ռիսկերը կոնտրագենտների հետ իրավահարաբերությունների մեջ մտնելիս:

Մենք համակարծիք ենք այն հեղինակների հետ, ովքեր նշում են, որ այն իրավիճակում, երբ ընկերությունը հիմնադրվել է մեկ պետությունում, սակայն նրա ամբողջ գործունեությունը կենտրոնացված է այլ պետության տարածքում, հիմնադրման վայրի իրավունքի կիրառումը խիստ ձևական բնույթ է կրում, և դժվար թե հնարավոր լինի գնահատել որպես համաչափ միջատություն և խելամիտ լուծում ինչպես պարտատերերի, այնպես էլ այդ պետությունների հետ հարաբերություններում:

Չնայած վերը թվարկված առավելություններն անառարկելի են, սակայն քննարկվող ստանդարտը ևս գերծ չի մնացել առանձին թերություններից, որոնք, սակայն, մեր գնահատմամբ կասկածի տակ չեն դնում վերջինիս առավել արդյունավետ գործողությունը և ներկայումս հնարավոր այլընտրանքի բացակայությունը: Այսպես, հեղինակներից և հետազոտողներից շատերը

⁵ Shtu Мохова Е., «Доктрина основного производства при трансграничной несостоятельности юридических лиц», ГОУ ВПО Российская академия правосудия, Москва, 2009, էջ 140:

մատնանշում են պարտապանի հիմնական շահերի կենտրոնը փոփոխելու հնարավորությունը՝ ի տարբերություն, օրինակ, պարտապանի հիմնադրման կամ ակտիվների գտնվելու վայրի չափանիշներից, որոնք առավել կայուն են: Վերջիններիս պնդմամբ՝ պարտապանը կարող է հեշտությամբ տեղափոխել ցանկացած այլ պետություն, որտեղ իրավական կարգը և օրենսդրությունն առավել բարենպաստ դիրքեր կստեղծեն իր սնանկության հարցի քննարկման համար: Ինչպես նշել են Ն. Էլիսենը և Ե. Վերշինան. «Իր հավակնություններն իրագործելու մտադրություն ունեցող կողմն ընտրում է այն պետությունների դատարանները, որտեղ նա ստանում է իր շահերի պաշտպանության ողջամիտ իրավական և փաստացի պայմաններ, ինչպես, օրինակ, գնորդը ձեռք է բերում ապրանքն այնտեղ, որտեղ ապրանքի գինը, որակը և վաճառքի այլ պայմաններն իր համար առավել բարենպաստ են»⁶: Ինչպես քննարկել ենք արդեն վերևում, այս երևույթը հայտնի է որպես «ֆորում շոփինգ»:

Եթե առանձին հեղինակներ քննարկվող ստանդարտները բնութագրում են դրանց կանխատեսելությամբ, հեղինակների մյուս խումբը վկայակոչում է նման կանխատեսելության անբավարար աստիճանը: Այսինքն՝ նույնիսկ այն դեպքում, երբ պարտապանը բարեխղճորեն գործելով է իր հիմնական շահերի կենտրոնը փոխանցել այլ պետության տարածք, բոլոր դեպքերում և՛ դատարանները, և՛ պարտատերերը դժվարանում են հստակ որոշել իրավասու դատարանին:

Նշված հարցի վերաբերյալ հայտնի է «Eurofood IFSC Ltd»⁷ ընկերության սնանկության գործը, որով հիմնական վարույթ հարուցելու համար իրենց իրավասու են ճանաչել թե՛ իտալական և թե՛ իռլանդական դատարանները: Իտալիայի դատարանը նշել է՝ քանի որ մայր ընկերությունն է հենց դուստր ընկերության որոշումների կայացման և գործերի կառավարման կենտրոնը, հետևաբար նա է իրավասու դուստր ընկերության մասով ևս վարույթ հարուցել: Միննույն ժամանակ, Իռլանդիայի դատարանը ևս իրեն համարել է

⁶ St' u **Елисеев Н., Вершинина Е.**, Международное гражданское процессуальное право: учебное пособие, Проспект, Москва, 2010, էջ 79:

⁷ Իտալիայում սնանկ է ճանաչվել Իռլանդիայում գրանցված պարտապանի մայր ընկերությունը: Նշված ընկերությունը Parlomat ընկերության դուստր ընկերությունն է, որը գրանցված է Իտալիայում: Առավել մանրամասն տե՛ս http://kalinovsky-k.narod.ru/b/pravo_urpraktika/2008_2.pdf (հասանելի 03.10.2022 թվականի դրությամբ):

իրավասու դատարան՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ COMI-ի կանխավարկածն այդ գործով չի հերքվել: Այսպիսով՝ առաջացել էր իրավասության բախում՝ սնանկության հիմնական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող դատարանը որոշելու հարցում: Այս հարցը վերջնականապես լուծվել է ԵՄ արդարադատության դատարանի կողմից՝ արձանագրելով, որ պարտապանի հիմնական շահերի կենտրոնը լինելու կանխավարկածը դժվար է հերքել, եթե ընկերությունը ցանկացած որևէ գործունեություն է իրականացնում իր հիմնադրման վայրում⁸:

Մեր կարծիքով՝ պարտապանի հիմնական շահերի կենտրոնը, որպես սնանկության հիմնական վարույթ հարուցելու չափանիշ, կարող է գործնականում բարձրացնել անդրազգային սնանկության գործընթացների արդյունավետությունը: Մեր գնահատմամբ՝ քննարկվող չափանիշը պետք է լինի դատական հայեցողության և գնահատման շրջանակում, քանի որ յուրաքանչյուր գործ առանձնահատուկ է իր փաստական հանգամանքներով, և յուրաքանչյուր գործով որևէ էական փաստական հանգամանքի փոփոխությունը կարող է հանգեցնել այլ որոշման կայացման: Սակայն բոլոր դեպքերում ուղենիշային և առանցքային պետք է լինի «ակնհայտության» պայմանը, քանի որ ցանկացած իրավահարաբերության մեջ և հատկապես օտարերկրյա անձանց մասնակցությամբ հարաբերություններում երբ դրանք հատում են մի պետության սահմանները՝ ձգվելով մինչև մյուսը, որոշակիության և կանխատեսելիության սկզբունքները ձեռք են բերում նոր բովանդակություն և կարևորություն:

Այսինքն՝ դատարանները «ակնհայտության» չափանիշը մշտապես պետք է համակցության մեջ գնահատեն յուրաքանչյուր առանձին դեպքի հանգամանքների հետ՝ բացահայտելու պարտապանի իրական սերտ կապն այն իրավակարգի հետ, որը պետք է ճանաչվի հիմնական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող: Պատահական չէ, որ «Սնանկության ընթացակարգերի մասին» թիվ 2015/848⁹ կանոնակարգի նախաբանի 31-րդ կետը սահմանում է, որ ֆորում շոփինգը կանխելու նպատակով կանխավարկածը,

⁸ Տե՛ս <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A62004CJ0341> (հասանելի 03.10.2022 թվականի դրությամբ):

⁹ Տե՛ս <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A32015R0848&qid=1657962770605> (հասանելի 03.10.2022 թվականի դրությամբ):

որ հիմնական շահերի կենտրոնը գտնվում է հիմնադրման վայրում, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ բնակության վայրում, այն չի կիրառվում, եթե նման փոփոխությունն իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը կատարել է սնանկության վարույթ հարուցելու դիմում ներկայացնելուն նախորդող 3 ամսվա ընթացքում, իսկ ֆիզիկական անձը՝ 6 ամսվա ընթացքում:

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ամրագրել պարտապանի հիմնական շահերի կենտրոնը որպես իրավասու դատարանը որոշելու և հիմնական վարույթ հարուցելու չափանիշ՝ ամրագրելով պարտապան-իրավաբանական անձի՝ հիմնադրման վայրը՝ որպես վերջինիս հիմնական շահերի կենտրոնը լինելու կանխավարկածը, քանի դեռ տվյալ գործի հանգամանքների հաշվառմամբ չի հաստատվել, որ պարտապանը նախքան սնանկության վայր հարուցելը փոխել է իր հիմնական շահերի կենտրոնը, և, որ ամենակարևորն է, այն պետք է ակնհայտ լինի նաև պարտատերերի և երրորդ անձի համար:

Ֆիզիկական անձինք: Այս դեպքում հիմնական շահերի կենտրոնը որոշելու չափանիշ է ընդունվում բնակության վայրի (միջազգային ընդդատության գերմանական համակարգ) կամ անձի քաղաքացիության վայրի (միջազգային ընդդատության լատինական համակարգ) երկիրը: Մեր գնահատմամբ, ինչպես քննարկվեց վերևում իրավաբանական անձանց դեպքում, պետք է նախապատվությունը տալ պարտապանի հետ տվյալ պահին առավել սերտ կապված իրավակարգին, որը, կարծում ենք, պետք է որոշվի հենց վերջինիս մշտական բնակության վայրով: Քննարկվող մոդելը, մեր գնահատմամբ, ներկայումս լավագույնն է կատարում սնանկության վարույթի առջև դրված խնդիրները՝ ապահովելով բոլոր պարտատերերի հավասարության և մրցակցության սկզբունքների պատշաճ կենսագործումը: Առաջին հերթին, «ներքին» պարտատերերը, հաշվի առնելով ներպետական օրենսդրական կարգավորումները, կարող են գնահատել քաղաքացիական շրջանառության տարբեր մասնակիցների հետ առանձին իրավահարաբերությունների մեջ մտնելու ռիսկերը:

Երկրորդային վարույթներ: Ի տարբերություն հիմնական վարույթ հարուցելու իրավասության հարցի քննարկման, երբ խոսքը վերաբերում էր բացառիկ իրավասությանը, երկրորդային վարույթ հարուցելու իրավասությունն անհրաժեշտ է քննարկել այն նվազագույն չափանիշները որոշելով,

որոնք նման վարույթի հարուցումը դարձնում են թե՛ անհրաժեշտ և թե՛ նպատակահարմար, քանի որ մեկ պարտապանի մասով կարող են հարուցվել միանգամից մի քանի երկրորդային վարույթներ:

Միջազգային հանրաճանաչ փաստաթղթերը նման իրավասությունը որոշելու հնարավորությունը, ինչպես հիմնական վարույթ հարուցելու չափանիշը որոշելիս այս դեպքում ևս կապում են պարտապանի հիմնադրման վայրի հետ¹⁰: Նշված մոտեցման հիմքում ընկած է տեղական պարտատերերի շահերի պաշտպանության, հատկապես՝ օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի տեսանկյունը: Այսպես, եթե որևէ իրավաբանական անձ գործում է այլ օտարերկրյա պետության տարածքում իր ներկայացուցչության միջոցով, ապա ենթարկվում է այդ պետության ներպետական օրենսդրությանը, ինչպես տվյալ պետության սահմաններում գործող այլ իրավաբանական անձինք: Նշվածը կարևոր երաշխիք է նաև վերջիններիս հետ իրավահարաբերությունների մյուս կողմից տեսանկյունից՝ սնանկության դեպքում ապահովելով հավասար երաշխիքներ և կանխատեսելություն հնարավոր վարույթի շրջանակում:

Առանձին երկրների փորձի¹¹ ուսումնասիրությունը փաստում է, որ երկրորդային վարույթ հարուցելու չափանիշներն առավել լայն մեկնաբանելու միտում է նկատվում՝ դրա մեջ ներառելով նաև այն վայրը, որտեղ պարտապանն ունի ակտիվներ: Նշվածը հիմնավորվում է այն հանգամանքով, որ երկրորդային վարույթ հարուցելու հիմնական նպատակն առավել քիչ ռեսուրսների կիրառմամբ պահանջների բավարարում ստանալն է, և դա հնա-

¹⁰ Նման մոտեցումն ընկած է ինչպես Յունսիտրալ մոդելային օրենքի հիմքում, այնպես էլ ԵՄ կանոնակարգերի հիմքում: Մասնավորապես, Մոդելային օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է հիմնադրման վայրը՝ որպես ցանկացած գործունեության վայր, որտեղ պարտապանը ոչ ժամանակավոր տնտեսական գործունեություն է իրականացնում՝ ներառյալ մարդկային ռեսուրսներ, ապրանքներ կամ ծառայություններ: Իսկ ԵՄ կանոնակարգը բովանդակում է գրեթե նույնաբովանդակ նորմ՝ հավելելով, որ այդ գործունեությունը պետք է իրականացվի պարտապանի կողմից երեք ամսվա ընթացքում (2-րդ հոդված): Հավելենք, որ այս չափանիշի կիրառումն ունի բավականին երկար պատմություն, և վերջինիս դրսևորման առանձին օրինակ հանդիպում են 1889 և 1940 թվականների Մոնտեվիդեոյի պայմանագրում և 1928 թվականի Բուստամանտեի օրենսգրքում:

¹¹ Տե՛ս, օրինակ, «Անվճարունակության մասին» Գերմանիայի օրենքի 356-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, առավել մանրամասն՝ https://www.gesetze-im-internet.de/englisch_inso/ :

րավոր է միայն այն դեպքում, երբ տվյալ պետության տարածքում պարտապանը կունենա գույք:

Ներպետական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ մեզ մոտ ևս նման մոտեցում ընդունված է օտարերկրյա անձանց մասնակցությամբ վեճերի ենթակայության հարցերը որոշելիս: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 431-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններն իրավունք ունեն նաև քննելու օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործեր, եթե գույքային վեճով պատասխանողը Հայաստանի Հանրապետության տարածքում ունի գույք:

Ամփոփելով շարադրվածը՝ կարող ենք հանգել այն հետևության, որ հայրենական օրենսդրությամբ ունենալով կարգավորումներ գույքային բնույթ ունեցող վեճերով ենթակայության քննարկվող կանոնի մասին՝ նշված կարգավորումը կարող է նախատեսվել որպես Հայաստանի Հանրապետության տարածքում սնանկության երկրորդային վարույթ հարուցելու չափանիշներից՝ ապահովելով կողմերի շահերի հավասարակշռումը, վերջինիս նկատմամբ իրավահավասարությունը և գործերի արդյունավետ քննությունը:

Բանալի բառեր – անդրազգային սնանկություն, սկզբունք, ունիվերսալ, տերիտորիալ, պարտատեր, պարտապան, օտարերկրյա, ընդդատություն

ОСНОВНОЕ И ВТОРИЧНОЕ ПРОИЗВОДСТВО В ТРАНСГРАНИЧНОЙ НЕСОСТОЯТЕЛЬНОСТИ

Григорян Гоар

*Аспирант кафедры гражданского процесса ЕГУ
Судья гражданского суда первой инстанции
общей юрисдикции Еревана*

Статья посвящена основному и вторичному производству трансграничной несостоятельности. Этот вопрос имеет особое значение в трансграничной несостоятельности. В статье рассматривается суть подсудности; всесторонне излагаются особенности основного и вторичного производства; обсуждаются критерии возбуждения таких производств; представлены мнения авторов и

подходы; основные положения правовых документов, принятых известными международными организациями; делаются соответствующие выводы, которые на данном этапе развития могут решить проблемы трансграничной несостоятельности.

Ключевые слова: трансграничная несостоятельность, принцип, универсализм, территориальность, кредитор, должник, иностранный, подсудность.

PRIMARY AND SECONDARY PROCEEDINGS IN CROSS-BORDER INSOLVENCY

Gohar Grigoryan

PHD Student of the YSU Chair of Civil Procedure

Judge of the First Instance Civil Court of General

Jurisdiction of Yerevan

The article is devoted to the main and secondary proceedings of cross-border insolvency. This issue is of particular importance in cross-border insolvency. The article first examines the essence of jurisdiction, and then comprehensively outlines the features of primary and secondary proceedings. The article discusses the criteria for initiating such proceedings, presents the opinions of the authors and approaches, the main provisions of legal documents adopted by famous international organizations, and respective conclusions are made which at this stage of development can solve the problems of cross-border insolvency.

Key words: cross-border insolvency, principle, universalism, territorialism, creditor, debtor, foreign, jurisdiction

Հոդվածը գրախոսվել է՝ 29.01.2024թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 29.01.2024թ.:

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Իսրայելյան Գևորգ

*ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյի
քրեաբանության կիրառական հիմնախնդիրների
գիտահետազոտական կենտրոնի պետ,
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Համառոտագիր: Արտասահմանյան որոշ երկրներում (օրինակ՝ Բելա-
ռուսի Հանրապետությունում) իրականացվում է նորմատիվ իրավական ակ-
տերի նախագծերի քրեաբանական փորձաքննություն: Ուստի առկա են հա-
մապատասխան իրավակարգավորումներ, այդ թվում՝ նշված փորձաքն-
նության սկզբունքների վերաբերյալ, և տեսական հետազոտություններ,
որոնք առնչվում են այդ փորձաքննության մեթոդներին: Հայաստանի Հան-
րապետությունում, չնայած որոշակի իրավակարգավորումների առկայու-
թյանը, փորձաքննության հիշյալ տեսակի սկզբունքներն օրենսդրորեն նա-
խատեսված չեն, իսկ մեթոդներն անգամ տեսական մակարդակով ուսում-
նասիրված չեն: Ըստ այդմ՝ համապատասխան իրավական կարգավորման և
տեսական հետազոտությունների կարիք կա:

Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փոր-
ձաքննության իրավական հիմքերի կատարելագործման շրջանակներում
հեղինակն առաջարկում է ամրագրել հետևյալ սկզբունքները՝ Փորձաքն-
նության օրինականությունը՝ փորձաքննություն նշանակող և իրականաց-
նող մարմինների, Փորձաքննությանը ներգրավվող անձանց՝ օրենսդրու-
թյան պահանջները պահպանելու պարտականությունը, Փորձաքննության
պարտադիրությունը՝ բոլոր օրենսդրական և ենթաօրենսդրական նորմա-
տիվ իրավական ակտերի նախագծերը փորձաքննության օբյեկտ դարձնելը,
Փորձաքննություն իրականացնող մարմնի անկախությունը՝ Փորձաքննու-
թյուն հայցող մարմնից որևէ կախվածության բացառումը, Փորձագետի ինք-
նուրույնությունը՝ հետազոտության մեթոդները և մեթոդիկաներն ինքնու-
րոյն որոշելու հնարավորությունը, Փորձաքննության գիտական հիմնավոր-

վածությունը, օբյեկտիվությունը, բազմակողմանիությունը և լրիվությունը՝ փորձաքննության՝ ժամանակակից գիտության ձեռքբերումներին համահունչ, անկողմնակալ ու համակողմանի իրականացումը և այլն:

Փորձաքննության իրականացման մեթոդների շարքին հեղինակը դասել է համակարգային կառուցվածքային վերլուծությունը, վիճակագրական և համեմատական մեթոդները, հարցումը, փորձագիտական գնահատականների մեթոդը, էքստրապոլյացիան, սոցիալական մոդելավորումը և այլ մեթոդներ:

Բանալի բառեր. նորմատիվ իրավական ակտ, նախագիծ, քրեաբանական փորձաքննություն, սկզբունք, մեթոդ:

Ներածություն

Արտասահմանյան որոշ երկրներում (օրինակ՝ Բելառուսի Հանրապետությունում) իրականացվում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննություն: Ուստի առկա են համապատասխան իրավակարգավորումներ¹, այդ թվում՝ նշված փորձաքննության սկզբունքների վերաբերյալ, և տեսական հետազոտություններ, որոնք առնչվում են այդ փորձաքննության մեթոդներին²: Հայաստանի Հանրապետությունում փորձաքննության այդ տեսակի իրավական հիմքերում³ սկզբունքներն ամրագրված չեն, իսկ մեթոդներն անգամ տեսական մակարդակով ուսումնասիրված չեն: Նշվածը պայմանավորում է սույն հետազոտության արդիականությունը և նորոգյալը:

Հետազոտության նպատակն է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության (այսուհետ՝ Փորձաքննություն) իրավական հիմքերի կատարելագործման շրջանակներում⁴ ներկայացնել

¹ Տե՛ս օրինակ՝ <https://etalonline.by/document/?regnum=p30700244> (վերջին մուտք՝ 17.01.2024):

² Տե՛ս օրինակ՝ **Жишко К.С.** Криминологическая экспертиза в Республике Беларусь как необходимая мера в системе предупреждения преступности //Территория науки. 2017. № 5:

³ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 22.07.2004թ. № 1127-Ն որոշում:

⁴ Տե՛ս **Իսրայելյան Գ.Վ.**, Թմրահանցավորության դեմ պայքարի նյութաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Մենագրություն /Գ.Վ. Իսրայելյան: Եր.: Հեղ. հրատ., 2023, էջ 160:

Փորձաքննության սկզբունքների կարգավորման առաջարկություն և կանխորոշել Փորձաքննության մեթոդների շրջանակը:

Հիմնական հետազոտությունը

Փորձաքննության սկզբունքները

Հայտնի է, որ սկզբունքներն այն հիմնարար, դեկլարար և ելակետային դրույթներն են, որոնց հիման վրա պետք է կազմակերպվի և իրականացվի Փորձաքննությունը:

Փորձաքննության իրավական հիմքերի կատարելագործման ուղղությամբ առաջարկում ենք ամրագրել Փորձաքննության հետևյալ սկզբունքները.

1. Փորձաքննության օրինականությունը

Այս սկզբունքի ամրագրման պարագայում, կարծում ենք, անհրաժեշտ է նախատեսել Փորձաքննություն նշանակող և իրականացնող մարմինների, Փորձաքննությանը ներգրավվող անձանց՝ օրենսդրության պահանջները պահպանելու պարտականությունը:

2. Փորձաքննության պարտադիրությունը

Այս սկզբունքը ենթադրում է, որ Փորձաքննության օբյեկտ պետք է դարձվեն բոլոր օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը: Ընդ որում՝ Փորձաքննությանը պետք է նախորդի նորմատիվ իրավական ակտերի պարտադիր իրավական փորձաքննությունը: Փորձաքննության օբյեկտ չեն կարող դառնալ միայն այն նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, որոնք ենթական չեն պարտադիր իրավական փորձաքննության, օրինակ՝ հանրաքվե կամ ընտրություններ նշանակելու վերաբերյալ նորմատիվ իրավական ակտեր («Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, հոդված 7):

3. Փորձաքննություն իրականացնող մարմնի անկախությունը

Այս սկզբունքի հիմնաքարը Փորձաքննություն իրականացնող մարմնի՝ Փորձաքննություն հայցող կամ ցանկացած այլ սուբյեկտից որևէ կախվածության բացառումն է: Փորձաքննություն նշանակած մարմնի, այլ սուբյեկտների կողմից Փորձագիտական գործունեությանը միջամտելը պետք է առաջացնի համապատասխան իրավաբանական պատասխանատվություն: Կարծում ենք, որ անհրաժեշտ է համապատասխան լրացում կատարել Քրեական օրենսգրքում:

4. Փորձագետի ինքնուրույնությունը

Այս սկզբունքը ենթադրում է փորձագետի հնարավորությունն ինքնուրույն որոշելու հետազոտության մեթոդները և մեթոդիկաները:

5. Փորձաքննության գիտական հիմնավորվածությունը, օբյեկտիվությունը, բազմակողմանիությունը և լրիվությունը

Փորձաքննությունը պետք է իրականացվի ժամանակակից գիտության ձեռքբերումներին համահունչ, անկողմնակալորեն՝ ուսումնասիրելով առաջադրված խնդրի բոլոր կողմերը: Ըստ այդմ՝ եզրակացության մեջ ձևակերպված եզրահանգումները պետք է լինեն գիտականորեն հիմնավորված և արժանահավատ:

Փորձաքննության մեթոդները

Փորձաքննության մեթոդաբանությունն ընդգրկում է կառուցվածքային երեք միավոր.

1. Հայեցակարգային գաղափարները

Հայեցակարգային գաղափարներն ուսումնասիրության առարկայի մասին ելակետային դատողություններն են, դրա ծրագրային առաջարկությունները (վարկածները): Այդ գաղափարները ոչ միայն ապահովում են հետազոտության միասնական բովանդակային դաշտ, այլև կանխորոշում են ճանաչողության գործընթացի կազմակերպումը, հասկացությունների զինանոցի և հետազոտության ելակետային ձևերի կազմավորումը:

2. Մեթոդաբանական սկզբունքները

Մեթոդաբանական սկզբունքներն ուսումնասիրության առարկայի մեջ ներթափանցելու համար թույլատրելի պայմաններն են, առարկայի ճանաչողության մտային նախադրյալները: Կոնկրետ մեթոդաբանությամբ ներառվող սկզբունքները միատարր չեն, դրանք կարելի է դասակարգել հետևյալ հիերարխիկ խմբերի.

1) սկզբունքներ, որոնք թույլ են տալիս օբյեկտի մեջ տարբերակել ճանաչողական հետաքրքրության առարկան և արտացոլում են առարկայի հանդեպ ինտելեկտուալ մոտեցման առանձնահատկությունը (պատմական սկզբունք, համակարգային մոտեցում և այլն),

2) սկզբունքներ, որոնք թույլ են տալիս հայտնաբերել կոնկրետ տեսության առարկայի կապը նույն օբյեկտին վերաբերող այլ առարկաների հետ (հասարակական կյանքի նյութական, սոցիալական և հոգևոր կողմերի միասնության սկզբունք, իրավունքի սոցիալական պայմանավորվածության սկզբունք և այլն),

3) սկզբունքներ, որոնք արտացոլում են մտածողության օրենքները (արդիականության սկզբունք, ռացիոնալության սկզբունք և այլն):

3. Ճանաչողության մեթոդները

Ճանաչողության մեթոդները ծառայում են որպես առարկայի բովանդակության բացահայտման և համակարգման միջոցներ⁵:

Ըստ հետազոտության օբյեկտի նկատմամբ ներգործության եղանակի՝ տարբերում են՝

1) ուղղակի մեթոդները (հարցում, փաստաթղթերի ստուգում և այլն), որոնք անհրաժեշտ են հետազոտվող երևույթի ծավալն անմիջականորեն պարզելու համար,

2) անուղղակի մեթոդները (մոդելավորում, համեմատական վերլուծություն, անալոգիա և այլն), որոնց գործադրումը թույլ է տալիս պարզել հետազոտության օբյեկտի վիճակը՝ դրա հիմնական չափանիշների կանխորոշման և ախտորոշման միջոցով⁶:

Ելնելով հետազոտության ուղղվածությունից՝ մեթոդները կարելի է բաժանել երկու խմբի՝ ճանաչողության ընդհանուր գիտական և կոնկրետ սոցիոլոգիական մեթոդներ:

Ճանաչողության ընդհանուր գիտական մեթոդների թվին են դասվում.

1. Համակարգային կառուցվածքային վերլուծությունը, որն իրավական կարգավորումների վերլուծության ժամանակ թույլ է տալիս համադրել փոխկապակցված պատճառների համակարգը, որոնք իրենց ամբողջության մեջ հանգեցնում են քրեածին կամ զոհային վարքի, զոհացման գործընթացի:

2. Պատմական մեթոդը, որը թույլ է տալիս նորմատիվ կարգավորումներում բացահայտել քրեածին և զոհաբանական գործոնների փոփոխությունները ժամանակի մեջ և իրավական կանոնակարգերի պատմությունն աշխարհում:

3. Վիճակագրական մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս գնահատել իրավական կարգավորումներում տեղ գտած քրեածին և զոհաբանական գործոնների պատկերը:

⁵ Ст'ю Криминология: Учебник для вузов /Под общ. ред. д.ю.н., проф. А.И. Долговой. – 3-е изд., перераб. и доп. – М.: Норма, 2005, էջեր 33-42:

⁶ Ст'ю Իսրայելյան Գ.Վ., Քրեաբանություն: Ընդհանուր դրույթներ: Ուսումնական ձեռնարկ /Գ.Վ. Իսրայելյան. - Եր., Հեղ. հրատ., Աստղիկ Գրատուն, 2020, էջ 67:

4. Համեմատական մեթոդը, որը թույլ է տալիս համեմատել տարբեր պետություններում և տարածքային միավորներում հանցավորության իրավական բնույթի գործոնների մասշտաբները: Պետք է նշել, որ ավելի արդյունավետ է համեմատական և վիճակագրական մեթոդների համատեղ կիրառումը: Դա հնարավորություն կտա ստանալ հետազոտվող երևույթի մանրամասն պատկերը⁷:

Ինչ վերաբերում է հատուկ մեթոդներին, ապա դրանց թվին դասվում են.

1. Հարցումը, այդ թվում՝ անկետավորումը, հարցազրույցը, որոնք հնարավորություն են տալիս պարզել իրավական բնույթի քրեածին և զոհաբանական գործոնների մոտավոր մակարդակը:

2. Փորձագիտական գնահատականների մեթոդը, որը քրեածին և զոհաբանական գործոնների հետազոտության պարագայում կառուցվում է մասնագետների փորձի, գիտելիքների և ներըմբռնման վրա: Տարբերում են անհատական և կոլեկտիվ փորձագիտական գնահատականները: Պետք է նկատի ունենալ՝ քանի որ այս մեթոդը հաճախ հիմնվում է ներըմբռնման վրա և կրում է սուբյեկտիվ բնույթ, ուստի այն կիրառելիս հիմնական ուշադրությունը պետք է դարձնել փորձագիտական գնահատականների արժանահավատությանը: Այս տեսանկյունից նախընտրելի է օգտագործել կոլեկտիվ փորձագիտական գնահատականները⁸:

3. Էքստապոլյացիան, որը ենթադրում է երևույթի մի մասի դիտարկումներից ստացված եզրակացությունների տարածումը դրա մյուս մասի վրա, իրադարձությունների գիտական կանխատեսումը⁹:

4. Սոցիալական մոդելավորումը, որը նպատակ ունի կրճատել հեռավորությունը հասարակական գիտություններում օգտագործվող նկարագրական մեթոդի և բնական գիտություններում կիրառվող ձևական մեթոդի

⁷ Տե՛ս Քրեական զոհաբանություն (Բնութագիրը և բաղադրիչները): Մենագրություն /Գ.Վ. Իսրայելյան. – Եր.: Հեղ. հրատ., 2023, էջեր 11-12:

⁸ Տե՛ս Իսրայելյան Գ.Վ., Կիրառական քրեաբանության արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գիտագործնական ձեռնարկ: Երևան, Հեղ. հրատ., Աստղիկ գրատուն, 2019, էջեր 70-76:

⁹ Տե՛ս Мельникова Л.А. Экстраполяция как метод познания и предвидения в исторической науке

// file:///D:/Users/User/Downloads/ekstrapolyatsiya-kak-metod-poznaniya-i-predvideniya-v-istoricheskoy-nauke.pdf (վերջին մուտք՝ 17.01.2024):

միջև՝ շեշտադրում կատարելով սոցիալական իրականությունը ձևավորող վարքագծի կառուցակարգերի վրա¹⁰:

Եզրակացություն

Կատարված հետազոտության արդյունքում ձևավորվել են հետևյալ եզրահանգումները.

1. Հայաստանի Հանրապետությունում, չնայած որոշակի իրավակարգավորումների առկայությանը, Փորձաքննության սկզբունքներն օրենսդրորեն նախատեսված չեն, իսկ մեթոդներն անգամ տեսական մակարդակով ուսումնասիրված չեն: Ուստի զգացվում է համապատասխան կանոնակարգման անհրաժեշտություն:

2. Որպես Փորձաքննության սկզբունքներ՝ առաջարկում ենք դիտարկել Փորձաքննության օրինականությունը, Փորձաքննություն իրականացնող մարմնի անկախությունը, Փորձաքննության գիտական հիմնավորվածությունը, օբյեկտիվությունը, բազմակողմանիությունը և լրիվությունը, Փորձաքննության պարտադիրությունը:

3. Փորձաքննության իրականացման մեթոդների շարքին հարկավոր է դասել համակարգային կառուցվածքային վերլուծությունը, վիճակագրական և համեմատական մեթոդները, հարցումը, փորձագիտական գնահատականների մեթոդը, էքսպերտայոլյացիան, սոցիալական մոդելավորումը:

¹⁰ St'u **Родюкова Т.Н.** Специфика использования социального моделирования в управлении //file:///D:/Users/User/Downloads/spetsifika-ispolzovaniya-sotsialnogo-modelirovaniya-v-upravlenii.pdf (վերջին մուտք՝ 17.01.2024), **Мороз И.А.** Организация в Республике Беларусь криминологической экспертизы проектов нормативных правовых актов и роль судебных экспертов в ее проведении //Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես: Համար 9, էջ 69:

ПРИНЦИПЫ И МЕТОДЫ КРИМИНОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ ПРОЕКТОВ НОРМАТИВНЫХ ПРАВОВЫХ АКТОВ

Исраелян Геворг

*кандидат юридических наук, доцент,
Начальник Научно-исследовательского центра
прикладных проблем криминологии
Национального бюро экспертиз
Национальной академии наук Республики Армения,
преподаватель Международного университета Евразия*

Аннотация: В некоторых зарубежных странах (например, в Республике Беларусь) проводится криминологическая экспертиза проектов нормативных правовых актов. Поэтому существуют соответствующие правовые регламентации, в том числе касательно принципов проведения указанной экспертизы, а также теоретические исследования, связанные с методами экспертизы. В Республике Армения, несмотря на наличие определенных правовых норм, принципы проведения этого вида экспертизы законодательно не предусмотрены, а методы не изучены даже на теоретическом уровне. Соответственно, возникла потребность осуществления правового регулирования и теоретических исследований.

В рамках разработки правовых основ криминологической экспертизы проектов нормативных правовых актов автор предлагает закрепить следующие принципы: законность проведения экспертизы (обязанность соблюдения требований законодательства органами, назначающими и проводящими экспертизу, лицами, участвующими в проведении экспертизы); обязательность экспертизы (рассмотрение проектов всех законодательных и подзаконных нормативных правовых актов в качестве объекта экспертизы); независимость органа, проводящего экспертизу (исключение какой-либо зависимости органа, проводящего экспертизу, от органов, назначающих экспертизу, других субъектов); самостоятельность эксперта (возможность эксперта самостоятельно определять методы и методику исследования); научная обоснованность,

объективность, универсальность и полнота экспертизы (проведение экспертизы в соответствии с достижениями современной науки, беспристрастность и всесторонность исследования).

В качестве методов экспертизы автор отмечает системный-структурный анализ, сравнительные и статистические методы, опрос, метод экспертных оценок, экстраполяцию, социальное моделирование.

Ключевые слова: нормативный правовой акт, проект, криминологическая экспертиза, принцип, метод.

PRINCIPLES AND METHODS OF THE CRIMINOLOGICAL EXPERTISE OF DRAFT NORMATIVE LEGAL ACTS

Gevorg Israyelyan

*Candidate of Legal Sciences, Associate Professor,
Head of the Scientific Research Center of
Applied problems in criminology of
National Bureau of Expertises of National Academy
of Sciences of the Republic of Armenia,
Lecturer of the Law Department at Eurasia
International University*

Summary: In some foreign countries (for example, in the Republic of Belarus) a criminological expertise of draft normative legal acts is carried out. Therefore, there are appropriate legal regulations, including on the principles of conducting the specified expertise, as well as theoretical studies related to the methods of expertise. In the Republic of Armenia, despite the existence of certain legal norms, the principles of conducting this type of expertise are not provided for by law, and the methods have not even been studied at the theoretical level. Accordingly, there was a need for legal regulation and theoretical research.

As part of the development of the legal framework for the criminological expertise of draft normative legal acts, the author proposes to consolidate the following principles: The legality of the expertise (the obligation of the bodies appointing and conducting the expertise, persons participating in the expertise,

compliance with legal requirements); The mandatory expertise (consideration of drafts of all legislative and subordinate normative legal acts as an object of expertise); Independence of the body conducting the expertise (excluding any dependence of the body conducting the expertise on the bodies requesting the expertise, other subjects); Self reliance of the expert (the ability of the expert to independently determine the methods and methodology of the study); Scientific validity, objectivity, universality and completeness of the expertise (conducting an expertise in accordance with the achievements of modern science, impartiality and the comprehensiveness of the research).

The author notes system-structural analysis, comparative and statistical methods, survey, expert assessment method, extrapolation, social modeling as methods of expertise.

Key words: normative legal act, draft, criminological expertise, principle, method.

Հոդվածը գրախոսվել է՝ 19.01.2024թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 19.01.2024թ.:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լազարյան Արփի

*ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի հայցորդ, Արդարադատության նախարարության
քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի
ոլորտի քաղաքականության մշակման վարչության, քրեական և
քրեադատավարական օրենսդրության մշակման բաժնի պետ*

*«Լինել հաշմանդամ, նշանակում է լինել սոցիալապես խոցելի,
իսկ լինել հաշմանդամ քրեակատարողական հիմնարկի պայմաններում,
նշանակում է լինել կրկնակի խոցելի՝»
Ս.Պ. Շերբ*

Համառոտագիր: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը պետության կարևոր գործունեության ոլորտներից մեկն է: Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձինք, իսկ առավելապես հաշմանդամություն ունեցող անձինք, բախվում են մի շարք դժվարությունների, այդ թվում՝ հիգիենայի պահպանման, տեղաշարժման և այլ առօրեական խնդիրների: Հեղինակը փորձել է վերլուծել քննարկվող ոլորտում առկա միջազգային փորձը, միջազգային կառույցների կողմից ձևավորված իրավական չափորոշիչները և դրանց համատեքստում ներպետական իրավական և գործնական ոլորտում առկա փորձն ու դրա զարգացման ուղղությամբ:

¹ St' u Исполнение наказания в виде лишения свободы в отношении инвалидов: международные стандарты, законодательство и опыт России : монография,
https://books.google.am/books/about/%D0%98%D1%81%D0%BF%D0%BE%D0%BB%D0%BD%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5_%D0%BD%D0%B0%D0%BA%D0%B0%D0%B7%D0%B0%D0%BD%D0%B8%D1%8F.html?id=wFoLjwEACAAJ&redir_esc=y (Վերջին այցելություն՝ 13.11.2023թ.)

յունները: Դրանից զատ վերլուծվել են քրեակատարողական հիմնարկներում պահվող հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալները: Վերլուծված վիճակագրական տվյալների, միջազգային և ներպետական իրավական ակտերի համադրված վերլուծության արդյունքում հեղինակը հանգել է հետևության, որ ներկայումս առկա է լրջագույն խնդիր հաշմանդամություն ունեցող անձանց քրեակատարողական հիմնարկներում պահման ոլորտում, որի վերաբերյալ ներկայացվել են գործնական առաջարկներ:

Բանալի բառեր: դատապարտյալ, հաշմանդամ, միջազգային չափորոշիչ, քրեակատարողական հիմնարկ, պահման պայմաններ:

Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձինք որոշակի չափով համարվում են հասարակության «խոցելի խմբի» ներկայացուցիչներ, իսկ հաշմանդամությունը՝ առավելապես քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրելու պարագայում, էլ ավելի է դժվարացնում վերջիններիս առօրյան և պայմանները:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում է 10 քրեակատարողական հիմնարկ, որտեղ այս պահին պահվում են մոտ 4490 դատապարտյալ և կալանավորված անձ, որոնցից 3-րդ խմբի հաշմանդամություն ունեն ընդհանուր 56 դատապարտյալ և 33 կալանավորված անձ, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեն ընդհանուր 23 դատապարտյալ և 5 կալանավորված անձ, 1-ին խմբի հաշմանդամություն ունեն 3 դատապարտյալ և 1 կալանավորված անձ:

Ընդ որում՝ հաշմանդամություն ունեցող անձանցից այս պահին չորսը տեղաշարժվում է անվասայլակի միջոցով:

Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալները՝ ըստ քրեակատարողական հիմնարկների, ներկայացվում են կից աղուսակում:

Քրեակատարողական հիմնարկ	1-ին խումբ		2-րդ խումբ		3-րդ խումբ	
	Կալանավորված անձ	Խոնամոռոտում	Կալանավորված անձ	Խոնամոռոտում	Կալանավորված անձ	Խոնամոռոտում
«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ	-	-	-	1	1	2
«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ	-	-	-	-	3	4
«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ	-	-	-	1	2	1
«Սևան» քրեակատարողական հիմնարկ	-	-	-	4	-	9
«Արմավիր» քրեակատարողական հիմնարկ	-	1	-	5 Որից 1-ը անվասայլ ակոյ	5	19
«Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ	-	-	-	-	-	-
«Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ	1	1 Որից 1-ը անվասայ- լակոյ	3	7 Որից 2-ը անվասայ- լակոյ	9	12
«Աբովյան» քրեակատարողական հիմնարկ	-	-	-	-	-	-
«Արթիկ» քրեակատարողական հիմնարկ	-	-	1	2	13	7
«Գորիս» քրեակատարողական հիմնարկ	-	1	1	3	-	2
Ընդամենը	1	3	5	23	33	56

Միննույն ժամանակ, ուշագրավ է այն հանգամանքը, որ գործող քրեակատարողական հիմնարկներից որևէ մեկը չունի հատուկ պայմաններ՝ հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման և առօրեական կարիքները հոգալու համար:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել հատուկ կատեգորիայի՝ հաշմանդամություն ունեցող անձանց հետ վարվեցողության կանոններ պարունակող հիմնական միջազգային ակտերը և վեր հանել դրանցով նախատեսված կարգավորումների գործնական կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում՝ ներկայիս ներպետական օրենսդրության և պրակտիկայի տեսանկյունից:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ներպետական պաշտպանության բնագավառում հիմնական իրավական ակտը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2021 թվականին ընդունված օրենքն է, որի համաձայն հաշմանդամությունը՝ որպես առողջական խնդիրներ ունեցող անձանց և միջավայրային արգելքների (այդ թվում՝ վերաբերմունքի) փոխազդեցության հետևանքով առաջացող երևույթ (իրավիճակ), խոչընդոտում է անձի՝ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքին լիարժեք ու արդյունավետ մասնակցությունը:

Նույն օրենքի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձն այն անձն է, ով ֆիզիկական, հոգեկան, մտավոր և (կամ) զգայական տեսական խնդիրների և միջավայրային արգելքների փոխազդեցության հետևանքով կարող է ունենալ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքին լիարժեք ու արդյունավետ մասնակցության սահմանափակում:

Միննույն ժամանակ, դիտարկելով հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժ նշանակելու Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումները՝ կարելի է նկատել, որ որևէ սահմանափակում անձի հաշմանդամությամբ նրա նկատմամբ պատիժ նշանակելու մասով օրենսդիրը չի նախատեսել, որից բխում է, որ ցանկացած աստիճանի հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ կարող է նշանակվել պատժի ցանկացած տեսակ, ներառյալ՝ ազատազրկում և ցմահ ազատազրկում:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ պատժի կատարման կարգը և պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրությամբ:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումների համաձայն՝ **պատիժների կատարման և քրեախրավական ներգործության այլ միջոցների կիրառման կարգն ու պայմանները տարածվում են բոլոր դատապարտյալների վրա՝** անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծննդից, **հաշմանդամությունից**, տարիքից կամ անձնական, կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում կան մի քանի կարգավորումներ ևս, որոնք վերաբերում են հաշմանդամություն ունեցող անձանց հանձնույններ ստանալու, մեկնումների և այլ իրավունքների իրացման առանձնահատկություններին:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 543-Ն որոշմամբ ևս առկա չէ որևէ կարգավորում, որը կվերաբերի հաշմանդամություն ունեցող անձանց պատժի կրման առանձնահատկություններին՝ բացառությամբ այն հանգամանքին, որ նրանք բժշկի թույլտվությամբ կարող են իրենց մոտ ունենալ և ձեռք բերել հենակներ, ձեռնափայտեր, պրոթեզներ, հաշմանդամների սայլակներ:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների ծրագրի 31-րդ կետի համաձայն՝ առնվազն 2023 թվականի դրությամբ քրեակատարողական համակարգը պետք է ապահովված լինի ազատությունից զրկված հաշմանդամություն ունեցող անձանց պահման մատչելի պայմաններով²:

Մինչդեռ, «Իրավական նախաձեռնություններ կենտրոն» հասարակական կազմակերպությունն արձանագրել է, որ հաշմանդամություն ունեցող ազատազրկված անձինք ապահովված չեն իրենց կարիքներին համապատասխան կենսապայմաններով, ինչի հետևանքով նրանց խնդիրներն ազա-

² Տե՛ս https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2019/12/19-1717.pdf (Վերջին այցելություն՝ 29.10.2023)

տազրկման ընթացքում բազմապատկվում են՝ բացասաբար անդրադառնալով ոչ միայն առողջության, այլև վերասոցիալականացման և վերաինտեգրման վրա³:

Նշված գեկույցում, ի թիվս այլնի, արձանագրվել է նաև, որ հաշմանդամություն ունեցող անձինք քրեակատարողական հիմնարկ մուտք գործելուց նեթ բախվում են խնդիրների, քանի որ հիմնարկների շենքերը հարմարեցված չեն վերջիններիս կարիքներին՝ բացակայում են բազրիքները, թեքահարթակները, ավելի վառ գույներով ներկված աստիճանները, սանհանգույցները և այլն:

Համապատասխան հարմարեցումները բացակայում են նաև ազատազրկված անձանց ամենօրյա գործողությունների համար կարևոր տարածքներում, օրինակ՝ լոգարաններ, սանհանգույց, ճաշարան, երկարատև կամ կարճատև տեսակցության սենյակներ, զբոսահրապարակներ, գրադարաններ, մարզասրահներ, ուսումնական սենյակներ և այլն:

Այս մասով մտահոգիչ է նաև «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների» խմբի ընթացիկ և տարեկան հաշվետվություններով արձանագրված խնդիրները, որոնք հիմնականում վերաբերում են հաշմանդամություն ունեցող անձանց հիվանդանոցներ տեղափոխելուն, տեղաշարժման խնդիրներ ունենալու պարագայում շենքային պայմանների անհամապատասխանությանը, օրինակ՝ լոգանք ընդունելու դժվարություններին և այլ թիրախային հարցերի, որին բախվում են քրեակատարողական հիմնարկի պայմաններում պահվող հաշմանդամություն ունեցող, իսկ առավելապես հենաշարժական խնդիրներ ունեցող անձինք:

Այս մասին է խոսել նաև ոլորտային հասարակական կազմակերպություններից մեկի նախագահը՝ նշելով. «Հաշմանդամություն ունեցող ազատազրկված անձանց խնամքը հիմնականում թողնվում է խցակիցների բարեխճության վրա, կալանավորն էլ շարունակ օգնություն խնդրելիս իրեն վատ է զգում ու շատ հաճախ ամաչում է նեղություն տալ՝ անցնելով պասիվ կենսակերպի, ինչն էլ հավելյալ հիվանդություններ է առաջացնում, օրինակ՝ ա-

³Տե՛ս «Ազատազրկված անձանց վերասոցիալականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» 2020 թվական, էջ 83

զատագրվածներից մեկի մոտ պասիվ կենսակերպի պատճառով պառկելախոցեր էին առաջացել»⁴:

Հաշմանդամ և բժշկական օգնության կարիք ունեցող ազատությունից զրկված անձանց իրավունքները տարիներ շարունակ եղել և մնում են թե՛ տարբեր պետությունների, թե՛ միջազգային կառույցների, թե՛ հասարակական կազմակերպությունների հետաքրքրության և անհանգստության առարկան:

Այնուամենայնիվ, հարկ է արձանագրել, որ այս պահին Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ հարմարեցված քրեակատարողական հիմնարկներ առկա չեն, և նրանք, որպես կանոն, պահվում են քրեակատարողական հիմնարկներում գործող բուժական մասերում:

Այս առումով աշխարհի տարբեր երկրներում առկա են տարբեր մոտեցումներ: Մասնավորապես՝ մասնագիտացված քրեակատարողական հիմնարկների պրակտիկան տարածված է Ճապոնիայում, Ուկրաինայիում, սակայն առավել տարածված են այն դեպքերը, երբ քրեակատարողական հիմնարկներում ստեղծվում են առանձնացված ստորաբաժանումներ հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ այն անձինք, որոնք ունեն հենաշարժական խնդիրներ և, ըստ այդմ, չեն կարողանում ինքնուրույն տեղաշարժվել կամ հոգալ առօրեական կարիքները, նրանց կցվում են մասնագիտացված ծառայողներ, որոնք օգնում են վերջիններիս՝ առօրեական կարիքները հոգալու և տեղաշարժվելու հարցում⁵:

Բայց և այնպես քիչ չեն դեպքերը, երբ միջազգային կառույցների, մասնավորապես՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) կողմից հաշմանդամություն ունեցող անձին քրեակատարողական հիմնարկի պայմաններում պահելը դիտարկվել է որպես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական

⁴ Տե՛ս

https://prisoninitiatives.am/mediaaboutus/28330/?fbclid=IwAR3m0_sB1IBthjpk9VPzTrfk9H-h7MkBItylxHjzLaK2qEx_KPZsWQ-2cC4 (Վերջին այցելություն՝ 14.11.2023թ.)

⁵ Տե՛ս <https://doorinworld.ru/stati/mogut-li-invalida-posadit-v-tyurmu> (Վերջին այցելություն՝ 22.10.2023)

կոնվենցիայի (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ) 3-րդ հոդվածի՝ խոշտանգման արգելքի խախտում⁶:

Օրինակ՝ Փրայսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԴ-ն որոշել է, որ լուրջ ֆիզիկական խնդիրներ ունեցող անձին քրեակատարողական հիմնարկում պահելը այն դեպքում, երբ նրա համար դժվարամատչելի է իր մահճակալին հասնելը, ինչպես նաև այն դեպքերում, երբ նա դժվարությունների հետ է բախվում, երբ պետք է այցելի սանհանգույց կամ հոգա իր անձնական հիգիենայի կարիքները, նվաստացնող վերաբերմունք է և ՄԻԵԿ 3-րդ հոդվածի խախտում է⁷:

Հարկ է նկատել, որ Մուիզել Ֆրանսիայի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ ՄԻԵԴ 3-րդ հոդվածի շրջանակներում զանգատները քննելիս հարկ է նկատի ունենալ մի քանի հանգամանքներ, ներառյալ՝ դիմողի առողջական վիճակը, նրա տարիքը և վերջինիս մոտ լուրջ ֆիզիկական խնդիրների առկայությունը:

Իսկ Սեմիխվոստովիչն ընդդեմ Ռուսաստանի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ երբ խոսքը վերաբերում է խոշտանգումներից ու անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից պաշտպանվելու հիմնարար իրավունքին, ապա կանխարգելիչ և փոխհատուցման միջոցները պետք է փոխարացնող լինեն՝ արդյունավետ համարվելու համար: Կանխարգելիչ միջոցի առկայությունն էական է ՄԻԵԿ 3-րդ հոդվածով արգելված միջոցներից անհատներին արդյունավետ պաշտպանելու համար: Իրոք, այն առանձնահատուկ կարևորությունը, որ ՄԻԵԿ-ը տալիս է այս դրույթին, Դատարանի կարծիքով, պահանջում է, որ մասնակից պետությունները, ի լրումն փոխհատուցման միջոցի, ձևավորեն արդյունավետ մեխանիզմ՝ ցանկացած նման վերաբերմունքն անհապաղ վերացնելու համար⁸:

Հաշմանդամին քրեակատարողական հիմնարկում պահելը, որտեղ նա չի կարող տեղափոխվել, մասնավորապես՝ չի կարող դուրս գալ իր խցից

⁶ Տե՛ս https://www.echr.coe.int/documents/d/echr/Guide_Prisoners_rights_RUS (վերջին այցելություն՝ 14.11.2023)

⁷ Տե՛ս CASE OF D.G. v. POLAND (Application no. 45705/07) [https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:\[%22001-116410%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-116410%22]}) (վերջին այցելություն՝ 14.11.2023)

⁸ Տե՛ս CASE OF MOUISEL v. FRANCE (Application no. 67263/01) [https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:\[%22001-60732%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-60732%22]}) (վերջին այցելություն՝ 22.10.2023)

առանց որևէ մեկի օգնության, ՄԻԵԴ-ը գնահատել է որպես նվաստացուցիչ վերաբերմունք⁹:

Այնուամենայնիվ, ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումների ուսումնասիրության արդյունքում կարող ենք պնդել, որ ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածը պետության կողմից ապահովված կլինի, երբ անազատության մեջ պահվող անձինք լինեն այնպիսի պայմաններում, որ չոտնահարվի նրանց արժանապատվությունը, որպեսզի պատժի կրման կարգն ու եղանակը չլինի նրանց ցավ կամ տառապանք պատճառող, նրանց առողջությունը և բարեկեցությունն ապահովվեն բավարար չափով, օրինակ՝ տրամադրելով նրանց պատշաճ բժշկական օգնություն կամ այնպիսի պահման պայմաններ, որի պարագայում վերջիններս տեղաշարժվելու կամ այլ կարիքները հոգալու համար ստիպված չլինեն դիմել խցակիցների կամ քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների օգնությանը:

Վերը մեջբերված նախադեպային որոշումների վերլուծությունից պարզ է դառնում, որ քրեակատարողական հիմնարկի պայմաններում պահվող հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում հիմնական միջազգային իրավական ակտը **Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան է:**

Սույն ոլորտի կարևորագույն միջազգային իրավական ակտերից է նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1975 թվականի դեկտեմբերի 2-ի 3447 (XXX) բանաձևով ընդունված՝ **«Հաշմանդամների իրավունքների մասին» հռչակագիրը** (այսուհետ նաև՝ Հռչակագիր), որով առաջին անգամ հավաքական կերպով ձևակերպել են մարդու իրավունքի համընդհանուր հռչակագրից բխող հաշմանդամություն ունեցող անձանց հիմնական յուրահատուկ իրավունքները: Հռչակագրով՝ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնական իրավունքներից զատ ընդգծվեց նաև, որ եթե հաշմանդամին հատուկ հաստատությունում պահվելն անհրաժեշտ է, ապա դրա միջավայրը և կենցաղային պայմանները պետք է հնարավորինս համապատասխանեն նրա բնականոն կյանքի պայմաններին:

⁹ Տե՛ս ECtHR. Semikhvostov v. Russia. Application no.2689/12. Judgment of 6 February 2014. <https://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=ARB&n=389280#AzYbPtTKubJnMh5O1> (Վերջին այցելություն՝ 28.10.2023)

Դրա հետ միաժամանակ, Հռչակագիրը սահմանում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք պետք է պաշտպանված լինեն ցանկացած շահագործումից կամ վերաբերմունքից, որը խտրական, վիրավորական կամ նվաստացուցիչ է¹⁰:

Հարկ է ընդգծել նաև, որ, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն, մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձինք այլ անձանց հետ հավասար հիմունքներով ունենան մարդու իրավունքների միջազգային իրավունքին համապատասխան տրվող երաշխիքների իրավունք:

Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականի հոկտեմբերի 22-ին, խթանելով սույն կոնվենցիային, պարտավորություն է ստանձնել աջակցել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց (այդ թվում՝ անպարզություն մեջ պահվող)՝ լիարժեք և հավասարապես օգտվել մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից, ինչպես նաև ապահովել հարգանքը նրանց արժանապատվության նկատմամբ:

Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային առանցքային փաստաթղթերը համարվում են «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները» և «Եվրոպական բանտային կանոնները», որոնք հաշմանդամություն ունեցող անձանց որպես դատապարտյալների շրջանում առանձնահատուկ կարգավիճակ ունեցող չեն դիտարկում և հատուկ նրանց համար կարգավորումներ չեն նախատեսում:

Վերլուծելով վերը նշված միջազգային և ներպետական իրավական ակտերով նախատեսված իրավակարգավորումները, դրանք համադրելով ներկայումս քրեակատարողական հիմնարկներում առկա իրավիճակի հետ՝ կարելի է աներկբայորեն պնդել, որ ներկայումս, թեև քրեակատարողական համակարգում առկա են լրջագույն փոփոխություններ, որոնք միտված են ազատությունից զրկված անձանց կյանքի պայմանների բարելավմանը, վերջիններիս վերասոցիալականացման և վերաինտեգրման համար անհրաժեշտ լիարժեք պայմանների ստեղծմանը, սակայն խնդրահարույց և խոցելի

¹⁰ Տե՛ս https://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/disabled.shtml(Վերջին այցելություն՝ 22.10.2023)

է մնում անազատության մեջ գտնվող և միաժամանակ հաշմանդամություն ունեցող անձանց վիճակը:

Հարկ է նկատի ունենալ, որ Քրեակատարողական ոլորտի բարեփոխման ռազմավարական ծրագրերով նախատեսված՝ հաշմանդամություն ունեցող անձանց պահման պայմանների բարելավման տեսանկյունից առավել թիրախային լուծման տարրերակ կլինի վերջիններիս համար առանձացված մասնաշենքի կառուցումը, որը շինարարական չափորոշիչների տեսանկյունից հարմարեցված կլինի հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին, իսկ դրանից զատ, կարծում ենք, առավել նպատակահարմար է, որ տվյալ մասնաշենքի ծառայողներն ունենան (կամ մասնաշենքում ծառայության անցնելու նպատակով վերապատրաստվեն) որոշակի բժշկական ուղղվածության մասնագիտացում, որպիսի պայմաններում առավել արդյունավետ և թիրախային կկազմակերպվի հաշմանդամություն ունեցող անձանց պատժի կրման գործընթացը և չի հանգեցնի վերջիններիս հիմնական իրավունքների խախտման:

МЕЖДУНАРОДНЫЕ СТАНДАРТЫ ОБРАЩЕНИЯ С ОСУЖДЕННЫМИ, ИМЕЮЩИМИ ОГРАНИЧЕННЫЕ ВОЗМОЖНОСТИ, И ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ИХ ПРИМЕНЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Лазарян Арпи Ашотовна

Соискатель Института философии, социологии и

права Национальной академии наук Республики Армения

Начальник отдела развития уголовного и уголовно-процессуального

законодательства Министерство Юстиции Республики Армения

Аннотация: Защита прав людей с ограниченными возможностями является одной из важных сфер деятельности государства. Лица, содержащиеся в исправительных учреждениях, и особенно лица с ограниченными возможностями, сталкиваются с рядом трудностей, в том числе с соблюдением гигиены, передвижением и решением других повседневных задач.

Автор предпринял попытку проанализировать международный опыт в обсуждаемой сфере, правовые стандарты, формируемые международными структурами, существующий в их контексте опыт отечественной правовой и практической сферы, направления его развития.

Кроме того, были проанализированы статистические данные о лицах с ограниченными возможностями, содержащихся в пенитенциарных учреждениях. В результате проанализированных статистических данных, комплексного анализа международных и отечественных правовых актов, автор приходит к выводу, что в настоящее время в сфере содержания лиц с ограниченными возможностями в пенитенциарных учреждениях существует серьезная проблема, для решения которой были выдвинуты практические предложения.

Ключевые слова: осужденный, инвалид, международный стандарт, пенитенциарное учреждение, условия содержания.

INTERNATIONAL STANDARDS OF TREATMENT OF CRIMINALS WITH DISABILITIES AND THE BASIC PROBLEMS OF THEIR APPLICATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Arpi Lazaryan

*Applicant of the Faculty of Philology, Sociology
and Law of the Republic Academy of Sciences.*

*Head of the Criminal Legislation Development
Department of the Criminal legislation, Penitentiary
and Probation Policy Development division of the
Ministry of Justice of the Republic of Armenia.*

Summary: Protection of the rights of persons with disabilities is one of the important spheres of the state's activity. Persons detained in penal institutions, and especially persons with disabilities, face a number of difficulties, including maintaining hygiene, moving around and solving other daily problems.

The author made an attempt to analyze the international experience in the discussed field, the legal standards formed by international structures, and in their

context the existing experience in the domestic legal and practical field and its development directions.

Apart from that, statistical data on persons with disabilities held in penitentiary institutions were analyzed. As a result of the analyzed statistical data, a combined analysis of international and domestic legal acts, the author came to the conclusion that currently there is a serious problem in the field of detention of persons with disabilities in penal institutions, on which practical proposals were presented.

Key words: convict, disabled, international standard, prison, detention conditions.

Հոդվածը գրախոսվել է՝ 12.12.2023թ.:

Ներկայացվել է տպագրության՝ 12.12.2023թ.:

ՊԱՐՏԱԴԻՐ ՆԱԽԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳ

Հակոբջանյան Արման

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի օգնական

Համառոտագիր. Սույն գիտական հետազոտության շրջանակներում անդրադարձ է կատարվել վարչական մարմինների և մասնավոր անձանց միջև հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կարևորության հարցին: Աշխատանքի շրջանակներում լուսաբանվել են պրակտիկայում առկա մի շարք խնդիրներ, քննարկվել է պարտադիր նախնական վարչական բողոքարկման ինստիտուտի՝ որպես խախտված իրավունքների վերականգնման ճկուն մեխանիզմի ներդրման հարցը: Խնդրի վերաբերյալ իրականացվել է սոցիալական հարցում, դատական պրատիկայի և վիճակագրական տվյալների ուսումնասիրություն, որի արդյունում առաջարկվել է իրականացնել մի շարք օրենսդրական փոփոխություններ:

Բանալի բառեր. վարչական և դատական վերահսկողություն, վարչական մարմին, վարչական իրավախախտում, ոչ իրավաչափ վարչական ակտ, վարչական բողոքարկում:

Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունի վարչական մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության երկու եղանակ՝ դատական և վարչական, որոնց միջոցով անձը հնարավորություն է ունենում պաշտպանվել վարչական մարմինների ոչ իրավաչափ վարչական ակտերից, գործողություններից ու անգործությունից, որոնք խախտում են նրա իրավունքները և ազատությունները: Միաժամանակ հարկ է նշել, որ այսօր Հայաստանի Հանրապետությունում մասնավոր անձ-վարչական մարմին իրավահարաբերություններում անձի իրավունքների դատական պաշտպանության ոլորտում առկա են մի շարք խնդիրներ (օրինակ՝ գործերի քննության ժամկետներ, որոնք չեն կարող ողջամիտ համարվել): Դրանք հիմնականում կապված են այն հանգամանքի հետ, որ դատարանում քննվում են հա-

զարավոր վեճեր՝ այն դեպքում, երբ դրանցից շատերը հնարավոր է լուծել առանց դատարանի միջամտության: Այս երևույթը կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով, ինչպես օրինակ՝ անվստահությունը վարչական կարգով բողոքարկման նկատմամբ, դատարանում գործի քննության արդյունքում դատական ծախսերի (այդ թվում՝ ներկայացուցչի վարձատրության) փոխհատուցում ստանալու հնարավորությունը, ինչն առկա չէ վարչական բողոքարկման դեպքում, և այլն:

Ներկայացնում ենք պարտադիր նախնական վարչական բողոքարկման ինստիտուտի արդյունավետության բարձրացմանը որպես գլխավոր նպատակ ուղղված միջանկյալ նպատակներ:

1. Հատարանների անհարկի ծանրաբեռնվածության թեթևացումը

«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-207-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 30.11.2019թ.) և դրա հետ համակարգային փոխկապակցության մեջ գտնվող՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-206-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 30.11.2019թ.) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերի դատական կարգով բողոքարկման համար պարտադիր նախապայման սահմանվեց այդ ակտերի վարչական կարգով բողոքարկումը (գանգատարկումը):

2019 թվականի վիճակագրության համաձայն՝ Ճանապարհային ոստիկանության ակտերի և Երևանի քաղաքապետարանի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով պատասխանատվության մասին ակտերի վերաբերյալ վիճարկման հայցերի թվաքանակը կազմում է 9936, համապատասխանաբար՝ 6862 և 3074: Մինչդեռ նշված և 01.01.2020թ. ուժի մեջ մտած ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքով Ճանապարհային ոստիկանության ակտերի վիճարկման գործերով պետական տուրք վճարելու պարտականության սահմանման օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2020թ. վիճակագրական տվյալները վկայում են, որ Ճանապարհային ոստիկանության ակտերի վիճարկման հայցերի թվաքանակը կրճատվել է 3 անգամ և կազմում է ընդամենը 2379 հայց:

Նշված վիճակագրական տվյալները կարող են խոստուն ապացույց լինել այն մասին, որ առանձին վարչական ակտերի բողոքարկման առնչությամբ պարտադիր նախնական վարչական վերահսկողության սահմանումը նպաստել է ՀՀ վարչական դատարան մուտքագրվող հայցադիմումների թվի նվազմանը:

2. Դատարանների գործունեության արդյունավետության բարձրացումը

Բնականաբար, Հայաստանի Հանրապետության դատական համակարգի ծանրաբեռնվածությունը չի կարող բացասական ազդեցություն չունենալ իրականացվող արդարադատության արդյունավետության վրա: Հարկ է նկատել, որ դատական կարգով հաճախ քննվում են գործեր, որոնցում դատական միջամտության անհրաժեշտություն առկա չէ: Նշվածը ցույց տալու համար ներկայացնենք մեկ օրինակ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ ճանապարհային երթևեկության կանոնի խախտումն ամրագրվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, ապա սույն օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատերը, իսկ եթե տրանսպորտային միջոցը հանդիսանում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ սեփականություն, ապա՝ համապատասխանաբար իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը, եթե չեն ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված՝ ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի (ընդունման ամսաթիվ՝ 26.12.2008) 7-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ խախտումն այլ անձի կողմից կատարված լինելու փաստը կարող է ապացուցվել օրենքով սահմանված ժամկետում և կարգով գանգատ (բողոք կամ հայցադիմում) ներկայացնելու միջոցով: Փաստորեն, տեխնիկական սարքի միջոցով արձանագրված իրավախախտումն այլ անձի կողմից կատարված լինելու դեպքերի համար օրենքով սահմանված է ընտրության հնարավորություն՝ վարչական ակտը վիճարկել վարչական կամ դատական կարգով:

Քննարկվող գործերով դատական քննությունը, որպես կանոն, սահմանափակվում է հայցվորի (վարչական պատասխանատվության ենթարկված անձ) կողմից նշված, իրավախախտումը ենթադրաբար կատարած անձին որպես վկա հարցաքննելով, և եթե վերջինս հաստատում է իրավախախտումն իր կողմից կատարված լինելու փաստը, դատարանը բավարարում է հայցը՝ վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելով: Ավելին, երբեմն անգամ որևէ անձի հարցաքննելու անհրաժեշտություն չի առաջանում, երբ, օրինակ, վարչական պատասխանատվության է ենթարկվել անձը, որը իրավախախտման կատարման պահին չի հանդիսացել այն իրավաբանական անձի ղեկավարը, որին պատկանող տրանսպորտային միջոցով կատարվել է իրավախախտումը:

Դատարանի կողմից այս գործերով իրականացվող գործողությունների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ դրանք իրենցից որևէ բարդություն չեն ներկայացնում, և այդ գործերն ավելորդ ծանրաբեռնվածություն են առաջացնում դատարանի համար: Ավելին, հաշվի առնելով, որ նման գործերով ըստ էության պատասխանող վարչական մարմինը ևս չի առարկում հայցի դեմ և չի բողոքարկում վճիռները (վերջինս վճռի հիման վրա վարչական պատասխանատվության է ենթարկում իրավախախտին), այդ գործերը դատարանի կողմից քննելու անհրաժեշտություն չկա: Նույն փաստարկները կարելի է ներկայացնել վարչական մարմնին, որը ևս ունի համապատասխան լիազորություններ դրանք քննարկելու և անհրաժեշտության դեպքում վարչական ակտը վերացնելու համար:

3. Ողջամիտ ժամկետում գործերի քննության պահանջի իրացման երաշխավորումը

Դատավորների ծանրաբեռնվածության ուղղակի հետևանքը գործերի քննության ավելի երկար ժամկետներն են: Մասնավորապես, վարչական դատարանում մեկ գործով դատական նիստերը հիմնականում նշանակվում են 2-3 ամիս պարբերականությամբ, ինչը նշանակում է, որ եթե որևէ գործի քննությունն իրականացվի նախապատրաստական փուլով, գործի քննության ընթացքում ոչ պատշաճ պատասխանողը փոխարինվի պատշաճ պատասխանողով, դատարանը որոշի ապացույց պահանջել և այլն, յուրաքանչյուր անգամ գործի քննությունը մի քանի ամսով կհետաձգվի:

Արդյունքում ստացվում է, որ իրենցից առանձահատուկ բարդություն չներկայացնող գործերն անգամ կարող են քննվել երկար ժամանակահատ-

վածում: Այնինչ, ՀՀ Սահմանադրության (ընդունման ամսաթիվ՝ 06.12.2015) 63-րդ հոդվածում ամրագրված արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրերից մեկը գործերի ողջամիտ ժամկետում քննությունն է: Ողջամիտ ժամկետում գործի քննության երաշխիքի նպատակը դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունն է քննության չափից ավելի ձգձգումներից, որոնք կարող են խաթարել արդարադատության իրականացման արդյունավետությունը կամ դրա նկատմամբ վստահությունը:¹

Ավելին, Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (ընդունման ամսաթիվ՝ 04.11.1950), ստանձնել է պարտավորություն՝ ապահովել նշված իրավունքի իրացումը՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիման վրա: Այս կապակցությամբ պետությունները պարտավոր են իրենց իրավական համակարգերը կազմակերպել այնպես, որպեսզի դատարանները հնարավորություն ունենան գործելու Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին, այդ թվում՝ ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքին համապատասխան: Հակառակ, ասենք՝ դատական համակարգի գերձանրաբեռնված գործելու դեպքում կարող է արձանագրվել հիշյալ հոդվածի խախտում, քանի որ պետությունը համարժեք միջոցներ չի ձեռնարկել այդ իրավիճակը շտկելու համար:

Այսպիսով՝ դատարանի ծանրաբեռնվածությունը որոշ դեպքերում կարող է վտանգել արդար դատաքննության, մասնավորապես՝ դրա բաղադրատարրը կազմող՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացումը:

4. Նյութական (թե՛ անձի, թե՛ պետության) ռեսուրսների խնայողությունը

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ վարչական դատարանում մեծ թիվ են կազմում վարչական տուգանք առաջադրելու մասին վարչական ակտերի վիճարկման գործերը, որոնցում առաջադրված տուգանքի չափը չի գերազանցում 5.000 ՀՀ դրամը: Միաժամանակ մեկ գործի քննության վրա ծախսվում է միջինում 35.356 ՀՀ դրամ: Ընդ որում՝ ֆիզիկական անձինք, որոնք վարչական տուգանք առաջադրելու մասին վարչական ակտերի վիճարկման գործերով հանդես են գալիս որպես հայց-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդ. խմբ. Գ. Հարությունյան, Ա. Վաղարշյան, Երևան, 2010, էջ 231:

վոր, ազատված են դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի վճարումից:² Ավելին, եթե նախկինում հայցը բավարարվելու դեպքում պատասխանող վարչական մարմինն էր կրում պետական տուրքը վճարելու պարտականությունը, ապա այժմ վերջինս ևս ազատված է դրա վճարումից:³

Փաստորեն, յուրաքանչյուր վարչական գործի քննությունն ապահովելու համար ՀՀ պետական բյուջեից հատկացվում է միջինում 35.356 ՀՀ դրամ, և 90%-ից ավել գործերով (վարչական իրավախատումների վերաբերյալ գործերով կայացված վարչական ակտերի վիճարկման գործեր) հայցը բավարարվելու դեպքում գործի քննության համար պետական տուրք չի գանձվում դատավարության մասնակիցներից, իսկ մերժվելու դեպքում պետական բյուջե է վերադարձվում ծախսված միջոցների փոքր մասը՝ որպես վիճարկված ակտերով առաջադրված տուգանքի գումար, ուստի վատնվում են ոչ միայն մարդկային, այլև նյութական ռեսուրսները: Միաժամանակ, անձը բոլոր դեպքերում ազատված է պետական տուրքի վճարման պարտականությունից վարչական բողոքարկման պարագայում:

Առաջացող բազմաթիվ խնդիրներ հնարավոր կլինի լուծել, եթե նախքան դատարան դիմելը վարչական բողոքարկումը Հայաստանի Հանրապետությունում լինի պարտադիր, ինչպես նաև կատարվեն օրենսդրական փոփոխություններ վարչական բողոքարկման առանձին հարցերում՝ բարձրացնելով դրա արդյունավետությունը:

Պարտադիր նախնական վարչական բողոքարկումը կարելի է սահմանել որպես ընթացակարգերի ամբողջություն, որոնցով անձը, որը ցանկանում է վիճարկել իր համար անբարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, պարտավոր է նախքան դատարան դիմելն այն բողոքարկել վարչական կարգով: «Պարտադիր նախնական վարչական բողոքարկում» եզրույթն ինքնին բնորոշում է քննարկվող ինստիտուտը, ուստի դրա էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է անդրադառնալ այդ հասկացությունը կազմող տարրերից յուրաքանչյուրին:

² Տե՛ս «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ՀՕ-186, ՀՀՊՏ 1998.01.11/1, ընդունվել է 27.12.1997թ., ուժի մեջ է մտել 11.01.1998թ., 22-րդ հոդվածի «բ» կետ: ՀՀ սահմանադրական դատարանի 10.07.2018թ. ՄԴՈ-1423 որոշում:

³ Տե՛ս, օրինակ, թիվ ՎԴ/1115/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018թ. որոշումը:

Վարչական բողոքարկումը վարչական մարմնին ուղղված, վարչական ակտի հետևանքով ծագած վեճը լուծելու պահանջ է: Վարչական բողոքարկման նյութական տարրը վարչական մարմնի և անձի (կամ վարչական մարմինների) միջև վեճի առկայությունն է: Ընդ որում՝ այդ վեճը պետք է բխի վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտից, գործողությունից կամ անգործությունից, և պետք է վիճարկվի այդ ակտի իրավաչափությունը կամ նպատակահարմարությունը, իսկ բողոքը պետք է ուղղված լինի այդ ակտի վերացմանը (անվավեր ճանաչմանը) կամ փոփոխմանը: Ինչ վերաբերում է վարչական բողոքարկման ձևական տարրին, ապա այն ցույց է տալիս, թե որ մարմինն է իրավասու քննելու բողոքը: Մասնավորապես, վարչական բողոքարկումն իրականացվում է վարչական մարմնի առջև, որի հասկացությունը սահմանված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (ընդունման ամսաթիվ՝ 18.02.2004) 3-րդ հոդվածով: Փաստորեն, վարչական մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության դատական և վարչական ձևերը համընկնում են նյութական տարրի տեսանկյունից, քանի որ երկու դեպքում էլ վեճի առարկան վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունն է, և տարբերվում են ձևական տարրով:

Վարչական բողոքարկումը կարող է լինել պարտադիր և այլընտրանքային (ֆակուլտատիվ): Այլընտրանքային վարչական բողոքարկման դեպքում անձը հնարավորություն ունի ընտրելու վարչական կամ դատական կարգով բողոքարկումների միջև, այսինքն՝ վարչական կամ դատական կարգի ընտրությունը անձի իրավունքն է, իսկ վարչական բողոք բերելը նախապայման չէ տվյալ հարցով դատարան դիմելու համար:⁴

Ի տարբերություն այլընտրանքային վարչական բողոքարկման՝ պարտադիր վարչական բողոքարկումը ենթադրում է նախքան դատարան դիմելը վարչական բողոքարկման պարտադիրություն: Այսինքն՝ անձը չի կարող իրացնել դատական կարգով վարչական ակտի բողոքարկման իր իրավունքը, քանի դեռ չի բողոքարկել վարչական կարգով:

Անհրաժեշտ է նկատել, որ պարտադիր նախնական վարչական բողոքարկման ինստիտուտի ներդրումը ենթադրում է նաև որոշակի օրենսդրա-

⁴ Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ, **Հ. Թովմայան, Գ. Մուրադյան, Հ. Թորոսյան, Վ. Գրիգորյան, Վ. Պողոսյան**, Երևան, 2015, էջ 177:

կան փոփոխություններ, որոնք կապահովեն այդ բողոքարկման արդյունավետությունը: Այդ նպատակով առաջարկում ենք կատարել հետևյալ օրենսդրական փոփոխությունները.

1) օրենսդրությունն անհարկի չբարդացնելու և վարչական բողոքարկմանն առնչվող կարգավորումների միասնականությունն ապահովելու նպատակով սահմանել է, որ նախքան դատարան դիմելը վարչական բողոքարկումը պարտադիր է՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

ա). «...վարչական ակտի բողոքարկման և դատական կարգով քննության համար

սահմանված են սեղմ ժամկետներ»:

Այս բացառության տակ պետք է ներառել բոլոր այն դեպքերը, երբ օրենքով սահմանված ժամկետներում վարչական բողոքի քննության դեպքում իրավունքների պաշտպանությունը դատական կարգով կիմաստագրկվի կամ էապես կոժվարանա: Օրինակ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների և գործողությունների դեմ կարող է հայց ներկայացվել դատարան որոշումն ուժի մեջ մտնելուց կամ հավաքի մասին իրազեկումն ի գիտություն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում, իսկ եթե որոշումը կայացվել է կամ հավաքի մասին իրազեկումն ի գիտություն ընդունվել է իրազեկման մեջ նշված հավաքի օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ՝ 24 ժամվա ընթացքում: Ինչ վերաբերում է այն հարցին, թե որ ժամկետը պետք է համարել սեղմ ժամկետ, ապա դրա սահմանման համար կարելի է հիմք ընդունել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ գործերի քննության ժամկետները: Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելը և բուն դատաքննությունը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետներում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին գործերի քննության և լուծման համար նույն օրենսգրքով սահմանված են որոշակի ժամկետներ: Եթե օրենսդիրը որևէ գործի քննության և լուծման համար հատուկ ժամկետ է սահմանում, ապա ենթադրվում է, որ կոնկրետ գործի բնույթով պայմանավորված՝ դրա քննությունը որոշակի հրատապություն է պահանջում, ինչի պատճառով էլ օրենսդիրը թույլ չի տալիս գործի քննությունն իրականացնել ընդհանուր՝ ողջամիտ ժամկետում: Հետևաբար, կարծում ենք, որ սույն բացառության իմաս-

տով սեղմ ժամկետի սահմանման համար կարելի է որպես ելակետ ընդունել այն դեպքերը, երբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով առանձին գործերի քննության և լուծման համար սահմանված են որոշակի ժամկետներ:

բ). «...անձը համաձայն է սկզբնական վարչական ակտի հետ և վիճարկում է վարչական բողոքարկման արդյունքում կայացված վարչական ակտը»:

Օրինակ՝ քաղաքացին դիմում է վարչական մարմնին՝ իրեն շինարարական թույլտվություն տրամադրելու վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ ընդունելու խնդրանքով: Վարչական մարմինը մերժում է դիմումը: Ներկայացված վարչական բողոքի քննության արդյունքում սկզբնական վարչական ակտը ճանաչվում է անվավեր, և կայացվում է անձին շինարարական թույլտվություն տրամադրելու վերաբերյալ վարչական ակտ: Վարչական վարույթին մասնակցող երրորդ անձը համաձայն չէ շինարարական թույլտվություն տրամադրելու վերաբերյալ վարչական ակտի հետ, քանի որ գտնում է, որ այն խախտում է իր իրավունքները: Տվյալ իրավիճակում երրորդ անձի իրավունքներին միջամտում է ոչ թե ներկայացված դիմումը մերժելու վերաբերյալ սկզբնական վարչական ակտը (այն միջամտող է քաղաքացու, իսկ բարենպաստ՝ երրորդ անձի համար), այլ քաղաքացու կողմից ներկայացված վարչական բողոքի քննության արդյունքում կայացված վարչական ակտը (այն բարենպաստ է քաղաքացու, միջամտող՝ երրորդ անձի համար): Քննարկվող իրավիճակում անձը պետք է հնարավորություն ունենա դիմելու դատարան՝ անկախ իր իրավունքներին միջամտող ակտը վարչական կարգով բողոքարկած լինելու հանգամանքից, քանի որ բողոքը քննող մարմինը, վերանայելով սկզբնական ակտը և կայացնելով հայցվորի համար անբարենպաստ վարչական ակտ, արտահայտել է իր դիրքորոշումը քննարկվող հարցի վերաբերյալ, ուստի նպատակահարմար չէ անձի վրա դնել լրացուցիչ բողոքարկման բեռ:

գ). «...գործը կապված է սեփականության տնօրինման հետ»:

Նշված բացառության սահմանումը կապված է սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման իրավունքի իրացման հետ, քանի որ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից՝ բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

2) ստեղծել առանձին մարմիններ, որոնք իրավասու կլինեն քննելու վարչական մարմինների ակտերի դեմ ներկայացված վարչական բողոքները, և որոնք կազմված կլինեն այդ մարմնին վերապահված ոլորտներում մասնագիտացած անդամներից:

Պրակտիկան ցույց է տալիս, որ վարչական բողոքարկումը ՀՀ-ում հաճախ արդյունավետ չէ (հիարկե, նշվածը չի վերաբերում բոլոր վարչական մարմիններին և բողոքարկվող բոլոր ակտերին): Ընդ որում՝ երբեմն պաշտոնատար անձինք վերադաս վարչական մարմնի առջև իրենց որոշումների բողոքարկմանը բացասաբար են վերաբերվում: Բացի դրանից, որոշ դեպքերում վարչական բողոքարկման վարույթը չի իրականացվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով (օրինակ՝ լսումներ չեն կազմակերպվում), ավելին, երբեմն բողոքի քննարկման արդյունքում վերադաս վարչական մարմինն անգամ վարչական ակտ չի ընդունում:

Հայաստանի Հանրապետությունում վարչական կարգով բողոք կարող է ներկայացվել ակտն ընդունած՝ ա) վարչական մարմին. բ) վարչական մարմնի վերադաս վարչական մարմին: Վարչական բողոքարկման՝ վերը նշված ձևերը քննարկելիս առաջանում է դրանց արդյունավետության հարցը: Մի կողմից՝ գործնականում քիչ չեն դեպքերը, երբ վիճարկվող ակտի ոչ իրավաչափությունը թյուրիմացության կամ բացթողման արդյունք է լինում, ինչը շատ արագ, նույնիսկ ավելի արագ, քան վերադաս վարչական մարմինը, կարող է շտկել ինքը՝ ակտն ընդունած վարչական մարմինը, քանզի արդեն իսկ ծանոթ է գործի փաստական հանգամանքներին: Միայն դրանց ծանոթանալու համար վերադաս վարչական մարմնից ժամանակ է պահանջվելու:⁵ Մյուս կողմից, սակայն, վարչական մարմինը, կայացնելով վարչական ակտ, դրանում տալիս է իր գնահատականը գործի փաստական հանգամանքների վերաբերյալ, հետևաբար, ակտը կայացրած վարչական մարմնի առջև բողոքարկումը հաճախ կարող է իմաստագուրկ լինել: Մինչդեռ վերադաս վարչական մարմնի առջև բողոքարկում իրականացնելիս այն կարող է առավել արդյունավետ լինել՝ հաշվի առնելով, որ վերադաս վարչական մարմինը գործը քննելու է առաջին անգամ:

⁵ Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ, **Հ. Թովմայան, Գ. Մուրադյան, Հ. Թորոսյան, Վ. Գրիգորյան, Վ. Պողոսյան**, Երևան, 2015, էջ 179:

Միաժամանակ հարկ է նշել, որ որոշ հեղինակներ, չհամաձայնելով վերադաս վարչական բողոքարկման արդյունավետությանը, նշում են, որ վերադաս վարչական մարմնի կողմից անկողմնակալության մասին «առասպելը» գործնականում չի հաստատվել. ակտը կայացրած վարչական մարմնի և վերադաս վարչական մարմնի առջև բողոքարկումները չունեն որևէ տարբերություն:

Վերը նշված խնդիրներից խուսափելու, բողոքը քննող վարչական մարմնի նկատմամբ վստահությունն ապահովելու նպատակով, կարծում ենք, կարելի է քննարկել առանձին մարմնի ստեղծման հնարավորություն, որը բողոքարկվող վարչական ակտը կայացրած վարչական մարմնի հետ չգտնվելով կառուցվածքային առումով ենթակայական հարաբերությունների մեջ, կքննի վերջինիս ակտերի դեմ բերված վարչական բողոքները: Ընդ որում՝ առաջարկվում է պայմանականորեն խմբավորել հանրային իրավունքի նման ոլորտները և դրանց շրջանակներում ընդունված ակտերի դեմ ներկայացված բողոքների քննությունը վերապահել համապատասխան մարմնին: Օրինակ՝ մի մարմինը կարող է քննել հանրային ծառայության անցնելու, իրականացնելու և դրանից ազատվելու վերաբերյալ ակտերի դեմ բերված բողոքները: Ավելին, այն հնարավորություն կտա նաև ապահովել բողոքը քննող մարմինների մասնագիտացումը համապատասխան ոլորտներում, ինչը դրական ազդեցություն կունենա վարչական բողոքարկման արդյունավետության բարձրացման վրա:

Կարծում ենք՝ վարչական բողոքարկումը կլինի առավել արդյունավետ, եթե բողոքի քննությանը ներգրավված լինեն ոչ միայն իրավաբաններ, այլև այլ մասնագետներ: Այս տեսակետի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ թեև բողոքը քննող վարչական մարմինն իրավունք ունի նշանակելու փորձագետ, եթե գործի փաստական հանգամանքները պարզելու համար հատուկ գիտելիքներ են պահանջվում, սակայն միաժամանակ իրավունքի մի շարք ոլորտներ ևս խիստ մասնագիտացված են, և ցանկալի կլինեն, որ բողոքը քննող վարչական մարմնի կազմում լինեին նաև համապատասխան ոլորտի մասնագետներ: Օրինակ՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմնի ակտերի դեմ ներկայացված բողոքները քննող մարմնի կազմում կարելի է ներգրավել քարտեզագետ-չափագրողի և այլն:

3) սահմանել, որ վարչական դատարանում գործի քննության ընթացքում հայցվորը սահմանափակված չէ վարչական բողոքում նշված հիմքերով և հիմնավորումներով, սակայն կարող է վկայակոչել վիճարկվող վարչական ակտի անվավերության միայն այն հիմքերը, որոնք չեն վերացվել վարչական բողոքարկման արդյունքում:

Մի կողմից՝ հաշվի առնելով, որ պարտադիր նախնական վարչական բողոքարկումը դատարանում քննվող գործերը «գտելու» յուրօրինակ միջոց է, ենթադրվում է, որ անձը պետք է կաշկանդված լինի վարչական բողոքի հիմքերով և հիմնավորումներով, սակայն մյուս կողմից՝ պետք է հաշվի առնել, որ վարչական ու դատական բողոքարկումները չեն նույնանում, վարչական բողոքարկման վարույթում առկա չեն վարչադատավարական բոլոր երաշխիքները, ուստի չպետք է անձի դատական պաշտպանության իրավունքն այդ աստիճանի սահմանափակվի:

Ավելին, նման սահմանափակումը, մեր կարծիքով, նպատակահարմար չէ՝ հաշվի առնելով, որ ՀՀ օրենսդրությունը վարչական բողոքին հիմնավորվածության պահանջ չի ներկայացնում: Այսպիսով՝ դատարանում գործի քննությունը չպետք է սահմանափակվի վարչական բողոքի հիմքերով և հիմնավորումներով: Հայաստանի Հանրապետությունում վարչական բողոքարկման հետևանքով վարչական ակտի գործողությունը դադարեցվում է միայն այն դեպքերում, երբ բողոքի քննարկման արդյունքում այն ճանաչվում է անվավեր կամ ընդունվում է նոր վարչական ակտ: Իսկ այն դեպքում, երբ բողոքը մերժվում է՝ վարչական ակտը թողնվելով անփոփոխ, այն շարունակում է գործել:

Այս կարգավորման տրամաբանական հետևանքն այն է, որ դատարան դիմելիս անձը, որպես կանոն, պետք է վիճարկի սկզբնական վարչական ակտը, ինչը ներառում է նաև այդ վարչական ակտի բողոքարկման արդյունքում կայացված ակտն անվավեր ճանաչելու պահանջ (ոչ ինքնուրույն վիճարկման պահանջ), ուստի սկզբնական վարչական ակտի անվավերությունը հանգեցնում է դրա բողոքարկման արդյունքում կայացված վարչական ակտի անվավերության: Իսկ բողոքարկման արդյունքում կայացված ակտն ինքնուրույն վիճարկման առարկա կարող է լինել միայն այն դեպքում, երբ վկայակոչված ենթադրյալ անվավերության հիմքերն ուղղակիորեն կապված են այդ վարչական ակտի հետ (օրինակ՝ վարչական ակտն ընդունվել է վար-

չական բողոքի քննության համար օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ և այլն):⁶

Նշվածը կանխորոշում է վեճի առարկան և կողմերի իրավունքների պաշտպանության միջոցները. սկզբնական վարչական ակտը վիճարկելու պայմաններում հայցվորը կարող է վկայակոչել վարչական մարմնի կողմից իրավանորմերի միայն այն խախտումները, որոնք ենթադրաբար տեղի են ունեցել սկզբնական որոշման ընդունման համար հիմք հանդիսացած վարչական վարույթի ընթացքում:

Անհրաժեշտ է նկատել, որ որոշ դեպքերում այս իրավակարգավորումների առկայությունն իմաստագրվում է վարչական բողոքարկումը՝ այն դարձնելով անարդյունավետ: Այսպես օրինակ՝ վարչական մարմինը, ընդունելով միջամտող վարչական ակտ, այն թերի է հիմնավորում՝ խախտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ և 57-րդ հոդվածների պահանջները:

Ակտի հասցեատիրոջ վարչական բողոքը քննարկելիս պարզվում է, որ վարչական մարմինը եկել է ճիշտ եզրահանգման, սակայն այն թերի է պատճառաբանել: Տրամաբանական է, որ այս դեպքում բողոքը քննարկող մարմինը ոչ թե անվավեր կճանաչի ըստ էության ճիշտ վարչական ակտը, այլ այն լրացուցիչ կպատճառաբանի:

Սակայն Հայաստանի Հանրապետությունում գործող իրավակարգավորումների համաձայն՝ անձը դատարան է դիմելու՝ վիճարկելով սկզբնական վարչական ակտը, և դատարանն այն անվավեր է ճանաչելու հիմնավորումից զուրկ լինելու պատճառաբանությամբ: Կարելի է եզրակացնել, որ տվյալ դեպքում վարչական բողոքարկումն անարդյունավետ էր, քանի որ, չնայած այն հանգամանքին, որ սկզբնական վարչական ակտի թերությունը վերացվեց վարչական բողոքարկման արդյունքում, այնուամենայնիվ, երկու վարչական ակտերն էլ դատարանի կողմից անվավեր ճանաչվեցին: Սակայն չէ՞ որ վարչական բողոքարկման նպատակներից մեկը վարչական մարմնին՝ առանց դատարանի միջամտության սեփական սխալներն ուղղելու հնարավորություն տալն է: Իսկ քննարկվող իրավիճակում, փաստորեն, անտեսվում է նշված նպատակը:

⁶ Տե՛ս թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016թ. որոշումը:

Այդ իսկ պատճառով առաջարկվում է սահմանել, որ վարչական դատարանում անձը կարող է վկայակոչել սկզբնական վարչական վարույթի ընթացքում տեղի ունեցած միայն այն խախտումները, որոնք չեն վերացվել բողոքարկման վարույթի ընթացքում՝ այդպիսով իրական հնարավորություն տալով վարչական մարմնին վերանայել իր (այլ վարչական մարմնի) որոշումները՝ վերացնելով դրանց թերությունները, ինչը հատկապես կարևոր կլինի այն դեպքում, երբ վարչական բողոքարկման պարտադիր լինելու պարագայում բողոքարկման արդյունավետությունն է՛լ ավելի կարևոր նշանակություն է ստանում:

Ավելին, առաջարկվող փոփոխությունը հնարավորություն կտա լուծել ևս մեկ խնդիր: Մի շարք վարչական վարույթներ չեն ունենում ընթացիկ փուլ (ինչը օրենքով սահմանված առանձնահատկություն է), սակայն այն դեպքերում, երբ վարչական մարմինը կասկածներ է ունենում որևէ փաստի վերաբերյալ, պարտավոր է վարույթն իրականացնել ընթացիկ փուլով:⁷ Հաճախ այդ վարույթների արդյունքում ընդունված վարչական ակտերի իրավաչափությունը վիճարկվում է այն հիմքով, որ որևէ փաստի առկայություն կասկած է հարուցում, ուստի վարչական վարույթը պետք է իրականացվեր ընթացիկ փուլով:

Եթե օրենսդրությամբ ամրագրվի քննարկվող մոտեցումը, ապա վարչական ակտերի իրավաչափությունը վիճարկելու՝ վերը նշված հիմքը կվերանա, քանի որ բողոքի քննությունն այդ գործերով ևս, օրենքի համաձայն, իրականացվում է ընթացիկ փուլով, հետևաբար, կասկածները կփարատվեն բողոքի քննության արդյունքում, իսկ գործը դատարանում քննվելու դեպքում այդ վարչական ակտերը զերծ կլինեն անվավերության հնարավոր մեկ հիմքից:

Ամփոփելով վերոգրյալը՝ եզրակացնում ենք, որ միայն վարչական ակտի մինչդատական բողոքարկման պարտադիր լինելու օրենսդրական ներդրման փաստը դրական ազդեցություն չի ունենա իրավակիրառ պրակտիկայի վրա: Կարծում ենք՝ վարչական բողոքարկման մանրամասն ընթացակարգային մշակումը, հասարակականության նեկայացուցիչների ներգրավումն այն կառույցներում, որոնք լիազորված են քննելու բողոքները, ան-

⁷ Տե՛ս, օրինակ, թիվ ՎԴ/1897/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017թ. որոշումը:

շուշտ, կրարձրացնեն ինչպես տվյալ ինստիտուտի նկատմամբ իրավական վստահության մակարդակը, այնպես էլ դրա արդյունավետությունը:

ОБЯЗАТЕЛЬНЫЙ ПРЕДВАРИТЕЛЬНЫЙ АДМИНИСТРАТИВНЫЙ АПЕЛЛЯЦИОННЫЙ ИНСТИТУТ КАК ЭФФЕКТИВНАЯ ПРАВООЗАЩИТНАЯ СТРУКТУРА

Акобджанян Арман Вагеевич

Помощник Главного судебного исполнителя РА

Аннотация. В рамках данного научного исследования был затронут вопрос о значении альтернативных способов разрешения споров, возникающих из публичных правоотношений между административными органами и частными лицами. В рамках работы был поднят ряд проблем, существующих на практике, обсужден вопрос о введении обязательного института предварительного административного обжалования как гибкого механизма восстановления нарушенных прав. По проблеме проведен социальный опрос, изучена судебная практика и статистические данные, по результатам которых предложен ряд законодательных изменений.

Ключевые слова: административно-судебный контроль, административный орган, административное правонарушение, незаконный административный акт, административное обжалование.

COMPULSORY PRIMARY ADMINISTRATIVE APPEAL INSTITUTE AS AN EFFECTIVE RIGHTS PROTECTION STRUCTURE

Arman Hakobjanyan

*Assistant to the Chief Enforcement Officer
of the Republic of Armenia*

Summary: Within the framework of this scientific research, the question of the importance of alternative means of resolving disputes arising from public legal relations between administrative bodies and private persons was addressed. In the framework of the work, a number of problems existing in practice were raised, the issue of introducing a mandatory preliminary administrative appeal institution as a flexible mechanism for the restoration of violated rights was discussed. Regarding the problem, a social survey, a study of judicial practice and statistical data was carried out, as a result of which a number of legislative changes were proposed.

Key words. administrative and judicial control, administrative authority, administrative offense, unlawful administrative act, administrative appeal.

Հոդվածը գրախոսվել է՝ 01.03.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 01.03.2023թ.:

ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հարությունյան Հերբերտ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

<https://orcid.org/0000-0003-4878-1080>

Համառոտագիր: Հոդվածում հետազոտման առարկա է դարձել գործադիր իշխանության սահմանադրաիրավական պատասխանատվության հարցը: Օրինակների տեսքով դիտարկվել է եվրոպական մի շարք երկրների իրավակիրառ պրակտիկան: Աշխատանքում հստակ դասակարգվել է գործադիր իշխանության սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը՝ ելնելով դրա հիմքում ընկած տարբերակման չափանիշներից: Մեծ կարևորություն է տրվել կառավարության կողմից հաշվետվողականության սկզբունքին հավատարիմ գործելու հիմնահարցին: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում բազմաթիվ տեսական եզրահանգումներ են արվել և ՀՀ օրենսդրության ու իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման գործնական առաջարկություններ ներկայացվել:

Բանալի բառեր: անհատական պատասխանատվություն, կոլեկտիվ պատասխանատվություն, կառավարություն, իրավական գործիքակազմ, պոզիտիվ պարտավորություն, նեգատիվ պատասխանատվություն, կոլեգիալ մարմին, կառավարության ծրագիր:

Կառավարությունը պետության գործադիր իշխանությունն իրականացնող կոլեգիալ մարմին է¹: Այն իրականացնում է կառավարչական գործա-

¹ 1995թ. հուլիսի 5-ի հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրությունը 85-րդ հոդվածի առաջին մասում ամրագրել էր, որ «Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը», բայց 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրությունից հանվեց այս դրույթը: Իսկ 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրությամբ ամրագրվեց, որ «Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է»:

ռույթներ, որոնք խիստ կարևոր են հասարակության կենսագործունեությունն ապահովելու, երկրի բնականոն զարգացումը երաշխավորելու գործում²: Բազմաթիվ պետությունների (Գերմանիա, Իսպանիա, Չեխիա, Պորտուգալիա) հիմնական օրենքներում կառավարության կոլեկտիվ պատասխանատվությունը նախատեսված է որպես կառավարության սահմանադրական կարգավիճակի բաղկացուցիչ մաս: Ըստ պատասխանատվության բնույթի՝ գործադիր իշխանության պատասխանատվությունը լինում է դրական (պոզիտիվ) և բացասական (նեգատիվ), լինում է նաև անհատական և կոլեկտիվ պատասխանատվություն: Հայաստանի Հանրապետության կառավարության դրական (պոզիտիվ) սահմանադրական պատասխանատվությունը դրսևորվում է հետևյալում.

1. կառավարությունն իր ծրագրերի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը,

2. կառավարությունն իրականացնում է պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը,

3. կառավարությունը պատասխանատվություն է կրում խորհրդարանի (պետական բյուջեի, կառավարության ծրագրի, պետական բյուջեի կատարման, ծրագրերի կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվություն է ներկայացնում խորհրդարան (Ռուսաստան, Խորվաթիա)), նախագահի, միապետի, նաև վարչապետի (Գերմանիա) առջև,

4. կառավարությունը պետք է կատարի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ պետության դեմ ընդունված այն վճիռները, որոնցով պահանջ է դրվում կատարելու օրենսդրական կարգավորումներ³, պետք է կատարի Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները:

Գործադիր մարմնի պոզիտիվ պարտավորություն է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումների կատա-

² Տե՛ս **Gruber J. E.** Controlling Bureaucracies Dilemmas In Democratic Governance Univer of California Press, Berkeley- Los Angeles- London, 1987. **Чиркин В.Е.** Государственное управление, М., 2001. **Եղիգարյան Վ.Մ.** Կառավարում. սոցիալ- հոգեբանական ասպեկտ, Երևան, 2004: **Фальмер Р.** Энциклопедия современного управления, Пер. с. англ., М., 1992.

³ Նմանատիպ խնդիրները լուծվում են Կառավարության օրենսդրական նախաձեռնությունների միջոցով:

րումը⁴: ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է կառավարության գործունեության նորմատիվ իրավական հիմքերը, որոնք կարող ենք համարել կառավարության սահմանադրական պատասխանատվության նորմատիվ հիմքեր: Դրանք են՝

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը,
2. Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած միջազգային պայմանագրերը,

3. Հայաստանի Հանրապետության օրենքները,

4. Հանրապետության Նախագահի նորմատիվ ակտերը:

Նշված նորմատիվ ակտերի հիման վրա և դրանց կատարումն ապահովելու նպատակով կառավարությունն ընդունում է Հանրապետության ամբողջ տարածքում կատարման ենթակա որոշումներ:

Կառավարության սահմանադրական պատասխանատվությանն առնչվող հարց է առաջանում, թե որքանով է կառավարությունն ինքնուրույն իրականացնում իր լիազորությունները և ինքնուրույն կրում սահմանադրական պատասխանատվություն: Պետք է նկատի ունենալ, որ սահմանադրորեն հռչակվում է իշխանության բաժանման սկզբունքը, և պետական մարմինները գործում են իշխանության բաժանման համակարգում, ունեն հարաբերական ինքնուրույնություն և փոխադարձաբար զսպում, հակակշռում ու հավասարակշռում են միմյանց: Նախագահը և կառավարությունն իրականացնում են թե՛ համատեղ և թե՛ ինքնուրույն լիազորություններ պետության գործադիր իշխանության իրականացման ոլորտում: Նախագահը և կառավարությունը պետք է կրեն համատեղ սահմանադրական պատասխանատվություն իրենց ընդհանուր լիազորությունների իրականացման ոլորտում, ուստի պետք է աշխատեն հանդուրժողականության և փոխհամաձայնության մթնոլորտում:

Անդրադարձ կատարենք սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների գործունեությանը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ սահմանադրական արդարադատության մարմինների կայացրած որոշումների կատարումը գերազանցապես վերապահ-

⁴ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2016թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդում, էջ 39:

վում է գործադիր իշխանությանը⁵:

Սահմանադրական դատարանի որոշումները կազմում են ժամանակակից սահմանադրականության աքսիոմաներից մեկը⁶: Արևմտյան Եվրոպայի պետությունների խորհրդարանների գործունեության վիճակագրությունը ցույց է տալիս, որ պառլամենտի կողմից ընդունված օրենքների 90 տոկոսից ավելին կառավարության ներկայացրած օրինագծերն են⁷: Տարբեր երկրներում կառավարության նկատմամբ սահմանադրական պատասխանատվության աստիճաններն են.

1. պետության գլուխը (Ղազախստանի Սահմանադրության 64-րդ հոդվածում ամրագրված է, որ կառավարությունն իր գործունեությունն իրականացնելիս պատասխանատու է երկրի նախագահի առջև)⁸,

2. խորհրդարանը (ըստ Սլովակիայի Սահմանադրության 114-րդ հոդվածի՝ կառավարությունն իր գործառույթների իրականացման համար պատասխանատու է Ազգային խորհրդի առջև, իսկ Ռումինիայի Սահմանադրության 108-րդ հոդվածը նախատեսում է, որ կառավարությունը պատասխանատվություն է կրում միայն խորհրդարանի առջև)⁹,

3. դատական մարմինները¹⁰:

Կան պետություններ, որտեղ կառավարությունը սահմանադրական պատասխանատվություն է կրում մի քանի աստիճանի առջև¹¹: Կառավարու-

⁵ Տե՛ս **Վ. Վարդանյան**, Սահմանադրական դատարանի որոշումների կատարման ապահովման մեխանիզմները. արդի խնդիրները և հնարավոր լուծումները, /Սահմանադրական արդարադատության հիմնախնդիրները և զարգացման միտումներն արդի ժամանակաշրջանում/, էջ 298:

Голубев В.В. Юридическая ответственность Правительства Российской Федерации: Дис. канд. юрид. наук. М., 2005.

⁶ Տե՛ս Из материалов XIV Конгресса Конференции европейских конституционных судов. Конституционное правосудие. Выпуск 2 (40)-3(41), 2008, էջ 218-219:

⁷ Տե՛ս Конституционное право зарубежных стран: Учебник для вузов/ Под общ. Ред. Чл.-корр. РАН, проф. **М.Б. Баглая**, д.ю.н., проф. **Ю.И.Лейбо** и д.ю.н., проф. **Л.М. Энтина**, М., Норма, 2004, էջ 340, 352:

⁸ Տե՛ս Новые Конституция стран СНГ Балтин, Сборник документов, М., 1998.

⁹ Տե՛ս Ֆրանսիայի Սահմանադրության 20-րդ հոդված, Հունգարիայի հիմնական օրենքի հոդված 39:

¹⁰ Տե՛ս Կիրգիզիայի Սահմանադրության 82-րդ, Լեհաստանի Սահմանադրության 188-րդ հոդվածներ:

¹¹ Ըստ Պորտուգալիայի Սահմանադրության 190-րդ հոդվածի՝ կառավարությունը պատասխանատվություն է կրում Հանրապետության նախագահի և Ասամբլեայի առջև:

յան կոլեկտիվ պատասխանատվությունից բացի՝ գոյություն ունի նաև նախարարների անհատական կամ անձնական պատասխանատվություն: Բազմաթիվ պետություններում իրավական հստակ մեխանիզմներով սահմանված են գործադիր մարմինների իրավական պատասխանատվության հիմքերը, ընթացակարգերը¹²: կարծում ենք՝ նախարարների անհատական պատասխանատվությունն իրենց վարքագծի և իրենց ենթակայության տակ գտնվող գերատեսչությունների գործունեության համար հաշվետու և ժողովրդավարական խորհրդարանական կառավարման համակարգի կարևորագույն տարրերից է: Նախարարների անհատական պատասխանատվության սկզբունքը լայնորեն գործի է դրվում բազմաթիվ պետություններում (Դանիայի Սահմանադրության 15-րդ հոդված, Էստոնիայի Սահմանադրության 97-րդ հոդված, Լեհաստանի Սահմանադրության 159-րդ հոդված): Տեղին և տրամաբանական է այն խոսույթը՝ ըստ որի Սահմանադրությունն ավարտուն չէ առանց պատասխանատու նախարարության, ինչը սահմանադրական պետության անկյունաքարն է¹³: Կոստա Ռիկայի Սահմանադրության 121-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդիր մարմինը նիստին ներկա գտնվող օրենսդիրների 2/3 ձայների հարաբերակցությամբ կարող է պարսավանքի ենթարկել նախարարներին, եթե օրենսդիր մարմինը եզրակացնի, որ նրանք մեղավոր են հակասահմանադրական կամ հակաիրավական գործողությունների համար, որոնցով պետական շահերին էական վնաս է պատճառվել կամ կարող էր պատճառվել: Սլովակիայի Սահմանադրության 116-րդ հոդվածի համաձայն՝ խորհրդարանը կարող է անվստահություն հայտնել կառավարության առանձին անդամին, որին պաշտոնազրկելու հարցը վերջնական լուծում է երկրի նախագահը:

Կառավարության անդամների անհատական իրավական պատասխանատվության հիմքեր և հնարավորություններ նախատեսված են մի շարք երկրների սահմանադրություններում (Հունաստան, Ավստրիա): Կան երկրներ, որտեղ նախատեսված է կառավարության անդամի անհատական պատասխանատվությունը, բայց դրա իրավական հիմքերը և գործիքակազմերը

¹² St'u Федерального закона от 6 октября 1999г. <<Об общих принципах организации законодательных и исполнительных органов государственной власти субъектов Российской Федерации>>. Հոդված 29.1:

¹³ St'u **H.v. Frisch**, Die Verantwortlichkeit der Monarchen und hochsten Magistrate, Berlin, էջ 104:

բացակայում են: Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում և մի շարք այլ երկրներում կիրառվում է նախարարների պատասխանատվության «Վեստմինստերյան մոդելը», որը նախատեսում է նախարարների պատասխանատվության երեք ասպեկտ.

1. յուրաքանչյուր նախարար պատասխանատվություն է կրում կառավարության և կառավարության ղեկավարի առջև, պարտավոր է հրապարակային ձևով պաշտպանել կառավարության քաղաքականությունը և իրագործել նրա որոշումները,
2. նախարարները կոլեկտիվ պատասխանատվություն են կրում խորհրդարանի առջև,
3. յուրաքանչյուր նախարար անհատական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև՝ համապատասխան նախարարության գործունեության համար¹⁴:

ԱՄՆ-ում գործադիր ծառայության էթիկայի Կոդեքսի համաձայն՝ պաշտոնատար անձը պետք է համապատասխանի բարոյականության բարձր սկզբունքներին և պետությունը վեր դասի այլ անձանցից, կուսակցությունից և այլ պետական մարմիններից: Ֆինլանդիայի Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ նախարարներն իրենց գործունեության համար հաշվետու են պառլամենտին: Յուրաքանչյուր նախարար, որը մասնակցել է կառավարության կողմից որոշման կայացմանը, պատասխանատու է այդ որոշման համար, եթե նա իր անհամաձայնությունը չի բարձրաձայնել և հայտարարություն չի արել, որն էլ պետք է ամրագրված լինի նիստի արձանագրության մեջ¹⁵: Լիտվայի Սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն՝ կառավարությունը համապարտ պատասխանատվություն է կրում Սեյմի առջև, իսկ նախարարները, իրականացնելով իրենց ոլորտների ղեկավարումը, պատասխանատվություն են կրում Սեյմի, Նախագահի առջև և անմիջապես հաշվետու են Վարչապետին¹⁶: Նախարարի անհատական պատասխանատվություն է նախատեսված նաև Դանիայի Սահմանադրության 16-րդ հոդվածում՝ պաշտոնական պարտականությունների ոչ պատշաճ իրականացման համար, Վրաստանի Սահմանադրության 64-րդ հոդվա-

¹⁴ Տե՛ս **Wetter P., Jaensch D.** Responsible Government in Australia, Melbourne, 1980, **Renfree H.** The Executive Power of the Commonwealth of Australia, Sydney, 1984.

¹⁵ Տե՛ս Конституция Финляндии (17.07.1919):

¹⁶ Տե՛ս Конституция Литовской Республики:

ծում՝ խորհրդարանի անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ՝ Սահմանադրության խախտման, պետական դավաճանության կամ այլ հանցագործության կատարման համար: Կան երկրներ, որտեղ կառավարության անդամների պատասխանատվության հարցն այնքան է կարևորվել, որ այդ հարցի լուծումն իրականացվում է հատուկ դատական համարժեք ատյանի միջոցով (Դանիա, Հունաստան, Ֆրանսիա, Լեհաստան): Հունաստանի Սահմանադրության 86-րդ հոդվածի համաձայն՝ Պառլամենտն իրավասու է Կառավարության գործող կամ նախկին անդամների կամ փոխնախարարների դեմ օրենքով սահմանված կարգով և դեպքերում մեղադրանք ներկայացնել դատարան: Պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու համար ստեղծվում է դատարան՝ Աերոպագի նախագահի գլխավորությամբ: Հունաստանի Սահմանադրության 85-րդ հոդվածը սահմանում է, որ նախարարների խորհուրդը, ինչպես նաև փոխնախարարները, կոլեկտիվ պատասխանատվություն են կրում կառավարության գործունեության համար, իսկ նրանցից յուրաքանչյուրը՝ իր համակարգման ոլորտի բացերի և գործունեության համար¹⁷: Լեհաստանում կառավարության ղեկավարի համար սահմանադրական պատասխանատվության հիմք է համարվում իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրության կամ օրենքի, կամ իրենց ծառայողական պարտականությունների խախտումը¹⁸: Իսկ կառավարության անդամները պատասխանատվություն են կրում Պետական Տրիբունալի առջև Սահմանադրությունը կամ օրենքը խախտելու, ինչպես նաև իրենց գործունեության իրականացմանն առնչվող հանցագործությունների համար: Պատասխանատվության ենթարկելու առաջարկ ներկայացնում է Նախագահը կամ առնվազն 115 պատգամավոր: Առաջարկության հիման վրա Կառավարության անդամին պատասխանատվության ենթարկող մարմինը Տրիբունալն է, որին դիմում է Սեյմը՝ պատգամավորների առնվազն 3/5-ի համաձայնությամբ:

Ֆրանսիայի Սահմանադրության 68-1 կետի համաձայն՝ Կառավարության անդամները քրեական պատասխանատվություն են կրում իրենց գործունեության ընթացքում կատարած արարքների համար, որոնք կատարման պահին որակվել են որպես հանցանք կամ զանցանք: Նման իրավիճա-

¹⁷ St'u Конституция Греции:

¹⁸ St'u Конституция Польской Республики от 2 апреля 1997г., հոդված 198, 156:

կում գործը քննում է Հանրապետության դատարանը: Յուրաքանչյուր անձ, որը կարծում է, որ Կառավարության անդամի կողմից կատարած հանցանքի կամ զանցանքի հետևանքով վնաս է կրել, կարող է բողոք ներկայացնել համապատասխան հանձնաժողովին: Այս հանձնաժողովը կարող է բողոքն ուղարկել Գլխավոր դատախազին, իսկ վերջինս գործը դատաքննության ընդունելու խնդրանքով դիմում է Հանրապետության դատարանին¹⁹:

Ալբանիայի Հանրապետության 1991թ. սահմանադրական օրենքի 35-րդ հոդվածը հռչակում է, որ՝ «Նախարարները կոլեկտիվ և անձնական պատասխանատվություն են կրում նախարարների խորհրդի գործողությունների և իրենց ենթակա մարմինների գործողությունների համար»²⁰:

Բուլղարիայի Սահմանադրության համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն 1/5-ը կարող է առաջարկել անվստահություն հայտնել նախարարների խորհրդին: Առաջարկի ընդունման համար անհրաժեշտ է պառլամենտի անդամների ձայների ընդհանուր թվի կեսից ավելին²¹:

Կառավարությունը ոչ միայն հանդես է գալիս որպես սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ, այլև ինքը կարող է կիրառել սահմանադրական պատասխանատվության միջոցներ: Այսպես՝ ՀՀ կառավարությունը սահմանադրական պատասխանատվության ատյան է ՏԻՄ-ի ղեկավարի համար²²: 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունն ամրագրել է, որ կառավարության անդամի վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Անհամատեղելիության պահանջը խախտելու դեպքում կառավարության անդամի պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերն իրավական կարգավորման անհրաժեշտություն ունեն: Առաջին հերթին պետք է հստակ սահմանվի, թե որ սուբյեկտները կարող են այդ հարցն առաջադրել: Առաջարկում ենք, որ այդ սուբյեկտներից կարող են լինել վարչապետը, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Այս խնդիրը քննող և լուծող մարմին կարող է լինել ՀՀ Սահմանադրական դատարանը: Կարծում ենք, որ ՀՀ Ազգային ժո-

¹⁹ St'e Конституция Франции от 4 октября 1958:

²⁰ St'e Конституции государств Центральной и Восточной Европы, М., 1997, с. 30.

²¹ St'e Конституция Республики Болгария// Право и жизнь, 1992, N 1,2.

²² St'e Հայաստանի Հանրապետության օրենքը տեղական ինքնակառավարման մասին:

դովը պատգամավորների որոշակի ձայների հարաբերակցությամբ հնարավորություն պետք է ունենա անվստահություն հայտնելու կառավարության այն անդամին, որը պոզիտիվ սահմանադրական պարտավորությունները չի կատարել կամ թերի է կատարել: Սահմանադրության կամ օրենքի խախտման փաստը պետք է քննարկման առարկա դառնա Սահմանադրական դատարանում, որի դրական եզրակացության հիման վրա Ազգային ժողովը քվեարկությամբ կորոշի նախարարին պաշտոնանկ անելու հարցը: Մեր կարծիքով՝ կարելի է նախատեսել նաև այնպես, որ Սահմանադրական դատարանի եզրակացությունից հետո որոշակի ժամանակահատվածում (օրինակ՝ 7-օրյա ժամկետում) վարչապետը կարող է պաշտոնանկ անել տվյալ նախարարին, իսկ այդ ընթացքում վարչապետի կողմից նախարարին պաշտոնանկ չանելու դեպքում նոր միայն Ազգային ժողովը կարողանա քվեարկությամբ պաշտոնանկ անել: Ազգային ժողովին պետք է կոնկրետ նախարարին անվստահություն հայտնելու իրավական գործիքակազմ տրվի: Նախարարներին և վարչապետին նեգատիվ պատասխանատվության ենթարկելու հիմքերը, գործիքակազմը, այդ գործընթացին ներգրավված մարմինները, նրանց իրավասությունները, հետևանքները պետք է հստակ իրավական ձևակերպում ստանան, որոնց մի մասը կամրագրվեն սահմանադրական, իսկ մյուս մասն օրենսդրական մակարդակում: Անկախ ամենից՝ պետք է ապահովվի վարչապետի և նախարարների լսելիությունն ու շահերի պաշտպանությունը:

Կառավարությունը պետք է գործի հաշվետվողականության սկզբունքին հավատարիմ: Կառավարման ձևի ընտրությունից է կախված հաշվետվողականության դրսևորումը: Հաշվետվողականության իրացման բարձր մակարդակն արձանագրվում է կառավարման խորհրդարանական համակարգ ունեցող երկրներում: Մենք այն կարծիքին ենք, որ օրենսդրորեն պետք է նախատեսվեն գործուն մեխանիզմներ՝ նպատակաուղղված Սահմանադրական դատարանի որոշումների կատարման ապահովման գործում գործադիր իշխանության դերակատարության բարձրացման համար: Կարծում ենք՝ այս հարցում որպես պետական լիազոր մարմին կարող է հանդես գալ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարությունը: Կառավարության համար կարելի է նախատեսել նեգատիվ պատասխանատվության միջոց՝ սահմանադրական դատարանի որոշումների չկատարման համար: Եթե հիմնավորվի, որ կառավարությունը պարբերաբար չի կա-

տարում Սահմանադրական դատարանի որոշումները, ապա Ազգային ժողովը կարող է անվստահություն հայտնել կառավարությանը: Իսկ այս հարցն առաջադրող սուբյեկտ կարող են հանդես գալ Հանրապետության նախագահը, պատգամավորների որոշակի մասը, խմբակցությունը: Վեճը քննող և որոշում կայացնող դատական ատյան հանդես է գալիս հենց Սահմանադրական դատարանը:

Եվրոպական որոշ երկրների սահմանադրություններն ամրագրում են նախարարի քրեական պատասխանատվության հնարավորությունը: Կարծում ենք, որ մեր երկրում պետք է առանձին հանցակազմ նախատեսվի վարչապետին և նախարարներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար՝ այդպիսով նրանց տալով քրեական պատասխանատվության հատուկ սուբյեկտ: Այս ամենից զատ, վարչապետին պետք է տրվի անձեռնմխելիության որոշակի աստիճան, և նրա նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցել միայն ՀՀ գլխավոր դատախազը²³:

ОСНОВЫ КОНСТИТУЦИОННОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ИСПОЛНИТЕЛЬНОЙ ВЛАСТИ В УСЛОВИЯХ КОНСТИТУЦИОННЫХ РЕФОРМ

Арутюнян Герберт

Соискатель кафедры

конституционного права ЕГУ

<https://orcid.org/0000-0003-4878-1080>

Аннотация: Предметом исследования статьи является конституционная ответственность исполнительной власти. В качестве примеров рассмотрена правовая практика ряда европейских стран. В работе четко классифицирован институт конституционной ответственности исполнительной власти, исходя из лежащих в ее основе критериев дифференциации. Большое значение было уделено вопросу соблюдения правительством принципа подотчетности. В

²³ Վարչապետի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու համար գլխավոր դատախազի համաձայնության առկայությունը պարտադիր պայման է մի շարք պետություններում, օրինակ՝ Բարայելում:

результате проведенных исследований было сделано ряд теоретических выводов, представлены практические рекомендации по совершенствованию законодательства и юридической практики РА.

Ключевые слова: индивидуальная ответственность, коллективная ответственность, правительство, юридический инструментарий, позитивное обязательство, отрицательная ответственность, коллегиальный орган, государственная программа.

FUNDAMENTALS OF CONSTITUTIONAL RESPONSIBILITY OF THE EXECUTIVE AUTHORITY IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL REFORMS

Herbert Harutyunyan

PhD student at the YSU

Chair of Constitutional Law

<https://orcid.org/0000-0003-4878-1080>

Summary: The subject of research in the article is the constitutional responsibility of the executive power. The legal practices of several European countries were considered as examples. In the work, the institution of constitutional responsibility of the executive power was clearly classified, based on the differentiation criteria underlying it. Great importance was given to the issue of the government's adherence to the principle of accountability. As a result of the conducted studies, many theoretical conclusions were made and practical recommendations for improving RA legislation and legal practice were presented.

Key words: individual responsibility, collective responsibility, government, legal toolkit, positive commitment, negative liability, collegial organ, government program.

Հոդվածը գրախոսվել է՝ 04.12.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 04.12.2023թ.:

«ԱՐԱՐՔ» ԵԶՐՈՒՅԹԻ ԵՐԿԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Մարկոսյան Միսակ

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետի
առաջին տեղակալ, իրավաբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ,
ոստիկանության գնդապետ*

1. Ներածություն

Քրեական իրավունքում «արարք» եզրույթն ունի առանցքային նշանակություն, քանի որ հանցանքի սահմանումն ավանդաբար տրվել է հենց «արարք» եզրույթի միջոցով: Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքում¹ (այսուհետ՝ քր. օր.) «արարք» բառն օգտագործված է 700-ից ավել անգամ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»: Նշված դրույթում ձևակերպվել է օրենսդրական տեխնիկայի կարևոր կանոններից մեկը՝ ճշգրտության կանոնը: Այդ կանոնից հետևում է, որ իրավական ակտում տարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով, քանի որ հակառակ դեպքում իրավական ակտում կառաջանան ներքին հակասություններ²:

Սակայն քր.օր-ի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը միևնույն «արարք» եզրույթը քր. օր-ի տարբեր հոդվածներում օգ-

¹ Ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մայիսի 5-ին և ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ից:

² Առավել մանրամասն տե՛ս Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ/Հեղ. Խումբ: Գիտ. խմբ. **Ղամբարյան Ա., Մուրադյան Մ.** - 4-րդ լրամշակված հրատ. - Եր.: «Լուսաբաց հրատարակչատուն», 2023, էջ 318:

տագործել է տարբեր իմաստներով՝ դրանով շեղվելով ճշգրտության կանոնից, նմանապես՝ քր.օր-ի տարբեր հոդվածներում լայն և նեղ իմաստներով է օգտագործված «քր.օր-ով նախատեսված արարք» արտահայտությունը:

Ուստի իրավակիրառողը պետք է կարողանա ճիշտ մեկնաբանել «քր. օր-ով նախատեսված արարք» արտահայտությունը և «արարք» եզրույթը քր. օր-ի տարբեր հոդվածների համատեքստում: Դա հատկապես կարևոր է քր.օր-ի Հատուկ մասի հոդվածներում «սույն հոդվածի 1-ին (2-րդ և այլն) մասով նախատեսված արարք» արտահայտությունը մեկնաբանելիս:

Սույն հետազոտության նպատակն է ներկայացնել քր. օր-ի տարբեր հոդվածներում «արարք» եզրույթի և «քր.օր-ով նախատեսված արարք» արտահայտության երկիմաստությունը, պարզաբանել, թե որ դեպքերում դրանք անհրաժեշտ է մեկնաբանել լայն, իսկ որ դեպքերում՝ նեղ, ինչպես նաև ներկայացնել նշված երկիմաստությունը բացառելուն ուղղված օրենսդրական առաջարկություն:

2. «Քր.օր-ով նախատեսված արարք» արտահայտության լայն մեկնաբանումը

«Քր.օր-ով նախատեսված արարք» արտահայտությունը լայն իմաստով օգտագործված է քր. օր-ի 16-րդ հոդվածի 1-ին մասում, որով սահմանված է «հանցանք» հասկացությունը. «Հանցանք է համարվում **սույն օրենսգրքով նախատեսված**, պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված **արարքը**»:

Մեջբերված օրենսդրական սահմանումից բխում է, որ հանցանք է համարվում այն արարքը, որը՝

- 1) նախատեսված է քր. օր-ով,
- 2) արգելված է պատժի սպառնալիքով,
- 3) կատարվել է հանցագործության սուբյեկտի կողմից և
- 4) կատարվել է մեղավորությամբ:

Նշված հատկանիշներից առաջինը՝ քր. օր-ով նախատեսված լինելը, նշանակում է, որ արարքը համապատասխանում է որևէ հանցակազմի: Արարքում հանցակազմի հատկանիշների առկայությունը նշանակում է, որ

³ Հետագա շարադրանքում դրանք պայմանականորեն կանվանենք «արարք» եզրույթի լայն և նեղ իմաստներ:

այն քրեական օրենքով նախատեսված արարք է⁴։ Դա նշանակում է, որ քր. օր-ի 16-րդ հոդվածի համատեքստում «քր. օր-ով նախատեսված արարք» արտահայտությունն ընդգրկում է ոչ միայն հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող արարքը (գործողությունը կամ անգործությունը), այլև կոնկրետ հանցակազմի մյուս պարտադիր հատկանիշները։

Օրինակ՝ քր. օր-ի 342-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի պարտադիր հատկանիշ է ոչ միայն արարքը՝ գործողության կամ անգործության ձևով (*Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը*), այլև հետևանքը (*մարդու առողջությանը պատճառված ծանր կամ միջին ծանրության վնասը*)։ Եթե, օրինակ, անձը խախտում է ճանապարհային երթևեկության որևէ կանոն, սակայն դրա արդյունքում քր. օր-ի 342-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ չեն առաջանում, ապա հանցանքը բացակայում է հենց «քր. օր-ով նախատեսված արարք» հատկանիշի բացակայության պատճառով, թեև արարքը (գործողության կամ անգործության ձևով) առկա է։ Հետևաբար, «քր. օր-ով նախատեսված արարք» ասելով տվյալ դեպքում պետք է հասկանալ ոչ թե պարզապես ճանապարհային երթևեկության կանոնի խախտումը, այլ ճանապարհային երթևեկության կանոնի այնպիսի խախտումը, որը ծանր կամ միջին ծանրության վնաս է պատճառել մարդու առողջությանը։

Ընդ որում, կախված կոնկրետ հանցակազմի առանձնահատկություններից՝ քր. օր-ի 16-րդ հոդվածի համատեքստում «քր. օր-ով նախատեսված արարք» արտահայտությունը կարող է ընդգրկել ոչ միայն հանցակազմի օբյեկտիվ կողմի, այլև սուբյեկտիվ կողմի հատկանիշներ։ Այսպես օրինակ՝ քր. օր-ի 267-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի պարտադիր հատկանիշ է ոչ միայն արարքը (*կեղծ արժույթ, արտարժույթ, արժեթուղթ, վճարահաշվարկային այլ փաստաթուղթ կամ վճարային գործիք պատրաստելը, պահելը, տեղափոխելը, առաքելը կամ ձեռք բերելը կամ*

⁴ Տե՛ս Գաբուլյան Ա., Մարգարյան Ա., Միսոնյան Տ. ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց։ 2022թ., էջ 45// <https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57> (վերջին մուտք՝ 25.12.2023թ.)։

դրանք իրացնելը), այլև *իրացման նպատակը*: Եթե, օրինակ, անձն առանց իրացման նպատակի պատրաստում է կեղծ թղթադրամ, ապա հանցանքը բացակայում է հենց «քր.օր-ով նախատեսված արարք» հատկանիշի բացակայության պատճառով, թեև արարքը գործողության ձևով առկա է: Հետևաբար, «քր. օր-ով նախատեսված արարք» ասելով տվյալ դեպքում պետք է հասկանալ ոչ թե պարզապես կեղծ թղթադրամ պատրաստելը, այլ կեղծ թղթադրամ պատրաստելը, որը կատարվել է իրացման նպատակով:

Օրենսդիրը «քր. օր-ով նախատեսված արարք» արտահայտությունը լայն իմաստով է օգտագործել նաև, օրինակ, քր. օր-ի 10-րդ հոդվածի 1-ին մասում («Հայաստանի Հանրապետության տարածքում **քրեական օրենքով նախատեսված արարք** կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով»), 17-րդ հոդվածի 3-րդ մասում («Միջին ծանրության հանցանքներ են համարվում **սույն օրենսգրքով նախատեսված այն արարքները**, որոնց համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում 5 տարի ժամկետով ազատազրկումը»): Նշված նորմերում «քր. օր-ով նախատեսված արարք» արտահայտությունն ընդգրկում է ոչ միայն գործողությունը կամ անգործությունը, այլև այն բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, որոնք պարտադիր են կոնկրետ հանցակազմի համար:

3. «Քր. օր-ով նախատեսված արարք» արտահայտության նեղ մեկնաբանումը

«Քր. օր-ով նախատեսված արարք» արտահայտությունը նեղ իմաստով օգտագործված է քր. օր-ի 18-րդ հոդվածի 1-ին մասում՝ «**Սույն օրենսգրքով նախատեսված արարք** է համարվում պատժի սպառնալիքով արգելված գործողությունը կամ անգործությունը»: Նշված նորմի համատեքստում օրենսդիրը «քր. օր-ով նախատեսված արարք» արտահայտությունն օգտագործելով նկատի է ունեցել արարքը՝ որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, որն ընդգրկում է *միայն գործողությունը կամ անգործությունը* և չի ընդգրկում, օրինակ, հետևանքը, հանցանքի կատարման տեղը, ժամանակը, նպատակը, շարժառիթը և այլն: Նշված նորմով օրենսդիրը ցանկացել է ցույց տալ, որ արարքը՝ որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, կարող է ունենալ երկու դրսևորում՝ գործողություն կամ անգործություն:

Քր.օր-ի 18-րդ հոդվածի 1-ին մասում «քր.օր-ով նախատեսված արարք» արտահայտությունը նեղ մեկնաբանելու օգտին է խոսում նաև հետևյալ փաստարկը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը: Քր.օր-ի 18-րդ հոդվածը վերնագրված է **«Արարքը»**, մինչդեռ հոդվածի 1-ին մասում օգտագործված է **«քր.օր-ով նախատեսված արարք»** արտահայտությունը:

Թեև վերնագիրը նորմի բաղադրիչ չէ ու այդ պատճառով նորմի փաստակազմի հատկանիշ չէ, բայց դրանից ամեննին չի բխում, թե օրենսդրի կողմից ընտրված վերնագիրը բոլորովին անօգուտ է նորմի մեկնաբանման համար: Նորմի վերնագիրը պիտի արտահայտի դրա առարկան խիստ հակիրճ ձևով⁵:

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ այս դեպքում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի վերոնշյալ պահանջը խախտված է, բայց ոչ թե այն պատճառով, որ հոդվածի վերնագիրը չի համապատասխանում հոդվածի բովանդակությանը, այլ այն պատճառով, որ հոդվածի 1-ին մասում «քր. օր-ով նախատեսված արարք» արտահայտությունը չի համապատասխանում հոդվածի վերնագրին:

Ստացվում է, որ օրենսդիրը քր. օր-ի 16-րդ հոդվածի 1-ին մասում «քր. օր-ով նախատեսված արարք» արտահայտությունն օգտագործելով նկատի է ունեցել *հանցակազմի բոլոր հատկանիշները պարունակող արարքը*, իսկ 18-րդ հոդվածի 1-ին մասում այդ նույն արտահայտությունն օգտագործել է *«գործողություն կամ անգործություն»* իմաստով:

Ավելին, քր. օր-ի 18-րդ հոդվածի 1-ին մասում «պատժի սպառնալիքով արգելված» հատկանիշը ներկայացված է որպես «քր. օր-ով նախատեսված» հատկանիշի **բաղկացուցիչ մաս**, մինչդեռ քր. օր-ի 16-րդ հոդվածի 1-ին մասում «քր. օր-ով նախատեսված» և «պատժի սպառնալիքով արգելված» ձևակերպումները նախատեսված են որպես հանցանքի **ինքնուրույն հատկանիշներ**: Եթե պայմանականորեն ընդունենք, որ օրենսդիրը քր. օր-ի 18-րդ հոդվածի 1-ին մասում տվել է *«քր. օր-ով նախատեսված արարք»* հասկացության սահմանումը՝ այն բնորոշելով որպես *«պատժի սպառնալիքով արգել-*

⁵ Տե՛ս **Հովհաննիսյան Գ.** Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն.-Եր.: «Հանրային դիվանագիտություն» բարեգործական ՀԿ, 2020, էջ 298:

ված գործողություն կամ անգործություն», և փորձենք այդ բնորոշումը տեղադրել քր.օր-ի 16-րդ հոդվածի 1-ին մասում «քր. օր-ով նախատեսված» հատկանիշի փոխարեն, ապա կստացվի մի անհեթեթ իրավիճակ, որում հանցանքի օրենսդրական բնորոշման մեջ «պատժի սպառնալիքով արգելված» հատկանիշը նշվում է երկու անգամ:

Այսպիսով՝ «*reductio ad absurdum*» հնարքի⁶ կիրառմամբ հիմնավորվում է, որ «քր. օր-ով նախատեսված արարք» արտահայտությունը քր. օր-ի 16-րդ և 18-րդ հոդվածներում ունի տարբեր իմաստներ (համապատասխանաբար լայն և նեղ):

4. Քր. օր-ի Ընդհանուր մասի հոդվածներում «արարք» եզրույթի լայն և նեղ մեկնաբանումները

4.1. «*Արարք» եզրույթի լայն և նեղ մեկնաբանման չափանիշը:* Ինչպես արդեն նշել ենք, քր. օր-ում երկիմաստությամբ է բնութագրվում ոչ միայն **«քր. օր-ով նախատեսված արարք»** արտահայտությունը, այլև **«արարք»** եզրույթը: Օրենսդիրը մի դեպքում «արարք» եզրույթն օգտագործելով նկատի է ունեցել *հանցակազմի բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները պարունակող արարքը*, իսկ մեկ այլ դեպքում՝ *միայն հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող արարքը՝ գործողության կամ անգործության ձևով:*

Հարց է ծագում՝ ինչպե՞ս պետք է իրավակիրառողը կողմնորոշվի, թե ինչ իմաստով է օգտագործված «արարք» եզրույթը քր. օր-ի այս կամ այն հոդվածում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ «Նույն նորմատիվ իրավական ակտում **միևնույն** հասկացության կամ տերմինի բովանդակությունը **տարբեր** իմաստներով կրկնվելու դեպքում կիրառվում է հասկացության կամ տերմինի այն բովանդակությունը, որը **բխում է տվյալ իրավական ակտի էությունից** կամ **տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի սկզբունքներից**»: Նույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական

⁶ «Հասցնել անհեթեթության»՝ տրամաբանական հնարք, որի միջոցով որևէ պնդում հերքվում է այնպես, որ դրանում կամ դրանից բխող հետևություններում մատնանշվում է հակասություն: Տե՛ս, օրինակ, <https://www.britannica.com/topic/reductio-ad-absurdum> (վերջին մուտք՝ 25.12.2023թ.):

ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, **ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից**, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից՝ ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Մեջբերված նորմերի վրա հիմնվելով՝ կարող ենք հանգել հետևության, որ իրավակիրառողը քր.օր-ի այս կամ այն հոդվածում «արարք» եզրույթը մեկնաբանելիս պետք է հիմնվի տվյալ հոդվածի կարգավորման **համատեքստի** վրա: Մասնավորապես, եթե իրավական կարգավորման համատեքստը ցույց է տալիս, որ օրենսդիրն «արարք» եզրույթն օգտագործել է *քրեական պատասխանատվության հիմք ձևավորող, հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները պարունակող արարքը* բնութագրելու համար, ապա «արարք» եզրույթն անհրաժեշտ է մեկնաբանել լայն: Իսկ եթե համատեքստը ցույց է տալիս, որ օրենսդիրն «արարք» եզրույթն օգտագործել է *հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշի իմաստով*, ապա «արարք» եզրույթն անհրաժեշտ է մեկնաբանել նեղ:

4.2. «Արարք» եզրույթի լայն մեկնաբանման օրինակներ: Քր. օր-ի 20-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ «Եթե սույն օրենսգրքի Հատուկ մասի հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմը կատարել է հատուկ սուբյեկտի հատկանիշներով չօժտված անձը, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված այն հանցագործության համար, որի հատկանիշներն առկա են նրա **արարքում**»: Մեջբերված նորմում «արարք» եզրույթն անհրաժեշտ է մեկնաբանել լայն, քանի որ, ըստ նորմի համատեքստի, անձի արարքում բովանդակվում են հանցագործության բոլոր հատկանիշները, այսինքն՝ առկա է քրեական պատասխանատվության հիմքը:

Մեկ այլ օրինակ: Քր. օր-ի 52-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «Քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում **արարքը** որակվում է սույն օրենսգրքի մեկ հոդվածով կամ հոդվածի մեկ մասով կամ կետով»: Այս նորմում նույնպես «արարք» եզրույթն անհրաժեշտ է մեկնաբանել լայն, քանի որ, ըստ նորմի համատեքստի, անձի արարքը պետք է որակել քր. օր-ի որևէ հոդվածով «հոդվածի մասով կամ կետով», ինչը նշանակում է, որ

արարքը բովանդակում է նշված հոդվածով նախատեսված հանցագործության բոլոր հատկանիշները:

4.3. «Արարք» եզրույթի նեղ մեկնաբանման օրինակներ: Քր.օր-ի 26-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ «Հանցանքը համարվում է հանցավոր ինքնավստահությամբ կատարված, եթե անձը նախատեսում է իր **արարքի** վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի համոզված է լինում, որ տվյալ դեպքում դրանք կկանխվեն»: Մեջբերված նորմում «արարք» եզրույթն անհրաժեշտ է մեկնաբանել նեղ, քանի որ նորմում արարքի հետ մեկտեղ նշվում է նաև հետևանքների մասին, հետևաբար, տվյալ համատեքստում «արարք» եզրույթը չի ընդգրկում հետևանքները, այլ նշանակում է գործողություն կամ անգործություն:

Մեկ այլ օրինակ: Քր. օր-ի 28-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է՝ «Եթե անձը կատարում է **արարք**, սակայն իր դիտավորության մեջ ընդգրկված վտանգավոր հետևանքներն առաջանում են ոչ թե նրա **արարքից**, այլ ուրիշ պատճառներով, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձի համար»: Այս նորմում նույնպես «արարք» եզրույթն անհրաժեշտ է մեկնաբանել նեղ, քանի որ նորմում արարքի հետ մեկտեղ նշվում է նաև հետևանքների մասին, հետևաբար տվյալ համատեքստում «արարք» եզրույթը չի ընդգրկում հետևանքները, այլ նշանակում է գործողություն կամ անգործություն:

5. Քր. օր-ի Հատուկ մասի հոդվածներում «արարք» եզրույթի մեկնաբանումը

Քր. օր-ի Հատուկ մասի հոդվածներում հանցանքը ծանրացնող հանգամանքները նախատեսելիս օրենսդիրը կատարում է ներքին հղումներ՝ հոդվածների երկրորդ և հաջորդ մասերում օգտագործելով «սույն հոդվածի 1-ին (2-րդ և այլն) մասով արարքը» ձևակերպումը:

Օրինակ՝ քր. օր-ի 264-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում օրենսդիրն ամրագրել է գույքը ոչնչացնելու կամ վնասելու հիմնական հանցակազմը՝ «Ուրիշ գույքը ոչնչացնելը կամ վնասելը, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել»: Մեջբերված նորմի բովանդակությունից բխում է, որ նշված հանցակազմը նյութական է. դրա օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է ոչ միայն արարքը (գույք ոչնչացնելը կամ վնասելը), այլև հետևանքը (խոշոր չափերի գույքային վնասը):

Նույն հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը նախատեսել է գույքը ոչնչացնելու կամ վնասելու ծանրացնող հանգամանքները՝

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված **արարքը**, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) կատարվել է հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով,

3) կատարվել է՝ կապված անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

4) կատարվել է ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով,

5) կատարվել է խուլիգանական դրդումներով կամ

6) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել»:

Հարց է ծագում՝ ինչպե՞ս պետք է մեկնաբանել քր. օր-ի 264-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործված «արարք» եզրույթը՝ լա՞յն, թե՞ նեղ:

Լայն մեկնաբանումը ենթադրում է, որ նշված նորմում «արարք» եզրույթը ներառում է ինչպես **արարքը** որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ (գույքը ոչնչացնելը կամ վնասելը), այնպես էլ **հետևանքը** (խոշոր չափերի գույքային վնասը): Այդպիսի մեկնաբանման դեպքում, օրինակ, հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով գույք ոչնչացնելը, որը չի պատճառել խոշոր չափերի գույքային վնաս, չի կարող որակվել քր. օր-ի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Այդ արարքն ընհանրապես հանցանք չի համարվի:

Նեղ մեկնաբանումը ենթադրում է, որ նշված նորմում «արարք» եզրույթը ներառում է **միայն արարքը** որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ (գույքը ոչնչացնելը կամ վնասելը)՝ անկախ հետևանքից (գույքային վնասի չափից): Այդպիսի մեկնաբանման դեպքում, օրինակ, հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով գույք ոչնչացնելը, որը չի պատճառել խոշոր չափերի գույքային վնաս, արդեն կորակվի քր. օր-ի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Մեր կարծիքով՝ քր. օր-ի Հատուկ մասի հոդվածներում հանցանքը ծանրացնող հանգամանքները նախատեսելիս օգտագործված «արարք» եզրույթը պետք է մեկնաբանել լայն: Դա հիմնավորվում է հետևյալ փաստարկներով:

Առաջին՝ հանցանքը ծանրացնող հանգամանքների նախատեսումը քրեական պատասխանատվության տարբերակման օրենսդրական միջոցներից մեկն է: Ծանրացնող հանգամանքի նախատեսումը և դրա համար պատժի խստացումն արդարացված է միայն այն դեպքում, երբ այդ հանգամանքի պատճառով բարձրանում է հանցանքի վտանգավորությունը: Իսկ որպեսզի ծանրացնող հանգամանքով հանցանքն ավելի վտանգավոր լինի հիմնական հանցակազմի միջոցով նկարագրված հանցանքից, այն նախ՝ պետք է ներառի հիմնական հանցակազմի **բոլոր** հատկանիշները, ինչպես նաև՝ որևէ **լրացուցիչ** հատկանիշ, որի պատճառով հանցանքն ավելի վտանգավոր է դառնում: Եթե արարքը չպարունակի հիմնական հանցակազմի բոլոր հատկանիշները, ապա չի կարելի միանշանակ պնդել, որ այն ավելի վտանգավոր է, նույնիսկ եթե բնութագրվում է որևէ նոր հատկանիշով:

Օրինակ՝ չի կարելի միանշանակ պնդել, որ 5,000 դրամ արժողության գույքի ոչնչացումը հրկիզման եղանակով ավելի վտանգավոր է, քան 1,000,000 դրամ արժողության գույքի ոչնչացումն առանց հրկիզման: Թեև հրկիզման եղանակը բարձրացնում է հանցանքի վտանգավորության աստիճանը, սակայն պատճառովոր գույքային վնասի չափի նվազումն իջեցնում է հանցանքի վտանգավորության աստիճանը, հետևաբար նման արարքի համար ավելի խիստ պատժի նախատեսումը հիմնավորված չէ: Ավելին, տվյալ դեպքում ընդհանրապես առկա չէ հանցանք, քանի որ բացակայում է հիմնական հանցակազմի պարտադիր հատկանիշներից մեկը՝ հետևանքը:

Ինչպես իրավացիորեն նշվում է մասնագիտական գրականության մեջ, ծանրացնող հանգամանքներով հանցակազմի հատկանիշներն ընդամենը լրացնում են հիմնական հանցակազմը⁷, ծանրացնող հանգամանքներով հանցակազմը բաղկացած է հիմնական հանցակազմից և լրացուցիչ հատկանիշներից⁸:

⁷ Տե՛ս **Побегайло Э.Ф.** Проблемы дифференциации уголовной ответственности за тяжкие насильственные преступления // Совершенствование правовых мер борьбы с преступностью. - Владивосток: Изд-во ДВГУ, 1986. էջ 24-25:

⁸ Տե՛ս **Кабурнеев Э. В.** Понятие квалифицирующих признаков и их роль в дифференциации уголовной ответственности за убийство // Законы России. 2007. № 4. էջ 70:

Երկրորդ՝ օրենսդրական տեխնիկայի կանոնների համաձայն՝ հղումը պետք է կատարել ոչ թե նորմատիվ իրավական ակտում նշված որևէ բառի, այլ այդ նորմատիվ իրավական ակտի կոնկրետ մասի (հոդվածի, մասի, կետի) վրա: Այսպես, քր. օր-ի Հատուկ մասի հոդվածների 2-րդ և հաջորդ մասերում օրենսդիրը հղում է կատարում ոչ թե պարզապես հոդվածի 1-ին մասում նշված **«արարք» բառին**, այլ հոդվածի **ամբողջ 1-ին մասին**: Այսպես, եթե օրենսդիրը ծանրացնող հանգամանքները նախատեսելիս օգտագործեր *«նույն արարքը, որը»* ձևակերպումը, ապա դեռ կարելի էր ենթադրել, որ խոսքը միայն հոդվածի 1-ին մասում նկարագրված արարքի՝ գործողության կամ անգործության մասին է: Սակայն օրենսդիրը ծանրացնող հանգամանքները նախատեսելիս օգտագործում է *«նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը»* ձևակերպումը, ինչը նշանակում է, որ խոսքը ոչ միայն գործողության կամ անգործության, այլև հոդվածի **1-ին մասով նախատեսված բոլոր հատկանիշների** մասին է:

6. Եզրակացություն

Այսպիսով՝ կատարված հետազոտության արդյունքներով ներկայացվում են հետևյալ եզրահանգումները:

1. Քր. օր-ի 18-րդ հոդվածի 1-ին մասում «քր. օր-ով նախատեսված արարք» արտահայտությունն օգտագործելով օրենսդիրը նկատի է ունեցել արարքը՝ որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, իսկ մյուս բոլոր հոդվածներում՝ արարքը, որը պարունակում է կոնկրետ հանցակազմի բոլոր հատկանիշները: Այդ երկիմաստությունը բացառելու նպատակով առաջարկում ենք քր. օր-ի 18-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Արարքը՝ որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, կարող է դրսևորվել գործողությամբ կամ անգործությամբ»:

2. Քր. օր-ի Հնդհանուր մասի տարբեր հոդվածներում «արարք» եզրույթը պետք է մեկնաբանել լայն և նեղ՝ ելնելով իրավական կարգավորման համատեքստից: Մասնավորապես, եթե հոդվածի համատեքստը ցույց է տալիս, որ օրենսդիրն «արարք» եզրույթն օգտագործել է քրեական պատասխանատվության հիմք ձևավորող, հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները պարունակող արարքը բնութագրելու համար, ապա «արարք» եզրույթն անհրաժեշտ է մեկնաբանել լայն: Իսկ եթե հոդվածի համատեքստը ցույց է տալիս, որ օրենսդիրը «արարք» եզրույթն օգտագործել է հանցագործության

օրյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշի իմաստով, ապա «արարք» եզրույթն անհրաժեշտ է մեկնաբանել նեղ:

3. Քր. օր-ի Հատուկ մասի հոդվածներում հանցանքը ծանրացնող հանգամանքները նախատեսելիս օգտագործված «արարք» եզրույթն անհրաժեշտ է մեկնաբանել լայն՝ որպես արարք, որը պարունակում է տվյալ հոդվածով նախատեսված հիմնական հանցակազմի բոլոր հատկանիշները:

Բանալի բառեր. հանցանք, հանցակազմ, օրյեկտիվ կողմ, արարք, գործողություն, անգործություն, օրենսդրական տեխնիկա

ДВУСМЫСЛЕННОСТЬ ТЕРМИНА «ДЕЯНИЕ» В НОВОМ УГОЛОВНОМ КОДЕКСЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Маркосян Мисак

Первый заместитель начальника

Образовательного комплекса МВД РА,

кандидат юридических наук, доцент,

полковник полиции

Аннотация. В статье раскрывается содержание термина «деяние», употребленного законодателем в различных статьях нового Уголовного кодекса Республики Армения.

По мнению автора, термин «деяние» в одних статьях Уголовного кодекса необходимо понимать в широком смысле (деяние, содержащее все признаки состава преступления), а в других статьях - в узком смысле (деяние, как обязательный признак объективной стороны состава преступления). Критерием широкого или узкого толкования термина (деяние) является контекст правового регулирования.

В статье также обсуждается вопрос толкования термина (деяние), употребленного в статьях Особенной части Уголовного кодекса, при конструировании отягчающих составов преступления.

В заключительной части статьи излагаются выводы, сделанные по результатам исследования, а также законодательное предложение, направленное на устранение двусмысленности выражения (деяние, предусмотренное Уголовным кодексом).

Ключевые слова: преступление, состав преступления, объективная сторона, деяние, действие, бездействие, законодательная техника.

AMBIGUITY OF THE TERM “ACT” IN THE NEW CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

Markosyan Misak

*The First Deputy Head of the Educational
Complex of the MIA of the Republic of Armenia,
PhD, Associate Professor, Police Colonel*

Summary: The article reveals the content of the term “act” the legislator used in various articles of the Criminal Code of the Republic of Armenia.

According to the author, the tem “act” must be perceived in a broad sense in some articles of the Criminal Code (act that includes all the features of corpus delicti), and in a narrow sense in other articles (act as a mandatory feature of actus reus). The criterion for a broad and narrow interpretation of the term “act” is the context of legal regulation.

The article also discusses the issue of interpreting the term “act” used by the legislator when developing aggravated corpora delicti in the special part of the Criminal Code.

In the concluding part, the author presents the conclusions based on the results of the research, including a legislative proposal aimed at eliminating the ambiguity of the expression “act provided for by the Criminal Code”.

Key words: crime, corpus delicti, objective side (actus reus), act, action, inaction, legislative technique

Հոդվածը գրախոսվել է՝ 28.12.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 28.12.2023թ.:

ԿԻԲԵՌՆԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԻԿՏԻՄՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մնացականյան Արտակ

*ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի
ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ,
ոստիկանության փոխգնդապետ, իրավաբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ*

Նախաբան: Ներկայումս մենք ապրում ենք մի ժամանակահատվածում, որտեղ հետզհետե վերանում է վիրտուալ և իրական կյանքի միջև սահմանագիծը: Այլևս երևակայության դաշտից դուրս են այնպիսի հասկացությունները, ինչպիսիք են՝ «համացանց», «վիրտուալ իրականություն», «տեղեկատվական հասարակություն», «արհեստական բանականություն»: Մեր ժամանակներում անհնար է պատկերացնել ինչպես պետական և մասնավոր ոլորտի, այնպես էլ անհատների կյանքն ու գործունեությունն առանց համացանցի: Գրեթե բոլոր պետական հիմնարկներում ներդրվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն. պետական և մասնավոր կազմակերպություններն իրենց ծառայությունները մատուցում են հիմնականում օնլայն հարթակում, հասարակության անդամների մեծամասնությունն արդեն իսկ վիրտուալ իրականության մաս է կազմում՝ լինելով տարբեր օնլայն ծրագրերի և սոցիալական ցանցերի շահառուներ:

Վիրտուալ իրականություն, կիբեռհանցավորություն: Դեռևս երեք տասնամյակ առաջ դժվար էր պատկերացնել վիրտուալ իրականությունը, սակայն տեղեկատվական հասարակության արագ ձևավորման մասին վկայում են վիճակագրական տվյալները. ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության վարչության տվյալներով դեռևս 2011 թվականին նվազագույնը 2,3 միլիարդ մարդ կամ երկրագնդի բնակչության մեկ երրորդը համացանց մուտք գործելու հնարավորություն է ունեցել, ընդ որում՝ բաժանորդների 45 տոկոսը կազմել են մինչև 25 տարեկան անձինք: 2013 թվականին կատարված այս ուսումնասիրությունների ընթացքում կանխատեսվում էր, որ 2017

թվականին համացանց մուտք գործելու հնարավորություն կունենա երկրագնդի բնակչության 70 տոկոսը¹:

ՌԴ պետական վիճակագրության ֆեդերալ ծառայության տվյալներով համացանցից օգտվողների քանակը 2010 թվականին կազմում էր ՌԴ բնակչության 48 տոկոսը, 2018 թվականին՝ 59 տոկոսը, 2020 թվականին՝ 72 տոկոսը (բնակչության մեկ միլիոնը գերազանցող քաղաքներում՝ 95 տոկոսը)²: Առավել մտահոգիչ են համացանցում ներգրավված երեխաների քանակը, մասնավորապես, ըստ 2016 թվականին կատարված ուսումնասիրությունների՝ 3-10 տարեկան երեխաների 71 տոկոսը տարբեր սարքերի միջոցով (սմարթֆոն, համակարգիչ և այլն) մուտք են գործել համացանց, ընդ որում՝ երեխաների 49 տոկոսն սկսում է օգտվել համացանցից 3-4 տարեկանում, 75 տոկոսը՝ 5-8 տարեկանում, 84 տոկոսը՝ 9-10 տարեկանում, իսկ արդեն 10 տարեկանում երեխաների 91 տոկոսն ունեն անձնական օգտագործման սմարթֆոններ³: Վաղ հասակում համացանց մուտք գործելու հնարավորությունները, անձնական օգտագործման սմարթֆոնների առկայությունն անխուսափելիորեն առաջացնում են մի շարք հոգեբանական խնդիրներ: Արդեն իսկ ձևավորվել են 21-րդ դարի այնպիսի հիվանդություններ (վախեր, ֆոբիաներ), ինչպիսիք են.

1. Նոմոֆոբիա (номофобия, անգլ. no mobile phone) - առանց բջջային հեռախոս մնալու վախ: Այս հիվանդությունն առաջին անգամ հայտնաբերվել է 2008 թվականին, երբ ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ յուրաքանչյուր 100 մարդուց 66-ն ունի նոմոֆոբիա:

2. Կիբեռֆոբիա (киберфобия) – վախ համակարգիչներից և սմարթֆոններից:

Ի տարբերություն նոմոֆոբիայի, որը բնորոշ է երիտասարդներին, այս ֆոբիան հիմնականում տարածված է մեծահասակների շրջանում: Կիբեռֆոբիայով տառապող անձինք բացասական են վերաբերվում համակարգիչներին, ինչը դրսևորվում է ընդհուպ գլխապտույտով, սրտխառնոցով:

¹ Տե՛ս https://www.unodc.org/documents/organized-crime/cybercrime/Cybercrime_Study_Russian.pdf

² Տե՛ս <https://victimolog.ru/index.php/victimo/article/view/230/k-voprosu-o-viktimizatsii-zhertv-kiberprestupleniy> /վերջին մուտք՝ 01.11.2023թ/

³ Տե՛ս **Рыжова Н.И., Громова О.Н.** Киберугрозы цифрового социума и их профилактика в рамках виктимологической деятельности // Вестник Российского университета дружбы народов. Серия: Информатизация образования. 2020. Т. 17. № 3. С. 256.

3. Սոցիոնետոֆոբիա (соционетophobia) – վախ համացանցից:

Սա հետապնդման վախի ժամանակակից տեսակն է: Այս վախը չի վերաբերում միայն հատուկ ծառայությունների հետապնդմանը, անձը կարող է խուսափել առհասարակ իր միջավայրի (ընտանիքի անդամներ, ընկերներ և այլն) վերահսկողությունից:

4. Տրոլեֆոբիա (троллефобия) – անձը մտածում է, որ բոլորի միակ նպատակն իրեն վատաբանելն է (չարախոսելը), սրա արդյունքում անձը դառնում է ինքնամփոփ, վախենում է արտահայտել իր կարծիքը:

5. Իմոջիֆոբիա (имоджифобия) – անձը վախենում է, որ հաղորդագրության միջոցով ուղարկված պատկերները (սմայլիկները) ճիշտ չեն ընկալվի: Այս ֆոբիան օր օրի ավելի է տարածվում՝ կապված սոցիալական ցանցերի շրջանակի ընդլայնման հետ:

6. Սելֆիֆոբիա (селфифобия) – վատ ինքնանկար անելու վախը: Հոգեբանների կարծիքով՝ վատ ինքնանկարի վախն այսօր այնքան լուրջ խնդիր է դարձել, որ անխուսափելիորեն բերել է բժշկական միջամտության: Հատկանշական է, որ լավ ինքնանկար ստանալու նպատակով բազմաթիվ երիտասարդներ դիմում են պլաստիկ վիրաբուժության:

7. Տրեդոֆոբիա (тредофобия) – սոցիալական ցանցերում մեկնաբանություններ գրելու վախ⁴:

Բոլոր ժամանակներում հանցավորությունն օգտագործել է գիտության և տեխնիկայի հայտնագործություններն ու նորամուծություններն իր շահերի համար: Վիրտուալ իրականությունն ու կիբեռտարածությունը «պարարտ հող» են ստեղծել ժամանակակից հանցավորության համար: Արդյունքում հետզհետե ի հայտ են գալիս ինչպես նոր՝ միայն վիրտուալ իրականությանը բնորոշ հանցագործություններ, այնպես էլ մի շարք ավանդական հանցագործություններ, որոնք իրականացվում են համացանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով: Կիբեռհանցավորության վտանգավորությունը մեր ժամանակներում հասել է առավելագույնի, ինչի մասին են վկայում նաև վիճակագրական տվյալները, այսպես՝ դեռևս 2011 թվականին «Նորտոն» կազմակերպության ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ամբողջ աշխարհում կիբեռհանցավորության գոհ է դարձել

⁴ Տե՛ս <https://russian7.ru/post/7-fobij-rozhdeniye-gadzheta-i-internetom/vleptzhi-moiup/>
01.11.2023թ/

431 միլիոն մարդ, ավելի պատկերավոր ասած՝ 1 օրում՝ 1 միլիոն մարդ, 1 վայրկյանում՝ 14 մարդ⁵:

Կիբեռհանցավորության մասշտաբների մասին պատկերացում կազմելու համար բավարար է ուսումնասիրել հետևյալ վիճակագրությունը.

1. 2022 թվականին կիբեռհանցավորության կողմից հասցված վնասն ամբողջ աշխարհում կազմել է 8,4 տրիլիոն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, ընդ որում՝ 15,2 միլիոն դոլար, կանխատեսվում է, որ մինչև 2026 թվականը վնասը կհասնի 20 տրիլիոն դոլարի (120 տոկոս աճ), և կիբեռհանցավորությունը կդառնա 5 անգամ ավելի եկամտաբեր, քան ամբողջ միջազգային հանցավորությունը:
2. Կիբեռհանցավորության 80 տոկոսը բաժին է ընկնում կազմակերպված հանցավորությանը:
3. Կիբեռհանցավորության 71 տոկոսն իրականացվում է շահադիտական մոտիվացիայով⁶:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ գլխում զետեղված է համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված 7 հանցակազմ.

1. Համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց ներթափանցելը,
2. Համակարգչային տվյալը փոփոխելը,
3. Համակարգչային սաբոտաժը (նենգադուլը),
4. Համակարգչային տվյալներն ապօրինի որսալը կամ դրանց տիրանալը,
5. Հատուկ ծրագրային կամ գործիքային միջոցների ապօրինի շրջանառությունը,
6. Համակարգչային կեղծիքը,
7. Համակարգիչը, համակարգչային համակարգը կամ համակարգչային ցանցը շահագործելու կանոնները կամ պահանջները խախտելը:

Բացի վերոնշյալ հանցակազմերից՝ ՀՀ քրեական օրենսգրքի առանձին հոդվածներով նախատեսվում են համակարգչի միջոցով կատարվող այլ

⁵ Տե՛ս <https://www.un.org/ru/desa/cybersecurity-demands-global-approach> /վերջին մուտք՝ 01.11.2023թ/

⁶ Տե՛ս <https://www.websiterating.com/ru/research/cybersecurity-statistics-facts/> /վերջին մուտք՝ 01.11.2023թ/

հանցակազմեր, օրինակ՝ ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը (հոդված 212), համակարգչային հափշտակությունը (հոդված 257), պոռնկագրական նյութեր կամ առարկաներ պատրաստելը, տարածելը կամ պահպանելը (հոդված 300)⁷:

Հաշվի առնելով կիրեռհանցավորության ծավալներն ու միջազգային բնույթը՝ 2001 թվականի նոյեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետությունն ընդունել է, իսկ 2007 թվականի փետրվարի 1-ից ուժի մեջ է մտել կիրեռհանցագործությունների մասին կոնվենցիան⁸: Այս կոնվենցիայով հստակեցվում է *տերմինների օգտագործումը, ազգային մակարդակով ձեռնարկվող միջոցները, ընթացակարգային օրենսդրությունը, միջազգային համագործակցությունը*:

Կիրեռվիկտիմոլոգիա, վիկտիմոլոգիական կանխարգելման առանձնահատկությունները:

Վերոգրյալը ցույց է տալիս կիրեռհանցավորության ծավալն ու վտանգավորությունը, և այս առումով շատ է կարևորվում կիրեռհանցավորության կանխարգելման ուղղությամբ գիտական հետազոտությունների, կանխարգելման նոր մեթոդաբանության և ուղղությունների ուսումնասիրությունն ու ներդրումը: Ներկայումս ինչպես միջազգային կազմակերպությունների⁹, այնպես էլ առանձին պետությունների կողմից¹⁰ իրականացվում են կիրեռհանցավորության դեմ պայքարի գիտական հետազոտություններ և միջոցառումներ:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են հանցագործությունների կանխարգելման հետևյալ տեսականները՝ ընդհանուր, հատուկ, անհատական և **վիկտիմոլոգիական**: Կիրեռհանցավորության դեմ պայքարում մեծ արդիականություն է ձեռք բերում վիկտիմոլոգիական կանխարգե-

⁷ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ուժի մեջ է մտել 01.07.2022, ՀՕ-199-Ն/վերջին մուտք՝ 01.11.2023թ/

⁸ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48028>/վերջին մուտք՝ 01.11.2023թ/

⁹ Տե՛ս

https://www.unodc.org/documents/e4j/Cybercrime/Cybercrime_Module_2_General_Types_of_Cybercrime_RU.pdf/վերջին մուտք 01.11.2023թ/

¹⁰ Օրինակ՝ 2023 թվականի հունիսի 15-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում տեղի ունեցավ «Կիրեռհանցավորության դեմ պայքարի քրեաիրավական, քրեադատավարական և կրիմինալոգիական հիմնախնդիրները» թեմայով միջազգային գիտագործնական համաժողով, այդ զեկույցներն ընդգրկվել են «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրի 16-րդ համարում:

լումը: Սրա մասին են վկայում մասնագիտական գրականության մեջ արդեն իսկ մեծ շրջանառություն ստացած այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են «կիրեովիկտիմոլոգիա», «կիրեովիկտիմայնություն», «կիրեովիկտիմիզացիա», «կիրեոգոհ»¹¹:

Վիկտիմայնությունն անձի անհատական հատկանիշների ամբողջությունն է, որով պայմանավորվում է վերջինիս վարքագիծը կրիմինալոգիական իրադրությունում: Հենց այս հատկանիշներն են նպաստում անձին որոշակի իրավիճակում վերածվել զոհի: Վիկտիմիզացումն անձի կողմից վիկտիմայնություն ձեռք բերելու կամ դրա հավանականության մեծացման գործընթացն է, ըստ էության, վիկտիմիզացումն անձի՝ հանցագործության տուժողի վերածվելու գործընթացն ու արդյունքն է¹²: Վերոշարադրյալն ավանդական վիկտիմոլոգիայի եզրույթներն են, սակայն հաշվի առնելով հոդվածի ուղղվածությունը՝ անհրաժեշտություն է առաջանում պարզաբանել վիկտիմոլոգիայի առանձնահատկությունները կիրեոտարածությունում:

Վիրեովիկտիմոլոգիան մասնագիտական գրականությունում բնութագրվում է որպես ուսմունք՝ համակարգչային տեխնոլոգիաների միջոցով կատարվող հանցագործություններից տուժած անձանց մասին¹³:

Վիրեովիկտիմայնությունը անձի անհատական հատկանիշների ամբողջությունն է, որը նպաստում է կիրեոտարածությունում զոհ դառնալուն:

Վիրեովիկտիմիզացիան կիրեոտարածությունում զոհ դառնալու գործընթացն է¹⁴:

¹¹ Տե՛ս **Жмуров Д.В.** Кибервиктимология, как новая учебная дисциплина: методическая разработка / **Д.В. Жмуров.** — DOI 10.17150/2411-6262.2021.12(3).25 // Baikal Research Journal. — 2021. — Т. 12, № 3.,

Жмуров Д.В. Кибервиктимология как новая реальность технотронного общества (гендерное исследование) / **Д.В. Жмуров, Р.Н. Ключко.** — DOI: 10.17150/2411-6262.2020.11(1).18 // Baikal Research Journal. — 2020. — Т. 11, № 1.,

Стяжкина С. А. Виктимологическая профилактика кибермошенничества: Вестник Удмуртского университета. 2022.Т 32, вып. 3, ст.546-551, /վերջին մուտք՝ 01.11.2023թ/

Исраелян Г.В. Кибервиктимология: понятие и составляющие элементы: «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, 16 համար, ՀՀ ՆԳՆ կրթահամալիր, նոյեմբեր էջեր 264-270:

¹² Տե՛ս Российская криминологическая энциклопедия: изд. Норма, Москва, 2000г., кол. авторов, под ред. **А.И. Долговой**, стр. 100-101

¹³ Տե՛ս **Жмуров Д.В.** Кибервиктимология как новая реальность технотронного общества (гендерное исследование) / **Д.В. Жмуров, Р.Н. Ключко.** — DOI: 10.17150/2411-6262.2020.11(1).18 // Baikal Research Journal. — 2020. — Т. 11, № 1.

Կիբեռզոհ (կիբեռտուժող) բնութագրվում է տեղեկատվական, հոգեբանական կիբեռազդեցության զոհ դարձած անհատը կամ խումբը, կամ մեկ այլ բնութագրում՝ կիբեռզոհը հիմնականում կիբեռտարածությունում քրեորեն պատժելի ոստիկություններից տուժած կազմակերպությունը, խումբը կամ անձն է¹⁵:

Վիկտիմոլոգիական կանխարգելումը սոցիալական ինստիտուտների յուրահատուկ գործունեություն է, որն ուղղված է վիկտիմային վարքագծի ձևավորմանը նպաստող և հանցագործության կատարումը պայմանավորող գործոնների, իրադրությունների հայտնաբերմանը, վերացմանը և չեզոքացմանը, թիրախային խմբերի, վիկտիմայնության բարձր աստիճան ունեցող կոնկրետ անձանց հայտնաբերմանը, նրանց պաշտպանական հնարավորությունների ակտիվացմանը և անվտանգության ապահովմանը¹⁶:

Վերը նշված բնորոշմամբ կարևորվում է վիկտիմային վարքագծի ձևավորմանը նպաստող և հանցագործության կատարումը պայմանավորող գործոնների, իրադրությունների, թիրախային խմբերի, վիկտիմայնության բարձր աստիճան ունեցող կոնկրետ անձանց **հայտնաբերումը**, սակայն այս առումով մենք արդեն իսկ բախվում ենք կիբեռհանցավորության լատենտայնության խնդրին: ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության վարչության ուսումնասիրությունների համաձայն՝ կիբեռզոհերի 80 տոկոսը չի դիմում իրավապահ մարմիններին, իսկ դրա պատճառները տարբեր են՝ չեն հասկանում, որ ենթարկվել են կիբեռվիկտիմիզացման, ամաչում են, որ դարձել են կիբեռզոհ, իսկ կազմակերպությունները գերադասում են պահպանել իրենց հեղինակությունը¹⁷:

Կիբեռհանցավորության բարձր լատենտայնությունը խոչընդոտում է կիբեռզոհի առանձնահատկությունների ուսումնասիրությանը, ինչը կենտրոնական նշանակություն ունի վիկտիմոլոգիական կանխարգելման գոր-

¹⁴ Տե՛ս **Израелян Г.В.** Кибервиктимология: понятие и составляющие элементы: «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, 16 համար, ՀՀ ՆԳՆ կրթահամալիր, նոյեմբեր, էջեր 264-270:

¹⁵ Տե՛ս **Стяжкина С. А.** Виктимологическая профилактика кибермошенничества: Вестник Удмуртского университета. 2022.Т 32, вип. 3, ст.547.

¹⁶ Տե՛ս **Фролов М.Г.** Виктимологическая профилактика насильственных преступлений, совершаемых с внезапно возникшим умыслом //Сакон и право. 2006, ном. 8, էջ 50:

¹⁷ Տե՛ս https://www.unodc.org/documents/organized-crime/cybercrime/Cybercrime_Study_Russian.pdf, էջ 25/վերջին մուտք՝ 01.11.2023թ/ :

ծընթացում: Վիկտիմոլոգիական կանխարգելման դասական ուղղություններից մեկը թիրախային խմբերի, վիկտիմայնության բարձր աստիճան ունեցող կոնկրետ անձանց հայտնաբերումն է, որին հաջորդում է վերջիններիս պաշտպանական հնարավորությունների ակտիվացումը և անվտանգության ապահովումը: Ավանդական վիկտիմոլոգիայում առկա թիրախային խմբերի հայտնաբերման մի շարք մոտեցումներ կիրառարածությունում ի չիք են դառնում: Մասնավորապես, անհատական վիկտիմոլոգիական կանխարգելումը բաղկացած է հետևյալ միջոցառումներից.

1. Անձնային ու վարքային առանձնահատկություններով տուժող դառնալու մեծ հավանականություն ունեցող անձի հայտնաբերում,
2. Կանխարգելման օբյեկտի ուսումնասիրում,
3. Անհատական վարքի կանխատեսում,
4. Տուժող դառնալու հավանականություն ունեցող անձանց դաստիարակման, ուսուցման, անձնական անվտանգության ապահովում:

Ավանդական վիկտիմոլոգիայում թիրախային խմբերի և վիկտիմայնության բարձր աստիճան ունեցող կոնկրետ անձանց հայտնաբերման հիմքում դրվում էր այնպիսի հատկանիշներ, որոնք կոնկրետ իրադրությունում կարող էին դիտարկվել որպես վիկտիմային հատկանիշներ, օրինակ՝ զոհի տարիքը, սեռը, մասնագիտությունը, պաշտոնը և այլն: Կիրառարածությունում այս հատկանիշներն այլևս որոշիչ դեր չունեն, օրինակ՝ շատ դեպքերում անհնար է պարզել կիրառարածությունում անձի տարիքը, սեռը և այլ ֆիզիոլոգիական առանձնահատկությունները և դրանով պայմանավորել վիկտիմայնությունը: Մասնավորապես, տարիքային առումով թիրախային խմբերին (երեխա, տարեց, հոգեկան հիվանդ) հանցավոր ոտնձգություններից պատնեշելու համար առաջարկվում է տեղավորել հատուկ հիմնարկներում (հոգեբուժարան, դպրոց, պարտեզ, տուն): Եթե երեխան գտնվում է ծնողի տեսադաշտում կամ հսկողության տակ, ապա այս հանգամանքն ավանդական վիկտիմոլոգիական առումով կանխարգելիչ նշանակություն ունի, սակայն երեխան կարող է գտնվել իր տանը, իր սենյակում, բայց համացանց մուտք գործելու պահից այլևս վերանում է ծնողի վերահսկողության կանխարգելիչ նշանակությունը: Գործնականում լինում են դեպքեր, երբ անձը նույնիսկ չի գիտակցում իր կատարած գործողությունների հակաիրավական բնույթը, քանի որ նույն 12-ամյա աղջիկ երեխան համացանցում կարող է գրանցվել որպես 35-ամյա տղամարդ: Մեկ այլ օրինակ՝ սովորական միջա-

վայրում անձի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները (մարզված լինելը, հաղթանդամությունը) կարող է կանխարգելիչ նշանակություն ունենալ կյանքի, առողջության, արժանապատվության կամ գույքի նկատմամբ ոտնձգությունների դեպքում, սակայն կիրեռտարածությունում այս հատկանիշներն այլևս որևէ արժեք չունեն:

Վիկտիմայնության բարձր աստիճան ունեցող կոնկրետ անձանց հայտնաբերման նպատակով ավանդական կրիմինալոգիայում որպես վիկտիմային հատկանիշ դիտարկվում էր նաև մասնագիտությունը, զբաղմունքը, օրինակ՝ իրավապահ մարմինների կամ պահնորդական մասնագիտության ներկայացուցիչներն առավել մեծ հավանականություն ունեն ենթարկվելու կյանքի կամ առողջության դեմ ուղղված ոտնձգությունների, կամ մարմնավաճառների դեպքում առավել բարձր է սեռական ոտնձգությունների հավանականությունը, սակայն կիրեռտարածությունում այս հատկանիշները նույնպես որոշիչ դեր չունեն:

Կիրեռտարածությունում որպես առավել թիրախային խումբ կարելի է առանձնացնել անչափահասներին՝ կապված վերջիններիս կենսաֆիզիոլոգիական առանձնահատկություններով և սոցիալիզացիայի մակարդակով: Հոդվածում բերված վիճակագրական տվյալներով արդեն իսկ երևում է անչափահասների ներգրավվածության աստիճանը համացանցում: Այս հանգամանքն արդեն թողնում է իր հետևանքներն ինչպես վերևում նշված հոգեբանական վախերի (ֆոբիաների) տեսքով, այնպես էլ անչափահասների կողմից կատարվող ինքնասպանությունների (խոսքը համացանցին է վերաբերում) քանակով: Անչափահասները այս կամ այն սոցիալական ցանցերի բաժանորդներ են, իսկ այդ սոցցանցերի մեծամասնությունում կամ բացակայում է գրաքնությունը, կամ մասամբ բացակայում է:

Կիրեռվիկտիմոլոգիական կանխարգելման գործընթացում մենք բախվում ենք մի խնդրի, որը արմատապես փոխում է մինչ այս մշակված մեթոդների և կանխարգելման ուղղությունների նշանակությունը՝ վերանում է հանցագործ-տուժող ֆիզիկական շփումը, իսկ կիրեռտարածությունն ստեղծում է անսահման հնարավորություններ կիրեռվիկտիմիզացման համար: Կիրեռոգիներին միմյանց կապող միակ հստակ հատկանիշը վերջիններիս կողմից տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հանգամանքն է: Վերոգրյալից կարելի է ենթադրել, որ կիրեռոգի կարող է լինել յուրաքանչյուր անձ, ով օգտվում է տեղեկատվական տեխնոլոգիաներից:

Վիրտուալ և իրական կյանքի սահմանագծի վերացման հետ մեկտեղ իրենց արդիականությունն են կորցնում նաև տասնամյակների ընթացքում մշակված վիկտիմոլոգիական կանխարգելման ուղղությունները:

Ամփոփելով շարադրանքը՝ պետք է նշենք, որ կիբեռտարածության ընդլայնմանը զուգընթաց անհրաժեշտություն է առաջացել մշակել վիկտիմոլոգիական կանխարգելման նոր մոտեցումներ և մեթոդաբանություն, նոր միջոցառումների համակարգ, ինչը կտանի կիբեռվիկտիմայնության վերացմանը և վիրտուալ իրականությունում զոհ դառնալու հավանականության նվազեցմանը:

PECULIARITIES OF VICTIMOLOGICAL PREVENTION OF CYBERCRIME

Artak Mnatsakanyan

*Head of Educational-Methodical and
Development Department Police Educational
Complex of the Ministry of Internal Affairs of
the Republic of Armenia, Police Lieutenant Colonel,
PhD in Law, Associate Professor*

Summary: Analysis and statistics carried out in different countries indicate the danger of cybercrime. At present, it is impossible to imagine the life and activities of both public and private sectors as well as those of individuals without the Internet. This circumstance increases the likelihood of becoming a victim of virtual reality day by day. In view of the above-mentioned, it is of utmost importance to develop and implement new approaches to fight against cybercrime. Victimological prevention occupies a significant place in combatting cybercrime.

Key words: cybercrime, victimological prevention, virtual reality, victim, statistics, victimization, computer, the Internet.

ОСОБЕННОСТИ ВИКТИМОЛОГИЧЕСКОЙ ПРОФИЛАКТИКИ КИБЕРПРЕСТУПНОСТИ

Мнацаканян Артак Самвелович

*Начальник управления по учебно-методической
работе и развитию Образовательного комплекса
полиции МВД Республики Армения, подполковник
полиции, кандидат юридических наук, доцент*

Аннотация. Об опасности киберпреступности свидетельствуют проведенные в разных странах анализы статистических данных. В настоящее время невозможно представить жизнь и деятельность без интернета, как государственных и частных секторов, так и частных лиц. Данное обстоятельство с каждым днем увеличивает опасность стать жертвой в виртуальной реальности. Учитывая вышесказанное, подчеркивается важность разработки и внедрения новых подходов в борьбе с киберпреступностью, и виктимологическая профилактика занимает в ней важное место.

Ключевые слова: киберпреступность, виктимологическая профилактика, виртуальная реальность, жертва, статистика, виктимизация, компьютер, интернет.

Հոդվածը գրախոսվել է՝ 01.11.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 01.11.2023թ.:

ՍՈՒՔՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԱՇԱՀՄԱՆ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԱՐԳԵԼՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊՈԶԻՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Մուրադյան Մանուկ

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ոստիկանության գնդապետ*

Հոդվածը նվիրված է իրավունքի ընդհանուր տեսության շրջանակներում քիչ հետազոտված հիմնախնդիրներից մեկին՝ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման և վերջինիս արգելքի ինստիտուտների զարգացման տեմպերին: Հետազոտությունը նպատակ ունի ցույց տալ հիմնահարցի ծագման և զարգացման առանձնահատկությունները ռոմանա-գերմանական և անգլո-սաքսոնական իրավական համակարգերում: Աշխատանքում անդրադարձ է կատարվել սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքի պոզիտիվ կարգավորումների ընդհանուր առանձնահատկություններին Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Ավստրիայում: Անգլո-սաքսոնական իրավական համակարգի պետություններից շեշտադրում է կատարվել անգլիական և ամերիկյան իրավունքի վրա: Ընդհանրական վերլուծության է ենթարկվել նաև հիմնահարցին առնչվող մուսուլմանական իրավունքը:

1. Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման և վերջինիս արգելքի վերաբերյալ հիմնահարցը ռոմանագերմանական իրավական համակարգում:

1.1. Ընդհանուր դրույթներ: Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքն օրենսդրական դաշտ բերելու փորձերը ժամանակագրական իմաստով կապվում է 16-րդ դարի հետ: Որպես օրինակ է բերվում Ֆրանցիսկոս 1-ին թագավորի 1539 թվականի Օրդոնանսը: Օրդոնանսի վերաբերելի նորմերի համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանք ուղղված են եղել հնարավոր չարաշահումների կանխմանը՝ ունենալով նախականիչ գործառույթ: Փաստաթուղթը հստակ տարբերակում էր իրավախախտումներ

որը, քաղաքացիական դեղիկտները, չարաշահումները¹:

Իրավաբանական գրականության մեջ հիմնահարցի բացահայտման նպատակով որպես պատմական փաստաթղթեր և (կամ) դրանցում ամրագրված առանձին նորմերի օրինակներ բերում են նաև այնպիսիները, որոնք թեև կապված են չարաշահման ընդհանուր հասկացության հետ, սակայն որևէ աղերս չունեն սուբյեկտիվ իրավունքի նպատակին հակառակ իրականացման ինստիտուտի հետ: Մասնավորապես, ընդգծվում է, որ ֆրանսիական հեղափոխության ընթացքում «Սպեկուլիացիաների դեմ» Դեկրետում նշվում էր, որ պաշտոնատար անձինք, որոնք ունեին պարտականություն հսկողություն իրականացնելու առևտրի նկատմամբ, և եթե իրենց պաշտոնական լիազորություններն օգտագործելով իրականացնում էին հովանավորչություն այդ ոլորտում, ենթակա էին մահապատժի²: Կարծում ենք, որ նման գործիքակազմը որևէ կապ չունի սուբյեկտիվ իրավունքի չարաշահման կառուցակարգի հետ: Նշված իրավիճակում մենք գործ ունենք պարտականության չկատարման (դեկրետով տրված լիազորության չարաշահում) դեպքի հետ:

1.2. Գերմանիա: Արևմտյան եվրոպայում իրավունքի չարաշահման արգելքի վերաբերյալ օրենսդրական ամրագրման գաղափարը թվագրվում է 1794 թվականին և կապվում է պրուսական Կանոնակարգի հետ³: Վ. Ա. Վոլկովը՝ «Քաղաքացիական իրավունքների չարաշահումը: Տեսության և պրակտիկայի հարցեր» աշխատության շրջանակներում նշում է, որ կանոնակարգի 28-րդ պարագրաֆով հստակ կարգավորվեց սեփականատերերի համար շիկանայի արգելքը⁴:

Նկատենք, որ պրուսական Կանոնակարգը չսահմանափակվեց շիկանայի այդ ժամանակների համար եզակի կարգավորումներով, այլ առարկա-

¹ *Хрестоматия памятников феодального государства и права стран Европы. Под ред. акад. В.М.Корецкого. М. Гос. изд. юр. лит. 1961. (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/HFd7Y>, 24.07.2018).*

² **Малиновский А. А.** Злоупотребление субъективным правом (теоретико-правовое исследование). М.: Изд. Юрлитинформ, 2007. С. 28.

³ **Кодирзода Т. К.** Проблемы злоупотребления субъективными гражданскими правами. Дисс ... канд. юрид. наук, Душамбе 2016. С. 78.

⁴ **Волков В. А.** Злоупотребление гражданскими правами. Проблемы теории и практики / М.: Изд Волтерс Клубер, 2009. С. 24.

յական փորձեր կատարվեցին իրավունքի չարաշահման հասկացության սահմանման ուղղությամբ: Փաստաթղթի նախաբանում նշվում էր՝

Նա, ով օգտվում իր առավելություններից պետությանը կամ քաղաքացիներին վնաս հասցնելով, զրկվում է այդ առավելություններից⁵:

Իրավաբանական գրականության մեջ հիշատակվում են հիմնահարցին վերաբերող կարգավորումներ նաև հողօգտագործման ոլորտում: Սահմանվում էր, որ հողամասերը պետք է մշակվեն այն հաշվարկով, որ այն ուղղված լինի ընդհանուր կարիքների բավարարմանը: Հատկանշական է, որ որպես այդ պարտականության չկատարման հետևանք՝ նախատեսված էր հողի վաճառքի պարտավորեցում այլ անձի⁶, ով փաստացի կկատարեր այդ պարտականությունը: Նշվում է, որ նման կարգավորման հիմքում ընկած էր այն մոտեցումը, որ հողօգտագործումը կարևորվում է ոչ միայն սեփականատիրոջ շահերի տեսանկյունից, այլ գերմանական պետության և հասարակության համար ընդհանրապես:

Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքի կանոնակարգման տեսանկյունից կարևորվում է նաև Համագերմանական քաղաքացիական կանոնակարգի դերակատարությունը (1896թ.)⁷:

Փաստաթղթում հիմնահարցի օրենսդրական ամրագրման գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել 2 փուլի: Առաջին փուլը կապված էր բացառապես սեփականության իրավունքի չարաշահման արգելիքի հետ, իսկ երկրորդ փուլում նշված արգելքը, օրենսդրական համապատասխան կարգավորումների արդյունքում, հնարավոր եղավ տարածել քաղաքացիական բոլոր իրավունքների վրա: Մասնավորապես՝ «Իրավունքների իրացում, ինքնապաշտպանություն, ինքնաօգնություն» վերտառությամբ 6-րդ բաժնի 226-րդ կետը սահմանում էր, որ չի թույլատրվում իրավունքների այնպիսի իրականացումը, որի նպատակն ուրիշին վնաս պատճառելն է⁸: Հոդվածի փաստակազմի հատկանիշներից երևում է, որ խոսքն *իրավունքի*

⁵ Доманжо В. Ответственность за вред, причиненный путем злоупотребления правом // Уч. Зап. Казанского Императорского ун-та. Кн. V. Казань, 1913. С. 5.

⁶ Покровский И. А. Основные проблемы гражданского права. М., 1998. С. 111., Крүсс В. И. Указ. соч. С. 17.

⁷ Покровский И. А. Указ. соч. С. 28.

⁸ Гражданское уложение Германской империи. СПб., 1898. С. 48-49. (Հասանելի աղբյուր՝ <https://clck.ru/HK5QZ>, 27.07.2019 թ.)

իրականացման մասին է (առանց կոնկրետացնելու սուբյեկտիվ իրավունքի տեսակը), որով բացառվում է պարտականությունը չկատարելու թեզը, ինչը հիմնահարցն ակնհայտորեն դուրս է բերում իրավախախտման դաշտից, և այդ իրականացումը պետք է ուղղված լինի այլ անձին վնաս պատճառելուն⁹։ Ուշագրավ է Վ. Դոմանժոյի այն դիրքորոշումը, որ, իրոք, չի կարելի չընդունել, որ իրավունքի իրականացումը, որը բացառապես ուղղված է այլ անձին վնաս պատճառելուն՝ առանց որևէ օգուտի, իրավունքի կրողի համար ոչ այլ ինչ է, քան իրավունքի էության խեղում, շեղում այդ իրավունքի սոցիալական (տնտեսական) և պատմական առաքելությունից (...)»¹⁰։

Նկատենք, որ Համագերմանական քաղաքացիական կանոնակարգն ունեցել է վճռորոշ նշանակություն ոչ միայն Գերմանիայի, այլև հարևան Ավստրիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի քաղաքացիական օրենսդրության կատարելագործման վրա։

1.3. Ավստրիա։ Ավստրիայի Ընդհանուր քաղաքացիական կարգի (1812)¹¹ մեջ իրավունքի չարաշահման վերաբերյալ կարգավորումների հստակեցման գլխավոր առիթը մասնավոր իրավունքի հայտնի մասնագետ Ժոզեֆ Ունգերի հեղինակած հոդվածն էր։ Տեսաբանն առաջարկում էր փոփոխությունների ենթարկել կարգի առանձին նորմեր, որոնցում ինքնուրույն տեղ էին զբաղեցնում իրավունքի չարաշահման արգելքի վերաբերյալ կարգավորումները։ Հատկանշական է, որ կառավարության կողմից Ժ. Ունգերը լիազորվեց համակարգել բարեփոխումներն իրականացնող հանձնախմբի աշխատանքները։ Նախագծային աշխատանքների դանդաղելու պատճառով

⁹ Հատկաշահական է, որ նորմի վերաբերյալ պաշտոնական մեկնաբանություններից մեկում արձանագրվում է, որ նորմի փաստակազմը բացակայում է, եթե վարքագծի դրսևորման համար վճռորոշ են եղել իրավունքի կրողի օրինական հետքաբերությունները (շահը)։ Այս մասին մանրամասն տե՛ս Волков А. В. Прицып недопустимости злоупотребления гражданскими правами в законодательстве и судебной практике (Анализ больше 250 судебных дел о злоупотреблении правом) / М.: Изд. Волтерс Клувер, 2010, С. 20.

¹⁰ Гражданское и торговое право. Сборник статей (Классика российской цивилистики), Статут. Доманжо В. Вопрос об ответственности за вред, причиненный при осуществлении права, в проекте нашего Гражданского уложения. С. 435.

¹¹ Այս մասին մանրամասն տե՛ս Volčič, E., Tomaž Dolinar. Slovenski pravnik, Year 21, No. 1/3, 1905, pp. 35 – 74, here p. 46 (the article comprises parts of Dolinar's original autobiography); about Dolinar also Polec, J., Dolinar Tomaž, in: Slovenski biografski leksikon, vol. 1, Ljubljana, 1925–1932, p. 143.

կառավարությունը ձեռնամուխ եղավ իր սեփական նախագծի ներկայացմանը, որն էականորեն կրկնում էր հիմնահարցի վերաբերյալ Համագերմանական քաղաքացիական կարգի լուծումները: Այլ կերպ՝ կարգավորման տրամաբանությունը հանգում էր նրան, որ իրավունքի չարաշահման դեպքերում նախատեսվում էր վնասի հատուցում, եթե գործողություններն արվել էին ուրիշին վնաս պատճառելու չար դիտավորությամբ, որոնք իրենց էությամբ հակասում էին բարի վարքի չափանիշներին¹²: Նկատենք, որ ավստրիական գիտական հանրույթի կողմից միանշանակ չընդունվեցին փոփոխությունները: Ընդգծվում է, որ հիմնական մտահոգությունը գերմանական կարգի հիմնահարցի առնչությամբ երկու տարբեր հոդվածների (226 և 826) մեխանիկական միավորումն էր¹³: Վ. Դոմանժոն ընդգծում է, որ ավստրիական կարգում շիկանայի մեջ մեղավորի համար սահմանված էր վնասի հատուցման պարտականություն, իսկ գերմանական մոդելը նախատեսում էր առավել ընդհանուր արգելք: Հեղինակավոր տեսաբանը նշում է, որ նման պայմաններում անհետանում է ընդհանուր արգելքի պրեվենտիվ գործառույթը:

1.4.Ֆրանսիա: Իրավաբանական գրականության մեջ առաջ է քաշվում այն թեզը, որ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման և վերջինիս արգելքի մասին կարգավորումներն իրենց վերջնական ձևակերպումը ստացան հենց ֆրանսիական իրավական համակարգում: Այդ հարցում ծանրակշիռ է Մարդու և քաղաքացու ֆրանսիական Հռչակագրի (1789թ.) դերակատարությունը: Հռչակագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ ազատության էությունն արտահայտվում է այն ամենն անելու մեջ, ինչը չի վնասում այլ անձի (...): Հռչակագիրն առաջինն էր, որում ամրագրվեց տարբեր տեսակի չարաշահումներից խուսափելու իրավափիլիսոփայական թեզը: Մասնավորապես՝ փաստաթղթի 11-րդ հոդվածի համաձայն՝ միտքն ու կարծիքն ազատորեն արտահայտելը մարդու ամենաթանկ իրավունքներից է, այդ իսկ պատճառով յուրաքանչյուրը կարող է ազատորեն արտահայտվել, գրել, տպագրել՝ օրենքով նախատեսված դեպքերում պատասխան տալով միայն այդ ազատությունը չարաշահելու համար (...):

¹² Доманжо В. Указ. соч. С. 439-440.

¹³ Ehrenzweig, Neue Freie Presse 22 Dez, 1907, № 15567, S. 4-5.

Ֆրանսիական դեկլարացիան ամրագրում էր չարաշահման ընդհանուր էությունը: Կարծում ենք՝ հարցը պետք է կապել ոչ թե Դեկլարացիայում տերմինի բացակայության, այլ սահմանադրական մակարդակում ընդհանուր արգելքի սահմանումից հետո չարաշահման արգելքի վերաբերյալ ոլորտային օրենսդրությամբ հատուկ կարգավորումների բացակայության հետ:

Ճիշտ է, ոլորտային օրենսդրության մեջ չարաշահման արգելքը որպես այդպիսին բացակայում էր, սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Ժան-Լուի Բերժելը, իրավունքների բացարձակ լինելու թեզի դեմ ստեղծված իրավական չարաշահման տեսությունը դատական պրակտիկայում ակտիվ օգտագործվում էր որպես իրավունքների՝ իրենց գործառույթին համապատասխան իրացման ապահովման նկատմամբ վերահսկման գործիք¹⁴: Այս ամենը, անշուշտ, նշանակում է, որ չարաշահման դեմ արգելքի համակարգը (առնվազն դատական համակարգում) սկզբունքորեն աշխատում էր¹⁵:

Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանի 1915 թվականին արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ սեփականատիրոջ համար սահմանվում էր պատասխանատվություն այն դեպքերում, երբ վերջինս օգտագործում էր իր սուբյեկտիվ իրավունքն այլոց վնաս պատճառելու համար՝ չակնկալելով որևէ օգուտ¹⁶: Մ. Մարկովիչի դոկտորական ատենախոսության մեջ որպես դատական պրակտիկայից օրինակ, երբ առաջին անգամ սահմանափակվեց սեփականության բացարձակ համարվող իրավունքը, բերվում է 1855 թվականին արձանագրված այսպես կոչված «ծխատարի գործը»: Մասնավորապես, Կոլմար քաղաքում սեփականատերը հարևանին վնասելու նպատակով իր տան տանիքում կառուցել էր մեծ վառարան՝ առանց ծխի արտանետման համակարգի: Դատարանը պարտավորեցրեց քանդել «կեղծ վառարանը»: Չնայած այն հանգամանքին, որ դատարանն ընդգծեց յուրքանչյուրի անձնական իրավունքի բացարձակ լինելը, և որ անձն իրավունք

¹⁴ Бержель Ж. Л. Общая теория права / Под. общ. ред. В.И. Даниленко / Пер. с фр. М.: Изд. NOTA BENE 2000. С. 442-443.

¹⁵ Ընգծվում է, որ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դոկտրինալ արգելքը ֆրանսիական դատարանների կողմից օգտագործվում էին ոչ միայն գույքային, այլև ընտանեկան, անձնական հարցերի հարաբերությունների տիրույթում, նաև հայցի իրավունքի չարաշահման դեպքերում: Այս մասին մանրամասն տե՛ս Годэмэ, Е. Общая теория обязательств / М., 1948. С. 328-329.

¹⁶ Atias Christian. Le droit civil.-Paris, 1989. P. 18-19.

ունի այն օգտագործել իր հայեցողությամբ, սակայն կարևորեց այն հանգամանքը, որ նման ձևով սուբյեկտիվ իրավունքի իրացումը կարող էր արդարացվել բացառապես լուրջ և արդարացված շահի տեսանկյունից: Իսկ եթե բարոյական սկզբունքները խախտվում են, ապա դատարանը պարտավոր է այդ գործողությունները գնահատել որպես չարությամբ ոգեշնչված, կատարված այնպիսի արարք, որի արդյունքում վնասվում է այլ անձի շահը՝ չունենալով որևէ անձնական օգուտ¹⁷:

Ֆրանսիական իրավունքում հիմնախնդրի կարևորության մասին են խոսում նաև այդ ժամանակների դոկտորինալ վերլուծությունները: Դասագրքային է դարձել ֆրանսիացի տեսաբան Ժան Կարբոնեի՝ մեր գնահատմամբ հիմնահարցի վերաբերյալ հաջողված հետևյալ բնորոշումը՝

Եթե չենք խախտում մեր իրավունքների նյութական սահմանները, և անձն այն օգտագործում է այլ անձանց վնասելու մտադրությամբ, եթե պահպանելով օրենքի տառը՝ վնասում ենք ոգին, ապա նման դեպքերում ասվում է, որ չարաշահվել է սուբյեկտիվ իրավունքը, բայց ոչ երբեք՝ իրականացվել է բարի նպատակներով, և նման չարաշահումն իրավունքը (օբյեկտիվ իրավունք) չի կարող արդարացնել¹⁸:

Հիշատակման արժանի է նաև Նապոլեոնի քաղաքացիական օրենսգիրքը (1804 թ.): Այն տարբերվում էր գերմանական և վերջինիս բազայի վրա ձևավորված շվեյցարական քաղաքացիական օրենսդրությունից: Գլխավոր տարբերությունը նրանում էր, որ փաստաթղթում որպես այդպիսին չէր հիշատակվում իրավունքի չարաշահման ինստիտուտը: Ընդգծվում է, որ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դեպքերի որակման պարագայում դատարանները հղում էի կատարում Օրենսգրքի 1382-րդ հոդվածի վրա: Հատկանշական է, որ նշված հոդվածը գտնվում է 4-րդ տիտուլի (Պայմանավորվածությունների արդյունքում ծագած պարտավորությունները) 2-րդ գլխում, որը վերտառված է «Դեյիկտների և քվազիդեյիկտների մասին»: Նորմի համաձայն՝ մարդու ցանկացած գործունեություն, որը վնաս է պատճառում այլոց, ենթական է հատուցման վնասը հասցնողի կողմից: Ավելին, հաջորդ՝

¹⁷ Marcovitch M. La theorie de l'abus des droits en droit compare. Thèse soutenue devant la faculté de droit de l'université de Lyon pour le doctorat en droit, Lyon, 1936. P. 57-64. (Հասանելի աղբյուր՝ <https://clck.ru/Hirm8>, 21. 08.2019)

¹⁸ Сазанова И. В. Злоупотребление субъективным гражданским правом: монография / Южно-Сахалинск: СахГУ, 2009.

1383-րդ հոդվածը, որոշակիացնում էր նաև այն, որ անձը պարտավոր է հատուցել ոչ միայն դիտավորությամբ, այլև՝ անզգուշությամբ և անփութությամբ հասցված վնասը¹⁹:

1.5. Շվեյցարիա: Ռոմանագերմանական իրավական համակարգի երկրներում իր յուրահատկությամբ առանձնանում է 1907 թվականին ընդունված Շվեյցարական քաղաքացիական կարգը: Իրավաբանական գրականության մեջ ընդգծվում է, որ նշված փաստաթուղթը, նաև վերջինիս բաղկացուցիչ մաս հանդիսացող 1911 թվականին ընդունված «Պարտավորությունների մասին օրենքը» (Կարգի թիվ 5-րդ գիրքը), Նապոլեոնի օրենսգրքից և Ավստրիական քաղաքացիական կարգից մեկդարյա ընդմիջումից հետո ընդունված քաղաքացիական օրենսդրության ոլորտի եզակի հաջողված փաստաթղթերից էր²⁰: Հատկանշական է, որ, ի տարբերություն գերմանական, ավստրիական, նաև ֆրանսիական քաղաքացիական օրենսդրության, որոնցում սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դեմ պայքարի գործիքը, ըստ էության, սկզբունքի մակարդակով հռչակված արգելքն էր՝ առանց կոնկրետ իրավական մեխանիզմների, շվեյցարական մասնավոր իրավունքի ոլորտի կողիֆիկացիայի արդյունքը չսահմանափակվեց բարեխղճության վերաբերյալ սկզբունքի մեխանիկական ամրագրումով: Շվեյցարական փաստաթուղթը հիմնված էր այն թեզի վրա, որ անհրաժեշտ էր սոցիալական այդ երևույթի դեմ պայքարն իրականացնել ոչ միայն դեկլարատիվ հռչակումներով, այլև կոնկրետ պոզիտիվ լուծումներով, որոնք պետք է լինեին մեծ չափերի հասնող կամայական անբարեխղճության դեմ պայքարի գործիքները: Իրավաբանական այս տրամաբանությունը հաշվի առնելով՝ բարեխղճության և բարի վարքի չափանիշների հիման վրա կառուցվեցին առանձին նորմեր (հոդվածներ 7, 8, 417...), որոնք հիմնականում ուղղված էին առևտրային հարաբերություններում բարեխղճ վարքի դրսևորման անհրաժեշտությանը: Հատկանշական է, որ Շվեյցարական քաղաքացիա-

¹⁹ Гражданский кодекс Франции (Кодекс Наполеона). Code civil des Français (Code Napoléon) / пер. с фр. М.: Изд. Инфотропик Медиа, 2012. С. 377.

²⁰ **Раевич С.** Швейцарское Гражданское уложение 1907 г. и Швейцарский обязательственный закон 1911 г. в ряду других гражданских кодификаций буржуазно-капиталистического мира. Гражданское право современного империализма/ сборник статей / Московский институт советского права, 1932 г. С. 41. (Հասանելի աղբյուր՝ <https://naukaprava.ru/catalog/435/708/716/22444?view=1> 02.08.2019թ.).

կան օրենսգիրքն առաջին անգամ անդրադարձ կատարեց նաև բարեխղճության կանխավարկածին՝ 3-րդ հոդվածում նշելով՝

Բարեխղճությունը ենթադրվում է բոլոր այն դեպքերում, երբ օրենքը վերջինիս հետ կապում է իրավունքի առաջացումը կամ գործողությունը: Ոչ ոք չի կարող հղում անել բարեխղճության սկզբունքի վրա, եթե ձեռք չեն առնվել հանգամանքներով պայմանավորված անհրաժեշտ ջանքեր²¹:

Իրավաբանական գրականության մեջ հիմնահարցի վերաբերյալ գերմանական և շվեյցարական քաղաքացիական կարգերը համեմատելու փորձեր են կատարվել: Որպես տարբերություն՝ նշվում է այն, որ գերմանական Կարգի 226-րդ կետն արգելում էր միայն շիկանան՝ առանց որևէ իրավական հետևանքի, իսկ շվեյցարական Կարգի 2-րդ հոդվածը գրկում էր պաշտպանությունից ոչ միայն շիկանա, նաև այլ ակնհայտ չարաշահումներ թույլ տվող անձանց²²: Կարծում ենք՝ հաշվի առնելով գերմանական կարգի 226-րդ կետի գործառույթը և այն համադրելով նույն կարգի 826-րդ կետի հետ՝ նպատակահարմար է համեմատությունը կատարել չարաշահման դեմ առավել ընդհանուր արգելք սահմանող գերմանական Կարգի 826-րդ հոդվածի և շվեյցարական Կարգի 2-րդ հոդվածների միջև: Կարգավորումների գլխավոր մեխն այն էր, որ 2 դեպքում էլ առկա է պահանջ բարի վարքի և (կամ) բարեխղճորեն գործելու վերաբերյալ: Երկու դեպքում էլ չարաշահման արգելքի պահանջն ընդհանուր է և վերաբերում է իրավունքների իրականացմանը՝ չնայած այն հանգամանքին, որ գերմանական Կարգում որպես այդպիսին չարաշահման ուղղակի արգելքը բացակայում էր. այն բխում է նորմի էությունից: Շվեյցարական Կարգի դեպքում առկա էր չարաշահման ուղղակի արգելք: Բացի այս տարբերությունից, մեր կարծիքով, ամենաեական տարբերությունը վերաբերում է իրավական հետևանքին: Մասնավորապես, գերմանական կարգի պարագայում նախատեսվում է վնասի հատուցման ձևով իրավական հետևանքի առաջացում՝ 826-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր փաստակազմի առկայության դեպքում, որն ունի առավելապես իրավավերականգնիչ բնույթ, քանզի այն առաջին հերթին ուղղված է ըստ էության չարաշահվողի շահերի բավարարմանը, իսկ շվեյցարական կարգի

²¹ Швейцарское гражданское уложение. Журналъ министерства юстиціи. № 4, Петербургъ, сенатская типографія, 1908. С. 173-174.

²² Доманжо, В. Указ. соч. С. 336

դեպքում իրավական հետևանք է իրավունքների պաշտպանության մեջ մերժելը, որն ուղղված է չարաշահողին:

Նկատենք, որ, ի տարբերություն վերը նշված քաղաքացիական կարգերի, շվեյցարական քաղաքացիական Կարգը բարեխիղճ գործելու պայմանը կարևորում է ոչ միայն իրավունքների իրականացման, այլև պարտականությունների կատարման պարագայում, ինչը, մեր կարծիքով, որևէ կերպ վերաբերելի չէ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքին: Նպատակ չունենալով վիճարկելու նման պայման նախատեսելու նպատակահարմարության հարցը²³՝ այն, սակայն, հիմք է տալիս ենթադրելու, որ Շվեյցարական կարգի 2-րդ հոդվածն ավելի լայն բովանդակություն ունի, քան իրավաբանական գրականության մեջ նրան տրված՝ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման ընդհանուր արգելքի սկզբունքն է: Հատկանշական է, որ եթե բարեխիղճությունը պայման է ն՝ իրավունքների իրականացման, և՛ պարտականությունների կատարման համար, ապա իրավունքի պաշտպանության մեջ մերժելու ձևով իրավական հետևանքը նախատեսված է միայն իրավունքի անբարեխիղճ իրացման համար և ոչ պարտականությունների անբարեխիղճ կատարման համար (հոդված 2, կետ 2), որի պարագայում կարող են առաջանալ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ հետևանքներ:

2. Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման և վերջինիս արգելքի վերաբերյալ հիմնահարցը անգլո-սաքսոնական իրավական համակարգում:

2.1. Անգլիա: Զուտ հասկացությամբ ապարատի տեսանկյունից անգլիական իրավունքում հիմնահարցն ավանդաբար գնահատվել է ոչ թե «abuse of right», այլ՝ «nuisance» տերմինով, որը թարգմանաբար նշանակում է անհարմարություն, տհաճություն: Ենթադրվում է, որ արարքը նման գնահատական կարող է ստանալ, եթե վերջինիս արդյունքում անձանց պատճառվում է

²³ Իրավաբանական գրականության մեջ «բարեխիղճություն», «բարի վարք» հասկացությունները պետք չէ կապել միայն իրավունքների իրացման հետ, որի բացակայությունը հնարավորություն կընձեռի արարքում տեսնել սուբյեկտիվ իրավունքի չարաշահման տարրեր: Այն ունի ավելի լայն բովանդակություն, քան վերը նշվածն է և ընկալվում է որպես մարդու դիրքորոշումն արտահայտող արժեքային միավոր, երբ իրավահարաբերության կողմը հարգում է իր կոնտրագենտին, տեսնում է նրա մեջ իրեն հավասարին: Այն ենթադրում է նաև խելամտություն հարաբերություններում, ողջամիտ զգուշավորություն, հարգանք օրենքի պահանջների նկատմամբ, և որ քննարկվող կոնտեքստում կարևորվում է, նաև պարտականությունների պատշաճ կատարում: Այս մասին մանրամասն տե՛ս **Скловский К. И.** Собственность в гражданском праве. 4-е изд. М., 2008. С. 777, 782.

անհարամարություն, տհաճություն կամ վնասում է նրանց շահերը, անբարենպաստ պայմաններ է ստեղծում վերջիններիս կեցության համար: Ընդգծվում է, որ այն հիմնականում տարածված էր հարևանային իրավունքում²⁴:

Նախադեպային իրավունքի հիման վրա է. Ջենկսի կողմից խմբագրված անգլիական քաղաքացիական իրավունքի պահոցում տրված է nuisance-ի բնորոշումը (գլուխ 3, § 857): Առաջարկվում էր քննարկվող տերմինի տակ հասկանալ այն գործողությունները կամ բացթողումները, որոնց արդյունքում անձին անօրինական կերպով պատճառվում են անշարժ գույքի օգտագործման անհարամարություններ, բարդություններ, կամ նման ներգործությունն ազդում է անձի առողջության վրա, խանգարում վերջինիս հարմարավետությանը²⁵:

Իրավաբանական գրականության մեջ, վերլուծելով «nuisance» հասկացության բովանդակությունը, նշվում է, որ այն սուբյեկտիվ իրավունքի չարաշահումն է (abuse of rights)՝ այլ տերմինաբանությամբ²⁶: Առանձին հեղինակներ այն սկզբունքորեն կապում են շիկանայի ինստիտուտի հետ²⁷:

Nuisance-ի կարգավորումները նախատեսված են վերը նշված նախադեպային պահոցի՝ «*Իրավախախտումներից առաջացող պարտավորություններ*» վերտառությամբ IV մասի՝ «*Անշարժ գույքի հետ կապված իրավախախտումներ*» խորագրով 2-րդ բաժնի՝ nuisance վերնագրով 3-րդ գլխում: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ նման անհարամարությունները պատճառվում են *անօրինական կերպով*, ինչը ենթադրում է, որ հարցն սկզբունքորեն դուրս է բերվում իրավունքի իրականացման տիրույթից:

Նկատենք, որ նախադեպային իրավունքը տարանջատում էր nuisance-ի 2 տեսակ՝ private nuisance-ը, երբ վնասը հասցվում էր կոնկրետ անձին և public nuisance-ը, երբ վնասը հասցվում է անորոշ թվով անձանց (օրինակ՝ համայնքի բնակչությանը): Իրավաբանական գրականության մեջ ընդգծվում

²⁴ Волков В. А. Указ. соч. С. 43.

²⁵ Свод английского гражданского права. [Том I]: Общая часть. Обязательственное право составленный под редакцией Эдуарда Дженкса проф. лондонского университета. Перевод А. А. Лунц, юридическое издательство НКЮ СССР М. 1941, С. 242 (Հասանելի աղբյուր՝ <https://naukaprava.ru/catalog/435/708/31827?view=1>, 23.08.2019).

²⁶ Сазанова И. В. Злоупотребление субъективным гражданским правом: монография / Южно-Сахалинск: СахГУ, 2009. С. 20, Волков В. А. Указ. соч. С. 43.

²⁷ Яценко Т. С. Категория шиканы в гражданском праве: история и современность / М., 2003. С. 64.

է, որ public nuisance-ը քրեորեն պատժելի արարք է, ունի հակաիրավական բովանդակություն, քանզի այն անհարմարություններ է ստեղծում առհասարակ *հասարակության համար և անորոշ թվով անձանց խանգարում է իրացնել իրենց իրավունքները* (common rights): Public nuisance-ի կանխարգելման գործիք է քրեական գործի հարուցումը կամ գլխավոր ատորենայի՝ անորոշ թվով անձանց շահերի պաշտպանությանն ուղղված հայցը: Ինչ վերաբերում է private nuisance-ին, ապա Յու. Գ. Մատվենը նշում է, որ հակաիրավականությունը պարտադիր հատկանիշ չէ, քանզի nuisance-ի նման տեսակը *կարող է բխել* (և որպես կանոն այդպես է) անձի սեփականության իրավունքի իրականացումից և անհարմարություններ է առաջացնում կոնկրետ անձին:

Հղում կատարելով Լորդերի պալատի՝ Սեդլի-Դենֆիլդն ընդդեմ Օ. Կալագանի գործի շրջանակներում կայացված որոշման վրա, որտեղ կարևորվում է իրավունքի իրականացման սահմանի հստակեցման հարցը, Յու. Գ. Մատվենն ընդգծում է, որ հնարավոր չէ տալ այդ նույր սահմանը՝ ընդունելով, որ այս դեպքում ևս պետք է շեշտադրում կատարել (ըստ հեղինակի) գնահատման տեսանկյունից մշուշոտ համարվող իրավունքների խելամիտ իրացման սկզբունքի վրա²⁸:

Իրավաբանական գրականության մեջ նշվում են առանձին օրինակներ, որոնք գնահատվել են անբարեխղճության տիրույթում: Այսպես, Բրեդֆորդի քաղաքապետն ընդդեմ Պիկլեսի գործի շրջանակներում (1895թ), որի առարկան վերաբերում էր համայնքի ջրամատակարարման համար բարդություններ ստեղծելուն, կայացված որոշման համաձայն՝ հողի սեփականատիրոջ կողմից ջրհորները հեղեղելը նպատակ ուներ նվազեցնել համայնքին մատակարարվող ջրի ծավալները: Լորդ Մակնախտենի դիտարկմամբ Պիկլեսի (հողի սեփականատերը) իրական նպատակը եղել է իր՝ իրավիճակի տերը լինելու հանգամանքը ցույց տալը (*այլ ոչ թե, օրինակ, սեփական տարածքում ինժեներական աշխատանքներ կատարելը* (ընդգծումը մերն է), ինչի արդյունքում նման վարքագիծը կստիպեր ջրամատակարարող մարմնին իր համար ընդունելի պայմաններով և գնով գնել հողատարածքը: Ճիշտ է, Լորդ Մակնախտենն իր դիտարկումներում անդրադարձել է նաև գործողության

²⁸G. G. Robb, J. Brookes. An Outline of the Law of Contract and Tort, L.p. 147, «Law Quarterly Review», Vol. 77, July, 1961.

դրդապատճառին՝ նշելով որ նման վարքագիծը կոպիտ, էսասիրական և դատապարտելի է բարոյականության տեսանկյունից, սակայն կորպորացիայի հայցի իրական պատասխանն այն է, որ դրդապատճառը ոչ էական է: Ընդգծվեց, որ պետք է քննարկել գործողությունը (act) և ոչ թե գործողության դրդապատճառը: Լորդ Հալսբերին, համաձայնելով նման դիտարկմանը, ընդգծեց՝ եթե արարքը լիներ թույլատրելի, որքան էլ դրդապատճառը լիներ վատը, պատասխանողը կունենար դա անելու իրավունք, իսկ եթե ակտը լիներ անօրինական, որքան էլ լավը լիներ դրդապատճառը, անձն իրավունք չէր ունենալու անել դա ²⁹: Ինչպես տեսնում ենք, բերված օրինակում մոտեցումներն այնպիսին են, որ կարևորվում է արարքի օրինական կամ ոչ օրինական լինելը, ինչն արդեն շեղվում է սուբյեկտիվ իրավունքի՝ նպատակին հակառակ իրացման մեր ընկալած տեսությունից, քանզի եթե խոսում ենք իրավունքի իրականացման մասին, ապա այն միշտ օրինականության տիրույթում է, դրանից շեղված վարքագիծը խախտում է, իսկ նպատակին հակառակ իրականացումը՝ չարաշահում:

Հատկանշական է, որ ավելի ուշ կայացած գործի շրջանակներում (Քրիսթին ընդդեմ Դեյվի՝ 1951թ.) ձևավորվեց անձին՝ բացառապես այլ անձանց վնաս պատճառելու նպատակով գործելու համար պատասխանատվության ենթարկելու նախադեպային պրակտիկա: Հայցի առարկան այն էր, որ հայցվորը, որը երաժշտության դասեր էր տալիս իր տանը, մշտապես իրականացնում էր փորձեր, ինչն անհարամարություններ էր ստեղծում իր հարևան պատասխանողի համար: Պատասխանողը, որպեսզի «պատժի» հայցվորին, սկսեց ուժեղ ձայներ արձակել իր տանը: Դատարանը նման գործողությունները գնահատեց որպես nuisance՝ ընդգծելով, որ եթե նման գործողություններն իրականացվեին առանց վերը նշված դիտավորության, ապա դատարանի արձագանքը կարող էր այլ լինել³⁰: Իսկ մեկ այլ գործի շրջանակներում (Սեդլի-Դենֆիլդն ընդդեմ Օ Կալազանի) ընդգծվեց, որ nuisance-ի գնահատման դեպքում չպետք է կարևորել այն հանգամանքը, թե արարքը կատարվել է դիտավորությամբ, թե՛ անզգուշությամբ: Համանման կարծիք է արտահայտվել նաև Ռեյֆերն ընդդեմ Լոնդոնյան երկաթուղիների գործի շրջանակում: Ընդգծվում է, որ, ամեն դեպքում, անզգուշությամբ

²⁹ Joseph Perillo, *Abuse of Rights: A Pervasive Legal Concept*, 27 PAC. L. J. 37 (1995) P. 40-41 (Հասանելի աղբյուր՝ https://ir.lawnet.fordham.edu/faculty_scholarship/784, 21.08. 2019).

³⁰ **Marbees Ю.Г.** Указ. соч. С. 153.

nuisance պատճառելը դատարանները հնարավոր են համարում փոշու, ծխի (անգոլշությանը) արտանետման դեպքերում, որի արդյունքում անձանց պատճառվում են անհարմարություններ³¹:

Համակարգային վերլուծությունները թույլ են տալիս արձանագրելու, որ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հիմնահարցը՝ որպես սուբյեկտիվ իրավունքի նպատակին հակառակ իրականացում կամ դրա արգելքի սկզբունքն անգլո-սաքսոնական իրավական համակարգում որպես այդպիսին ընդգծված չի եղել: Դրա պատճառը ոչ թե ինստիտուտից անտեղյակությունն էր, այլ հարցին սկզբունքային այլ մոտեցումը, ինչը կապված է նշված իրավական համակարգում հիմնահարցը դելիկտային իրավունքի³² տիրույթում գնահատելու հետ³³:

2. 2. ԱՄՆ: ԱՄՆ-ում ևս սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հիմնախնդիրն ավանդաբար դիտարկվել է «անհարմարություն» (nuisance) հասկացության միջոցով³⁴: Անհրաժեշտ է նկատել, որ ամերիկյան համակարգում հիմնախնդրին առնչվող դոկտրինալ վերլուծությունները կապվում են արևմտյան նահանգների, մասնավորապես՝ Կալիֆորնիայի քաղաքացիական օրենսդրության հետ: Կալիֆորնիայի քաղաքացիական կանոնակարգի 3479-րդից մինչև 3503 հոդվածները կարգավորում են nuisance-ի³⁵ և վերջինիս տեսակներին առնչվող հարաբերությունները³⁶:

³¹ Clerk and Lindsell, On Torts, L., 1954, P. 375.

³² Կալիֆորնիայի քրեական կանոնակարգի 370-րդ և 371-րդ հոդվածները (հանրության անվտանգության և ազգային առողջության պաշտպանության դեմ ուղղված հանցագործությունների գլխում) բովանդակում են public nuisance -ի բնորոշումը, ինչը, ըստ էության, համապատասխանում է Կալիֆորնիայի քաղ. կանոնակարգի 3479, 3480-րդ հոդվածների բովանդակությանը: Բսկ նշված քրեական կանոնակարգի 372-րդ հոդվածը սահմանում է՝ եթե օրենքով public nuisance-ի համար իրավաբանական պատասխանատվության այլ ձև սահմանված չէ, ապա անձը ենթարկվում է ոչ ավել քան 6 ամիս ժամկետով բանտային պատժի կամ տուգանքի՝ ոչ ավել 500 ԱՄՆ դոլլարի չափով, կամ երկուսը միասին վերցրած: Այս մասին մանրամասն տե՛ս Малыхов К.И. նշված աշխատություն, էջ 517.

³³ Michael Byers. Abuse of Rights: An Old Principle, A New Age. McGill law journal / revue de droit de mcgill, VOL 47. P. 395. (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/HisJn>, 21.08.2019).

³⁴ Joseph Perillo Նշված աշխ. P. 40.

³⁵ Կանոնակարգի 3479-րդ հոդվածը բնորոշում է nuisance-ը՝ համաձայն որի վերջինիս տակ պետք է հասկանալ այն ամենը, ինչը վտանգավոր է առողջության կամ անպարկեշտ ու անընդունելի է մարդկային զգացողությունների համար, ինչպես նաև ցանկացած անհարմարություն, որոնք կարող են առաջացնել բարդությունների սեփականության օգտա-

Հատկանշական է, որ nuisance-ը, ըստ էության, գնահատվում էր որպես *անօրինական վարքագիծ*, ինչն ընդգծված էր նաև անգլիական նախադեպային իրավունքի հիման վրա ձևավորված պահոցի նյութերում: Ի տարբերություն անգլիական իրավունքի, որտեղ հիմնահարցի վերաբերյալ լուծումներն առավելապես նախադեպային էին, Կալիֆոռնիայի քաղաքացիական կանոնակարգում առավել մանրամասն էին կարգավորված հիմնահարցի շուրջ ծավալվող հարաբերությունները: Այսպես, կանոնակարգի 3483-րդ հոդվածի համաձայն, անկախ այն հանգամանքից, թե nuisance ստեղծողը գույքի այդ պահին գոյություն ունեցող սեփականատերն է, թե նման իրավիճակ առաջացել է մինչև գույքը ձեռք բերելը, նոր և փաստացի nuisance-ի առաջացման մեղավոր չհանդիսացող սեփականատերը պարտավոր է վերացնել այսպես կոչված շարունակվող nuisance-ը: Հատկանշական է, որ nuisance-ի դադարեցումը (abatement of a nuisance) անձին չի ազատում հասցված վնասի փոխհատուցման պարտականությունից (հոդված 3484): Նշված երկու հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում ստացվում է, որ շարուն-

գործման ընթացքում, ստեղծել անհամարություններ համարավետ կյանքի համար կամ այն, ինչն անօրինական կերպով ստեղծում է բարդություններ գետերով, ջրային այլ հատվածներով, ինչպես նաև հանրային այգիներով, փողոցներով մարդկանց շարժի համար: Նման բնորոշումը դատարաններին ընձեռում է լայն հնարավորություն անձանց գործողությունները (անգործությունը) որպես nuisance որակելու հարցում: Առանձին հեղինակներ (Ֆիթս Ջերալդ), հիմք ընդունելով դատական պրակտիկան, փորձել են առանձնացնել nuisance-ի հետևյալ դրսևորումները՝ 1. գետի ջրի բաղադրության փոփոխությունը վնասակար նյութերի միջոցով, 2. ջրային պաշարների աղտոտումը, 3. այնպիսի ինժեներական աշխատանքները, որոնց արդյունքում վնասվում է հարևանի անշարժ գույքի հիմքը, 4. լույսի, օդի մուտքը սահմանափակող շինություններ կամ կառույցներ կառուցելը, 5. այլ անհարմարություններ պատճառելը, որոնք կապված են անտանելի հոտեր, ծուխը տարածելու, ձայներ առաջացնելու հետ և այլն: Ըստ Ֆ. Ջերալդի՝ nuisance եզրույթը վերաբերում է տարբեր իրավիճակներին, և, ըստ էության, դժվար է տալ մեկ միասնական բնորոշում այդ հասկացությանը: Ավելին, հեղինակն ընդգծում է, որ public nuisance-ը և private nuisance-ը առանձին դեպքերում փակում են միմյանց, այլ կերպ՝ կոնկրետ արարքը կարող է ունենալ և՛ հանրային, և՛ մասնավոր վնասարարություն: Մանրամասն տե՛ս W. Vesey Fitzgerald, Nuisance, в т. IX. Энци. Вудъ Рентона С. 228-235.

³⁶ *Мальшев К.И. Гражданские законы Калифорнии в сравнительном изложении с законами Нью-Йорка и других Восточных штатов и с общим правом Англии и Северной Америки. Том 3 /Кронид Мальшев, член Высочайше учрежденной Редакционной Комиссии для составления проекта гражданского уложения. СПб.: Изд. К.Л. Риккера, 1906. – [II], С. 515-519*

նակվող nuisance-ի պարագայում ևս անձն իր տիրապետման ընթացքում եթե վերացնում է անհարամարությունը, որը փաստացի չէր առաջացրել nuisance-ը, ևս կրելու է մինչև իր տիրապետումը nuisance-ի հասցված վնասի փոխհատուցման պարտականությունը: Նկատենք, որ հատուցում այդ պահին տիրապետողից, սակայն nuisance չառաջացնողից կարելի է պահանջել, եթե տվյալ անձն անբարեխղճորեն չի կատարում որևէ գործողություն նախկինում առաջացած nuisance-ը վերացնելու ուղղությամբ: Հատկանշական է, որ ամերիկյան մասնավոր իրավունքը ևս առանձնացնում էր քննարկվող հիմնախնդրի 2 տեսակ՝ public nuisance-ը և private nuisance-ը:

Public nuisance-ի դեմ պաշտպանության միջոցները: Կանոնակարգը սահմանում էր public nuisance-ի դեմ պաշտպանության հետևյալ միջոցները՝ մեղադրական ակտը կամ indictment-ը (բողոքը), քաղաքացիական հայցը և փաստացի վերացումը: Հատկանշական է, որ մեղադրական ակտով կամ indictment-ով պաշտպանություն իրականացվում է իրավաբանական պատասխանատվության կանոններով: Անկախ այն հանգամանքից՝ պաշտպանության միջոցը մեղադրական ա¹կտն է, թե՞ indictment-ը, այն իրականացվում է պետության ներկայացուցչի կողմից հարուցված վարույթի շրջանակներում: Ինչ վերաբերում է public nuisance-ի դեպքում մասնավոր հայցի միջոցով պաշտպանությանը, ապա նման իրավիճակ հնարավոր է միայն այն դեպքում, երբ հայցվորին հասցված է տարբերակված վնասարարություն՝ հանրության մյուս անդամների համեմատությամբ:

Public nuisance-ի դեմ պաշտպանության հաջորդ միջոցը nuisance-ի փաստացի վերացնելն է: Սակայն այս դեպքում խոսքը ոչ թե nuisance պատճառողի կամ գույքի նոր սեփականատիրոջ կողմից nuisance կամ դրա հետևանքները վերացնելու, այլ ցանկացած հասարակական միավորումների (public body) կամ դրա համար օրենքով հատուկ լիազորված պաշտոնատար անձի կողմից այն վերացնելու մասին է: Բացի վերացման նշված մեխանիզմից **public nuisance-ը** վերացնելու իրավունք ունի ցանկացած անձ, ում պատճառվել է վնաս: Հատկանշական է, որ **public nuisance-ի** վերացման դեպքում վերացնողի գործողությունները չեն կարող գնահատվել իրավախախտման տիրույթում, եթե վերացումն ուղեկցվել է այլ առարկաներ վնասելով: Սակայն նման գործողությունները չպետք է խախտեն անդորրը (breach of the

peace) և չպատճառեն անհարկի և չհիմնավորված վնասներ³⁷: Public nuisance-ի վերացման վերաբերյալ կատարված վերլուծությունը թույլ է տալիս խոսել Կալիֆորնիայի քաղաքացիական օրենսդրությամբ փաստացի վերացման 3 տեսակների մասին: Դրանք են՝ 1. հարևանի կամ հանրության հարմարավետությունը nuisance-ով ծանրաբեռնող անձի կամ գույքի հաջորդ սեփականատիրոջ կողմից nuisance-ը վերացնելը (պարտականություն) (հոդված 3484), 2. Հասարակական միավորումների կամ օրենքով լիազորված պաշտոնատար անձի կողմից իրականացվող վերացումը (Abated public nuisance by public body) (իրավունք/լիազորություն) (հոդված 3494), 3. public nuisance-ից տուժած անձի կողմից դրա վերացումը (իրավունք) (հոդված 3495)³⁸:

Private nuisance-ի դեմ պաշտպանության միջոցները: Այս դեպքում օրենսդրությունը սահմանում է պաշտպանության 2 միջոց՝ քաղաքացիական հայցը և nuisance-ի փաստացի վերացումը: Կանոնակարգի 3502-րդ հոդվածի փաստակազմի վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ նյութական իմաստով բացակայում է որևէ տարաբերություն Public nuisance-ի համեմատությամբ տուժողի կողմից այն վերացնելու իրավունք տվող օրենսդրական լուծումներից:

3. Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հիմնահարցը մուսուլմանական իրավական համակարգում:

Իրավաբանական գրականության մեջ ընդգծվում է, որ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հիմնահարցի հետազոտությունը մուսուլմանական դոկտրինում ունի մոտավորապես մեկդարյա պատմություն և այն կապվում է նշանավոր տեսաբան Մահմուդ Ֆաթիհի անվան հետ: Ընդգծ-

³⁷ Мальшев К.И. Указ. соч. С. 515:

³⁸ Կալիֆորնիայի քաղաքացիական օրենսգրքի 3028-րդ և քաղաքացիական դատարանի կանոնադրության 731-րդ հոդվածները համապատասխանաբար սահմանում են սանիտարական և հանրային իշխանությունների կողմից անհարամարությունների վերացման կարգի և անձանց կողմից, ում պատճառվել են անհարամարություններ՝ համապատասխան հայց ներկայացնելու իրավունքի մասին, որի արդյունքում կարող է որոշում կայացվել անհարամարությունը վերացնելու նաև հասցված վնասի հատուցման պահանջներով: Ընդգծվում է, որ քաղաքացիական հայց կարող է ներկայացվել նաև նահանգի բնակչության անունից նահանգային դատախազի կողմից կամ նման հայց դատախազը կարող է ներկայացնել նաև տարածքային կառավարման մարմնի պահանջով (board of supervisors): Այս մասին մանրամասն տե՛ս Мальшев К.И. Указ. соч. С. 517.

վում է, որ առաջին անգամ տեսական հետազոտության մակարդակով հեղինակը հիմնահարցին անդրադարձել է իր՝ 1913 թվականին հրատարակված «Չարաշահման մասին մուսուլմանական ուսմունք» աշխատության մեջ³⁹: Նկատենք, որ նշված իրավական համակարգի առանձնահատկությունն այն է, որ իրավունքի իրականացման առանձին իրավիճակներ, որոնք իրավական այլ համակարգերում կգնահատվեին սուբյեկտիվ իրավունքի չարաշահման տիրույթում, այստեղ դիտարկվում են թույլատրելիության սահմաններում⁴⁰: Սակայն այս ամենին զուգահեռ անհրաժեշտ է նշել, որ մուսուլմանական իրավական համակարգում հիմնահարցն ստացել է բավականին մանրամասն կարգավորում: Այս կապակցությամբ Ա.Ա. Մալինովսկին նշում է, որ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման պատմական ակնարկը, առանց հիմնահարցի վերաբերյալ մուսուլմանական դոկտրինի հետազոտության, կլինի թերի⁴¹: Մուսուլմանական իրավունքում սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելիքի հիմնահարցը կապված է նաև Մուհամեդ մարգարեի այն հաղիսի (կանոն) հետ՝ համաձայն որի «անթույլատրելի է վնաս հասցնել առանց պատճառի, կամ վնաս հասցնելու ձևով պատասխանել»: Ընդգծվում է, որ այս հաղիսի շրջանակներում որևէ նշանակություն չունի՝ վնասը հասցվե՞լ է, թե՞ սպասվում է⁴²: Կարևոր է ընդգծել նաև այն հաղիսը՝ համաձայն որի անհրաժեշտ է խուսափել իրավունքի այնպիսի իրացումից, որի արդյունքում կարելի է վնաս հասցնել այլոց, այլ նպատակով սեփական գույքի ոչնչացումը կամ առանց առիթի բիրտ վերաբերմունքն ստրուկների և կենդանիների նկատմամբ⁴³: Նշվում է, որ հողամասի սեփականատերն իրավունք չունի ջուր հանելու համար հորատանցք փորել այնպիսի վայրում, որ կարող է վնաս հասցնել հարևանի արդեն գոյություն

³⁹ Тюменев В. З. Теория злоупотребления правом в правовых системах современности // Вестник ТИСБИ. 2003. № 1. (հասանելի աղբյուր՝ <http://www.law.edu.ru/doc/document.asp?docID=1217632>, 25.09.2019).

⁴⁰ Исмагилов Р. Р. Злоупотребление правом или право злоупотребления // Право и политика. 2000. N 7. С. 8.

⁴¹ Малиновский А. А. Указ. соч. С. 43.

⁴² Ясер Сулейман Хассан Мохамед. Гражданско-правовая защита от злоупотребления в праве России и Йемена. автореф. дисс ... канд. юрид. наук, Казань-2005. С. 13.

⁴³ Тюменев В. З. Указ. соч. (հասանելի աղբյուր՝ <http://www.law.edu.ru/doc/document.asp?docID=1217632>, 25.09.2019).

ունեցող հորատանցքին⁴⁴: Ընդգծվում է, որ յուրքանցյուր հորատանցք ունի իր «հարիմը», այլ կերպ՝ այն տարածությունը, որից ավելի մոտ արգելվում է նոր հորատանցք փորել⁴⁵:

ABUSE OF SUBJECTIVE RIGHT AND ITS PROHIBITION WITHIN THE FRAMEWORK OF THE DEVELOPMENT OF POSITIVE LAW

Muradyan Manuk

Head of the Educational Complex of the Ministry

of Internal Affairs of the Republic of Armenia,

PhD in Legal Sciences, Associate Professor, Police Colonel

The article is dedicated to one of the less researched issues within the framework of the general theory of law: the development of institutions for the abuse of subjective right and its prohibition. The research aims to show the features of the origin and development of the issue in the Romano-Germanic and Anglo-Saxon legal systems. The research refers to the general features of the historical development of positive regulations regarding the prohibition of the abuse of subjective rights in France, Switzerland, Germany, and Austria. From the states of the Anglo-Saxon legal system, emphasis was placed on English and American law. The Muslim law related to the issue was also subjected to a general analysis.

Key words: abuse of subjective right, prohibition of abuse, Romano-Germanic legal system, Anglo-Saxon legal system, Muslim legal system.

⁴⁴ Հատկանշական է, որ գրականության մեջ չի նշվում, թե նշված իրավիճակում խոսքն ինչ վնասի մասին է, և հարևան իր տարածքում ինչպես կարող է հորատանցք փորելով վնասել մյուս հարևանին: Կարծում ենք՝ այստեղ խնդիրն այնպիսի իրավիճակի մասին է, երբ նոր փորված հորատանցքի պատճառով կարող է նվազել հարևանի՝ մինչ այդ գոյություն ունեցած հորատանցի ջրի ծավալը կամ, առհասարակ, դադարել հին հորատանցք ջուր լցվելը:

⁴⁵ **Полуэктов И. Л.** Теоретические вопросы злоупотребления правом в сфере интеллектуальной собственности. С. 3. (հասանելի աղբյուր՝ <https://igorpoluektov.files.wordpress.com/2012/02/teor-voprosy-zloupotreblenia-pravom-v-sfere-is.pdf> 01.10. 2019).

ЗЛОУПОТРЕБЛЕНИЕ СУБЪЕКТИВНЫМ ПРАВОМ И ЕГО ЗАПРЕТ В РАМКАХ РАЗВИТИЯ ПОЗИТИВНОГО ПРАВА

Мурадян Манук

Начальник Образовательного комплекса МВД РА,

кандидат юридических наук, доцент,

полковник полиции

Статья посвящена одной из малоизученных проблем в Общей теории права - развитию институтов злоупотребления субъективным правом и его запрета. Исследование направлено на выявление особенностей происхождения и развития проблемы в романско-германской и англосаксонской правовых системах. В работе были затронуты общие черты исторического развития позитивного нормативного регулирования касательно запрета злоупотребления субъективным правом во Франции, Швейцарии, Германии, Австрии. Среди государств англосаксонской правовой системы был сделан акцент на английском и американском праве. Также проведён общий анализ и мусульманского права, связанного с этим вопросом.

Ключевые слова. Злоупотребление субъективным правом, запрет злоупотребления, романо-германская правовая система, англосаксонская правовая система, мусульманская правовая система.

Հոդվածը գրախոսվել է՝ 27.02.2024թ.:

Ներկայացվել է տպագրության՝ 27.02.2024թ.:

ՈՒՍՈՒՄՆԱԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՀԱՐՄԱՐՄԱՆ ՓՈԻԼՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նազարյան Նաիրա

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական կենտրոնի
հատուկ պատրաստականության կրթաճյուղի
ավագ դասախոս, հ.գ.թ. ոստիկանության փոխգնդապետ*

Համառոտագիր: Հոդվածում ներկայացվում են ուսումնաձառայողական գործունեությանը հարմարման գործընթացում սովորողների հետ իրականացվող հոգեբանամանկավարժական բնույթի աշխատանքների մի շարք առանձնահատկություններ: Քննարկվում է մասնավորապես սովորողների հարմարման գործընթացում հոգեբանական ուղեկցության ծրագրի նշանակությունն ադապտացիոն շրջանի օպտիմիզացիայի գործում: Այդ նպատակով առաջարկվող հոգեբանական ուղեկցության ծրագիրը նախատեսում է ախտորոշիչ, զարգացնող և հոգեշտկողական բաղադրիչներով, անհատական խորհրդատվության և խմբային տրենինգային պարապմունքների ձևաչափով աշխատանքների իրականացում: Հոգեբանական աջակցության պատշաճ մակարդակը կարող է նպաստել սովորողների բարեհաջող հարմարմանը, մասնագիտական պատրաստվածության որակի և ուսումնաձառայողական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Բանալի բառեր՝ ուսումնաձառայողական գործունեություն, հարմարում, մասնագիտական ադապտացիա, մասնագիտական կայացում, հոգեբանական ուղեկցություն:

Հայտնի է, որ ցանկացած, այդ թվում և ուսումնաձառայողական գործունեության արդյունավետությունը և հուսալիությունը մեծապես պայմանավորված են աշխատակցի՝ մասնագիտական գործունեությանը հարմարվածության, ադապտացիայի հաջողությամբ:

Ոստիկանի մասնագիտական ադապտացիայի գործընթացի մեկնարկը տրվում է ուսումնառության շրջանում սովորողների՝ ոստիկանության

ուսումնական հաստատության պայմաններին հարմարումից՝ որպես ժամանակավոր յուրատիպ միջավայրի: Ոստիկանության ուսումնական հաստատության սովորողների մասնագիտական ադապտացիան նրանց հարմարումն է ապագա մասնագիտական գործունեության բովանդակությանը, պայմաններին, նորմերին և արժեքային կողմնորոշումներին¹: Այն ենթադրում է ծանոթություն ուսումնաձառայողական միջավայրի յուրատիպությանը, կենսագործունեության պայմաններին ու պահանջներին, դրանում ներգրավված սուբյեկտների հետ հարաբերությունների հաստատում և համատեղ գործունեության իրականացում, նոր սոցիալական դերերի ընդունում և իրականացում:

Մասնագիտական ադապտացիան անձի ինքնորոշման, մասնագիտական կայացման ելակետային փուլերից է: Հենց այդ ընթացքում է անձը համոզվում, թե որքանով է իր կատարած մասնագիտական ընտրությունը ճիշտ²: Ուստի շատ կարևոր է ուսումնաձառայողական գործունեության սկզբից նեթ հոգեբանամանկավարժական համապատասխան ներգործությանը աջակցել նորեկի մասնագիտական ադապտացիային, մասնագիտական ինքնորոշման և կայացման բարենպաստ ընթացքին: Անձնակազմի հետ տարվող հոգեբանական աշխատանքներում մեծ տեղ պետք է հատկացնել ուսումնաձառայողական գործունեությանը սովորողների հարմարման գործընթացի պատշաճ կազմակերպմանը:

Մասնագիտական ադապտացիայի, մասնագիտական կայացման գործընթացների արդյունավետ ու սահուն ընթացքին նպաստում է հոգեբանական ուղեկցության ապահովումը: Վերջինիս նպատակն է հոգեբանական աջակցություն ցուցաբերել անձի մասնագիտական կայացման ընթացքում առաջացած տարբեր խնդիրների լուծման հարցում, նպաստել անձի մասնագիտական-հոգեբանական ներուժի լիարժեք իրացմանը: Հոգեբանական ուղեկցությունը ցուցված է հատկապես այն անձանց, ովքեր որոշակի դժվար

¹ Подготовка выпускников образовательных учреждений МВД России к службе в органах внутренних дел: Сборник аналитических и методических материалов.-М.: ИМЦ ГУК МВД России, 2003.-216с. /Сост. **А.В.Дулов, Е.В.Лапшин, Е.В.Орлов**/, էջ 40

² **Хлудова О.В.** Психологические особенности профессионального роста личности (на примере сотрудников органов внутренних дел). Тамбов: Изд-во Тамб. гос. техн. ун-та, 2004. 24 с., էջ 8

րություններ են ունենում ադապտացիայի այս կամ այն փուլում, այս կամ այն տեսակի պարագայում³:

Մասնագիտական գործունեության ադապտացիոն գործընթացի օպտիմիզացիան ուղղված է ադապտացիայի ժամկետների կրճատմանը և հարմարվածության համապատասխան մակարդակին հասնելուն, որի դեպքում հնարավոր է ուսումնաձառայողական գործունեության պահանջվող արդյունավետության և հուսալիության ապահովումը: Դա կատարվում է ինչպես ադապտացիայի մեխանիզմների վրա ուղղակի ներգործելու, այնպես էլ անուղղակի ազդեցության միջոցով՝ փոփոխելով մասնագիտական գործունեության ներքին և արտաքին պայմանները⁴:

Ուսումնաձառայողական գործունեությանը սովորողների ադապտացիայի պատշաճ մակարդակի ապահովումը ենթադրում է մի շարք հաջորդական քայլերի իրականացում, որոնք թույլ կտան օպտիմիզացնել ադապտացիոն շրջանը: Այդ նպատակով կարելի է առաջնորդվել հոգեբանական ուղեկցության ծրագրով, որը ներառում է անձի ինքնագարգացման և թիմի ձևավորման աշխատանքների որոշակի փաթեթ՝ ախտորոշիչ, զարգացնող և հոգեշտկողական բաղադրիչներով, անհատական խորհրդատվության և խմբային տրենինգային պարապմունքների ձևաչափով:

Հոգեբանական ուղեկցության ծրագիրը սխեմատիկորեն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

1. Հետազոտել և ախտորոշել սովորողների անձնային առանձնահատկությունները, կարողություններն ու ունակությունները, հոգեվիճակները, վարքագծային դրսևորումները: Հետաքրքրություն են ներկայացնում սովորողների ընդհանուր, ադապտիվ և հաղորդակցական ունակությունները, նյարդահոգեկան կայունության, նորմատիվային վարքի, ինքնագնահատականի, ինքնագզացողության և հոգեհուզական ընդհանուր վիճակը և այլ առանձնահատկությունները, ինչպես նաև առաջիկա ուսումնաձառայողական գործունեությանը պատրաստակամության աստիճանը, սովորողի արժեհամակարգը, շարժառիթները, դիրքորոշումները և այլն:

³ Зееп Э.Ф. Психология профессий: Учебное пособие для студентов вузов. – 2-е изд. – М.: Академический Проект; Екатеринбург: Деловая книга, 2003. – 336 с., էջ 116-117

⁴ Панченко Л. Л. Адаптация к профессиональной деятельности: Учеб. пособие. – Владивосток: Мор. гос. ун-т, 2006. – 35 с., էջ 17

Նման հետազոտական-ախտորոշիչ աշխատանքի նպատակն է ստանալ սովորողների նախնական հոգեբանական բնութագրերը՝ ադապտացիոն գործընթացների շարժընթացի և ուղղվածության կանխատեսման և հետագա ուսումնասիրման համար, ինչպես նաև առանձնացնել ադապտացիոն դժվարություններ ունեցող, ցածր ադապտիվ ունակություններով սովորողների՝ համապատասխան հոգեշտկողական աշխատանքների կազմակերպման համար:

Ուսումնաձառայողական գործընթացի բոլոր կազմակերպողները և իրականացնողները պետք է հաշվի առնեն սովորողների մտավոր, հաղորդակցական, հուզականային որակներն ու ընդունակությունները, մասնավորապես՝ ընդհանուր կրթական մակարդակը, բառապաշարը, մտածական գործընթացների արագությունը, ուշադրության և հիշողության առանձնահատկությունները և այլն⁵:

2. Հետազոտել և պարզել ուսումնաձառայողական խմբի առանձնահատկությունները, խմբային գործընթացները, սոցիալ-հոգեբանական մթնոլորտը, ռիսկի խմբերը և այլն՝ անհատական և խմբային աշխատանքների կազմակերպման համար: Այստեղ տարվող աշխատանքների հիմնական ուղղություններն են՝

- գնահատել խմբի սոցիալ-հոգեբանական մթնոլորտը,
- պարզել խմբի անդամներից յուրաքանչյուրի հեղինակությունը, խմբային դերերը և կարգավիճակները, խմբի հոգեբանական մթնոլորտից և խմբային պատկանելությունից բավարարվածության աստիճանը,
- որոշել միջանձնային հարաբերությունների զարգացածության աստիճանը խմբում և յուրաքանչյուր սովորողի մոտ անհատապես,
- պարզել կոնֆլիկտայնության մակարդակը, կոնֆլիկտային գոտիները,
- սահմանել խմբի կառավարման արդյունավետ ոճը և այլն:

3. Կազմակերպել և անցկացնել անձնային զարգացման և թիմաստեղծման սոցիալ-հոգեբանական տրենինգ՝ նպատակ ունենալով ուղղորդել ադապտացիոն գործընթացները, անհատական և խմբային հոգեշտկողական աշխատանքներ իրականացնել: Դրված խնդիրներին հասնելու համար հարկավոր է՝

⁵ **Резепин А.В.** Психолого-педагогические аспекты воспитательной работы руководителей учебно-сроевых подразделений вуза МВД России: Методическое пособие.- М.: ИМЦГУК МВД России, 2003. -96 с., էջ 46

- ձևավորել սովորողների պատկերացումն ուսումնաճառայողական գործունեության և սովորողի անձին ներկայացվող պահանջների վերաբերյալ,

- սովորողների հետ քննարկումներ կազմակերպել՝ ուղղված ադապտացիոն շրջանի դժվարությունների վերհանմանը, դրանց գիտակցմանն ու հաղթահարմանը,

- խորացնել սեփական անձի մասին սովորողների գիտելիքները, ձևավորել ինքնագարգացման և ինքնակառավարման՝ սթրեսի հաղթահարման, հուզական լիցքաթափման, ինքնաներկայացման, կառուցողական հաղորդակցման, կոնֆլիկտային ձեռնահաստության և այլ անհրաժեշտ կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու մարզմանը,

- խորացնել ծանոթությունն ուսումնական խմբի անդամների միջև,

- ձևավորել խմբային փոխկապվածության զգացում և առողջ փոխհարաբերությունների համակարգ,

- հոգեբանական աջակցություն ցուցաբերել նոր միջավայրում բարեհարմար միջանձնային հարաբերություններ հաստատելու հարցում,

- խմբային գործընթացներին հաղորդել նպատակաուղղվածություն, ձևավորել խմբային արժեքներ, նպատակներ, նորմեր,

- համախմբել ուսումնական խումբն առաջատար խմբային արժեքների և նպատակների շուրջ,

- նպաստել մասնագիտական խմբի հետ նույնացման գործընթացին, ադեկվատ մասնագիտական ինքնագնահատականի ձևավորմանը և պահպանմանը և այլն:

4. Կատարված աշխատանքի արդյունքներն ամփոփել և վերլուծել, ապագա աշխատանքները ծրագրել՝ նպատակ ունենալով պարզել ադապտացիոն շրջանի հիմնական դժվարությունները, դրանք պայմանավորող գործոնները, և ազդեցության համարժեք միջոցներ իրականացնել: Անցկացված ախտորոշիչ-հետազոտական աշխատանքների հիման վրա հարկավոր է՝

- անհատական առաջարկների և խորհուրդների մշակում՝ ադապտացիոն դժվարություններ ունեցող սովորողների համար,

- ուսումնաճառայողական գործունեության կազմակերպող և իրականացնող մասնագետների համար գործնական առաջարկների մշակում և համապատասխան տրեյնինգների կազմակերպում,

- սովորողների և դասավանդողների համար անհատական և խմբային խորհրդատվությունների կազմակերպում և այլն:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ կարելի է սովորողների ադապտացիայի հոգեբանական ապահովման աշխատանքներում նախանշել մի շարք միջոցառումներ⁶.

1/ Վեր հանել և վերլուծել սովորողների ուսումնաձառայողական գործունեության մեջ հիմնական դժվարությունները՝

- առաջադիմության ցածր ցուցանիշները, ոչ բավարար ընդհանուր կրթական մակարդակը,

- ծառայողական կարգապահության խախտումների դեպքերը,

- մարդկանց հետ համատեղ գործունեության /ուսումնական, աշխատանքային, ծառայողական և այլ/ իրականացման հմտությունների բացակայությունը,

- ուսումնաձառայողական գործունեության և կենսապայմանների վատ կազմակերպվածությունը, ուսումնաձառայողական գործունեությամբ զերբեռնվածությունը,

- մերձավոր շրջապատի, ընտանիքի անդամների բացասական վերաբերմունքն ընտրած մասնագիտության նկատմամբ և այլն:

- հաղորդակցական խնդիրների, միջանձնային հարաբերություններում խնդիրների, հաճախակի կոնֆլիկտների առկայությունը և այլն,

- ուսումնական կոլեկտիվում հաճախակի վատ ինքնագզացողությունը և այլն:

2/ Ուսումնաձառայողական գործունեության ընթացքում առաջացած խնդիրների օպերատիվ լուծում, անհրաժեշտ օժանդակության ցուցաբերում.

- ներկայացնել տվյալ հաստատության պատմությունը և ավանդույթները, ծանոթացնել օրինակելի ծառայողների հետ,

- աջակցել նոր պարտականություններին ծանոթանալու և յուրացնելու գործում,

- ներգրավել կոլեկտիվի հանրային կյանքին,

⁶ **Резепин А.В.** Психолого-педагогические аспекты воспитательной работы руководителей учебно-сроевых подразделений вуза МВД России: Методическое пособие.- М.: ИМЦГУК МВД России, 2003. -96 с., էջ 56-57

- գործնական օժանդակություն ցուցաբերել ծառայողական խնդիրները լուծելու, կենսագործունեության նոր պայմանների հնարավոր դժվարությունները հաղթահարելու հարցում և այլն,

- զարգացնել և մարզել ուսումնածառայողական գործունեության իրականացման հմտություններ ու կարողություններ և այլն:

3/ Ադապտացիայի գործընթացին խոչընդոտող անբարենպաստ գործոնների ազդեցության նվազեցում.

- ուսումնածառայողական գործունեության, աշխատանքի, հանգստի և սննդի ռեժիմի օպտիմալ պայմանների ապահովում, աշխատավայրում անհրաժեշտ հարմարությունների և գործունեության միջոցների ապահովում,

- կոնֆլիկտային իրավիճակների ժամանակին բացահայտում և օպտիմալ կառավարում,

- առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում,

- ուսումնածառայողական գործունեության իրականացման, ինչպես նաև առողջության համար անբարենպաստ գործոնների հնարավորինս նվազեցում,

- վատ, անառողջ սովորությունների /ալկոհոլի, թմրանյութերի գործածում, մոլեխաղեր և այլն/ բացահայտում և հետևողական պայքար դրանց դեմ:

4/ Դեգադապտիվ վիճակների կանխարգելման և շտկման ուղղությամբ աշխատանքների իրականացում՝ ուշադրություն դարձնելով հետևյալ դրսևորումներին.

- հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների վերականգնման ժամանակահատվածի մեծացում, աշխատունակության անկում և այլն,

- ժամանակավոր անաշխատունակության՝ հիվանդացածության, վնասվածքների, վթարայնության դեպքերի հաճախացում և այլն,

- տրամադրության ցածր ֆոն և կտրուկ փոփոխություններ, հուզական անկայունություն կամ ուժգին հուզական հակազդումներ, նյարդահոգեկան լարվածության նշաններ և այլն,

- ոչ ադեկվատ վարքային դրսևորումներ, ագրեսիա և աուտոագրեսիա, ասոցիալ վարք և այլն:

Հարկ է նշել, որ հոգեբանամանկավարժական հատուկ ուշադրության ենթակա սովորողների խումբը հաստատուն կազմ չէ, այն կարող է փո-

փոխվել ուսումնաձառայողական գործունեության ընթացքում տարաբնույթ խնդիրների լուծման, անձնային աճի ապահովման, ադապտացիոն գործընթացների հոգեբանական ուղեկցության արդյունավետ իրականացման շնորհիվ⁷:

Նմանատիպ աշխատանքների վերջնականատակն ուսումնաձառայողական գործունեության ընթացքում սովորողների անհրաժեշտ որակների, կարողությունների և ունակությունների առավելագույն զարգացումն ու իրացումն է, միաժամանակ՝ բացասական որակների, վիճակների և սովորությունների հնարավորինս չեզոքացումը, ադապտացիոն գործընթացների շարժընթացին և ուղղվածությանը հետևելն ու արդյունավետ կառավարելը:

Այսպիսով՝ ուսումնաձառայողական գործունեությանն ադապտացիայի փուլում պատշաճ հոգեբանական աջակցությունը մեծապես օգնում է սովորողների հաջող հարմարմանը և ինքնակատարելագործմանը, մասնագիտական պատրաստվածության որակի, իրականացվող գործունեության արդյունավետության և հուսալիության բարձրացմանը:

FEATURES OF PSYCHOLOGICAL AND PEDAGOGICAL WORK WITH STUDENTS AT THE STAGE OF ADAPTATION TO EDUCATIONAL ACTIVITIES

Naira Nazaryan

*Senior Lecturer of the Training Center of
MIA Educational Complex of RA, PhD of
Psychological Sciences, colonel lieutenant*

Annotation: The article presents a number of features of psychological and pedagogical work with students in the process of adaptation to educational activity. In particular, the importance of the psychological support program in the process of adjustment of students in optimizing the adaptation period is discussed. The proposed psychological support program provides for comprehensive measures with

⁷ **Шарафутдинова Н.В.** Социально-психологический тренинг профессионального общения: учебно-методическое пособие /Н.В.Шарафутдинова, **И.В.Семчук.** -М.: Московский университет МВД России имени В.Я.Кикотя, 2017.-117с., էջ 39

diagnostic, developmental and correctional components in the format of individual counselling and group training sessions. An appropriate level of psychological support can contribute to the successful adaptation of students, improving the quality of professional training and effectiveness of activities.

Key words - professional activity, adjustment, professional adaptation, professional-service activity, professional adaptation, adaptation, professional development, psychological support

ОСОБЕННОСТИ ПСИХОЛОГО-ПЕДАГОГИЧЕСКОЙ РАБОТЫ СО СТУДЕНТАМИ НА ЭТАПЕ АДАПТАЦИИ К УЧЕБНО-СЛУЖЕБНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Назарян Наира

*Старший преподаватель кафедры спецподготовки
Учебного центра Образовательного комплекса МВД РА,
канд.псих.наук, подполковник полиции*

Аннотация □ В статье представлен ряд особенностей психолого-педагогической работы, проводимой с первокурсниками в процессе адаптации к учебно-служебной деятельности. В частности, обсуждается значение программы психологического сопровождения в процессе адаптации студентов для оптимизации адаптационного периода. Предлагаемая программа психологического сопровождения предусматривает проведение комплексных мер с психодиагностическими, развивающими и коррекционными компонентами в формате индивидуального консультирования и групповых тренинговых занятий. Должный уровень психологической поддержки может способствовать успешной адаптации студентов, повышению качества профессиональной подготовки и эффективности учебно-служебной деятельности.

Ключевые слова: профессиональная деятельность, профессиональная адаптация, приспособление, профессиональное становление, психологическое сопровождение

Հոդվածը գրախոսվել է՝ 22.12.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 22.12.2023թ.:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԸ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Վարդանյան Սյուզաննա

«ՎԵՆԵՐԻ ԻՄՄՕ» ՍՊ ընկերության

իրավախորհրդատու, ԵՊՀ իրավագիտության

ֆակուլտետի սահմանադրական իրավունքի

ամբիոնի հայցորդ

Իրավաբանական անձի ինստիտուտի նշանակությունն առավել մեծացավ 20-րդ դարում ձեռնարկատիրական գործունեության միջազգայնացման, տնտեսության մեջ պետական միջամտության ընդլայնման, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների առաջացման արդյունքում: Վերջիններիս զուգահեռ՝ քաղաքացիական իրավունքում ձևավորվեց իրավաբանական անձի հասկացությունն ու հատկանիշները: Տեսության մեջ իրավաբանական անձը բնորոշվում է որպես կազմակերպություն, որը, որպես սեփականություն, լրիվ տնտեսավարման կամ օպերատիվ կառավարման իրավունքով ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, այդ թվում նաև՝ կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը տեսական գրականության մեջ չունի միասնական բնորոշում: Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտին առնչվող հիմնախնդիրները մասամբ հետազոտվել են թե՛ հետխորհրդային և թե՛ արտասահմանյան իրավագետների կողմից¹: Վարչագետների մեծամասնությունը, մասնավորապես՝ Վ. Ի. Դիմչենկոն, Ն. Գ. Սալիշևան, Ե. Վ. Օվչարո-

¹ Տե՛ս՝ Шербакова М.А. Понятие юридического лица в административно-деликтных правоотношениях // Конституционализм и правовая система России: итоги и перспективы развития: Мат. секции административного права V Междунар. науч.-практ. конф. «Кутафинские чтения»: Сб. докл. М., 2014. С. 209.

վան, Յ. Յ. Կոլեսնիչենկոն, Ի. Վ. Նազարովը, Յ. Վ. Շիլովը, նշում են իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության սահմանման անհրաժեշտության մասին, սակայն, դրան հակառակ, Վ.Դ. Սորոկինն այն կարծիքին է, որ իրավաբանական անձինք չեն կարող լինել վարչական իրավախախտման և վարչական պատասխանատվության սուբյեկտ:

Ըստ Ի.Վ. Նազարովի՝ «իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը վարչական իրավախախտում կատարած վարչական իրավասուբյեկտությամբ օժտված և որպես իրավաբանական անձ գրանցված կազմակերպությունների նկատմամբ՝ լիազորված պետական մարմինների, դատարանների և պաշտոնատար անձանց կողմից իրավական նորմերով սահմանված վարչական կիրառումն է»²:

Ըստ Ա. Բերեզնեցկու՝ «իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը նրանց վարչական տույժերի կիրառումն է, որոնք հետապնդում են ինչպես իրավագանցին պատժելու, այնպես էլ տվյալ իրավաբանական անձի կողմից իր պարտականությունների և պետական մարմինների պահանջների կատարման նպատակ»:

Այսպիսով, իրավաբանական անձի վարչական պատասխանատվության բնորոշումների վերաբերյալ վարչագետների մեծամասնության կարծիքով գերակշռում է իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության այն կարևոր հատկանիշը, ըստ որի՝ այն առանձնանում է որպես իրավաբանական անձանց նկատմամբ վարչական իրավախախտման համար վարչական տույժերի կիրառում:

Հարկ է նշել, որ ներկայիս վարչական պատասխանատվության օրենսդրության անկատարության պարագայում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը բխում է միայն կոնկրետ օրենսդրական ակտերից: Թերևս, հարկ ենք համարում նշել նաև, որ այդ բազմաթիվ իրավական ակտերում, այնուամենայնիվ, հստակ չեն սահմանվում նաև այն իրավախախտումները, որոնք հիմք են հանդիսանում վարչական պատասխանատվության համար, կամ հստակ սահմանված չէ՝ պատասխանատվությունը կրում է իրավաբանական անձը³, թե՞ նրա ղեկավարը:

² См. И. В. Назаров Административная ответственность организаций, Н. Новгород, 2002, էջ՝ 24-25:

Մինչ 2005թ. Սահմանադրության փոփոխություններն իրավաբանական անձինք որպես այդպիսին հիշատակված չէին նաև սահմանադրական նորմերում: 2005թ. նոյեմբերի 27-ին կատարված փոփոխությունների արդյունքում Սահմանադրությունը լրացվեց 42.1-րդ հոդվածով՝ ըստ որի մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ: Այնուհետև 2015թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում այս նորմը կրկին ամրագրվեց «Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունն իրավաբանական անձանց նկատմամբ» վերտառությամբ 74-րդ հոդվածում³: 74-րդ հոդվածում ամրագրված է, որ հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր՝ 2012 թ. թիվ ՄԴՈ-1048 և 2013թ. թիվ ՄԴՈ-1084 որոշումներով արձանագրել է, որ ըստ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի՝ իրավաբանական անձինք օժտված չեն վարչական զանցանքի սուբյեկտի հատկանիշներով⁴:

Միննույն ժամանակ, այդ նույն որոշմամբ, որպես հիմնախնդիր, առանձնացրել է նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը՝ ելնելով միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներից, և, ի թիվս մի շարք հայեցակարգային նշանակության հարցերի, ընդգծել **իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու խնդրի համակարգային կանոնակարգումը**:

Որպես դատական պրակտիկայի օրինակ՝ նշենք, որ, ՀՀ վճռաբեկ դատարանն իրավաբանական անձի՝ որպես վարչական պատասխանատվո-

³ Տե՛ս ՀՀ սահմանադրության փոփոխություններ, սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2015.12.21/ Հատուկ թողարկում Հոդ. 1118, ընդունված՝ 06.12.2015թ., ուժի մեջ է մտել՝ 22.12.2015թ.:

⁴ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը 2012 թվականի մայիսի 30-ին Աշգարատում ստորագրված՝ «Անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության բնագավառում համագործակցության մասին» 1998 թվականի սեպտեմբերի 11-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, Սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2013.05.08/24(964) Հոդ.393, ընդունված՝ 23.04.2013թ., ուժի մեջ է մտել՝ 23.04.2013թ.:

յան սուբյեկտի հիմնախնդրին անդրադարձել է 2006 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ՝ աշխատանքի տեսչության Վայոց ձորի մարզի տարածքային կենտրոնի վճռաբեկ բողոքի ընդդեմ «Թովմասյան Համլետ» ՍՊ ընկերության, որի համաձայն՝ իրավաբանական անձը չի հանդիսանում վարչական պատասխանատվության սուբյեկտ, քանի որ մեղքի դիտավորության և անգգուշության տեսակներին վերաբերող «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ վարչական իրավախախտման կատարումը հնարավոր է միայն ֆիզիկական անձի կողմից⁵:

ՀՀ սահմանադրական դատարանը, 2010 թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշմամբ վարչական պատասխանատվության ինստիտուտը գնահատելով դրա նպատակի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված ողջ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության համատեքստում, արդարացիորեն եզրահանգել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի իրավակարգավորումը սահմանելիս դրսևորված չէ համակարգային մոտեցում, և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում հստակ սահմանված չեն բոլոր այն կոնկրետ վարչական մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք, որոնք իրավասու են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմել և այն ներկայացնել դատարան՝ անձանց դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով⁶: Նշված որոշմամբ Սահմանադրական դատարանը դեմ չի արտահայտվել դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտին, այլ արձանագրել է իրավակարգավորման բաց՝ պայմանավորված դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտի ոչ ամբողջական իրավակարգավորմամբ:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն իր՝ 2012 թ. սեպտեմբե-

⁵ Տե՛ս Գործի համար՝ 3-1787(ՏԴ), Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշում՝ Նախ/0053/05/16 http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=13229323905401774:

⁶ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 05.02.2010 թվականի թիվ ՍԴՈ-864 որոշումը, սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2010.02.17/7(741) Հոդ.68, ընդունված՝ 05.02.2010թ., ուժի մեջ է մտել 05.02.2010թ.: <file:///C:/Users/user/Downloads/56319.pdf>

րի 19-ի ՄԴՈ-1048 որոշմամբ⁷ նշում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ նոր օրենսգրքի ընդունման, խորհրդային իրավակարգավորումների հատվածական փոփոխությունների ոչ նպատակահարմարության և առկա իրավակարգավորումների շրջանակների հստակեցման անհրաժեշտությունը՝ ելնելով միջազգային ժամանակակից փորձի ուսումնասիրման արդյունքներից: Մասնավորապես, դա վերաբերում է իրավակարգավորումների հայեցակարգային ամբողջականության և միասնականության երաշխավորմանը, վարչաիրավական հարաբերություններում իրավասուբյեկտության շրջանակների որոշակիացմանը, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու խնդրի համակարգային կանոնակարգմանը, վարչական պատասխանատվության՝ իրավական պատասխանատվության այլ տեսակներից (քաղաքացիական, քրեական) սահմանազատելու իրավական չափանիշների առավել հստակեցմանը և մի շարք այլ սկզբունքային՝ հայեցակարգային նշանակության հարցերին:

Հիմնվելով ժամանակակից վարչական հանցագործության գնահատման վրա՝ օրենսդիրն զգալիորեն ընդլայնել է Հայաստանի Հանրապետության տնտեսական հարաբերությունների վարչաիրավական պաշտպանության հնարավորությունները: Օրինակ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքը նախատեսում է վարչական պատասխանատվություն գույքի պաշտպանության ոլորտում, վարչական վարույթի իրականացումը մաքսային մարմինների կողմից (Գլուխ 17), սահմանում է վարչական պատասխանատվություն ձեռնարկատիրական գործունեության ոլորտում, ինչպես նաև նախատեսում է վարչական պատասխանատվություն ֆինանսների, հարկերի և վճարների, արժեթղթերի շուկայի ոլորտում (Գլուխ 12)⁸:

Նման իրավախախտումների վտանգն ակնհայտ է, քանի որ վերջիններիս կատարումը վտանգում է պետության, կազմակերպությունների, անհատների շահերը և նվազեցնում երկրի տնտեսական անվտանգության և

⁷ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 19.09.2012 թվականի թիվ ՄԴՈ-1048 որոշում, սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2012.10.03/48(922) Հոդ.1060, ընդունված՝ 19.09.2012թ., ուժի մեջ է մտել՝ 19.09.2012թ.: <file:///C:/Users/user/Downloads/78305.pdf>

⁸ Տե՛ս «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրք, սկզբնաղբյուր՝ ՀՍՄՀԳՍ 1985/23, ընդունված՝ 06.12.1985թ., ուժի մեջ է մտել՝ 01.06.1986թ.: <file:///C:/Users/user/Downloads/188085.pdf>

զարգացման մակարդակը: Նման իրավախախտումների առանձնահատկությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ վարչական իրավախախտումների սուբյեկտները հաճախ իրավաբանական անձինք են՝ օրինակ՝ իրավաբանական անձանց կողմից հարկային մարմիններ տեղեկությունները սահմանված ժամկետում չհաղորդելը կամ սխալ տեղեկություններ հաղորդելը: Այսպիսով՝ պետությունը սահմանում է վարքագծի որոշակի կանոններ մաքսային, արտաքին առևտրի, արժույթի և ֆինանսական, վարկային ոլորտներում պատշաճ գործելաժողովրդական համար, միաժամանակ արգելում է այնպիսի գործողությունների կիրառումը, որոնք խախտում են օրենսդրությամբ նախատեսված կանոնները: Այնուամենայնիվ, համապատասխան պրակտիկայում իրավաբանական անձանց կողմից վարչական իրավախախտումների քանակային աճը ցույց է տալիս, որ սահմանված կանոնների խախտումները հազվադեպ չեն:

Մաքսային ոլորտում վարչական պատասխանատվություն նախատեսող գրեթե յուրաքանչյուր իրավական նորմում իրավաբանական անձինք կարող են հանդես գալ որպես վարչական իրավախախտման սուբյեկտ: Հաշվի առնելով սոցիալ-տնտեսական զանազան գործոնները, բնակչության իրազեկվածության աստիճանը, պետության հնարավորությունները, այս ոլորտում օտարերկրյա և միջազգային լավագույն փորձը, չանտեսելով նաև պատմական զարգացումներն ու արդի միտումները՝ մաքսային ոլորտում վարչական իրավախախտումների դեպքերի սահմանման, վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցերը դեռևս պահանջում են կատարելագործում և պարզաբանում, որոնք անհրաժեշտ են հստակեցնել Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ նոր օրենսգրքում, այդ թվում նաև՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 318-րդ հոդվածի 1-ին մասից հետո առաջարկում ենք կատարել լրացում՝ նախատեսելով իրավաբանական անձանց կողմից ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, մաքսային վճարները, մաքսային մարմինների կողմից գանձվող այլ հարկերի, տուրքերի և վճարների սահմանված ժամկետներում չվճարման համար հստակ վարչական պատասխանատվության չափը՝ գործնականում հարկային պարտավորություններից խուսափելու միտումից զերծ մնալու և շարունակաբար կրկնվող իրավախախտումներից ձեռքազատվելու համար:

Միաժամանակ, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնախնդրի քննարկման համատեքստում կարևոր և վիճահարույց է այն հարցը, թե արդյո՞ք իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելը չի ազատում ֆիզիկական անձին նույն արարքի կատարման համար վարչական պատասխանատվության ենթարկելուց: Հիմնախնդրի իրավահամեմատական վերլուծությունը փաստում է հետևյալը՝ որոշ երկրների օրենսդրությամբ սահմանված է՝ եթե իրավաբանական անձի նկատմամբ նշանակվել է վարչական պատասխանատվություն, ապա դա չի ազատում պատասխանատվությունից տվյալ զանցանքի կատարման համար մեղավոր ֆիզիկական անձին և, հակառակը, եթե ֆիզիկական անձի նկատմամբ նշանակվել է վարչական պատասխանատվություն, ապա դա չի ազատում իրավաբանական անձին տվյալ զանցանքի կատարման համար վարչական պատասխանատվությունից: Այս մոտեցումն ամրագրված է նաև այն երկրների քրեական օրենսդրությամբ, որոնք նույնաբնույթ արարքների համար նախատեսում են նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն: Ընդ որում՝ բազմաթիվ արտասահմանյան երկրների իրավունքում սահմանված է իրավաբանական անձին և նրա աշխատակցին (պաշտոնատար անձին) միաժամանակյա պատասխանատվության ենթարկելու կարգ:

Արտասահմանյան երկրների մեծամասնության օրենսդրական դրույթների բազմակողմանի վերլուծությունը թույլ է տալիս հստակ նշելու, որ օրենսդրորեն ամրագրված է իրավաբանական անձի և ֆիզիկական անձի միաժամանակ պատասխանատվություն նույն իրավախախտման կատարման համար՝ սահմանելով, որ ֆիզիկական անձանց պատասխանատվությունը նույն արարքի համար չի բացառվում միայն այն դեպքում, եթե ֆիզիկական անձն այդ արարքը կատարել է ի շահ կամ հոգուտ տվյալ իրավաբանական անձի: Բացի նշվածից՝ կարևոր պայման է նաև ֆիզիկական անձի կարգավիճակը:

Միննույն ժամանակ, ի հակադրություն վերոնշյալի, տեղին է հիշատակել, որ իրավաբան գիտնականների մեծամասնությունը չի ընդունում իրավաբանական անձի և ֆիզիկական անձի միաժամանակյա պատասխանատվություն նույն արարքի համար՝ դիտարկելով այն քրեական իրավունքի կարևորագույն սկզբունքի խախտում առ այն, որ չի կարելի կրկին պատժել նույն արարքի համար: Շատերը նշում են նաև, որ իրավաբանական ան-

ձանց մեղքի որոշման սահմանված կանոնների պարագայում պարզ չէ, թե ինչի համար է իրավաբանական անձը ենթարկվում պատասխանատվության՝ այն դեպքում, երբ կոնկրետ կատարողի մեղքն իրավախախտման մեջ արդեն իսկ հաստատված է: Այս համատեքստում նշենք նաև, որ ազգային օրենսդրությամբ ընդունված է նման մոտեցումը: Այսպես, ըստ «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ պարբերության՝ եթե իրավաբանական անձը սույն օրենքով սահմանված կարգով ենթարկվում է պատասխանատվության, ապա այդ նույն իրավախախտման համար ֆիզիկական անձը չի կարող ենթարկվել պատասխանատվության⁹:

Իրավաբանական անձի և ֆիզիկական անձի միաժամանակյա պատասխանատվության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա է նաև հետևյալ տեսակետը՝ ըստ որի իրավաբանական անձի և նրա պաշտոնատար անձի ու նրանցից յուրաքանչյուրի մեղավորության որոշման նման մոտեցում հնարավոր է երկու դեպքում, եթե ենթադրենք, որ մեկ արարքով կատարվում է երկու իրավախախտում, կամ էլ եթե ենթադրենք, որ այդ դեպքում իրավաբանական անձն ու նրա պաշտոնատար անձը զանցակիցներ են¹⁰:

Այսպիսով, մեր կարծիքով՝ լիովին արդարացված է իրավաբանական անձի և ֆիզիկական անձի միաժամանակյա պատասխանատվության սահմանում նույն արարքի համար, քանի որ եթե միայն վարչական պատասխանատվության ենթարկվի իրավախախտում կատարած ֆիզիկական անձը, ապա տվյալ իրավաբանական անձի համար այն չի կարող ունենալ նախականիչ նշանակություն և դաստիարակչական ազդեցություն, ընդ որում՝ հարկ է նկատել որ իրավաբանական անձի առանձին անդամը կարող է և չգիտակցել իր գործողության կամ անգործության հակաօրինական լինելը, իսկ տվյալ իրավաբանական անձը, որպես կանոն, կատարված իրավախախտման արդյունքում բավարար օգուտ է ստանում: Իրավախախտ

⁹ Տե՛ս «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենք, սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 1999.06.11/15(81), ընդունված՝ 28.04.1999թ., ուժի մեջ է մտել՝ 21.06.1999թ.:

¹⁰ Տե՛ս **Морозова Н. А.** Административная ответственность юридических лиц. Литореф. лис.... канд. юрид. наук. – Красноярск, 2003, էջ 168-191:

աշխատակցի վճարած տուգանքն էլ այս կամ այն կերպ փաստացի փոխհատուցվում է տվյալ իրավաբանական անձի կողմից:

Անդրադառնալով այն հանգամանքին, թե իրավաբանական անձի և նրա աշխատակցի (պաշտոնատար անձի) միաժամանակյա պատահանատվության ենթարկելու հնարավորության դեպքում աշխատակցի (պաշտոնատար անձի) կոնկրետ ո՞ր արարքների համար իրավաբանական անձին պետք է ենթարկել պատասխանատվության, ապա նախ՝ աշխատակիցը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտում կատարելու պահին պետք է լինի մեղսունակ, քանի որ անմեղսունակ վիճակում կատարած գործողությունների համար ֆիզիկական անձը պատասխանատվության չի կրում:

Ի դեպ, ցանկացած կազմակերպակառուցվածքային փոխհարաբերությունների ստեղծման դեպքում իրավաբանական անձն ունակ չի լինելու վերահսկելու այդ անձի գործողությունները, այսինքն՝ բացակայում է օրենքով սահմանված պարտականություններին հետևելու նրա հնարավորությունը, հետևաբար՝ վարչական իրավախախտում կատարելու մեջ բացակայում է նաև նրա մեղավորությունը:

Երկրորդ կարևորագույն նախապայմանն այն է, որ աշխատակիցը (պաշտոնատար անձը) պետք է գործի իր լիազորությունների շրջանակներում: Իրավաբանական անձը չի կարող պատասխանատվություն կրել իր աշխատակցի (պաշտոնատար անձի) այն գործողությունների համար, որոնք կատարվել են իր իրավասությունների (պաշտոնական պարտականությունների) սահմաններից դուրս կամ այդ սահմանները խախտելով, քանի որ այդ դեպքում աշխատակիցը գործում է իր ծառայողական փոխհարաբերություններից դուրս: Իրավաբանական անձը չի կարող պատասխանատվություն կրել այն վարչական իրավախախտումների համար, որոնք իր աշխատակիցն իրականացրել է որպես մասնավոր անձ, և եթե վերջինս դուրս է եկել իր իրավունքների և պարտականությունների սահմաններից:

Այս համատեքստում մատնանշենք նաև, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե *իրավաբանական անձը ենթարկվել է վարչական պատասխանատվության, ապա տվյալ վարչական իրավախախտման համար մեղավոր ֆիզիկական անձը չի ազատվում վարչական պատասխանատվությունից* այնպես, ինչպես ֆիզիկական անձին վարչական պատասխանատվությո-

յան ենթարկելը տվյալ վարչական իրավախախտման համար վարչական պատասխանատվությունից չի ազատում իրավաբանական անձին: Այլ կերպ ասած՝ սահմանվել է ֆիզիկական անձի և իրավաբանական անձի համաժամանակյա պատասխանատվություն:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարծում ենք, ընդունելի չէ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի նախագծում որպես իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու պայման ամրագրել միայն արարքի հակաիրավականությունը¹¹: Ուստի Նախագծում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ և իրավաբանական անձանց պարագայում մեղքը սահմանել որպես պատասխանատվության ենթարկելու պայման, սահմանել այն որոշելու չափանիշներ: Մասնավորապես, իրավաբանական անձը մեղավոր է կատարված իրավախախտման մեջ հետևյալ պայմաններից մեկի առկայության պարագայում՝ եթե

1) նա մեղավոր է օրենքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ իրավաբանական անձի այլ ակտով իր վրա դրված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,

2) նա մեղավոր է իր հիմնադիր փաստաթղթերին կամ իր նպատակներին չհամապատասխանող գործունեության իրականացման մեջ:

Արդյունքում, իրավաբանական անձի մեղքը որոշելիս պետք է պարզել՝ արդյո՞ք վերջինս հնարավորություն ունեցել է պահպանելու սահմանված կանոնները և նորմերը, որոնց խախտման համար սահմանված է պատասխանատվություն, և այդ նորմերը պահպանելու և վարչական իրավախախտումները կանխելու ուղղությամբ իրավաբանական անձն արդյո՞ք օգտվել է այդ հնարավորությունից, ձեռնարկել է համապատասխան միջոցներ:

Բանալի բառեր: իրավաբանական անձ, վարչական իրավախախտում, վարչական իրավասուբյեկտություն, իրավաբանական անձի և ֆիզիկական անձի միաժամանակյա պատասխանատվությունը, իրավաբանական անձի մեղքը՝ որպես սուբյեկտիվ կողմի պարտադիր պայման:

¹¹ Տե՛ս <https://www.e-draft.am/projects/274>

ЮРИДИЧЕСКОЕ ЛИЦО КАК СУБЪЕКТ АДМИНИСТРАТИВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

Варданиян Сюзанна Арменовна

Юрисконсульт «Венери ИММО» ООО

*Соискатель кафедры конституционного права
юридического факультета ЕГУ*

Аннотация. Статья посвящена участникам экономической деятельности – юридическим лицам, как субъектам административной ответственности, рассматриваются особенности данного вида ответственности применительно к юридическим лицам. Целью статьи является исследование законодательной основы данного института, выявление отличительных особенностей данного вида ответственности. Несмотря на достаточную регламентацию правового положения данного субъекта в различных нормативно-правовых актах, существует множество дискуссионных вопросов.

Данная тема действительно актуальна, так как в настоящий момент существует свобода экономической деятельности, и сам институт административной ответственности появился в нашем законодательстве сравнительно недавно. Все это порождает возрастающее количество правонарушений со стороны организаций, которые своими действиями посягают на общественные отношения, охраняемые нормами административного права.

Наиболее дискуссионным вопросом является - элемент субъективной стороны правонарушения – вина, поскольку полностью отождествлять вину юридического лица с виной физического лица не представляется целесообразным. В статье раскрыты основные положения теорий многих известных ученых в области административного права касательно этого вопроса.

Все выше сказанное свидетельствует о необходимости исследования особенностей данного вида юридической ответственности и совершенствования данного института административного права.

Ключевые слова: юридическое лицо, административное правонарушение, административная ответственность, административная юрисдикция, одновременная ответственность юридического и физического лица, вина юридического лица как обязательное условие субъективной стороны.

LEGAL ENTITY AS SUBJECT OF ADMINISTRATIVE RESPONSIBILITY

Syuzanna Vardanyan

Legal advisor at «Veneri IMMO» LLC

Applicant of the Chair of Constitutional

Law of YSU Faculty of Law

This article focuses on the economic activities of legal entities as subjects of administrative responsibility.

The article considers the peculiarities of this type of liability applicable to legal persons. The purpose of this article is to study the legislative framework of this institution, identifying the distinguishing features of this type of liability. Despite an adequate regulation of the legal status of the entity in various legal acts, there are many debatable issues.

This topic is relevant, because now there is freedom of economic activity and the institution of administrative responsibility appeared relatively recently in our legislation. All this creates an increasing number of offenses by organizations whose actions impinge on the public relations protected by the norms of administrative law. The most debatable issue is the mental element of the offence which guilt. We found that identifying guilt of a legal entity with the guilt of individuals does not seem appropriate. Guilt of a legal entity is of the greatest interest. There are several theories concerning this element subjective side.

This article describes the main provisions of the theories expressed by many scientists in the field of administrative law. All the above demonstrates the need for studies of this type of legal responsibility and improving of the Institute of administrative law.

Key words: legal entity, administrative offense, administrative liability, administrative jurisdiction, simultaneous liability of a legal entity and an individual, guilt of a legal entity as a prerequisite for the subjective side.

Հոդվածը գրախոսվել է՝ 10.01.2024թ.:

Ներկայացվել է տպագրության՝ 11.01.2024թ.:

ИННОВАЦИОННЫЕ ПОДХОДЫ К ЯЗЫКОВОЙ ПОДГОТОВКЕ БУДУЩИХ ПОЛИЦЕЙСКИХ

Русакова Галина Александровна

*и.о. нач.кафедры языков Образовательного
комплекса МВД РА канд.пед.наук, доцент*

Аннотация. В статье проанализированы основные проблемы адаптации выпускников к профессии, в частности, в области языковой подготовки; подробно представлена одна из эффективных мультимедийных технологий – подкасты; рассмотрены условия эффективного применения, виды работы с подкастами, педагогические требования.

Ключевые слова: проблемы адаптации; мультимедийные технологии; подкасты; аутентичное общение.

Проблема скорейшей адаптации и интеграции в профессиональную деятельность выпускников ВУЗов на сегодняшний день является достаточно актуальной проблемой. Статистические исследования, проводимые для выявления наиболее распространенных проблем адаптации выпускников к профессии, показывают, что, наряду со стрессом и давлением, несоответствием ожиданиям, главные позиции занимают недостаточно сформированные практические профессиональные умения и навыки, отсутствие базового опыта работы в выбранной специальности.

Сказанное касается, в том числе, владения иностранными языками, что играет важную роль в профессии. Сотрудникам полиции все чаще приходится работать с иностранными гражданами или туристами, которые нуждаются в обеспечении безопасности и предоставлении помощи. В работе полицейских могут встречаться документы на иностранном языке, такие как свидетельства, паспорта или документы, связанные с уголовными делами. Понимание и перевод таких документов может потребовать знания соответствующего языка. В международных расследованиях или операциях полицейским необходимо сотрудничать с иностранными правоохранительными органами. Недостаточное знание языка может затруднить коммуникацию и сотрудничество.

Полицейские получают запросы на помощь от иностранных коллег или органов в рамках международных соглашений. Для реагирования на такие запросы необходимо иметь знание соответствующего языка.

Таким образом, языковая подготовка сотрудников полиции имеет большое значение для эффективности и профессионализма правоохранительных органов, и ее улучшение может способствовать лучшему выполнению служебных обязанностей и обеспечению безопасности общества.

Наиболее эффективным подходом обучения на современном этапе является использование мультимедийных технологий¹, поскольку они позволяют визуализировать сложные концепции и процессы; делают обучение более интересным и привлекательным для студентов, что в свою очередь, стимулирует их учебный интерес и мотивацию; предоставляют возможность для создания интерактивных учебных материалов, которые способствуют глубокому пониманию материала и развитию навыков решения проблем, а также для разработки персонализированных обучающих материалов, учитывая потребности и уровень знаний каждого студента; облегчают доступ к образованию в любом месте и в любое время, легко обновляются и адаптируются к изменяющимся требованиям и новым данным, что делает обучение более актуальным и современным.

Подкасты² - это аудио- или видео-записи, которые могут быть загружены, прослушаны или просмотрены в любое время и в любом месте. Они позволяют создавать контент на любую тему и на различных языках, поэтому могут быть использованы в обучении на разных этапах и для различных целей.

Одним из главных преимуществ подкастов в обучении является их доступность и удобство использования. Они могут содержать лекции, интервью с экспертами, обзоры научных исследований, дискуссии и т.д. и использоваться для дополнительного материала в рамках курса, для самостоятельной работы студентов или для углубленного изучения определенной темы. Другим

¹ **Закирова С.А.** Современные тенденции развития мультимедийных технологий. // URL:<https://lpgenerator.ru/blog/chto-takoe-multimedia/>

² **Суханова, А. С.** Подкасты в обучении аудированию / **А. С. Суханова.** // Проблемы и перспективы развития образования: материалы VIII Международной научной конференции (г. Краснодар, февраль 2016 г.). Краснодар: Новация. - 2016. - С. 73–75. // URL: <https://moluch.ru/conf/ped/archive/187/9724/>.

преимуществом использования подкастов в обучении является то, что они могут быть использованы для обучения иностранному языку в рамках профессии.

Учебные подкасты по иностранному языку для полицейских могут охватывать разнообразные тематики, связанные с профессиональными потребностями сотрудников правоохранительных органов:

- общение с гражданами - разговорные навыки и фразы для взаимодействия с гражданами, свидетелями, и жертвами преступлений на иностранном языке;
- техническая лексика - слова и выражения, связанные с техническим оборудованием, радиосвязью, оружием и средствами защиты;
- правила дорожного движения и безопасность на дорогах - учебный материал о дорожных правилах и коммуникации с водителями на иностранном языке;
- медицинская терминология - термины и фразы, связанные с оказанием первой помощи и взаимодействием с медицинскими специалистами;
- международное сотрудничество;
- актуальные события и случаи.

Работа с учебным подкастом для изучения иностранного языка может включать разнообразные виды работ, которые могут быть полезными для эффективного использования учебного подкаста.

1. Слушание с последующей проверкой понимания (возможны остановки на паузу, повторное прослушивание непонятного отрывка, запись незнакомых слов и выражений).

2. Слушание с титрами или транскрипцией и слушание в замедленном темпе, которые облегчают процесс восприятия учащимся с недостаточно сформированными языковыми навыками.

3. Дубль-говoreние (говoreние вместе с диктором, особое внимание интонации и произношению).

4. Запись ключевой информации (в виде плана, схем, рисунков).
5. Составление кратких аннотаций/ пересказ.
6. Обсуждение на иностранном языке по тематике подкаста.
7. Создание собственных аудиозаписей по образцу подкаста.
8. Создание словарных карточек употребляемых в подкасте слов.

9. Написание диктанта, заполнение таблиц или схем.

Использование подкастов в обучении иностранному языку позволит обеспечить основу для аутентичного общения студентов на иностранном языке в рамках будущей профессии, что в свою очередь, будет способствовать повышению качества подготовки профессиональных кадров, их успешной адаптации в профессии.

INNOVATIVE APPROACHES TO LANGUAGE TRAINING OF FUTURE POLICE OFFICERS

Rusakova Galina

*Acting Head of the Department of
Languages of the RA MIA Educational Complex,
PhD in Pedagogical Sciences, Associate Professor*

Annotation: The article analyzes the main problems of graduates' adaptation to the profession, in particular in the field of language training; podcasts, which is one of the most effective multimedia technologies, is presented in detail; the conditions for effective use, types of work with podcasts, and pedagogical requirements are considered.

Key words: problems of adaptation, multimedia technologies, podcasts, authentic communication.

Հոդվածը գրախոսվել է՝ 29.02.2024թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 29.02.2024թ.:

SOME FEATURES OF THE LEGAL REGIME IN THE CONTEXT OF LIMITATIONS OF STATE POWER

Lilit Kazanchian

Lecturer at the Department of Jurisprudence of the International Scientific-Educational Center of the NAS RA, Senior Researcher at the Institute of Philosophy, Sociology and Law NAS RA, Member of Chamber of Advocates of the RA, Candidate of Judicial Sciences, Associate Professor

Ashot Zaqaryan

Head of the Legal division of The Staff of the Head of Administrative district of Yerevan, Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law NAS RA

Summary: In the given scientific article, based on the study of the opinions of well-known lawyers, international and domestic legislation, the features of the legal regime as a mechanism for limiting state power are presented. Particularly, the article reveals the features of the concepts of “legal restriction”, “regime”, “legal regime”, as well as manifestations of prohibitions and restrictions as special methods of limiting state power.

In the scientific article, the authors also emphasize the fact that legal incentives create positive legal motivation and contribute to the realization of the individual’s special interests.

Key words: legal limitation, limitation of state power, prohibitions, incentives, state, Constitution, basic rights and freedoms.

In modern legal literature, the concept of “legal limitation” is defined as a legal retention of an illegal act, creating conditions for satisfying the interests of the counter-subject and public interests in protection and protection. Moreover, these are limits established by law under which the subject must act and those limits exclude certain possibilities in a person’s activities¹. In addition, due to the characteristics of the legal act, legal boundaries (restrictions) have certain features,

¹Kazanchian L., Zaqaryan A., Some features of the manifestation of legal limitation of state power, Yerevan, “Bulwark of the law” Scientific-methodical journal, №1, 2023, pp. 143-152; Malko A.V. Incentives and restrictions in law. 2nd ed., M., Jourist. 2003, p.85.

in which many other social regulators are expression implicitly².

The conducted research shows, that the concept of “regime” is multifaceted and is used in various spheres of social life and, therefore, is interpreted ambiguously in both technical and social sciences. For instance, the modern jurisprudence considers those specific aspects of the regime that are amenable to influence by the State with the help of law and are characterized as a legal regime.

It should be noted, that in the Soviet legal literature, the concept of “regime” was mainly used to characterize the concept of legality and to identify its features. Thus, N.G. Alexandrov and S. G. Berezovskaya defined Soviet legality not as the execution of laws, but as a special regime characterized by mandatory compliance with laws, by all representatives of the society. As a result of all this, it led to the de facto identification, equation of Soviet legality and legal regime³.

According to famous jurists S.S. Alekseev and A.V. Malko, the legal regime is a special method of legal regulation, which is expressed in a certain combination of legal means, creating the desired social condition and a specific degree of favorability or unfavorability to satisfy the interests of subjects of law⁴. In its turn, D.N. Bachrach believes that the “legal regime” should be conceived as a set of rules enshrined in legal norms that regulate certain activities of people⁵. Moreover, the structure of the legal regime includes such elements as the bearer of the regime, legal means of the regime, regime rules, legal statuses of subjects of regime regulation, and a system of organizational and legal guarantees. In addition, certain territories (such as exclusive economic zone regime), legal entities, institutions, organizations and administrative activities (such as regime of secrecy, customs modes) may act as the bearer of the regime.

²**Zaqaryan A., Safaryan G.** Historical stages in the formation of the idea of limiting power, Yerevan, “Katchar” Scientific periodical, №2, 2023, pp.14-24.

³ **Alexandrov N.G.** On the role of the Soviet socialist state and law in the development of Soviet society: textbook, manual on the theory of state and law. M., Znanie.1953, p. 12, 21-22; **Berezovskaya S.G.** Prosecutor's supervision in Soviet public administration. M., Gosyurizdat, 1954, p. 9-10.

⁴ **Alekseev S.S.** Theory of law. M., BEK. 1995, p.243-244; **Malko A.V.** Incentives and restrictions in law. 2nd ed. M., Jourist.2003, p.206.

⁵ **Bakhrakh D. N., Rossiyskiy B. V., Starilov Yu. N.** Administrative law: Textbook for universities. 2nd ed. M., Norma, 2005. p.456.

In modern legal literature, the legal regime is also considered as an integral specific “system of means”, techniques, and methods of legal regulation, which is expressed in the peculiarities of regulatory relations and individual regulations, the emergence of legal relations, legal consequences, and ways to ensure the implementation of legal requirements⁶.

This is a regulation procedure which is expressed in a set of legal means that create a special focus of regulation and characterize a special combination of interacting permissions, prohibitions, as well as positive obligations⁷. It is important to note, that in current definition the concept “system of means” is successfully used, since it is not a sum, not a set of means, but “a system” based on the relationship of its constituent elements that will ensure the achievement of the desired result.

In the context of the topic under discussion, A.V. Malko presents a very interesting approach to the *characteristic features* of the legal regime. Thus, A.V. Malko identifies certain characteristic features inherent in legal regimes.

First of all, A.V. Malko rightly pointed out, that legal regimes are established by legislation and provided by the state.

Second, legal regimes regulate specific areas of public relations in a specific way, highlighting certain subjects and objects of law within temporal and spatial boundaries.

Third, they represent a special order of legal regulation that consists of a set of legal means and is characterized by a certain combination of them.

Finally, fourthly, legal regimes create a specific degree of favorability or unfavorability to meet the interests of subjects and their associations⁸.

At the same time, M. M. Sulygov considers constitutional and legal restrictions as a specific regime through which the practical subordination of the state power to the rule of law is ensured and the principle of the rule of law and equality of all

⁶ Current problems of the theory of state and law/ Ed. **M.V. Baranova, O.B. Kuptsova**. M., Yurlitinform. 2012,p.12-15.

⁷ **Babaev V.K., Baranov V.M., Goyman V.I.** Dictionary of categories and concepts of the general theory of law. N. Novgorod, 1992, p. 29.

⁸ **Malko A.V.** Incentives and restrictions in law. 2nd ed. M., Jourist. 2003, p.207.

(including the state represented by state bodies and officials) before the legal law is implemented⁹.

The conducted research shows, that the principles of the legal regime are the initial, defining ideas, basic provisions that are applied by subjects of legal relations in order to realize their interests by certain legal means.

L. I. Velento believes that the limits of state activity are established using two methods: self-restriction and external restrictions¹⁰. Meanwhile, A. A. Troitskaya considers constitutional principles such as: democracy, separation of powers, decentralization, and human rights, as constitutionally enshrined legal limits and restrictions on freedom of public authority¹¹.

In the legal literature, the legal regime is presented in two meanings. In a broad sense, the legal regime is presented as a special order of legal regulation of the activity, actions or behavior of individuals or legal entities in various spheres of public relations, which include permissions, incentives, norms, guarantees, prohibitions, approval of the mechanism for ensuring the actual implementation of the system of restrictions and duties. In a narrow sense, the legal regime is a special combination of legal instruments enshrined in the norms of law, which are determined by certain conditions, the specific relationships between public authorities and people in the society¹².

It should be noted, that the legal regime of limitation of state power is also revealed in normative-legal acts of the state, such as the Constitution, Constitutional laws, Codes, laws, Presidential decrees, decisions of the Government, By-laws, etc.

In this regard, it is necessary to partially agree with the claim, that legal regime is a category that is quite closely related to legal status. Furthermore, if legal status is

⁹ **Sulygov M.M.** Constitutional and legal regime of restriction of state power. Dissertation for the degree of Doctor of Law. M., 2005, p. 10.

¹⁰ **Velento L.I.** Limits of state activity (theoretical and legal analysis of external forms of restriction). Grodno, 2001, p. 12-13.

¹¹ **Troitskaya A.A.** State sovereignty: limitation or transformation of content? // Constitutional and municipal law. M., Yurist, 2006. № 10, p. 5-11.

¹² **Karapetyan E.** The concept and features of legal regime// "Kachar" Collection of Scientific articles. Yerevan. 2017, p.103-107.

used to characterize subjects, objects or social relations, then legal regime is a more universal category, as it is actively applied to a wide range of legal phenomena¹³.

In modern legal literature, the opinion prevails, according to which the basis of regimes of state power limitation are not just permissions and prohibitions, but general permissions and general prohibitions, and even more precisely, types of legal regulation based on them. Consequently, in the most general way, the legal regimes along with the selection of regimes of the binding profile can be divided into permissive and permissive ones¹⁴.

In modern conditions, it is necessary to comprehend, that it is impossible to use the same legal regime for the state, individuals and business entities. In this case, it is most expedient to apply the *regime of stimulation* in relationship between person and state or business entities. It is the *stimulating regime* that is able to motivate a person to active legal behavior. It also provides freedom of choice when person makes legally significant decision.

Incentives are associated with favorable conditions for the implementation of an individual's own interests. They are expressed in the promise or provision of values, and sometimes in the abolition or reduction of the deprivation of values. They also report an expansion of the scope of opportunities and freedom.

In our opinion, legal incentives create positive legal motivation, involve an increase in positive activity and are aimed at orderly changes in social relations. At the same time, the state achieves the same results from a person, but by other means. Being confident in expanding the boundaries of their freedom, citizens follow the requirements of the law, do not go beyond the boundaries of what is permitted, without gaining experience of a negative attitude towards state power. Legal relations become orderly, and the goal of legal regulation is achieved.

In its turn, *the restriction*, the establishment of strict boundaries and limits in something, the prohibition of any action subconsciously causes a person to protest, a desire to "break" these boundaries. Obviously, only the fear of possible punishment for committing illegal action or the power of persuasion in the need for lawful behavior keeps a person within the established boundaries, while at the same time forming a negative attitude towards the state that restricts freedom.

¹³ Ibid, at 106.

¹⁴ Alekseev S.S. Theory of law. M.,BEK. 1995, p. 243.

It should be noted, that the term “limitation” in modern dictionaries is interpreted as: “a restriction on the size or amount of something permissible or possible, restriction of certain conditions (opportunities, scope of activity, etc.)¹⁵.

It is obvious, that the limitations of state power in a legal society should be considered in the sense that state power, represented by state’s authorities and officials, acts within the limits established by the Constitution and legislation. In other words, the legal organization of the system of state power is presented. Moreover, this implies a clear definition of the competence of public authorities and the types of their activities.

According to A.G. Bratko, E. V. Chechulina and M. A. Dombrovsky, *prohibitions* and *restrictions* are two different ways of legal regulation. Their main difference is that *prohibitions*, in their content, indicate the legal impossibility of a certain behavior, which is actually possible, while a legal restriction is not only a legally, but also a virtually impossible option for human behavior¹⁶.

Unlike a prohibition, a legal restriction cannot in principle be violated. It is always a restriction of any subjective right, in particular such a right that is ensured by the duties of the relevant officials

It should be noted, that the limitation of State power is enshrined in the constitutions of a numerous democratic states. Thus, according to Part 1 of the Article 4 of the Constitution of The Republic of Albania, the law constitutes the basis and the boundaries of the activity of the state¹⁷. In its turn, the Article 3 of the Constitution of the Republic of Armenia enshrines: “The public power shall be restricted by the basic rights and freedoms of the human being and the citizen as a directly applicable law”¹⁸. In this regard, the Article 5 of the Federal Constitution of the Swiss Confederation establishes, that all activities of the state are based on and

¹⁵ Cambridge Dictionary. Limitation. 2022, <https://dictionary.cambridge.org/> (last visited Dec. 20, 2023).

¹⁶ **Bratko A.G.** Prohibitions in Soviet Law. Saratov, Saratov State Univ. Press. 1979, p.50-52; **Dombrovsky M. A., Chechulina E. V.** Prohibitions and restrictions on foreign economic activity. Textbook. Perm Perm State National Research University Press. 2022, p.6-7.

¹⁷ The Constitution of the Republic of Albania (adopted on 22 Nov. 1998, with amendments approved on 13 Jan. 2007)

URL: <https://www.osce.org/files/f/documents/3/2/41888.pdf> (last visited Dec. 20, 2023).

¹⁸ The Constitution of the Republic of Armenia (adopted on 05 Jul. 1995, with amendments approved on 06 Dec. 2015) URL: <https://www.president.am/ru/constitution-2015/> (last visited Dec. 20, 2023).

limited by law. State activities must be conducted in the public interest and be proportionate to the ends sought¹⁹. Developing this principle provision for public entities in the article 35, the Constitution of the Swiss Confederation also emphasizes, that whoever acts on behalf of the state is bound by fundamental rights and is under a duty to contribute to their implementation²⁰. Moreover, the authorities shall ensure that fundamental rights, where appropriate, apply to relationships among private persons²¹.

It is obvious, that such approach is due to the fact, that the modern democratic, legal states are defined by the constitutional alliance of the system of human and citizen rights and freedoms. The same principle is manifested in the Constitution of the Russian Federation, where the recognition, observance and protection of the rights and freedoms of man and citizen are considered as the obligation of the State²². In addition, Article 18 determines that the rights and freedoms of man and citizen shall be directly operative. Moreover, they determine the essence, meaning and implementation of laws, the activities of the legislative and executive authorities, local self-government and shall be ensured by the administration of justice²³. It is obvious, that the rights and legitimate interests of a person are prioritized in the complex system of human-society-state relations. According to H. Qocharyan and M. Muradyan states, in the case of rights established by laws, in principle, grant those basic rights to their citizens, and those basic rights that do not require citizenship are also granted to foreigners and stateless persons²⁴.

It should be noted that in modern Western legal literature, the concept of legal regime is associated with the establishment of the state and the acquisition of state power. According to W. Hurst, societies and states establish legal regimes based on the simplicity with which social groups, individuals, or organized

¹⁹ The Constitution of the Swiss Confederation (adopted on 18 Apr. 1999 with the Status as of 1 Jan. 2024) URL:<https://www.fedlex.admin.ch/eli/cc/1999/404/en> (last visited 02 Jan. 2024).

²⁰ Ibid.

²¹ Ibid.

²² the Constitution of the Russian Federation (adapted on 12 Dec. 1993, with amendments approved on 01. Jul.2020), Article 2, URL:<http://www.constitution.ru/en/10003000-02.htm> (last visited Dec. 20, 2023).

²³ Ibid, Article 18.

²⁴ **Qocharyan H., Muradyan M.** Holders of Fundamental Rights and Freedoms (a Theoretical Analysis)// European University. Collection Of Scientific Articles.Yerevan. 2019, p.172-186.

interests can obtain political influence or power, as well as the degree to which non-judicial state institutions or powerful actors can interfere with the manner in which legal institutions handle particular cases²⁵. Moreover, the author emphasizes, that it is necessary outline the variety of law-state-society relationships within the framework of legal regimes in order to point out the future study of the political and social dynamics of criminal and civil adjudication in urban and rural areas of the given state²⁶.

It is obvious, that in this context, the legal regime is considered as a general concept that combines relationships between law, state and society.

The conducted research shows, that the legal regime has a very important preventive function against illegal interventions and other negative phenomena. It is also aimed at the protection of fundamental rights and interests of human, society and state interests. Therefore, within the framework of the existing legal regimes, the preventive function leads to the establishment of sanctions and certain prohibitions in the normative legal acts, which do not allow state bodies, citizens, organizations to commit illegal acts.

At the same time, we agree with the opinion of T. Endicott, that the state has duties that are not grounded in the well-being of its citizens, and it may legitimately pursue good public purposes that do not advance its citizens' well-being. Moreover, the state exists for the benefit of its residents, not so much to improve their life as to provide a means of organized communal behavior for the citizens themselves, as opposed to outsiders²⁷.

Analyzing the presented points of view, we come to the conclusion that, legal regime is an officially established special order of legal regulation, reflecting a set of legal and organizational means used to consolidate the social and legal status of objects of influence and aimed at ensuring their sustainable functioning.

Summing up the results of the research, we conclude that the legal regime of restriction of state power is designed to minimize arbitrariness and other abuses

²⁵ Hurst W. Understanding Legal Regimes. In: Ruling before the Law: The Politics of Legal Regimes in China and Indonesia. Cambridge Studies in Law and Society. Cambridge: Cambridge University Press. 2018, p. 13-14.

²⁶ Ibid, at 15.

²⁷ Endicott T. The Purpose of a State, *The American Journal of Jurisprudence*, Vol. 66, Issue 1, 2021, p. 69–83.

on the part of officials, and is achieved by binding power of legal means. We consider the legal restrictions of state power to be the means of deterring illegal acts of state authorities and their officials, established with the help of law and aimed at meeting the needs of interested parties.

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ПРАВОВОГО РЕЖИМА В КОНТЕКСТЕ ОГРАНИЧЕНИЯ ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ

Казанчян Лилит

*Преподаватель кафедры юриспруденции
Международного научно-
образовательного центра НАН РА,
Старший научный сотрудник Института
философии, социология и право НАН
РА, Член Палаты адвокатов РА,
Кандидат юридических наук, доцент*

Закарян Ашот

*Руководитель юридического отдела
Аппарата, Главы административного
района Аван г. Ереван
административного района Аван г.
Ереван, Соискатель Института
философии, социология и право НАН РА*

В данной научной статье, основанной на изучении мнений известных юристов, международного и отечественного законодательства, представлены особенности правового режима, как механизма ограничения государственной власти. В частности, в статье раскрываются особенности понятий “правовое ограничение”, “режим”, “правовой режим”, а так же проявления запретов и ограничений, как особых методов ограничения государственной власти.

В научной статье авторы также подчеркивают тот факт, что правовые стимулы создают позитивную правовую мотивацию и способствуют реализации собственных интересов индивида.

Ключевые слова: правовое ограничение, ограничение государственной власти, запреты, стимулы, государство, Конституция, основные права и свободы.

ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ղազանյան Լիլիթ

*ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային
կենտրոնի իրավագիտության ամբիոնի
դասախոս, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի
ավագ գիտաշխատող, ՀՀ փաստաբանների
պալատի անդամ, Բրավաբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ*

Զաքարյան Աշոտ

*Երևանի Ավան վարչական շրջանի
դեկավարի աշխատակազմի
իրավաբանական բաժնի պետ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի
Ինստիտուտի հայցորդ*

Սույն գիտական հոդվածում, հիմնվելով անվանի իրավագետների կարծիքների, միջազգային և ներպետական օրենսդրության ուսումնասիրության վրա, ներկայացված են իրավական ռեժիմի, որպես պետական իշխանության սահմանափակման կառուցակարգի առանձնահատկությունները: Մասնավորապես, հոդվածում բացահայտվում են «իրավական սահմանափակում», «ռեժիմ», «իրավական ռեժիմ» հասկացությունների առանձնահատկությունները, ինչպես նաև արգելքների և սահմանափակումների, որպես պետական իշխանության սահմանափակման հատուկ մեթոդների դրսևորումները:

Գիտական հոդվածում հեղինակները նաև ընդգծում են այն փաստը, որ իրավական խթանները ստեղծում են դրական իրավական շարժառիթ և նպաստում անհատի սեփական շահերի իրականացմանը:

Բանալի բառեր՝ իրավական սահմանափակում, պետական իշխանության սահմանափակում, արգելքներ, խթաններ, պետություն, Սահմանադրություն, հիմնական իրավունքներ և ազատություններ:

Հոդվածը գրախոսվել է՝ 23.01.2024թ.:

Ներկայացվել է տպագրության՝ 23.01.2024թ.:

INSULTING AN OFFICIAL OF THE CUSTOMS BODY WHILE PERFORMING OFFICIAL DUTIES

Syuzanna Vardanyan

Legal advisor at «Veneri IMMO» LLC

Trade facilitation is a complex process that pursues to provide a clear, persistent and certain trade environment for cross-border movement of goods based on simple and harmonized customs clearance procedures and practices, rules and regulations in the field of international trade. Trade facilitation is a fundamental arrangement for customs authorities. The facilitation of trade throw simplification and acceleration of the customs procedures generates welfare to both national economy and the economies of the trading partners.

Customs authority has a leading role at all levels of facilitation of the international trade, especially in these major points: First customs authority has to help to determine the policy space, second customs authority has to help design the framework and rules of implementation of the policy, and then customs authority has a leading role in bringing into place the instruments and processes at operational level¹.

Trade facilitation can be defined as “the simplification and harmonization of international trade procedures including import and export procedures”. Trade procedures in this context imply to: “the activities (practices and formalities) involved in collecting, presenting, communicating and processing the data required for movement of goods in international trade”².

According to a study undertaken by the Organization for Economic Cooperation and Development, there are, «from a trader’s perspective, a number of costs associated with cross-border transactions».

Such transaction costs can be direct, such as those related to preparing and submitting information or the effort involved in physically presenting goods to

¹ See: **Miloshoska, D., Smilkovski, I.**, (2015), Security in trade facilitation-the evidence from Macedonia, International Scientific Journal Horizons, Bitola (in the process of being publish)

² See: World Trade Organisation (WTO) (1999), ‘Trade Facilitation in Relation to Existing WTO Agreements’,
WTO, Geneva: G/C/W/136, G/L/299, S/C/W/101, IP/C/W/131

executive agencies. These costs can also be indirect, such as those related to delays at border crossing points, which include missed business opportunities or competition from businesses operating in less complex regulatory environments”³.

Trade transactions are complex with a complex and extensive rules and regulations. Trade transactions are conducted by an extensive spectrum of control rules and customs procedures. Accordingly, trade facilitation activities are crucial for the acceleration and simplification of customs clearance procedures and minimization of transaction costs.

Social-economic transformations of the Republic of Armenia have had their impact on all aspects of the country, first of all: economy and social-economic non-legal institutions respectively.

Administrative responsibility, which was intended to be of a public nature, was no exception to regulate and protect relationships. Historical and legislative changes greatly affect the country's economy, and, of course, the current legislation of the Republic of Armenia had to respond to the social new threats from relationships.

In Armenia, the country's tax system plays an extremely important role in solving various problems of the customs system, the importance of which is considered as the income of the state budget a recruitment tool as well as influencing the economic and social spheres of development financial category.

Improvement and efficiency of tax and customs systems from the point of view of implementation, the legislation regulating the sphere, state the continuous improvement of revenue policy and administration underpinning the established principles should derive from the direction of the economic policy implemented in the country and features of the national economy.

The purpose of all Customs controls is to ensure that the cross-movement of cargos, means of transport and persons follow within the customs laws, regulations and procedures. Customs administrations are expected to facilitate the movement of legitimate cargos and passengers while applying controls to detect Customs fraud

³ Organisation for Economic Co-operation and Development (OECD) (2003), Quantitative Assessment of the Benefits of Trade Facilitation, Working Paper of the Trade Committee, TD/TC/WP(2003)31/Final [pdf].

Retrieved from

http://vi.unctad.org/files/studytour/strussia10/files/12%20April/Hoffmann%20UNCTAD/OECD_Quantitative%20Assesment%20TF%20benefits.pdf

and security threats. To achieve these major tasks it is necessary to find a balance between facilitation and enforcement. The solution is best found in the development of Customs controls that are based on risk assessment, profiling and selectivity⁴. This means, that when choosing the forms of customs control and means of ensuring the implementation of customs control, the customs authorities use the technical means of customs control and the analysis of the information at their disposal.

Risk management is successfully applied in the private sector as a way that creates opportunities to improve business results. But, risk management approach can also help the public sector to determine areas of risks, and can support management in making the best decisions according to that information's. In this process it is very important to achieve a balance between costs and benefits, by defining what constitutes an acceptable or unacceptable level of risk. The legal basis for application of risk management by Customs is provided in the Standards of Chapter 6 of the General Annex of the revised Kyoto Convention⁵.

The application of risk management in every day work of the Customs administration helps customs in effective collection of the revenue, protection of the society and facilitation of the trade. Pre-clearance, clearance and post-clearance audit are the three levels of Customs controls in importing procedures. These customs controls are focused on the identification of high risk consignments. Risk identification is very important at this process. This is achieved by identifying risks that are a serious threat to Customs activities. Customs control measures should be regularly reassessed and thereby to detect their vulnerabilities, determining why weaknesses exist and establishing risk indicators which may increase or decrease the degree of risk. Risk indicators may relate to a particular tariff code, country of origin, value, etc.

⁴ During the implementation of customs control, the customs bodies apply the principle of selectivity and are limited to the forms of customs control sufficient to comply with the provisions of the customs legislation of the Republic of Armenia and the Union. Article 187: RA Law on Customs Regulation, The original source Unified website 2022.10.03-2022.10.16 Official publication date 07.10.2022, Date of signature 07.10.2022, [file:///C:/Users/P_C/Downloads/169292%20\(1\).pdf](file:///C:/Users/P_C/Downloads/169292%20(1).pdf)

⁵ World Customs Organization (WCO) (1999), Revised Kyoto Convention. Retrieved from http://www.wcoomd.org/en/topics/facilitation/instrument-and-tools/conventions/pf_revised_kyoto_conv/kyoto_new.aspx

There are five main steps in the standard Customs risk management process as defined by the World Customs Organization: 1. Establish context by identifying criteria against which risk will be assessed and the structure of the analysis defined.

2. Identify risks as the basis for further analysis by describing in depth the current control process which includes participants/clients/stakeholders; strengths and weaknesses where, when, how is the risk likely to be incurred and by whom.

3. Analyze risks by determining controls and analyzing risks in terms of likelihood and consequence, thereby producing an estimated level of risks (likelihood of a certain risk occurring).

4. Assess and prioritize risks by comparing estimated levels of risk against the pre-established criteria, and classify those risks as high, medium or low.

5. Address risks by accepting and monitoring low-priority risks. For other risks, develop and implement a specific management plan having in mind the available human, financial and technical resources. Constant monitoring and review is crucial in this process in order to eliminate false negative or false positive risk assessments.

According to these, modern customs administrations perform a number of tasks, including revenue collection, trade facilitation, risk management and protection of national borders.

As a border protection agency, customs' role is also to prevent the import of illegal goods. Smuggling of drugs and weapons, and large-scale smuggling of alcohol and cigarettes, places customs directly in the realm of organized crime. There is no scarcity of examples where criminals use any means, from extensive bribery to intimidation and violence, to promote their illegal transactions⁶.

Referring to administrative responsibility as a variety of legal responsibility, it should be noted that legal responsibility is defined in different ways in the legal literature. According to some authors, legal responsibility is the application of state coercive measures to the guilty person for committing an offense⁷. According to another group of scholars, legal responsibility is a special legal condition due to which the person who commits an offense suffers certain deprivations of a state

⁶ Customs administration, file:///C:/Users/P_C/Downloads/CustomsAdministration.pdf

⁷ See: Alekseev S.S. Rights: ABC theory-philosophy. The experience of a comprehensive study, - M.: Statute, 1999, page 74.

coercive nature⁸.

According to G. Danielyan, legal responsibility is perceived as the use of state coercive measures that cause personal, property and organizational limitations for committed offenses⁹.

Summarizing the above, it should be noted that administrative responsibility, as a form of legal responsibility, the use of coercive measures against a person who has committed an administrative misdemeanor in accordance with the law, should be carried out by the relevant administrative body, which administers the administration in connection with that misdemeanor¹⁰.

In other words, the application of administrative responsibility should be administration as the final stage of the jurisdictional process, within which the competent administrative body, in the presence of appropriate grounds, should make an intervening or combined administrative act¹¹.

Customs, tax authorities, the police, which carry out administrative proceedings and issue relevant acts, can be competent state bodies.

As we mentioned, administrative responsibility is characterized by the following characteristics:

- The basis of administrative responsibility is an administrative offense, that is, a misdemeanor, which can also be the basis of disciplinary responsibility in cases defined by legislation. For example, according to Article 15 of the RA Code on Administrative Offenses, servants, servicemen of the national executive bodies of the Republic of Armenia's defense, national security and police and rescue services, as well as military personnel called to military gatherings, bear disciplinary responsibility for administrative offenses¹².

- Administrative responsibility is accompanied by the application of

⁸ See: **Abdulaev M. I.** Theory of State and Law: A Textbook for Higher Educational Institutions, - M. page 321:

⁹ See: **Danielyan G.B.** "Administrative responsibility in the Republic of Armenia" Yerevan, <<ART>> 2007, pp. 78-83.

¹⁰ See: **Belsky K. S.** Administrative responsibility: genesis, main features, structure // State and Law, N-9, 1999, page 15 GB, 19.

¹¹ See: Article 54 of the RA Law "On Basics of Administration and Administrative Procedure". Original source: RAPPT 2004.03.31/18(317) Art. 413, Date of adoption: 18.02.2004, entered into force: 31.12.2004.

¹² See: RA Code "On Administrative Offenses". Original source: HSSHGST 1985/23, date of adoption: 06.12.1985, entered into force: 01.06.1986.

administrative penalties.

- Not only administrative bodies have the right to apply measures of administrative responsibility, but also courts. In this case, the mentioned feature is also manifested in the fact that if the penalties assigned by the administrative bodies are not applied voluntarily, then they can be enforced only after submitting a lawsuit to the court in the prescribed manner and making a decision regarding the validity of the penalty.

- The legislation provides for a special procedure for imposing administrative liability. Moreover, ignoring the requirements of the norms related to the mentioned order leads to the invalidity of decisions on imposing an administrative penalty.

- The principles of administrative liability for natural persons are defined in the Code of the Republic of Armenia on Administrative Offenses. The latter has a starting point for all other legislative acts.

- Administrative responsibility is defined only by legislative acts (this feature is not characteristic of disciplinary responsibility, the separate norms of which may also be regulated by sub-legislative acts).

- Subjects of administrative responsibility can be not only natural persons, but also legal entities. Meanwhile, legal entities are not included in the subject structure of administrative responsibility in the customs sector.

- Administrative liability does not lead to such limitations as, for example, conviction in the case of criminal liability. Any legal act cannot limit the right due to the fact of being subjected to administrative responsibility. Let's note, however, that the RA law "On Licensing" stipulates that in case of termination of the validity of the license on the grounds provided for in Article 37, Part 1, Clauses 1, 3, 4 and 5, a person has the right to apply for a new license. only one year after the license has been terminated¹³.

Thus, under the concept of administrative responsibility should be meant the appointment and enforcement of an administrative penalty for administrative offenses by the competent state bodies or officials on the basis and in the order established by the legislation.

¹³ See: RA Law "On Licensing", Source: RAPT 2001.08.08/26(158) Art. 581, Adoption date: 05.30.2001, entered into force: 08.08.2001. <file:///C:/Users/P C/Downloads/73268.pdf>

Moreover, comparing the international experience with the domestic legislation, we consider it necessary to note that according to the Article 303 of the RA Law "On Customs Regulation"¹⁴:

Insulting an official of the customs body while performing official duties arising from the duties of the customs bodies defined by the law "On Public Service", the law "On Customs Service" and this law:

causes a fine in the amount of one hundred thousand drams.

We suggest to edit the description of part 1 of Article 303 of the Law with the following content:

Insulting an official of the customs body while performing official duties arising from the duties of the customs bodies defined by the law "On Public Service", the law "On Customs Service" and this law:

causes a fine in the amount of two hundred thousand /200000/ drams.

In other words, as an addition to part 1 of Article 303 of the Law, to provide for "deliberate" non-fulfillment of the legal requirement of the employee of the customs body or to disobey the legal requirement and to provide for an increase in the amount of responsibility for such an act. It follows from the review that this article provides for fixing the form of guilt and increasing the amount of responsibility accordingly.

In terms of the above-mentioned change, it is necessary to emphasize that the daily activities of customs bodies and their officials are not exempt from illegal actions of the subjects of customs legal relations, in particular: *1) deliberately not complying with the order or request of an official of the customs body, 2) disobeying the latter's legitimate request. 3) ways of insulting an official.*

From the point of view of the features of administrative responsibility, disobeying the order or demand of an official of the customs service, inflicting injury on him as an administrative and legal violation in his offense should be separated from the **objective side**, which is manifested by the above-mentioned actions and is directed to the requirements arising from the official duties of the official of the customs body, non-fulfillment of orders: it directly violates the principles of public service during the customs activity of the state.

¹⁴ See: RA Law on Customs Regulation, The original source Unified website 2022.10.03-2022.10.16 Official publication date 07.10.2022, Date of signature 07.10.2022, [file:///C:/Users/P_C/Downloads/169292%20\(1\).pdf](file:///C:/Users/P_C/Downloads/169292%20(1).pdf)

The **subjective aspect** of the crime should be assessed as an offense committed with "direct intention", because the subject of the legal relationship does not comply with the order of the customs officer or threatens him deliberately and is aware of the harmful and dangerous consequences of his actions and wants it.

We also suggest to address the legal regulation of the issue when a citizen shows disrespect towards an employee of the customs body while completing customs formalities, that is, no administrative proceedings have been initiated against him, but he insults the employee of the customs body while completing customs formalities of goods /for example, during the declaration/. For example, the customs office shows disrespect, including disobeying the legal request of the customs officer or insulting him at the customs office, how and what regulation should be given in that case and is it not necessary to specify and provide a clear legal regulation in the application of the legislation, in order to avoid possible disagreements as a result of completing customs formalities in the future as well as to avoid frequently encountered problems in practice.

Key words: Insulting an official of the customs body, official duties, customs bodies, the law "On Public Service", the law "On Customs Service", trade facilitation, import and export procedures, trade transactions, risk management, administrative responsibility, customs, tax authorities, administrative offense, revenue collection, protection of national borders.

INSULTING AN OFFICIAL OF THE CUSTOMS BODY WHILE PERFORMING OFFICIAL DUTIES

Syuzanna Vardanyan

Legal advisor at «Veneri IMMO» LLC

The object of study in this work is insult to a customs official in connection with the performance of his official duties.

From the point of view of signs of administrative liability, disobedience to an order or requirement of a customs official, causing harm to him as an administrative offense in his offense should be separated from the objective side, which is manifested by the above actions and is aimed at requirements arising

from the official duties of a customs official, failure to carry out instructions: this directly violates the principles of public service in the customs activities of the state.

Also, one of the conditions for committing an action is direct intent: the person realizes that he is insulting a representative of the authorities, and wants this. Also propose to consider the legal regulation of the issue when a citizen shows disrespect for a customs official when performing customs formalities, that is, an administrative case has not been initiated against him, but at the same time insults a customs official.

For example, the customs authority shows disrespect, including disobedience to the legal requirement of a customs officer or insulting him at customs, how and what regulation should be given in such a case and whether it is necessary to specify and bring clear legal regulation to the application of legislation in order to avoid possible disagreements as a result fulfill customs formalities in the future, as well as avoid frequently occurring problems in practice. For committing this crime, the law provides for punishment in the form of a fine.

Key words: Insulting an official of the customs body, official duties, customs bodies, the law "On Public Service", the law "On Customs Service", trade facilitation, import and export procedures, trade transactions, risk management, administrative responsibility, customs, tax authorities, administrative offense, revenue collection, protection of national borders.

ОСКОРБЛЕНИЕ ДОЛЖНОСТНОГО ЛИЦА ТАМОЖЕННОГО ОРГАНА ПРИ ИСПОЛНЕНИИ СЛУЖЕБНЫХ ОБЯЗАННОСТЕЙ

Варданын Сюзанна Арменовна

Юрисконсульт «Венери ИММО» ООО

Объектом исследования в настоящей работе являются оскорбление должностного лица таможенного органа в связи с исполнением им своих служебных обязанностей.

С точки зрения признаков административной ответственности неповино-

вление приказу или требованию должностного лица таможенной службы, причинение ему вреда как административно-правовое правонарушение в его правонарушении следует отделить от объективной стороны, которая проявляется вышеуказанных действий и направлена на требования, вытекающие из должностных обязанностей должностного лица таможенного органа, невыполнение поручений: это прямо нарушает принципы государственной службы при таможенной деятельности государства.

Также, одним из условий совершения преступления является прямой умысел: лицо осознает, что оскорбляет именно представителя власти, и желает этого.

Также предлагаем рассмотреть правовое регулирование вопроса, когда гражданин проявляет неуважение к работнику таможенного органа при совершении таможенных формальностей, то есть в отношении него не возбуждено административное дело, но при этом оскорбляет работника таможенного органа.

Например, таможенный орган проявляет неуважение, в том числе неповиновение законному требованию сотрудника таможни или оскорбление его на таможне, как и какое регулирование следует дать в таком случае и не нужно ли конкретизировать и привести четкую правовую регламентацию в применение законодательства, чтобы избежать возможных разногласий в результате выполнения таможенных формальностей в будущем, а также избежать часто возникающих проблем на практике?

За совершение указанного преступления законом предусмотрено наказание в виде штрафа.

Ключевые слова: Оскорбление должностного лица таможенного органа, служебные обязанности, таможенные органы, закон «О государственной службе», закон «О таможенной службе», упрощение процедур торговли, процедуры импорта и экспорта, торговые операции, управление рисками, административная ответственность, таможня, налог органы власти, административное правонарушение, взыскание доходов, охрана государственной границы.

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԻՍ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆ ՎԻՐԱՎՈՐԱՆՔ ՀԱՍՑՆԵԼԸ

Վարդանյան Սյուզաննա

«Վենեթի ԻՄՄՕ» ՄՊ ընկերության իրավախորհրդատու

Սույն հոդվածի ուսումնասիրության առարկան մաքսային ծառայողին վիրավորանք հասցնելն է կապված իր ծառայողական պարտականությունների կատարման հետ:

Վարչական պատասխանատվության առանձնահատկությունների տեսանկյունից մաքսային ծառայության պաշտոնատար անձի կարգադրությանը կամ պահանջին չենթարկվելը, նրան վիրավորանք հասցնելը որպես վարչաիրավական խախտում նախատեսելիս, գանցակազմում պետք է առանձնացնել օբյեկտիվ կողմը, որը դրսևորվում է վերոթվարկյալ գործողություններով և ուղղված է մաքսային մարմնի պաշտոնատար անձի ծառայողական պարտականություններից բխող պահանջների, կարգադրությունների չկատարմանը՝ ուղղակիորեն ոտնահարելով պետության մաքսային գործունեության ընթացքում պետական ծառայության սկզբունքները:

Ձանցակազմի սուբյեկտիվ կողմը պետք է գնահատել որպես ուղղակի դիտավորությամբ կատարված իրավախախտում, քանի որ իրավահարաբերության սուբյեկտը մաքսային ծառայողի կարգադրությունը չի կատարում կամ նրան սպառնում է կանխամտածված ու գիտակցում է իր գործողությունների արատավոր հետևանքների վրա հասնելը և ցանկանում է այն:

Միաժամանակ, առաջարկում ենք անդրադառնալ այն հարցի իրավական կարգավորմանը, որ եթե քաղաքացին մաքսային ձևակերպումներ կատարելիս անհարգալից վերաբերմունք է դրսևորում մաքսային մարմնի աշխատակցի նկատմամբ, այսինքն՝ ապրանքների մաքսային ձևակերպումներ կատարելիս, օրինակ՝ մաքսատանը անհարգալից վերաբերմունք է դրսևորում, այդ թվում նաև մաքսային մարմնի աշխատակցի օրինական պահանջին չի ենթարկվում կամ նրան վիրավորում է մաքսատանը, սակայն վերջինիս նկատմամբ դեռ վարչական վարույթ հարուցված չէ, ինչպե՞ս և ի՞նչ կարգավորվում պետք է տրվի և արդյո՞ք անհրաժեշտություն չի առաջանում

օրենսդրական փոփոխությամբ ամրագրել՝ մաքսային ձևակերպումներ կատարելիս հնարավոր տարաձայնություններից ու խնդիրներից զերծ մնալու համար:

Բանալի բառեր: Մաքսային մարմնի պաշտոնատար անձին վերավորելը, ծառայողական պարտականություններ, մաքսային մարմիններ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք, առևտրի դյուրացում, «ներմուծում» և «արտահանում» մաքսային ընթացակարգեր, առևտրային գործարքներ, ռիսկերի կառավարում, վարչական պատասխանատվություն, հարկային մարմիններ, վարչական իրավախախտում, եկամուտների հավաքագրում, ազգային սահմանների պաշտպանություն:

Հոդվածը գրախոսվել է՝ 03.04.2023թ.:

Ներկայացվել է տպագրության՝ 03.01.2024թ.:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ¹
«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ» ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ
2023թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից հասույթ (համախառն եկամուտ), ընդամենը	115 000 (հարյուր տասնհինգ հազար դրամ)
Նվիրատվության մասնաբաժնի չափը	0
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից շահույթ	0

¹ Հրապարակվում է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը 12-րդ հոդվածի համաձայն:

Գիտական հոդվածներին ներկայացվող պահանջներ

Նյութերն ընդունվում են համապատասխան բուհերի ամբիոնների, գիտահետազոտական հիմնարկների բաժինների երաշխավորության կամ մասնագետի կարծիքի առկայության դեպքում: Հոդվածները պետք է վերաբերվեն իրավագիտության ոլորտին, իսկ առանձին դեպքերում հանդիսանան գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններ: Նյութին կից անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի վերնագիրը, համառոտագիրը՝ առնվազն 60 բառի սահմաններում, հեղինակի տվյալները և բանալի բառեր (առնվազն 5 բառ)՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն: Նյութերի ծավալը որոշելիս՝ խնդրում ենք հիմք ընդունել հետևյալ պահանջները՝ տեքստը տպագրվում է սովորական A4 չափի թղթի վրա՝ 1,5 տողաչափով, հիմնական տեքստի տառերի չափը՝ 12, տողատակերի տառերի չափը՝ 10, լուսացքները՝ ձախից, վերնից, աջից և ներքևից՝ 2 սմ, Unicode տառատեսակով՝ «Arial Unicode», ռուսերեն և անգլերեն տեքստերը՝ Times New Roman տառատեսակով: Նորմատիվ ակտեր օգտագործելիս՝ տեքստում պետք է նշել դրա տեսակը, ընդունման ժամանակահատվածը, անվանումը: Տեքստում կարելի է նշել ակտի տեսակը, ամսաթիվը և առանց չակերտների կրճատ անվանումը, որը կտա ճիշտ պատկերացում փաստաթղթի մասին:

Նյութի առաջին էջում՝ վերնագրից հետո, նշվում են տեղեկություններ հեղինակի մասին, որոնք կարտացոլվեն մեր պարբերականում՝ հեղինակի անուն և ազգանունը ամբողջությամբ, պաշտոնը և աշխատանքի վայրը, առկայության դեպքում՝ գիտական աստիճանը և կոչումը: Գիտական հոդվածները կարող են ներկայացվել, որպես կանոն, առավելագույնը 15 էջի սահմաններում:

ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ

Սրբագրիչներ՝ Կ. Սաֆարյան
Ա. Պետրոսյան
Գ. Ռուսակովա
Ա. Քոչարյան

Корректоры: К. Сафарян
А. Петросян
Г. Русакова
А. Кочарян



Ստորագրված է տպագրության 27.03.2024թ.

Չափսը՝ 70x100 1/16, թուղթ օֆսեթ N 1:

Ծավալ՝ 15.75 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 125:

Տպագրված է «ԼԻՄՈՒՇ ՍՊԸ»-ի տպարանում:

ք.Երևան, Դ.Սալյան 45:

հեռ.՝ 094-58-22-99, E-mail: info@limush.am